

ՎԵՐ ՄԵՃԵՅ

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ



ԼԵՎՈՆ  
ՀԱԽՎԵՐԴՅԱՆ

•

ՎԱՐՊԵՏԸ






---

ԼԵՎՈՆ ՀԱՆՎԵՐԴՅԱՆ  
ՎԱՐՊԵՏ



ՎԵՐԵ ՄԵՃԱՅ

ԱՎԵՏԻԳ ԻՍԱՀԱԿՅԱՆ



ԱՅԵԱԵՄ



929: 891.98) Խաչատուրյան

ԼԵՎՈՆ  
ՀԱԽՎԵՐԴՅԱՆ

ՎԱՐՊԵՏԸ

A-ի  
81551



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՆՔՆԱԾՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

## Հախվերդյան Լ. Հ.

**Հ 167 Վարպետը:** (Խոհագրություն: Դպր. միջին և բարձր տարիքի համար). Եր.: Արևիկ, 1990.— 208 էջ:

Դիրքը ներկայացնում է Ավետիք Իսահակյանի ապրած մեծ կյանքը՝ իր իսկ հուշերից, հոգվածներից ու նամակներից քաղված վկայությունների հիման վրա: Բանաստեղծի վկայությունները երկ-խոսություն ձևով ուղեկցվում են գրականագիտական հավելումներով ու մեկնություններով:

Դիրքը հասցենադրված է Վարպետի ստեղծագործության բոլոր սիրահարներին, ամենից առաջ՝ պատանի և պարմանուհի ընթերցողներին:

$\frac{4802050000 (51)}{Հ 707 (01) 90}$  105—90

ԳՄԳ 83. 321

**ԲԱՆԱՍԵՐ**—Հայ գրականության դժվար պատմության մեջ քչերին է վիճակվել այնպիսի մեծ կյանք, ինչպիսին վիճակվեց Ավետիք Իսահակյանին: 1875 թվականի հոկտեմբերի 30 և 1957 թվականի հոկտեմբերի 17 — Իսահակյանի ծննդյան և մահվան այս տարեթվերի միջև ընկած է 82 տարի, որ ամփոփում է հերավի մեծահարուստ կյանք, պատկանելի ոչ միայն ժամանակային ընդգրկմամբ, այլև ներքին վիթխարի և խորապես դրամատիկական բովանդակությամբ:

Կյանքի մայրամուտին, ոչ մի հյուլե չկորցրած իր պայծառ մտքից, նա այսպես է խոսել իր կյանքի մասին:

**ԻՍԱՀԱԿՅԱՆ**—80 տարին բնության կողմից մեծ զիջողություն է՝ տրված մարդուն: Պետք է, որ այս շնորհը լավագույն ձևով օգտագործվի: Իհարկե, մարդ չպիտի մտածի աշխարհից բան տանելու մասին, այլ աշխարհում բան թողնելու մասին: Մնացածը ունայնություն է:

**ԲԱՆԱՍԵՐ**—Իսահակյանի կյանքը մի հայացքով ընդգրկելու համար մտաբերենք նրա մի խոսքը, որ ասել է պատանիներին:

**ԻՍԱՀԱԿՅԱՆ**—Իմ կյանքի ընթացքում ես տեսա, թե ինչպես ճարպի մոմին ու ճրագին փոխարինեց էլեկտրական լույսը, «բոո սելին» փոխարինեցին գեղեցիկ ավտոմեքենաները, ճեպընթաց գնացքները... Իմ աչքի առաջ ստեղծվեցին ռադիոն, հեռախոսը, էլեկտրականը, ատոմային էներգիան, նրա ուժով աշխատող էլեկտրականը... Այո, մարդը հրաշքեր գործեց:

**ԲԱՆԱՍԵՐ**—Բանաստեղծը կարող էր ավելացնել, որ իր

կշանքի օրոք է առաջին ինքնաթիռը պոկվել երկրի երեսից: Կարող էր և մտաբերել,— ունենալով զարմանքի արժանի հիշողություն,— թե ինչպես երիտասարդ օրերին թիֆլիսում տեսել է առաջին օդաղնացիներից մեկի՝ Ուսուլկինի թռչնը: Տեսել է և այդ առիթով մամուլում գրել է ապշահար հիացման այնպիսի վերամբարձ խոսքեր, որ կարող են շարժել այսօրվա ընթերցողի ներողամիտ մպիտը. «հա վարագույրի տակ «ծածկված է տերոպլանը, քաղաքակրթության վերջին ամենամեծ հաղթանակը, մարդկության հավերժական երազը...», ահա պոկվեց երկրից. «այս ծերացած, ոճիրներով ու բրդենությամբ աշխանդակված զարշնի երկրից... հրաշագործ վայրկյան, սրբազան վայրկյան, և ինձ թվաց, որ ես ես թեև եմ առնում և թռչում եմ երկրից հեռու, բարձր, անապակ լազուրի մեջ, ազամանդե լիճների վրայով, ոսկեղեն արևի մոտ...», «Առաջին տպավորությունը գերմարդկային էր և պանծալի», «Սա մի շրեղ բանաստեղծություն էր, մի ոսկի երազ, մի նոր գերաշխարհ...»:

Բայց մենք շատ առաջ ընկանք, հասանք 1910 թվին, երբ երեսունհինգամյա Իսահակյանն արդեն ճանաչված, ժողովրդի մեջ երգվող բանաստեղծ էր, հրապարակախոս, լրագրող, գործիչ, որ նստում-վեր էր կենում ժամանակի հայոց մեծերի հետ: Վերադառնանք, ուրիմն, իր ծագմանը, ծննդյանն ու մանկությանը:

Երրակի դաշտավայրի բնակչությունն այստեղ է գաղթել անցյալ դարի ուս-թուրքական պատերազմների տարիներին: Իսահակյանի կարծիքով, իր նախնիները, որ եղել են Արծրունի տոհմից, Հին Բայազետից Երրակի դաշտավայր են գաղթել 1828-ի ուս-թուրքական պատերազմից հետո, 1830-ին: Հետագայում, 1856 և 1877—78 թվականների ուս-թուրքական պատերազմներից հետո, այստեղ են հանգրվանում մեծաթիվ գաղթականներ Կարինից, Մուշից, Կարսից:

Իսահակյանի պապերը հաստատվել են Գյումրիից ոչ հեռու, ուս-թուրքական սահմանագծում գտնվող Ղազարապատ գյուղում:

Լեոն, հենց Ղազարապատում, 1908-ին, լսել է գյուղի հիմնադրման այս ավանդությունը. 1828-ի պատերազմի ժամանակ Ղազար անունով մի գյուղացի աչքի է ընկել քաջա-

գործութեամբ, որի համար Պատկերը նրան թույլ է տվել  
զրուել հիմնել օսմանյան սահմանադրի վրա:

Բանաստեղծի պատը՝ նիկողայոս Բահակյանը, գաղ-  
զխափորողներից մեկը, եղել է իր միջավայրում աչքի ըն-  
կող և իր միջավայրի համար ուսյալ, կարգացած, ունե-  
մարդ: Բանաստեղծի հայրը, որ ծնվել էր հենց պատերազմ-  
տարին՝ 1828-ին, և ամուսնացել Ալմաստ Ղլտմյանի հետ,  
իր հորից ժառանգություն է ստացել մի շրաղաց, մի բա-  
ղանսարա ու մի բոստան: Այսքանի բավական է եղել, որ  
բանաստեղծն ունենա ոչ միայն անկարիք մանկություն,  
այլև հետագա կյանքում էլ, մինչև արտասահման անցնելը  
(1911), ազատ լինի հանապազօրյա հաց փաստակելու հո-  
գեմաշ հոգսերից: Պա, իհարկե, եղել է ոչ թե շոսյա ու ճոխ,  
այլ ընդամենը տարրականորեն ապահով կյանք, բայց դա  
էլ հայ գրողի համար հազվագյուտ մի բախտ էր, որ վիճակ-  
վել էր Ավետիք Բահակյանին:

Ճոխ ու շոսյա եղել է բանաստեղծի մանկության հուզա-  
կան աշխարհը՝ այն սերն ու գուրգուրանքը, որ զարգարել են  
իր մանկությունը, Շիրակի բնության ու ժողովրդական կյան-  
քի հմայքները, խոսքն ու զրույցը, երգն ու խաղը, որ լցրել  
են մանկան հոգին՝ նրան այլևս երբեք չլքելու համար:

Գրողի մանկությունը չի կորչում: Մանուկ ու պատանի  
հասակում՝ մարդու ամենատպալմորվող հասակում, նրա  
ամբարած հուզական հարստությունը իր մշտական ներշն-  
չարանն է դառնում ամբողջ կյանքում: Սա ճիշտ է ընդհան-  
րապես: Առավել ևս ճիշտ է բանաստեղծի, ևս առավել՝ Բա-  
հակյանի խառնվածքի տեղ բանաստեղծի համար, որ շատ  
տարիներ անց, 1930-ին, Փարիզում պիտի ներշնչվում գտներ  
ոչ այլուր, քան իր մանկության պայծառ հուշերում:

...Մեր մանկական հիշն էր թեզում  
Գալտերի մեջ ցողաթաթախ.  
Խայտում էինք զմբուխ գետում,—  
Եվ զնգում էր արեն ուրախ...

Բանաստեղծին ճանաչելու համար պետք է լինել նրա հայ-  
րենի երկրում,— ասել է Գլոթեն: Սրան կարելի է ավելացնել՝  
պետք է իմանալ նրա մանկությունը: Բարեբախտություն է.

եր Լսահակյանը տվել է դրա հնարավորությունը: Այն էլ այն-  
չխախտալով շտապություն և այնքան անկեղծ ու ստուգապատում,  
որին շի կարող փոխարինել ոչ մի բանասիրական բացատրու-  
թյուն: Պարզապես մեղք կլիներ այդ փոխարինումը: 1933-ին,  
Փարիզում, Լսահակյանը մտաբերել է իր այցելությունը հայ-  
րենի վայրերին 1927-ին:

ԻՄԱԶԱԿՅԱՆ— Ահա՛ մեր գյուղի հանդերը, ուր աղջիկնե-  
րի և տղաների հետ բանջար էինք քաղում. ահա լեռները,  
ուր գիշերել եմ ոչխարների հոտերի հետ, երբ ընկերներին  
հետ հովիվ էի...

Նվիրակա՛ն վայրեր, ուր անցան իմ մանկությունը և պա-  
տանկության առաջին տարիները, ուր խաղացի ընկերներին  
հետ և մենակ թափառեցի երազներով թևավոր, ուր զգացի  
առաջին սիրո սրբությունը և նրա քաղցր վիշտը...

Ահա՛ հայրս և մայրս: Հայրս լուրջ զեմքով, բարի և պատ-  
կասելի. մայրս սրբուհու պատկերով, անուշ, վշտոտ և զթա-  
ռառ:

Հայրս քաղաքի առևտրական իր գործերը հանձնել էր եղ-  
բայրներին և մորս հետ տեղափոխվել էր գյուղի կալվածքը  
վերջին տարիները անվրդով ապրելու համար: Ես էլ, որպես  
ծնողներիս կրտսեր որդին, նրանց հետն էի: Հարևան մոտիկ  
գյուղի գյուղացն էի հաճախում մինչև մեծանալս, հետո քա-  
ղաք փոխադրվեցի:

Առավոտ է: Հայրս հագել է քիթմանշալի՝ խալաթը  
(զգեստ), նստել է մտամոլոխի, վերացած, Մաղմոս կամ Նա-  
րեկ է կարդում, կիսաձայն: Դռան ճեղքից նրկյուղածորեն  
նայում եմ հորս. կարծես խեղճ մարդը մի ծանր ոճի է գոր-  
ծել, որ հիմա՝ աչքերն արցունքով լի կարդում է Սուրբ գիրքը  
թավելու համար իր մեղքը:

Մայրս գուրս ու ներս է անում. քաղցր ու բարի ձայնով  
կարդադրություններ է անում աղախիններին և ծառանե-  
րին—կովերը նախիրը տարե՞լ են, հորթները հանձնե՞լ են հոր-  
թարածին, գառները՝ գառնարածին, ձիուն կեր տվե՞լ են, շնե-

---

1 Քրդյա նուրբ գործվածք. Իրանի Քիթման քաղաքի անունից (ծան. հեղինակի):

քին լափ տվե՞լ են, հալներին, սագերին, բազերին կուտ, ուտե-  
լիք տվե՞լ են...

Արդեն մեծ ու փոքր թռնիորենքը վառել են, հաց—են թը-  
խում, կերակուր են եփում թե մեզ համար, թե չքաղացի  
բանվորների համար:

Մայրս իր ձեռքով շրջիկ աղքատներին և ճամփորդներին  
կերակրում է և ճամփա դնում:

Հայրս—ավարտել է ընթերցումը. այցելում է չքաղացը,  
մեկ-մեկ նայում է քուր և աղորիքներին, խոսում է չքաղաց-  
պանի հետ, աղուհատների հետ. գնում է պարտեզը, բանջա-  
րանոցը, իր ձեռքով կանաչեղեն է քաղում ճաշի համար:

Ես ընկերներիս հետ վազվղում եմ չքաղացի ներսն ու  
շուրջը, մեր և հարևանների կտուրներն ենք բարձրանում,  
թռնում ենք խոտնոցների վրա. մեծ աղմուկով գլուխացոց  
գոմեշներն ենք լողացնում գետի մեջ և նրանց հետ սուզ-  
վում ջրի տակ. գաշտերում բաց թողած էշերն ու անասնձ  
պառավ ձիերն էինք հեծնում ու նրանց բաշերից բռնած ար-  
շավում...

ԲԱՆԱՍԵՐ— Ինչքա՞ն հմայք ու արժեք պիտի ունենային  
մանկական խաղերը բանաստեղծի աշրում, որ շատ տարիներ  
անց, 1917-ին, ժնկում գրեր այսպիսի տողեր.

Փառք ու հանճար շարժեն խաղին  
Մի ձաղկաքույր աղայի:

Մանկությունը, նույնիսկ ամենից անհոգ ու անաճաղ ման-  
կությունը, միայն խաղն ու հրճվանքը չեն, այլև մարդկա-  
յին բնավորության ձևավորման թեկուզև աննկատ ընթացքը:  
Հայտնի բան է, որ մարդու խառնվածքը իր էական հատկանիշ-  
ներով քանդակվում է մանուկ և պատանի հասակում: Եթե  
ստույգ է, որ ժողովրդական իմաստուն մտածողությունը, ժո-  
ղովրդական պարզալուր խոսքը, այդ խոսքի բացարձակ անմի-  
ջականությունն Իսահակյանի ստեղծագործության անկապտելի  
հատկանիշներն են, ապա նույնքան ստույգ է, որ դրանք նրա  
հոգում բուն էին գրել մանուկ հասակից:

Երբ քաց եղան գարեհան կանաչ դոնձը,  
Քեար գառան աղբյուրները Քինդյուխի...

Ամբողջ կյանքում այս սճը, բանաստեղծական այսպիսի մասնողությունը պահելու համար («Բինգյուր» գրվել է 1941-ին) պոետն այն մանկությունը պիտի ապրեր, որ ապրել է, այնտեղ, ուր ապրել է, այնպես, ինչպես ապրել է։ Այդ սճը շէր կարելի չհատ սովորել, երևի առհասարակ դասնահար է սովորել, Գա պետք է յուրացվեր մայրական կաթի հետ միասին։

ԻՍԱՀԱԿՅԱՆ—Այստեղ մանկական իմ երևակայությունը թևավորվեց դարերի խորքից հկող բանաստեղծական ֆուլկլորով, գուսաններին ու գյուղացիների երգերով, անցյալի ազնիվ հուշարձաններով։

ԲԱՆԱՍԵՐ—Պոետն այն էլ է մտաբերել, թե ինչ համբըշտակությամբ է լսել նրանց՝ ժողովրդական բանասացներին։ Հայրը մի աշուղ բարեկամ է ունեցել՝ հարեան գյուղից, անուներ՝ Գալուստ։

ԻՍԱՀԱԿՅԱՆ—Լավ սազ էր նվագում, անուշ, թավ ձայն ուներ՝ սրտից խոսող։ Եստ հեթիաթներ գիտեր։ Պարակական, թրքական, հայկական անթիվ հեթիաթներ։ Իր սիրտ վեպն ուներ արեւելքի հեթիաթների տարբերով և գուններով հյուսած։

Ամեն շարաթ, կեսօրից հետո, սազը պատյանի մեջ վզից կախ, գալիս էր նա մեր տունը, մնում էր ամբողջ կիրակի օրը մինչև երկուշաբթի։ Եվ երկուշաբթի առավոտ մեկնում էր սազը վզից կախ, առատ վարձատրված։

Ինչքա՞ն, ինչքա՞ն էի սիրում աշուղ-ամուսն։ Երբ գալիս էր, տոն էր սկսվում ինձ համար։ Համբըշտակված, աչքերս նրա մթին աչքերին հառած՝ ժամերով կախված էի մնում նրա կախարհ շուրթերից։ Նրա սազն ու հեթիաթը ալլափոխում էին իմ աչքում իրական շրջապատը, Հանկարծ մեր գաղափր լեռները, ձորերը, գաշտերը վերածվում էին ուրիշ տեսակ մի աշխարհի, աննկարագրելի գեղեցիկ, առասպելական։ Հրաշալի աշխարհ, որի լեռների բաշերով թռչում են հրեղեն ձիերը, կտրիճները գնում են անմահական խնձոր բերելու, շքնաղագեղ աղչիկները մարմարյա ապարանքների մեջ կարոտով սպասում են անվհճեր կտրիճներին, որոնց մեջ տեսնում էի և ինձ...

ԲԱՆԱՍԵՐ—Արեւելյան բանահյուսության վառվառն գույ-

ներն էլ Բասճակյանին ծանոթ են եղել վաղ հասակից: Իրանի Մակու քաղաքից պարսիկ բոստանչիներն են վարձվել իրենց գյուղում, աշխատել են դարնանից աշուն և, իրենց վարձն առած, վերադարձել: Երգել են պարսիկներն իրենց ծորուն ու թախծառ մեղեդիները, պատմել են իրենց հեքիաթներն ու ավանդությունները՝ անտեղյակ, թե արևելքի ինչ նախասիրությունն են սերմանում իրենց պատանի ունկընդոր՝ ապագա բանաստեղծի, արևելյան շքեղ գրույցների և «Արու Հայա-Մասարիի» ապագա հեղինակի մեջ:

ԻՍԱՀԱԿՑԱՆ—Վերապրում եմ հիմա մի անմոռանալի երեկո, զգացումներով հարուստ այդ շքեղ օրերից: Բոստանումն էի, բոստանչիների հյուղակի առաջ, հողի վրա թրկն տված, Ախուրյանի ափին: Անգորր ու խաղաղ մի տրամադրություն կար բոստանի և դաշտերի մեջ և իմ սրտում:

ԲԱՆԱՄԵՐ—Այդ օրը պարսիկ բոստանչիներից մեկը երգել է ու պատմել Զիլի Սուլթանի գրույցը՝ արյունոտառ արևելյան բռնակալի և նրա զոհը դարձած ջահել սիրահարի մասին: «Ա՛խ, ինչքան վիշտ, ինչքան տանջանք, ինչքան զանգատ կար այդ քաղցր ու զաժան հեշտունների մեջ», — մտաբերել է բանաստեղծը: Տպագորությունն անհետ չի կորել: Այդ օրերից տասնյակ տարիներ անց ստեղծվել է «Զիլի Սուլթանի» երգը: Այդպես էլ գրական արվեստի արժեքներ են դարձել մանուկ հասակում լսած շատ ուրիշ երգեր, գրույցներ, տպագորություններ...

Մի բան տարօրինակ է. օրքան շատ է գրել ու մտաբերել պոետն իր մանկական օրերի այս և այսօրինակ տպագորությունների մասին՝ նույնքան քիչ է մտաբերել իր ուսումնասիրության օրերը նույն այդ ժամանակներում:

Տարօրինակ չլիտի առել, որ Բասճակյանի՝ այդքան կրթված ու դարդացած, վերին տատիճանի կրթված ու զարգացած գրողի ուսումնառությունը եղել է շափազանց անկանոն ու խախտարդետ: Այդպես եղել է հանգամանքների բերումով: Յոթ տարեկան հասակում գրի սեն ու սպիտակը չոկել է սոփորել Պոլսից եկած մի կնոջ մոտ, որին, բախտի կատակով, կոչել են այնպես, ինչպես պետք է կոչվին Բասճակյանին մեծ տարիքում՝ Վարպետ: Այդ կնոջ մոտ է գրաճանաչ դարձել հայ

պոեզիայի ապագա վարպետը Այնուհետև սովորել է ծննդավայր քաղաքի՝ Ալեքսանդրապոլի, ժխական դպրոցում:

Ռուսաց թագուհի Ալեքսանդրայի անունով վերակոչված հին Գյումրին, որին հայերը կրճատ կոչում էին Ալեքսպոլ, ուներ նաև ռուսական դպրոց: Այդ դպրոցում է պատանի Ավետիքը շարունակում իր ուսումն այն տխուր օրերից հետո, երբ ցարական կառավարությունը հայկական դպրոցները փակելու հրաման է արձակում: Դա 1885 թվականն էր: Ռուսական դպրոցին հաջորդում է Հոսիճա վանքի նախակրթարանը, որի ավարտման թուղթը պետք է պատանուն իրավունք տար ընդունվելու էջմիածնի Գևորգյան ճեմարան:

1889-ին պատանի Ավետիքը Գևորգյան ճեմարանի սանն էր, որ արձակուրդներին հայրենի տուն էր գալիս, հաջորա՝ ճեմարանցու համազգեստով և իր երևելի ուսուցիչներով:

Զպիտի կարծեի, թե տասնչորսամյա Ավետիքը ճեմարան էր եկել հենց այն իմացական պաշարով, որ նրան տվել էին ուսումնարանները: Ավելին, ապագա բանաստեղծի, ազգային կուլտուրայի վարպետի, հայրենասեր ու հայրենավեր զործչի պատանեկան խմորման մեջ ավելի մեծ դեր ունեցան նրա անհատական համընդհանրությունները հայ գրականության զեմքերով: Առաջին հայ գրողը, որի անունը լսել է պատանի Ավետիքը, Ղազարոս Աղայանն է եղել:

ԻՍԱՀԱԿՅԱՆ—Պատճառը հետևյալն է: Մեծ քրոջս սենյակում կախված էր Աղայանի լուսանկարը, սեղանի վրա դրված էր նրա փառակազմ «Երկու քույր» վիպակը:

...Հիշում եմ, որ քույրս մեզ համար կարդում էր «Երկու քույրը»: Մայրս, եղբորս կիներ և ապաստորոհին լաց էին լինում, ես էլ տխրում էի դժբախտ Արզումանի ողբերգական մահի համար:

ԲԱՆԱՍԵՐ—Ավելի ուշ և ավելի համընդհանուր եղել է առաջին ծանոթությունը Պերճ Պողոսյանի հետ: Արզեն դպրոցական՝ Պողոսյանին ինքն է կարդացել: «Սոս և Վարդիթեր» վեպը գերել է պատանու հոգին այնպես, ինչպես կարող էր դերել այդ սրտաշարժ, ախօրվա հայացքով այնքան միամիտ սիրավեպն այդ միջավայրում և այդ հասակում գտնվող պատանուն:

ԻՍԱՀԱԿՅԱՆ—Թառեի էի Արփաշայի ափին՝ շրերի վրա

օրորվող ուռնեռու հաստ հյուղքին և կլանում էի վեպի էջերը։ Շրջապատիս իրական աշխարհն այլափոխվել էր, մի ուրիշ երկնքի արև էր շողում գլխիս վերև, Քասախն էր հոսում սահերիս տակ, և Սոս ու Վարդիթերի հեռ բռնկված՝ թափառում էի Աշտարակի կախարդական այգիներում։ Սիրտս թրթռում էր նրանց զգացումների հետ, արցունքներս թրթռում էին սքանչելի վեպի էջերը՝ դժբախտ սիրահարների վերջոսով համակված։

ԲԱՆԱՍԵՐ—Ժամանակի հայ գրադարանը հարուստ չէր ընթերցանության գրքերով։ Քիչ էին գրքերը, և այդ քիչը, առանց մրցակցության, միմյանց շփանգարելով, ամուր նըստում էին պատանեւ ներաշխարհում։ Գրանցից մեկն էլ Նար-Գոսի հայտնի վիպակն էր։

ԻՍԱՀԱԿՅԱՆ—Գարոցական պատանի էի, երբ առաջին անգամ կարդացի Նար-Գոսի «Անեա Սարոյան» արտագին վիպակը, զեղարվեստական այս բարձրորակ երկը, որն անբացատրելի ազդեցության թողեց հոգուս վրա...

ԲԱՆԱՍԵՐ—Հայ գրողները միայն մայրենի լեզվի և հայրենական գրականության սեր ու հաշակ չէ, որ տվել են պատանի Ավետիքին։ Գեղարդիտական բավականության հետ միասին, տվել են նաև զաղափարական կողմնորոշում։ Եվ այստեղ ամենից էական դերը, իհարկե, Միքայել Նալբանդյանին պիտի վերապահվեր։

ԻՍԱՀԱԿՅԱՆ—Վերադառնում եմ իմ վաղ պատանեկության տարիները... Մ. Նալբանդյանի անունը մենք արտասանում էինք սրբազան պատկառանքով։ Նա մեր նոր կյանքի քաջարի ասպետն էր... Նրա անունը զաղափարի և ազգի նահատակի և հերոսի լուսապսակով էր զարդարված։ Նրա «Երկրագործություն» խառնվ արդելված գիրքը միայն ձեռագիր տետրակներով ունեինք. կարդում էինք աչքերով և սրբառով, բազմիցս անգամ կարդում, ոգևորվում, թեւովորվում էինք, թալում, զինվորվում պայքարի համար...

Այդ վառվառն գրքի շնորհիվ ընդարձակվել էր մեր մտահորիզոնը, քաղաքական, տնտեսական, պատմական հասկացողություններ էր տալիս մեզ...

Զարմանալի, անբացատրելի ներգործություն ուներ մեր բուրդիս վրա այդ արտասովոր գիրքը և նրա հետ միասին

«Ազատն աստված» հրեզեն բանաստեղծությունը, որ երգում էինք միշտ խանդավառությամբ և հուզմունքով:

ԲԱՆԱՍԵՐ—Տպավորությունն ամենից լավ գրվում է սպիտակ թղթի վրա: Պատանի Ավետիքի հոգին այն մաքրամաքուր, սպիտակ թուղթն էր, որի վրա հայ գրականության արժեքները թողնում էին անջնջելիորեն խորունկ հետքեր: Գուցեն դա է պատճառը, որ հետագայում ինչքան էլ գրքեր կարդաց Իսահակյանը տարրեր լեզուներով, անհամեմատ բարձր արվեստի գրքեր, գրանք բնավ էլ չնսեմացրին հայ գրականության հմայքը նրա այլևս մեծապես զարգացած, համաշխարհային կուլտուրա ընդգրկած հոգում: Դեռ ավելին, առավել բարձրացրին՝ Գերենիկ Գեմիրճյանի այն իմաստուն մտքի արաստաբանությամբ, թե կոմիտաս հասկանալու համար պետք է իմանալ Բեթհովեն:

Նույն զիրքը, թեկուզ ամենալավ, նույն ներգործությունը չի ունենում տարրեր մարդկանց վրա:

Այն ուժը, որով մի գիրք տպավորվում է մարդու հոգում, պայմանավորված է ոչ միայն գրքի զորությամբ, այլև տպավորություն ստացողի հուզական ու խմացական աշխարհով, տարիքով ու խառնվածքով:

Այդ երկու հանգիսյակաց ուժերի բախտավոր զուգորդումից է բռնկում այն կրակը, որ մարդ իր հետ տանում է մինչև վերջին հանգրվան:

Գեպքերի պատահական և բախտավոր գասավորությամբ, կարծես իմաստուն մի խորհրդով՝ պատանի Ավետիքը քալլ առ քալլ է պատրաստվել Արուսյանի «Վերքի» ընկալմանը: Շատ փոքր հասակից լսել է եռշատուր Արուսյանի անունը և նրա շուրջը չլուսված առասպելները: Հետո, բեկերների հետ երգել է Աղասու երգերը՝ «Սար ու ձոր ընկած մեկ չոր թփի տակ...»:

1941-ին՝ վեպի ստեղծման 100-ամյակին նվիրված երեկոյին, այս տողերը գրողին բախտ է վիճակվել Իսահակյանի շուրթերից լսելու այդ ամենը: Դահլիճը քար լուծյան մեջ. երկյուղածությամբ լսում էր Վարպեաի փոքր-ինչ կակազուն ու դողդոջուն, կամացուկ, բայց հուզումով ու լարումով հագեցած խոսքը:

ԻՍԱՀԱԿՅԱՆ—...«Վերք Հայաստանին» մեր ձեռքը չէր

ընկնում. քաղաքում երեխի շատ քչերն ունեին և խիստ պահում էին, արգելված գիրք էր համարվում:

**ԲԱՆԱՍՆԲ**— Պատմում էր Վարպեաւը. թի ինչպես ամառը գլուղ՝ Ղաղարապատ, եկած ժամանակ քահանայի տանը տեսել է գիրքը ու աչքերին լի հավատացել:

**ԻՍԱՀԱԿՅԱՆ**— Տարա տուն, կարդում եմ,— ասեմ, որ ես հաղիվ 15 տարեկան էի այն ժամանակ,— հաց ու ջուր մոռացած կարդում եմ հափշտակված, վերացած: Միևնույն է՝ հասկանալով, շահասկանալով գնում եմ առաջ, վերջացնում եմ գիրքը, գլուղի ընկերներին պատմում եմ բովանդակութունը. նրանք խնդրում են, որ միասին կարդանք, մինչդեռ ես մտածում եմ գիրքը սեփականացնել:

**ԲԱՆԱՍՆԲ**— Եվ սեփականացնում է. քահանուն աշխարհաբար ավետարան է ուղում Աղասու պատմությունից զիմաց և մի սալա ձուկ, «մենակ խոշոր տեսակից»։ Պահանջը կատարվում է անհապաղ:

**ԻՍԱՀԱԿՅԱՆ**— Թանկագին գիրքը մերն էր: Խմբով գնում էինք գլուղից դուրս, մեր հանգում որոշ տեղից պարզ երևում էին Անին, նրա պարիսպները, նստում էինք այնտեղ, երեսներս զեպի Անին, կարդում էինք գիրքը, նայում էինք Անին, և կարդում, կարդում...

Ի՛նչ սրբազան պահեր, ի՛նչ անեկարագրելի ոգևորություն:

...Մենք կենդանի տեսնում էինք քաջ Աղասուն իր քաջ ընկերներով՝ Մուսին, Կարոն. մենք տեսնում էինք Աղասու կապուտակ ձին՝ վրնջալով, շառաչելով, դոփելով անցնում էր մեր մոտով, մեր վրայով, թռչում էր նա, սլանում էր նա, և փայլատակում էին նրա պայտերը, և փայլատակում էին ու զրնդում էին Աղասու գինքերը:

**ԲԱՆԱՍՆԲ**— Արժե, որ ընթերցողը կարդա այդ ամբողջ պատմությունը: Սա հազվագյուտ մի փաստաթուղթ է, թե ինչպես մի գիրք կարող է ազդել մարդու վրա: Պերճ Պոռչյանն էլ պատմել է, թե ինչպես է ազդել «Վերքի» առաջին ընթերցումն իր վրա և լավ է պատմել: Բայց Իսահակյանի պատմածն ավելի լավն է, ավելի սուղամորի:

Եվ այսպես, էջմիածնի Գևորգյան Հեմարանի ուսումնասիրությունից էլ առաջ և դրան զուգահեռ սուղադա բանաստեղ-

ծր Արուսեանի, Նալբանդյանի, Բաֆֆու, Պոռշյանի և մյուս մեծերի միջնորդութեամբ լցվում, հաղենում է այն հուզումներով, հայացքներով, զաղափարներով, որ իր անզավաճան ուղեկիցները պիտի դառնային իր երկար ու ձիգ կյանքի քառուղիներում:

Այն, ինչ պատանի Ավետիքն առել էր զրգերից՝ իր կենդանի հաստատումը դառավ Գևորգյան ճեմարանում սովորելիս (1889—1891), երեւելի ուսուցիչների, հայ մշակույթի աշքի բնկնող մարդկանց հսկողութեամբ՝ քանաստեղծ և գրականագետ Լեւոն Մանվելյան, հայագետներ Գարեգին Հովսեփյան և Կարապետ Կոստանյան, նկարիչ Վարդգես Սուրենյանց և, իհարկէ, ամենից առաջ ու ամենից շատ՝ Հովհաննէս Հովհաննիսյան:

Այս անվան հետ շատ է կապված Ավետիք Իսահակյանը և՛ անձնապէս, և՛ ստեղծագործութեամբ:

Ստեղծագործութիւն, — ի՞նչ էր դա պատանու ղեռն աննշան կենսագործի սահմաններում, մինչև Հովհաննէս Հովհաննիսյանի հետ ունեցած բախտավոր հանդիպումը 1889-ի սեպտեմբերին, Գևորգյան ճեմարանի պատերի ներսում:

Ճեմարան ընդունվելիս պատանի Ավետիքն արդէն ինքնուս պոետ էր՝ հայտնի միայն ընկերների շրջանում: Գրել սկսել է 11—12 տարեկան հասակից՝ կարդացած զրգերի և լսած աշուղական երգերի անխուսափելի նմանողութեամբ: Բնականաբար, զրանք պետք է լինէին հայրենասիրական և սիրային ոտանավորներու: Բայց եթէ առաջինները զուտ ազդեցութեան արդշունք էին, հետո սեփական կենսագործից, ապա երկրորդներն ունէին որոշ կենսական հիմք, քանի որ վերին աստիճանի հուղական խառնվածքի տեր պատանին սիրահարվել սկսել է նույնքան վաղ, որքան ոտանավորներ գրելը. ղեռ տասներկու տարեկան հրապուրվել է խաղընկեր աղջիկներից մեկով, որի անունն էր Զարու Պատանեկան սերն ընթացք չի ունենում, բայց և չի կորչում անհետ. հետագայում Զարուին հանդիպում ենք Իսահակյանի ոչ թէ կյանքի, այլ ստեղծագործութեան մեջ:

Այդքան վաղ հասակում բնական է լինել քանաստեղծ, բայց ոչ խմբագիր և թատերագիր: Բայց պատանի Ավետիքը

հզել է և՛ մեկը, և՛ մյուսը, երկուսն էլ կյանքում առաջին ա-  
վերջին անգամ: Սահակ Բահակյանը ստացել է ետրեն Առե-  
փանեի «Հայկական աշխարհ» ամսագիրը: Դա բավական է  
եղել, որ Սահակի կրտսեր որդին տեղեկների համար լույս-  
ընծայի սեփական հանդեսը ճիշտ նույն անունով: Սրա մեջ  
տեղ են գտել պատանու սեփական ոտանավորները, նորու-  
թյուններ շրջապատի կյանքից, յուրալիների միջավայրից,  
լուրեր Ղազարապատի և Ալեքսպոլի կյանքից, տպավորություն-  
ներ Անիի ավերակներից, Հոռոսի վանքից և այլն:

Պատանի Ավետիքը նաև պիես է գրել՝ «Յասաման խանում»  
վերնագրով: Բովանդակությունը՝ նման արևելյան սիրավեպե-  
րին. ծերացած բեկը բռնություն է կոչված է առնում զեռա-  
տի մի աղջկա, բայց մի օր էլ աղջիկը փախչում է իր սիրած  
ջահել տղայի հետ՝ հարուցելով բեկի մոլեգլին խանդն ու վրի-  
ժառությունը: Պիեսը նույնիսկ խաղաղվել է Ալեքսպոլի ինչ-որ  
սիրողական բնմում, իր իսկ «բեմադրություն»:

Սրանով էլ ավարտվում է Բահակյանի «գրամատուրդիա-  
կան և քառերյական զործունեությունը», թեև տարիներ անց  
ևս չի գլացել մի քանի անգամ հանդես գալու քառերյական  
քննադատի գերում:


Այնպես որ, 1890-ին, երբ տասնհինգամյա Ավետիքը հա-  
մարձակվում է իր ոտանավորը ներկայացնել հոգևոր ուսուց-  
չին՝ արդեն մի որոշ փորձի տեր բանաստեղծ էր, և դա չի  
վրիպել Հովհաննես Հովհաննիսյանի աչքից:

Կատակ բան չէր. տասնհինգամյա պատանին հանդգնում  
է ոտանավորը ձեռքին մոտենալ իր «երազած բանաստեղ-  
ծին», որին նմանվելով, որի «բառերը, պատկերները, ձևերը»  
յուրացնելով էր գրել մինչ այդ:

Հիանալի է, որ Բահակյանը թղթին է հանձնել իր այդ  
բախտորոշ հանդիպման նկարագրությունը. վավերական ոչ  
սրտատուշ, ինչպես ամեն ինչ, որ գուրս է եկել իր գրչի տա-  
կից:

ԻՍԱՀԱԿԱՆ—Այն ժամանակ նա 26 տարեկան երիտա-  
սարդ էր—գեղեցիկ, հմայիչ, այնպես բարի, պարզ ու քաղցր:

Սրտով սովորում էի նրա գասերը և ուզում էի, որ նա նկա-  
տեր ինձ:



...Մի օր, 1890 թվի գարնանը, մեզ ավանգաժ գասից անմիջապես հետո, ճեմարանի մութ միջանցքում, սրտի ուժեղ բաբախումով մատնեցա նրան և տվի իմ նոր ոտնավորը և խնդրեցի, որ կարդա...

Խնամքով գրված թղթի կտորը, ոտանավորս առավ և ձեռքիցս բռնելով ասաց. «Դեհ, պարտեզ»: Դեհ, ցիցնք ճեմարանի պարտեզի այն ծառուղին, որ «բանաստեղծ» աշակերտներին մտորումների և երազանքների վայրն էր, ուր հաճախ չգային քայլվածքով շրջում էր և ինքն իր հետ խոսում անմահ Կոմիտասը՝ եղբայր Սողոմոնը, ինչպես կոչում էինք նրան փոքր աշակերտներս:

Ոտանավորիս խորագիրն էր «Երկու համբույր»: Դասընկերներս հավանել էին, որով ևս սիրտ էի առել այն ցույց տալու վարպետիս:

Երկու համբույր: Առաջին համբույրը որպես թե իմ սիրած աղջիկն է տալիս ինձ վարդազույն, բոցավառ շրթներով, իսկ երկրորդ համբույրը մահն է տալիս՝ դժգույն, սառը շրթներով:

Կարգաց և իրեն ասաց. «Սեր և մահ, բանաստեղծության մշտական նյութը», հետո դարձավ դեպի ինձ. «Իհարկե, այս գրածդ երեսակայություն է: Վաղահաս: Գրիր քո ղեպացած բաների մասին: Բավական սահուն ևս գրել... Երևում է՝ վաղուց ևս սկսել գրել, վարժ ես... Վանկեր, հանգեր տեղին են, վատ չեն...»:

— Այո՞, վաղուց եմ գրում, մի քանի տարի կա,— պատասխանեցի ես:

— Շատ լավ, մեկ-մեկ ինձ ցույց տուր գրածներդ: Շարունակիր գրել, բայց շատ կարգա, զարգացիր և հայերեն լավ սովորիր:

Երբեմն-երբեմն նոր գրած ոտանավորներս ներկայացնում էի նրան. սիրով կարդում էր, նկատումներ և ուղղումներ անում և անդեմահատելի խորհուրդներ տալիս:

Այսպես գնում էր ժամանակը դասերի և անուրջների միջով: Մի օր, 1892 թվին ցույց տվի մի նոր ոտանավոր.

Մազիկ էի նորաբողբոջ  
Մարի լանջում, երկնի տակ...

Կարգաց ուսանավորս, նորից կարգաց և քաղցր ժպիտով  
ասաց՝ ուսիս թեթև խփելով. «Կեցցե՛ս, Հիմա բանաստեղծ  
ես»:

Ոգևորությանս սահման չկար, ամուր սեղմեցի նրա ձեռքը  
և թռա ընկերներս մոտ:

ԲԱՆԱՍԽԻՐ—«Հիմա բանաստեղծ ես», անցյալի դարավերջի  
Հայ պոեզիայի վարպետը մեր դարի Հայ պոեզիայի ապագա  
վարպետին այս խոսքն ասել է 1892-ին, երբ սա ընդամենը  
տասնյոթ տարեկան էր: Պատանու կյանքը, այդ կյանքի մեծ  
ու փոքր հանգամանքները, ամեն ինչ կարծես վերին մի խոր-  
հրդով հյուսվել էին այնպես, որ նա անխոտոր ճանապարհ-  
ով հանգի այդ նվիրական կետին: Բացվեց բանաստեղծը  
կարծես ինքնիրեն, կարծես ահամա, այնպես բնական ու  
անմտադիր, ինչպես սարի լանջի այն նորարողը ծագիլը,  
որի մասին գրած ուսանավորն էլ նրան բերեց բանաստեղծի  
համարում. Հովհաննիսյանի օրհնության առիթը զառնալուց  
հետո, հենց նույն թվականին, ուսանավորը տպագրվել է  
«Տարազ» հանդեսում:

1892 թվական՝ Իսահակյանի կյանքի առաջին մեծ ջրա-  
ժանր: Մինչ այդ Հովվերգության պես հոգեպարար հոսող  
կյանքի առաջին ցնցումը: Պատանին, որ սիրահարված էր  
Շուշանիկ Մատակյանին՝ իր պոեզիայի հերոսուհուն, մերժում  
է ստանում: Նույն թվականին արժանանում է ուսուցչի մար-  
դարեական օրհնությանը և տեսնում իր առաջին ուսանավորի  
տպագրությունը: Թողնում է ճեմարանը և ընդունում արտա-  
սահման մեկնելու վճիռ:

Իսահակյանի կյանքի ընթացքը փոխվեց միանգամից: Մի  
հանդարտաբարո, հայեցող, հայրենի եզերքին փարած բնա-  
վորություն մտավ կյանքի մի նոր փուլ՝ թափառական ու առ-  
հանգիստ: Կյանքի վերջում, իր ծնոյան 80-ամյակի առիթով,  
բանաստեղծն այսպես է ասել:

ԻՍԱՀԱԿՅԱՆ—Ես երազում էի միշտ ապրել Շիրակում՝  
հորս տանը, մորս մոտ. և երգել իմ Շիրակը, և նրան իմաս-  
տավորող ժողովրդին: Բայց իմ այդ համեստ երազը չկենսա-  
դործվեց. քաղաքական հանգամանքները և հալածանքները  
ինձ նետեցին հեռուները...

ԲԱՆԱՍԽԻՐ—Իհարկե, ոչ 1892-ին Թիֆլիս գալը, ոչ էլ հա-

ջորդ թվին արտասահման մեկնելը կապ չունենին «քաղաքական հանգամանքների և հալածանքների» հետ,— դրանք պիտի երևան գային շուտով և առատորեն,— բայց հենց այս պահանակ է, որ բանաստեղծը պոկվում է հայրենի Շիրակից։ Եւ հայտնվում օտար հորիզոններում, վարում աստանդական կյանք, որ շատ տարիներ այդ կյանքի օրինաչափությունը պիտի լիներ։

Նախ գալիս է Թիֆլիս՝ «Լուսավորության կենտրոնը», ինչպես Մուրացանն այդ քաղաքը կոչել է իր վեպի վերնագրով։ Իրոք, Թիֆլիսը, Անդրկովկասի վարչական կենտրոնը նաև հայկական կյանքի մտավոր, մշակութային և զեղարվեստական կյանքի կենտրոնն էր, ուր, Լեռլի արտահայտությամբ, կերտվում էր ժամանակի հայոց պատմությունը։ Այստեղ նա առաջին անգամ տեսնում է, ծանոթանում, ապա և մտերմանում հայոց դրականության մեծերի հետ։

ԻՍԱՀԱԿՅԱՆ—1892 թվին Թիֆլիսում, հայոց վանքի բակում բնկերներս ցույց տվին Պոռչյանին, որ մի քանի հասակակից մարդկանց հետ զրույց անելով՝ զնաց առաջնորդաբանի։ Հայրական տպավորություն ստացա նրանից, և այդ տպավորությունը հարատևում է զգայնությանս մեջ՝ մինչև այսօր։

ԲԱՆԱՍԵՐ—1940-ին, իր ծննդյան 65-ամյակի առիթով ստած խոսքում, բանաստեղծն իր կյանքի մեծագույն բարեբախտությունն է համարել, որ տեսել է մոր զննքը, տեսել է Անին, Հովհաննես Հովհաննիսյանին, Հովհաննես Թումանյանին, լսել է Կոմիտասին։ Մեծ բարեկամության սկիզբը զրած ծանոթությունը Թումանյանի հետ՝ նույնպես 1892-ին է վերաբերում։

ԻՍԱՀԱԿՅԱՆ—1892 թվի նոյեմբերի վերջին, թե զեկտեմբերի սկզբին էր, զնացել էի Հովհաննես Թումանյանի մոտ, Կովկասյան հայ հրատարակչության գրասենյակը. Հովհաննեսը պաշտոնավարում էր այնտեղ, կարծեմ, գործերի վարիչ էր. զործ կար չկար, ինձ հայտնի չէր, այնքան զիտեմ, որ ամբողջ ժամանակը մենակ էր նա, ժամերով զրույց էինք անում և խանդավառ չէր լինում։

ԲԱՆԱՍԵՐ— Եվ նույն օրն էլ, բախտի բերումով, ծանո-

թացել է մանկական երևակայության մեջ փայփայած Ղազարոս Աղայանի հետ:

ԻՄԱՀԱԿՅԱՆ—Հիշատակածս օրը ազմուկ-աղաղակով դուռը բացվեց, ներս մտավ մի հազթանգամ, թիկնեղ, ալեխառն տղամարդ, հաստ պալտո հագած, բաշուղով, վալեկաններով, խակույն ճանաչեցի՝ Ղազարոս Աղայանն էր: Նրանք զրկախառնվեցին, կարոտով երկար-երկար համբուրվեցին:

ԲԱՆԱՍԵՐ—Նվ ահա, իր առաջին բանաստեղծությունը տպագրած, հայոց մեծերի հետ ժանոթություն հաստատած, բավականաչափ վաղաժամ գրական ասպարեզ մտած տասնութամյա Բաահակյանը մեկնում է արտասահման:

Այս անգամ՝ կամովին:

Ինչո՞ւ է մեկնում:

Իհարկե, ընդհատված կրթությունը շարունակելու, այն էլ գերմանական մտքի կենտրոններում, որոնք ավանգարդը բարձր կրթության օրրաններ են եղել հայ գրողներից ու գիտնականներից շատերի համար:

Բայց կար և մի «ոչ պաշտոնական», դուռ հոգեբանական պատճառ, կապված բանաստեղծի նուրբ զգացմունքների հետ՝ իր մերժված սերը: Բանաստեղծի վկայությամբ՝ դա է եղել զխափոք պատճառը:

Դա սովորական սեր չի եղել, ոչ էլ մերժումը՝ սովորական մերժում: Այդ մի միակ սերն այնքան մեծ տեղ է զբաղել բանաստեղծի կյանքում, որ առանց դրա դժվար կլինի հասկանալ նրա ոչ միայն ներաշխարհը, այլև ստեղծագործությունը, ավելին՝ աշխարհազգացումն ու աշխարհընկալումը:

Պատանի Ավետիք Բաահակյանի այդ առաջին և վերջին սերն ապրել ու միացել է նրա սրտում ավելի քան 50 տարի, եղել է նրա թափառ կյանքի աննահանջ ուղեկիցը՝ հյուսելով մի սիրավեպ, որ զգացմունքի խորությամբ, ողորկական ուժով, բանաստեղծի ներաշխարհի և ստեղծագործության վրա ունեցած ներդրածությամբ կարող է համեմատվել թերևս միայն Սայաթ-Նովայի սիրո հետ:

Բաահակյանի սիրո պատմության արտացոլումն իր «Հիշատակարանն» է, նրա հոգևոր կյանքի բաց գիրքը, նրա ապրումների ու խոհերի անեղծ հայելին՝ ժամանակային վիթխարի ընդգրկումով (1892—1956), իր կյանքի խոհագրությունը:

ու՛ր իմացական, հուզական, գեղադիտական արժեքը պակաս  
չէ՝ իր գեղարվեստական ստեղծագործությունից։

Մի քանի հիմնորոշ զիծ անցնում է զրբի միջով մի ծայրից  
մյուսը՝ ազգային նահատակորի ողբերգությունը, ինքնաձա-  
նաշման որոնումները, նոստալգիայի հասնող հայրենարադ-  
ձությունը և դրանց մեջ՝ իր մերժված սիրո տառապանքը։

Բանաստեղծի սիրավեպը ծայր է առել պատանի հասակից,  
և սկզբից արդեն կրել է անհանդիստ շեշտ՝ Հոգեկան ճգնաժամ  
է ապրել պատանին, միայն մի բան է ցանկացել։

ԻՍԱՀԱԿՅԱՆ—...լալ, ողևորվել, սիրածս աղջկա մոտ՝ ան-  
ցույթ Շուշիկի մոտ, և ինձ թվում է, որ նա ինքը միայն կարող  
է «դարդիս դարձան, յարիս մահւամ» լինել... Բայց նա իրա  
այդ վեհությունը չի զգա։

ԲԱՆԱՍԵՐ— Փոխադարձ սիրո շարժանացած սիրահարը  
հույսը չի կորցրել։

ԻՍԱՀԱԿՅԱՆ— Օ՛ր, ես դարձյալ կհուսամ, կսիրեմ, կտանջ-  
վեմ. ժամանակը կարող է փոխել մարդկային սիրտը՝ ապա-  
ռաժը սպունգ դարձնել... (1893, մայիսի 18)։

ԲԱՆԱՍԵՐ— Նույն օրվա գրառման մեջ նա մտաբերել է իր  
սիրո նախապատմությունը 1891-ի հունիսի 17-ին, երբ էջ-  
միածնի Գևորգյան ճեմարանի տասնվեցամյա սանը հանդիպել  
է Ալեքսանդրապոլի Սահականուշյան դպրոցի տասնչորսամյա  
սանուհուն։

ԻՍԱՀԱԿՅԱՆ— Կ-ների<sup>1</sup> տանը պատահեցա օր. Ե-ին. ող-  
ջունեցի և նստեցա մոտը. նա ասեղնագործությամբ էր պա-  
րապում. մեր քաղաքի բոլոր աղջիկներից ավելի սա է ինձ  
գրավում. շափազանց գեղեցիկ է. սև և կլոր աչքեր, վառվռուն  
և խելոք հայացք, վարդազույն շրթունք, դալկահար դեմք,  
պարզ, որոշ ձայն. այո, սա մի հրեշտակ է, մի գերբնական  
ոգի, մի մազնիս, որ քաշում է դեպի իրեն իմ սիրտն ու հոգին։  
Ես և նա խոսեցինք առանձին. մաքուր հայերեն էր խոսում։  
Նա երևի ինձ համակրեց. զոնե համակրանքի ցույցեր էր  
անում։

ԲԱՆԱՍԵՐ— Դժվար է ասել. թե ինչ բովանդակություն է

---

1 Գարապետ և Հովհաննես Կոստանյանների՝ Շուշանիկ Մատուկյանի  
ազգականները։

ունեցել այդ համակրանքը՝ պարզ քաղաքավարութիւն, ինչ  
զգացմունք: Հավանորեն առաջինը: Պատանի սիրահարը հո-  
կոահում է տառապանքի թանկ գնով:

ԻՍԱՀԱԿՅԱՆ— Ա՛խ, Շուշիկի համար էի ես ապրում, իմ  
կյանքի ծանրութեան կետն էր, նրա շուրջն էր պատմում իմ ողջ  
գոյութիւնը—կրթում, առնորում, գրում, ապում, ձի հեծնում,  
շոր հագնում, զարդարում, տխրում, քեֆ անում, արտասահ-  
ման թռնում, երազում—միայն նրա համար... Ա՛խ, ինչքա՛ն  
սիրում էի, և ինչքա՛ն մարտիր ու հրեշտակային... Ինչքան  
լացել եմ նրա համար—ճեմարանում, ծառերի տակ հոնգուր-  
հոնգուր լացել եմ... շա՛տ եմ լացել... մենակ լացել եմ... երա-  
զում լացել եմ, անկողնումս լացել եմ... Ա՛խ, Շուշիկ, դու ոնց  
մոռացար ինձ՝ ինձ, քու պաշտողին...

ԲԱՆԱՍԻՐ— Հիշո՛ւմ եք այս սրտառուշ բանաստեղծու-  
թիւնն իր մեղեդու հետ միասին: Դրա առաջին կեսն եմ մեջ  
բերում:

*Քո՛ւյր իմ եղգիկ, ետիւր քո գիծաց՝*

*Վերաժուր, ա՛վեր սիրտս եմ բացել:*

*Ա՛խ, երբի՞րակա՛ն ինձ քո գրկէ բաց*

*եմ գորգուրբր ինձ, ես շատ եմ լացել...*

Իրոք որ՝ ճշմարիտ արվեստագետների ապրումները, հուզ-  
մունքները, տանջանքները շին կորչում:

Սղա՛վ այնպէս, որ 1894-ին Շուշանիկ Մատակյանը և ման-  
կավարժ Հովհաննէս Տեր-Միրաքյանն ամուսնացան: Դա այն-  
պէս է տակնուվրա անում բանաստեղծի հոգին, այնպիսի  
ցասում է առաջ բերում նրա մեջ՝ ասես մարդիկ անլուր ոճի-  
ր են զործել իր հանդեպ և իրեն մնում է արշան վրեժ լուծողի  
դերը: Ընդհա՛ն է՝ սեփական արշամբ: Ժամանակակից ընթերցողի  
մեջ կարող են ժպիտ հարուցել անցած-գնացած սիրո պատմու-  
թեան այս վկայութիւնները՝ այնքան են չափազանց, եթե  
երիտասարդ սիրահարի զգացմունքները նույնքան խորը լի-  
նէին:

ԻՍԱՀԱԿՅԱՆ— Երեկ գիշերը մինչև չորսը լե՛մ քնել, հետո  
քնեցի, որովհետեւ ուժասպառ եղա... Տանջվեցի, լացեցի, հու-  
սահատվեցի ու զլուխս պատին խփեցի... Շուշի՛կ միայն քե՛զ  
համար այսօր էլ եմ լացել ու շատ տանջվել... Ես վճռել եմ—

պիտի նամակ գրել Շուշիկի մարդկանց և խնդրել ու ստիպել՝ որ առանձարզան տա, իսկ եթե չտվեց, ես էլ շեմ կարող տանել... այն ժամանակ կդիմեմ խիստ միջոցներին—արշուն... Ես ինձ կսպանեմ ու իմ արշունով կներկեմ նրանց չիրք ամուսնութեան խաչտառակ անկողինը... Անեծք կյանքին ու զարգացմանը— անե՛ծք, անե՛ծք...

ԻԱՆԱՅԻՆՐ— Ահա թե որսեղից են բխում՝

Ա՛խ, իմ ճամփեն մուր զընաց,  
Անասկ ծովին զեմ տոտ,  
Վա՛խ, իմ սերքս տեցա՞վ, զընա՞ք.  
Ես կանչելու ճար չըկտ...

(1897, Հոսիճ)

Սե աչերեն շա՛տ վախեցիր,—  
էն մութ, տեճեր գիշեր է.  
Մութեն տ՛հ է, շարքեր շա՛տ կան,—  
Սե աչերը մի՛ սիրե...

(1897, Ալեքսանդրապոլ)

Սիրեցի, յարժ տարան.  
Յարա տրվին ու տարան.  
—էս ի՞նչ գուրտ աշխարհ է,  
Սիրտս պոկեցին, տարան...

(1898, Օդեսա)

Հիշո՞ւմ եք Իհարկե, հիշում եք, այն էլ նույնքան սրտաշարժ մեղեդիներին ուղեկցութեամբ, մեղեդիներ՝ այնքան հարազատ խոսքին, որ ասես դրանց հեղինակն էլ Իսահակյանն է:

ԻՍԱՀԱԿՅԱՆ— Հազար երանի Շուշիկին սիրած չլինելի, ու շիրեի հիմա էլ— նա իմ դժբախտության, իմ քայքայման ու վերջապես իմ մահվան պատճառն եղավ, և է լինելու...

ԲԱՆԱՍԻՆՐ— Բարեբախտաբար, այդպես չեղավ, բանաստեղծը երկար ապրեց, շատ ավելի, քան Շուշիկը և իր ամուսինը, քայց ամբողջ կյանքում կրեց իր մերժված սիրո տառապանքը, իբրև իր խաչը: Հիացմունք է պատճառում Իսահակյանի սերը ոչ միայն զգացմունքի տեսականությամբ ու խորքով, այլև մաքրամաքուր բովանդակությամբ:

ԻՍԱՀԱԿՅԱՆ— Երբ ես սիրում էի Շուշիկին— ուրիշ տեսակ

մարդ էի, երկրային չէի. ես սիրում էի շատ խորը և շատ հաստատ. իմ էությունն նրան էր պատկանում. նրա գոյությունը էր իմ կյանքը պայմանավորվում և համարյա պայմանավորվում է: Ես չէի ձգտում նրան համբուրել— այդ միայն ինձ վիրավորում էր, իսկ մի առփական էնթադրություն՝ ինձ հուսահատեցնում (1895, ապրիլի 16):

Ես կնոջը միշտ կնայեմ որպես մի ընկերի, ես նրա մեջ կորոնեմ հերոսությունն ու կրեկերանամ մի նպատակի համար վաղեմ... (1895, ապրիլի 26):

Երբ ես գեռ պատանի, երբ քնությունը նոր սեր ցույց իմ մեջ, երբ նոր աղջնակի սերը իմ կրծքում արևադարձ սովեց— ես սիրեցի Եուշիկին— ես սիրեցի նրան՝ ինչպես իմ մայրիկին, ինչպես զեղեցկությունը, ինչպես հայրենիքիս կապույտ լեռները— իմ ողջ էությունը երգի ու երգիքի քնկերով հյուսեցի նրա սիրելի էություն հետ... Ես երգեցի, մտորեցի ու լացեցի նրա համար... նրա համար միայն (1895, հոկտեմբերի 7):

ԲԱՆԱՍԵՐ— Եվ ի՞նչ, եվ այն, որ սիրավեպն արտաքուստ ջատ ինտելիգենտ ընթացք է ընդունում՝ վայել և՛ քրոպական հույժ նորակիրթ միջավայրի, ոչ թե հայոց մի զավառական քաղաքի (այ՛ն թե ինչ քաղաք է եղել սեփարաշեն համեստ Ալեքսպուր):

ԻՍԱՀԱԿՅԱՆ— 1896-ի հունվարի 29. Հաշտվեցա Եուշիկի հետ. նա շատ մտերիմ վարվեց ինձ հետ. բայց զուր է:

— Այո՛, — հաշտվեցա Եուշիկի հետ. մի երկու օր հետո զնացի նրանց տուն. մարդը շատ սիրով ընդունեց, ինքն էլ եկավ մեր խոսակցությանը մասնակցեց... շատ պարզ էր վարվում հետս, բայց և ոչ սիրալիր:

ԲԱՆԱՍԵՐ— Եվ շատ տարօրինակ պիտի լիներ, եթե Հովհաննես Տեր-Միրաքյանը շատ սիրով ընդունելուց և պարզ վարվելուց հետո զեռ շափաղանց սիրալիր լիներ իր կնոջ սիրահարի հետ: Որքան էլ այս պատմություն մեջ մենք մեր բանաստեղծի կողմը բռնենք, էլի ոչինչ կշտամբելի չենք կարող նկատել Եուշիկի և Հովհաննեսի վարքագծի մեջ: Եուշիկը հարգել է բանաստեղծին, հարգել է նրա զգացմունքները, բայց չի սիրել նրան, խոստովենք չի տվել, Հովհաննես Տեր-Միրաքյանին է սիրել, ո՞րն է նրա մեղքը՝ Սա էլ Եուշիկին է սիրել ու սիրվել փոխադարձաբար, սրա մեղքը ո՞րն է:

Ահա ձեզ սիրո ողբերգական մի պատմութիւն, որի մեջ ոչ ոք մեղավոր չէ:

Մերժված սիրահարն ինքն է վկայել:

ԻՍԱՀԱԿՅԱՆ— 1897-ի հուլիսի 7-ի գրառում. Շուշիկն իր կամքով բացատրեց տարիներ առաջ իր վարմունքը իմ սիրո նկատմամբ. նա իրեն արդարացնում էր, ասելով, որ ինքը ուրիշին էր սիրում, իսկ ինձ, իբրև լավ աղայի, միայն համակերում էր. հետո թե՛ վրաս շատ էր կարեկցում, բայց անզոր էր. ինքը մեղավոր չէր, փոքր աղջիկ էր... Է՛հ, սրտմաշուկ բաներ...

Ղփշաղում Շուշանիկը ինձ ասաց, «ես պատրաստ եմ քեզ բժշկելու համար ամեն միշտ, ինչ որ կախված է ինձնից՝ գործ դնել քեզ համար»։— Ոչինչ չեմ ուզում... անցածն անցած է...

ԲԱՆԱՍԵՐ— Ի՛նչ կարող էր ասել ազնվաբարտ կինը սրանից ավելին: Անշուանդրապուլում ծնված տուրքենեյան կին՝ վեհանձն, հասկալու, կարեկից: Ի՛նչ անենք, որ կարեկցանքը չէր մեր բանաստեղծի ուղածը: Սե՛րը: Բայց սերը հրամայումի, կամբի ենթաշնչալ, իսկ կարեկցանքն ավելի էր ցավեցնում մերժված բանաստեղծի սիրտը, և այսօր ատարիներ անց նրա տառապանքի խոստովանութիւնները կարգալիս՝ մեր սիրտը հմլվում է՝ այնքան կսկծալի են այդ խոսքերը:

ԻՍԱՀԱԿՅԱՆ— Շուշիկը դաշույն ցցեց սրտիս մեջ, և մնում է դաշույնը. վերքը խորը, արեւով լիք, և ապրում եմ ամեն քայլադիմում արշալէ կաշիքներ ծորելով. հետքս արշուճով ներկվեց, բայց ո՛չ մի մխիթարութիւն չստացա մարդկանցից...

Ահա՛ն, անվերջ տանջվեցի, տարիներ, դարեր տանջվեցի և հիմա հոգնած եմ, քարացած...

Նրիտասարդ կյանքս, դարունս դժոխքի, տառապանքի մեջ անցավ. մեռած եմ, և ոչ թաղած. դիակ-դիակ ման եմ դալիս... Ո՛չ մի անգամ սրտանց լուրտխաջա... (1901, դեկտեմբերի 4):

ԲԱՆԱՍԵՐ— Սա 1901 թվի գրառում է, երբ քանդվեցը բուրբա՛կ Իսահակյանը ճանաչված բանաստեղծ էր արդեն, Թու՛մանյանի Վերնատան անդամը, որ նստում-վեր էր կենում հայ

մարի ու բանաստեղծության մեծերի հետ, մի ոտքը հայրենիքում էր, մյուսն արտասահմանում: Բայց ոչինչ, ոչինչ չէր փախաւում նրա սիրո տառապանքը: Այդպես տառապելն էլ ասածուց շնորհված ձիրք է, դրա համար մեծ սիրտ պետք էր ունենալ: Իսահակյանն ուներ այդ ձիրքն ու սիրտը, մեծ տառապանքի տաղանդը, որ մեծ էլ արվեստ է ծնում: Գրանից տասնյակ տարիներ անց՝ 1925 թիվ, օգոստոսի 25, Իտալիայի Վիչենցա քաղաք...

ԻՍԱՀԱԿՅԱՆ — Օտարության մեջ: Մուգիկ լսում եմ թափառելով մենակ: Մարդիկ անցնում են խմբով, զույգ-զույգ, երկսեռ...

Տխրություն է ծավալվում հոգուդ մեջ և աշխարհում... Սերդ զարթնում է սրտիդ մեջ. վերքդ բացվում է նորից՝ հին վերքդ: Ինչքա՞ն բախտավոր կարող էիր լինել, և չեղար...

Ո՞վ, Շուշիկ, ի՞նչ արիր ինձ, որ տասնյակ տարիներ հետո դեռ միտում է վերքս...

Քե՞զ հետ միայն, միա՞յն քեզ հետ կարող էի բախտավոր լինել, ներդաշնակ, հաշտ՝ աշխարհքի և մահի հետ: Քեզ հետ կյանքս կիմաստավորվեք, և տիեզերքը խորհուրդ կունենար, որովհետև նրա կամքը, նրա խորհուրդը կատարած կլինեիր...

ԲԱՆԱՍՆԵՐ — էլի տարիներ են անցնում, 1928 թվական, հայրենիք վերադարձած Իսահակյանը ծննդավայր քաղաքում: Շուշիկը նրան հրավիրում է քեյի: Նստում են կողք կողքի «կարծես թե ոչինչ չի պատահել. դրսերեսով՝ հանգիստ, զվարթ»: Թեյասեղանի շուրջն են Շուշիկի երկու դուստրը, քույրն ու քրոջ աղջիկը՝ «իրրև անցյալին անգիտակա»: Մինչդեռ խորատկված երջանկության վիշտը դեռ միտում է բանաստեղծի հոգում:

ԻՍԱՀԱԿՅԱՆ — Լսում էի նրանց և խոսում ու ծպտում, բայց անցյալի ուրախ, մանավանդ տխուր հիշատակները չկել, լցվել էին ու խեղզում էին իմ հոգին և ծովացել էին շուրջս...

Ով ինչքա՞ն բախտավոր կլինեի մինչև օրս, այս բուպինս, որ չեղավ...

Շուշիկն ասաց. — Ավետիք, հիշո՞ւմ ես Ղիշաղ, այն կարմիր ծաղիկը, քաց, նուրբ կարմիր, բայց մեղմ կտրված քեր-քերով: Ի՞նչ էր նրա անունը. ուրիշ տեղ չեմ գտել նրան, չեմ տեսել նմանք:

Եւ շհիշեցի:

— Այն ծագիկը, որ դու քաղեցիր բարձր ժայռի կրծքից՝  
Ձորում մի բարձր ժայռ կար. մագլցեցիր և քաղեցիր...

Եւ հիշեցի, բայց տասցի, որ բնավ չեմ հիշում, բուրբուխն  
մոռացել եմ:

Բայց տասցի մաշիս մեջ. այդ մեր սիրո, մեր երջանկու-  
թյան ծագիկն էր, որ թառամեց ու մեռավ անդարձ: Եվ, իհար-  
կե, նրան չեա... դեռ մինչև օրս ո՛չ մի տեղ, ո՛չ մի տեղ եմ  
նայինակ նմանն էլ չեա տեսել:

ԲԱՆԱՍԻՆԻ— Հիսունն անց մարդկանց այս սրտառու ճան-  
դիպումը զեռ սիրավեպի ավարտը չէր: Համենայն դեպս՝  
բանաստեղծի հոգում: Նրա մեջ ապրում է սիրո իղեալը, իսկ  
իղեալի համար նշանակություն չունի, որ Շուշիկին տեսել է  
սխառամած, խորշոմ, տծողուն: Ո՛չ մի նշանակություն:

Անցան էլի շատ տարիներ: 1942, հունվարի 27, պատերազ-  
մի ժամանակ, Վարդկաթ Մոսկվայում է, հյուրանոցում: Առա-  
վոստյան նրան արթնացնում է ուղիտն, «Ուռի ես, կռանալ մի՛»  
երգը: Եվ վերստին նրա մեջ կենդանություն է առնում իր  
առաջին և վերջին սիրո տառապանքն այնպիսի նախատեղծ  
թարմությամբ, ասես վրայից կես դար չէր անցել:

ԻՍԱՀԱԿՅԱՆ— Շատ և շատ հուզվեցի... Տեսա մեր քաղաքը  
1892 թվի աշնանը, հարազատ փողոցները, տները, բարդիները,  
ուռիները... Շուշիկը նստել էր լուսամուտի առաջ և երգում էր  
«Ուռի ես, կռանալ մի՛, մեր դռնն հեռանալ մի՛, չա՛ր, Աստը-  
վածդ կսիրես, սիրելի ես, մոռանալ մի՛»:

Նա ինձ լքել էր, ինձ արհամարհել էր, ուրիշին էր սիրում.  
եւ գիշեր-ցերեկ նրա դռներից չէի հեռանում, նրա դռն գերին  
էի, իսկ նա ուրիշին էր ուղղում իր խնդիրը— «Մեր դռնն հե-  
ռանալ մի՛, սիրելի ես, մոռանալ մի՛...»: Ա՛խ, ի՛նչ հակասու-  
թյուն, ի՛նչ չար բախտ... Այդ բախտը ինձ կործանեց, թշվա-  
ռացրեց ամբողջ կյանքս, ինձ հիվանդացրեց ամբողջ կյան-  
քիս ընթացքում... Չա՛ր բախտ, չա՛ր Աստված...

Այս զգացմունքի տակ՝ սիրտս այնպես փղծկաց. զգացի  
ինձ պատանի այն օրերում, և բնավ ցանկություն չգարթնեց  
մեջս՝ նորից վերագրանալու ներկայիս մեջ— ծերության մեջ—  
անտարբեր, անհույզ, չոր ու ցամաք, անսեր, անհրապույր  
այս տարիքի մեջ. դուրկ ամեն հաճույքից, մորից, բույրերից,

եղբայրներին, ընկերներին, տներ, գյուղից թափուր այս իրականության մեջ, որ կամ... Ուղղակի ուզում ես ինքնասպանության գործել, որ մեռնես այս երազի մեջ՝ չահել, զգացմունքներով թաթախուն և աչք շրանաս այս գորշ կյանքի վրա...

**ԲԱՆԱՍԵՐ**— Մի՞թե զարմանալի չէ. զգացմունքի ինչպիսի՜ խորություն, ինչպիսի՜ ուժ, որ տվել անցել է կես դարի մի ծայրից մյուսը։ Եվ ահա վախճանը, բանաստեղծի վերջին գրառումը Շուշանիկ Մատակյանի մասին. 1944, հունիսի 30։

**ԻՍԱՀԱԿՅԱՆ**— Տեսա Շուշիկին. հիվանդ, ձերացած, կմաղ-քացած։ Եվ համեմատել՝ այն ծայրը և այս ծայրը։

**Զարհուրելի է։**

Լսեցի մահը 21/X, ժամը—2-ին։

**ԲԱՆԱՍԵՐ**— Մի անգամ էլ, վերջի՛ն անգամ, տիկին Շուշանիկ Միրաքյանի թաղումից օրեր անց, նամակներից մեկում բանաստեղծն արել է խոստովանություն։

**ԻՍԱՀԱԿՅԱՆ**— Հոր հավիտյան, մինչև մահ, գերեզման չեմ մոռանա ես նրան։ Զիմա կարող եմ ասել, որ իմ կեսը մեռել է։

**ԲԱՆԱՍԵՐ**— Եվ ուրիշ ոչինչ։ Մնացածը՝ լռություն։ Այսպես սիրել և այսպես տառապել՝ ամեն մարդու բան չէ։ Կյանքի ողբերգականը զգալու այսպիսի կարողություն բնությունը քչերին է պարգևում։ Եվ այդ քչերը, եթե ունեն նաև իրենց ապրումները խոսքով արտահայտելու կարողություն՝ բանաստեղծ են դառնում։

Այդ քչերից, ընտրյալներից էր Ավետիք Իսահակյանը։

Ողբերգականի ցավաշնորհն սուր, մշտաբերուն զգացողությանը նա իր մեծ վիշտը սրբագործեց մեծ արվեստով ու նվիրեց իր ժողովրդին։ Նրա սիրո վշտալի պատմությունն էլ իր անարատ մաքրությանը, զգացմունքների խորությանը մի վսեմ ստեղծագործություն էր, որ ընդունակ եղավ հորինել հայ իրականությունը։ Բախտը շփտաց սիրահար Իսահակյանին, անողորմարար ժլատ եղավ իր հանդեպ, բայց շռայլորեն առատաձեռն եղավ բանաստեղծ Իսահակյանի հանդեպ, թեև նա կուղեկար։ որ հակառակը լիներ։

Իհարկե, արվեստագետներն այն նպատակով չեն մեծ վիշտ ապրում, որ դա ստեղծագործության նյութ դարձնեն, բայց և առանց մեծ ապրումների մեծ արվեստ չի ստեղծվում։

Նրիտասարդ, գրեթե պատանի՝ տասնութամյա Իսահակ-

յանը կուզենար ո՛չ իր անհույս սիրտ տառապանքը կրել, ո՛չ էլ սիրային քնարերգության գլուխգործոցներ ստեղծեր այգքուն թանկ գնով: Բայց մարդիկ ապրում են ոչ այնպես, ինչպես կամենում են, այլ այնպես, ինչպես թելադրում, տնօրինում են հանգամանքները:

Մերժված սիրահարի համար երջանիկ սիրահարներն տեսնելը դառնում է ալլես անտանելի:

ԻՍԼԱՄԱՅԵԱՆ— Եվ որպեսզի նրանց շահագրգիռ, վճռեցի Գերմանիա գնալ ուսանելու:

ԲԱՆԱՍԻՐ— Այսպես նա 1893-ին հայտնվել է Վիեննայում, ուր նույն այդ ժամանակ ուսանում էին հայ պատմության և գրականության ազազա նշանավոր մասնագետները Հակոբ Մանանդյանը և Մանուկ Արեղյանը: Վիեննայում Իսահակյանն աշխատել է մարդաբանական թանգարանում ու լսել դասախոսություններ:

Զարմանալի է՝ առաջներում ինչքա՞ն շուտ էին հասունանում մարդիկ: Գյումրեցի տասնութամյա մի պատանի՝ աշխատում է հեռու-հեռավոր օտար և օտարախոս քաղաքում, հարմարվում բոլորովին ուրիշ կյանքի ու կենցաղի պայմաններին:

Ավստրո-Հունգարիայի մայրաքաղաքում կես տարի մնալուց հետո Իսահակյանն անցնում է Լայպցիգ՝ գերմանական գրի ու մշակույթի մեկ ուրիշ նշանավոր քաղաք: Այստեղ արդեն նա ուսանում է, Իբրև Լայպցիգի համալսարանի գրական և փիլիսոփայական բաժանմունքների ազատ ունկնդիր՝ նա լսում է գերմանական հայտնի գիտնականների դասախոսությունները: Կարդում է Գյոթե և Հայնե, Մարքս և Էնգելս, Բերեկ և Նիցշե, Շտիրներ և Դյուրինգ, օտար մեծ կուլտուրայի ազդեցությամբ սկսում է հզկվել ու լցվել բանաստեղծական և իմացական այն անհագ խառնվածքը, որ մինչ այդ հայկականից ու գավառականից բացի, ոչինչ չէր տեսել:

Այս՝ չէր տեսել, բայց բանն այնպես չափաի հասկանալ, թե պատանի Իսահակյանն արտասահման մեկնեց իբրև «սպիտակ թուղթ»: Հայկականն ու գավառականը, Գեորգյան ճամփանը հատկապես, այնքան բան էին սովել ի բն խորամիտ պատանուն, որ նա ընդունակ էր այնպիսի դասողություններ

անելու ժամանակի և տարածության, կյանքի ու մահվան, մարդկային կեցության իմաստի ու նպատակի մասին:

**ԻՍԱՀԱԿԱՅԱՆ**— Ըստ իս՝ մարդիկ ավելի անդիտակցորեն են ապրում, քան գիտակցորեն... Ամեն բան կարծես բնազդ-մամբ է... Լույսը բացվում է՝ զարթնում են, լվացվում են, խոսում են, ճաշում են, մթնում է՝ քնում են... Նրանք չգիտեն, թե ինչպե՞ս է կատարվում այս ամենը. ծիծաղում են, լալիս են, տխրում են— ինչո՞ւ—չգիտեն: Ախր ինչպե՞ս եղավ, որ այդ երեւոյթները պատահեցին, և այլ տարօրինակ հարցեր... (Սա 1891-ի գրառում է, երբ հեղինակը դեռ 16 տարեկան էր):

...ամեն մի տառը գրելիս՝ ներկան, մի վայրկենաշափ ներկան դառնում է հավիտենական— անդարձ անցյալ, — այդպիսով ներկայի արագության մեջ գառնալով, ևս չեմ կարող հասնել թարմ, կենդանի ներկային՝ հոգուս ներկային: Գրիչս ոտավոր է, ժամանակի հոսելը—սահելը՝ ձիավոր: (1893):

Ես սիրում եմ ինքնուրույնություն, տարօրինակություն, անհատականություն. միապետ, միահեծան, ինքնիշխան, ինքնադինաց, ինքնապատան, ինքնահյուս, ինքնազործ, ինքնազգաց, ինքնախոհ. «Ես ունենալ, տիեզերքի մեջ՝ աշխարհ ունենալ, ինքնակամ թագավորություն, իմ հպատակների վրա՝ զգացմունքներին, կրքերին, մտքերին, վճիռներին, հոգուս տարրերի վրա, արտահայտվում են, և թո՛ղ արտահայտվեն միայն իմ «Բարձրագույն ես»-ի տնօրինած ձևերով, գույներով: Ահա իմ մեծ իղձը:

Շատ մտածեցի, բայց քիչ գրեցի (1893):

**ԲԱՆԱՍԻՐ**— Վստահ կարելի է ասել, որ դեռ նախքան արտասահման մեկնելը մեր բանաստեղծն արդեն մտածող, աշխարհաճանաչման և ինքնաճանաչման տանջալի որոնումներով ապրող, ինքնուրույն ու ինքնատիպ մտքեր ձևակերպող անհատականություն էր: Նրա արտասահմանյան կեցությունը և ուսումնառությունը միայն զարգացրին այդ ի ծնե հարուստ անհատականությունը, հասունացրին նրա միտքը: Այն էլ իմանանք, որ արտասահմանում հայտնված պատանին ամեն եվրոպականի վրա հիացող գավառացի էր: Քննադատական վերաբերմունք նա ի հայտ բերեց հենց սկզբից:

**ԻՍԱՀԱԿԱՅԱՆ**— ...անտանելի մարդիկ են գերմանացիք.

զգացմանը, շտեմելն, փողակներ... Առաջին հարցը, որ տալիս են մենք, է՝ ի՞նչ էր սովորում և ի՞նչ պաշտոնի էր պատրաստվում, որքան փող կստանար այդ պաշտոնից...

**ԲԱՆԱՄԵՐ**— Իսկ իր իղեակները՝ հակառակը, տրամազոտրեն հակառակը: Գովար է հորինել ավելի գեղեցիկ, անշահախընդիր ասպետական իղեակներ, քան այն, որ փայփայել է երիտասարդ բանաստեղծը:

**ԻՍԱՀԱՆԱՅԱՆ**— Ինձ ոչինչ չի երջանկացնում, այլ միայն իմ մտքերիս տարածումը, ուստի ես կցանկանամ միայն մի գյուղ ինձ համար, ուր ես լինեմ ձրի ուսուցիչ: Ուզում եմ ձրի լինել, որ անկախ ապրեմ այն, ինչ որ ճշմարիտ է և օգտակար տանջվածներին. ձրի եմ ուզում, որովհետեւ այդ պայմանի մեջ ես ինձ քարծր կղզում... Սա կլինեմ ձրի ուսուցիչ, — օրինակ՝ Մաստարայում<sup>1</sup>, — գյուղացիք թող միայն հաց ու ջուր տան — այն անունով, ինչ որ իրենք ունեն՝ իրենց անդանին թող մասնակից անեն, իսկ ես՝ նրանց երեխաներին, պատանիներին կսովորեցնեմ կարդալ և ապրել. նրանց երիտասարդներին — դատել ու ապրել (1894):

**Իմ ռեպրիմենտ** — Լինեմ աղնիմ, գոյություն, խելոք, լինեմ կարեկցող, աղքատ, գործուն, լինեմ թափառական, քարոզող, հեղափոխող, կովող: Դեռ եմ գյուղ, ապրեմ մորս հետ, սիրեմ նրան իմ ամբողջ ուժերով, սիրեմ ընկերներին և տանջվածներին: Խրատեմ մարդկանց, ինձ կրթեմ, ինձ պատրաստեմ, ինձ ամբողջեմ հողով, խիստ ու լուրջ պարապեմ, թափանցեմ աշխարհի ու կյանքի մեջ (1894):

**ԲԱՆԱՄԵՐ**— Արտասահմանյան կեցության ընթացքը ինքնաճանաչման ընթացք է եղել Իսահանյանի համար:

**ԻՍԱՀԱՆԱՅԱՆ**— Մի անհատի շարժք է դատապարտել այն հանգամանքների համար, որ նա գործել է այն հասակում, երբ նա ինքնաճանաչություն չէ ունեցել, որ անկախ չէ մտածել, ինքնուրույն չէ եղել, լավն ու վատը փիլիսոփայորեն չէ հասկացել:

**ԲԱՆԱՄԵՐ**— Այդպես, նա իրեն անպարտ է համարում մինչև 15—16 տարեկան հասակը գործած. արարքների ու հան-

<sup>1</sup> Շիրակի մեծ և գեղատեսիլ գյուղերից մեկը (Ժան. Հեղինակի):

ցանքների համար, Դրանց մեղավորը միջավայրն է եղել, շրջապատը:

ԻՍԱՀԱԿՅԱՆ— Իսկ այնուհետև, երբ ես անկախ եմ մտածել ու թքել եմ բոլորի ու շրջանի վրա... Այդ օրվանից ես իմ հանցանքների պատասխանատուն եմ... Անցյալում ես այլ մարդ էի, նա Ավ, Իսահակյանը չէր... Իսկ ես այժմ իմ զխի տերն եմ, ես այժմ Ավ, Իսահակյանն եմ:

ԲԱՆԱՍԵՐ— Քսանը զեռ շրջուրած երիտասարդն արդեն իրեն համարում է ինքնուրույն անհատականություն, անկախ մտածող և դրա համաձայն էլ մշակում է իր աշխարհայացքը, իր իդեալները, իր հասկացությունները կյանքի, սեփական անձի ու նկարագրի մասին: Անհունորեն զեղեցիկ է հերոսի այն ումանտիկական պատկերացումը, որ հյուսել է բանաստեղծն իր վառ երևակայությամբ:

ԻՍԱՀԱԿՅԱՆ— Ես պիտի հերոս լինեմ— օ՛, ի՛նչ մեծ ու վեհ զգացմունք, երբ հերոսական գործից— կովից հետո կըրծփա վերքեր, ճակտիս կնճիռներ, զխիս ուռու թարմ պսակ՝ րնկերներիս հետ կմտնեմ-կվերադառնամ իմ ծննդավայրը... Ծ՛, այնտեղ մայրս ուրախության արցունքով լի թաշկինակը կշարժե, այնտեղ Շուշիկը ուրախության մեջ, ծախտով լի՝ ծաղիկների փունջը կծղե դեպի ինձ... ու րնկերներս «ուռա» կգոչեն... (1894):

ԲԱՆԱՍԵՐ— Իսկական հերոսը ոչ միայն քաջության, այլև բարձր բարոյականության մարմնացում է, սակավապետ և անձնազուհի:

ԻՍԱՀԱԿՅԱՆ— Նա պիտի ատեն վաղա՛հ համբույրը, բայց պիտի արցունքով համբուրե... Նա պիտի խույս տա զվարճություններից— կշտացնող ու հզփացնող զվարճություններից... Նա պիտի անքուն մնա, սոված ու ծարավ... Նա պիտի սիրե զենքն ու զերանդին... քնարն ու գրիչը... ավերակն ու անպատը... Նա պիտի բոլորին կարեկցե, բայց պիտի բոլորից սիրվի ու պաշտվի: Նա պիտի բոլորին ձեռք տա ու օգնե, բայց ուրիշից մերժե այդ... (1894):

ԲԱՆԱՍԵՐ— Սա արդեն հոգեղեն մարդու կերպար չէ, այլ զերմարդու: Եվ իրոք:

ԻՍԱՀԱԿՅԱՆ— Թող նա (կինը) սիրե իմ մեջ իմ մեծ եսը— իմ զգացմունքները, բարեկությունը, տանջանքը— այն ժամա-

նակ ես կզգամ ինձ բարձր և մարդ — գերմա՛րդ... Թող նա ինձ սիրե — գտնելով իմ մեջ գերմարդկայինը...

**ԲԱՆԱՍԵՐ** — Զափազանցություն չի լինի սակ, որ Իսահակյանն աշխարհայացքի, դադափարական համադումների, նույնիսկ գեղարվեստական հղացումների հիմքերը դրվել են արդեն իսկ վաղ երիտասարդական տարիներին։ Հեռու ապագայում սակզմելիք Աբու-Լալա Մահարու կերպարը տարբեր չէ գերմարդու այս պատկերացումից։

Եթե ճիշտ է այն միտքը, որ վիշտն ու տառապանքը նպաստում են մտքի զարգացմանը, իմաստուն են դարձնում մարդուն, ապա Իսահակյանն ուներ այդ պայմանները։ Նա անձնապես ճաշակել էր ոչ միայն սիրտ, այլև աշխատական անարդարության տառապանքը։ Նա այնպես էր մտածում, նախ այնպես, որ Շուշիկն իրեն անմատչելի եղավ իր աղքատության պատճառով։ Արասաահմանում եղած տարիներին ապրելով կարիքի մեջ (Վանիփող, պարտքի տակ ու մաշված շորերով), գտնալով սոցիալական սուր հակասությունների ականատեսը, բանաստեղծի արդարության կարոտ հոգին լցվեց մոխրացնող առեկտիվայմ գեղյի տիրողները։ Եվ նա գրում է իրեն երգում։

**ԻՍԱՀԱԿՅԱՆ** — Իմ ուխտը։

Ես տեսնում եմ մարդիկ, որոնք աշխատում են զօր ու գիշեր, բայց մնում են անտուն, անքուն, սոված, ծարավ, ալյանդակված, հիվանդ և բուսական էակ, անբարոյական։ Այս բոլորի պատճառը անտեսական անարդարությունն է։ Նրանք, որ չեն աշխատում՝ ունեն պալատներ, տասնյակ ձեռք շորեր, քանկադին սեղան...

Ես կվիրեմ բուրժուան, պետություն, փող, կզեր, գյուղ ու քաղաք և կստեղծեմ նոր երկիր, ուր աշխատեն, ուտեն և հագով գեղի վեր սովառեն։ Ահա այսպես՝ ես մարքսիստ և նիցշեիստ եմ, սոցիալիստ, անարխիստ, գեմեկրատ, արխատոկրատ (1895)։

**ԲԱՆԱՍԵՐ** — Նա այնքան է լցված կյանքի անարդար զբաղմունքի գեմ, որ պատրաստ է համատեղել անհամատեղելին՝ միաժամանակ լինել նիցշեիստ և մարքսիստ, սոցիալիստ և անարխիստ, միևնույն է թե ինչ, միայն թե բիրտ իրականություն երգվալ թշնամին, ավերողը լինի։ Քսանամյա բանաստեղծը, իհարկե, չէր կարող պարզորոշել իր քաղաքական դա-

վանանքը, առավել ևս կուսակցական պատկանելությամբ (միակ կուսակցությունը, որին նա պատկանել է հետադաշում՝ Հայ հեղափոխական դաշնակցությունն էր, որ հիմնադրվել էր իբրև սոցիալիստական ուղղության կուսակցություն), բայց որ նա այս ժամանակից արդեն, և մինչև վերջ, հավատարիմ եղավ սոցիալական արդարության զաղափարախոսությանը՝ ավելի քան հասակ է։ Այնպես որ, ազգային և սոցիալական ազատագրության պայքարի կողմնակիցն ու մասնակիցը, 1905 թվի հեղափոխությանը նվիրված «Ազատության զանգ» հեղափոխական բանաստեղծության հեղինակը, 1917 թվի փետրվարյան հեղափոխության շատագույնը («հրաշափառ հեղափոխություն»), «Սասմա Մհեր» պոեմին սոցիալական պայքարի շեշտ տվող բանաստեղծ իր աշխարհայացքով եթե պատրաստ էլ չէր, ապա լինելության մեջ էր։

Իսկ առայժմ նա համակված էր խոչական պայքարի վերացական ձգտումներով։

ԻՍԱՀԱԿՅԱՆ— Թող լինի կոխի, մորիկ, արցունք, ժպիտ, հույզեր, նպատակներ, ձգտումներ, բոցեր, դժվարություններ և հաղթանակներ։

ԲԱՆԱՍԵՐ— Երիտասարդ Իսահակյանի միտքը շարշարվել է փրկսոփայական ու սոցիալական բարդ զաղափարներով, կեցության իմաստավորման դժվարին խնդիրներով, իսկ բանաստեղծական գրչի տակից դուրս էին գալիս պարզալուր ժողովրդական քերթվածքներ։

1893-ի ամառվանից արդեն (առաջին անգամ Իսահակյանն արտասահմանում ապրել է երկու տարի՝ մինչև 1895-ի ամառը) պոետի բանաստեղծությունների տակ սկսում են երևալ հեռու-հեռավոր քաղաքների անուններ։ Հետադաշում դրանք ավելի ու ավելի շատացան, այնքան ավելի, որքան պոետն ստիպված եղավ թափառել արտասահմանում։

Առայժմ, 1893—95 թվերին, դեռ միայն վիեննա, Պրագա, Դրեզդեն, Լայպցիգ, Ենա, Բեռլին... Եվ միշտ, գրեթե իբրև օրենք, այդ պարզալուր բանաստեղծությունները ներշնչված են հայրենի եզերքով։ Տարօրինակ է նույնիսկ՝ ոչ մի առնչություն գրության վայրի ու գրվածքի բովանդակության միջև։ Ասես դրանք ստեղծված են ոչ թե նվրոպական կոկիկ ու հրապուրիչ քաղաքներում, որոնք պիտի որ զարմացնեին

մատաղահաս կովկասցուն, ազդեին նրա գրչի վրա, այլ Ղա-  
զարապատում, Կարսում, Ապարանում կամ Հառիճա վանքում,  
ինչպես իր նախորդ բանաստեղծությունները:

Վիեննա և՛

Շքեկչեկալով հովն է փըշում  
Հով Բինգյուլի լանջերից...

Պրագա և՛

էս համփեն ուր-ձուր,  
Սն ծովի բուր կերթա,—  
Շուշան յարս ինձի թողել՝  
էն ազի հետ ուր կերթա...

Լայպցիգ և՛

Գա՛րզըս լացեր, ասրի սըմբուլ,  
Արվան-այվան ծաղիկներ...

Սարսոնիա և՛

Մանկալ ես, թեզարած ես,  
Առը շուռ սուր, շուռ արի,  
Ծովի պես քրտնած ես,  
Եզներն արձկի, տուն արի...

Էն.ա և՛

Հովերն առան սար ու գարեք,  
Ամպերն ելան, մութն ընկավ...

ՃՃ աշտպես միշտ, կյանքի արշալույսից մինչև միջօրն ու  
դեռ ալիլի ուշ. մինչև որ ահամա թափառումներից հոգնած  
սյունը 1936-ի վերջին գտավ իր վերջին հանգրվանը հայրե-  
նի հողում:

Իսկ հիմա, 1895-ի ամռանը, քսանամյա սյունը վերա-  
դառնում է հայրենիք՝ տպավորություններով լեցուն, մտա-

Հորիզոնն ընդլայնած, Եվրոպայում ապրած, աշխարհ տեսած մարդու կնիքը վրան: Այդ ամուսնը պետքը մի նամակ է ստացել Արդահանից Դերենիկ Դեմիրճյանի՝ իր ապագա ընկերոջ ու գրչակցի ստորագրությամբ. «...ինչքան լավ կլինի, եթե ուղարկեիր քո լուսանկարը, որովհետև ուզում եմ տեսնել, թե զու ո՞վ ես: Լուսանկարի ժամանակ չէր. խառը ժամանակներ էին, առավել եւ հայկական կյանքում, «ոնակցիայի տարիներ», ինչպես գրում են պատմության դասագրքերում: Հայ ժողովրդի 19-րդ դարի պատմությունն ավարտվում էր արշան հեղեղով սուլթանական թուրքիայում և հալածանքներով ցարական Ռուսաստանում:

ԻՍԱՀԱԿՅԱՆ—Հայ կյանքը սկսված էր արևմտահայերի շարժերի սարսափելի լուրերով և շարժերին ակնհասեա փախած հայ զաղթականների սրտակեղեք պատմություններով: Ամեն զիտակից հայ ծանր մտահոգություններ ուներ արևմտահայերի և հայկական հարցի ճակատագրի նկատմամբ:

Տխուր շրջան էր. ցարական հայահալած քաղաքականությունը շարադին բնույթ էր ստացել, կառավարությունը փակել էր հայոց զարոյցները, իրար ետևից փակում էր հայ թերթերը, զրադարանները և կուլտուրական հիմնարկները. բանտերը լցվել էին արևմտահայերի ազատագրական շարժման համակրողներով. բանտարկված էին Ղ. Աղայանը, Երվանդադյան:

ԲԱՆԱՍԵՐ—Դեռևս 1891-ի սկզբին, ցարական Ռուսաստանի ներքին գործերի մինիստր Դուրնովոյի նախագահությամբ և լուսավորության ու արտաքին գործերի մինիստրների, ինչպես նաև Կովկասի կառավարչապետ Երեմեևի մասնակցությամբ, Պետերբուրգում կայացել էր «Հայկական գործերի խորհրդակցություն»: Ցարական բյուրոկրատիան այստեղ մշակել էր հայ ժողովրդի իրավական ու կրթական իրավունքները բնազդատեղի ծրագիր: Չնայած հայ ժողովրդի ու մտավորականության համառ զիմադրությանը, ցարական պետական մեքենան իրազործում էր այդ ծրագիրը, մինչև որ 1905 թ. հեղափոխությունը կայսրության մյուս, մանավանդ ոչ ուս, ժողովուրդների հետ միասին, թեթևություն բերեց հայ ժողովրդին: Հատկապես նպատակ էր դրվում, որ թույլ չտրվեն այնպիսի երևույթներ, որոնք կարող են դժվարացնել

կառավարութեան գործունէութիւնը, որը ձգտում է հայ ազգութեանը աստիճանաբար ծուլել կայսրութեան տիրապետող բնակչութեան հետ: Պարզ բան է, որ «այդպիսի երևույթներն մեզ ամենից առաջ նկատի էր առնվում զարոցը: Ահա ինչու առաջին հարվածը հասցվում էր ազգային զարոցին, որի հետ պետական հալածանքը ծայր էր առել տարիներ առաջ: Զէ՛ որ պատանի Ավետիքն էլ 1885-ին դուրս մնաց հայկական զարոցից նույն այդ քաղաքականութեան հետեանքով:

Պետք է արժանիք տալ հայ մտավորականութեանը, զրոգ-նէնքին, որոնք քաղաքացիական քաջութեան ունեցան դիմա-դրաբնու աչդ հալածանքներին: Երիտասարդ Իսահակյանը երանցից մեկն էր: 1896-ի այդ դժվար օրերից մեկն Իսահակյանն անց է կացրել ավագ զրշակցի և հիմա արդեն մտե-լի՛մ ընկերոջ՝ Թումանյանի տանը:

ԻՍԱՀԱԿՅԱՆ—Ուշ գիշեր էր, երբ պատրաստվեցինք քնե-լու: Օհանեսը լամպը ձեռքին կանգնել էր անկողնուս մոտ:

— Այ տղա, շատ մի՛ տխրիր, վերջը լավ կլինի: Հայ ժո-ղովորդը ավելի ծանր օրեր է տեսել: Մի՛ հուսահատվիր, էս էլ կանշնի:

ԲԱՆԱՍՆԸ—Իրոք որ անցավ, բայց դա ծանր նստեց ժո-ղովրդի ու նրա մտավորականների վրա: Իսահակյանն էլ երանցից մեկը: 1896-ի մայիսի 1-ին քանաձայն պոետը ձեռ-բակավում է Դիլիջանում և հետո տեղափոխվում Երևանի բանտը: Այդ ժամանակ, մի քանի ամիս միայն բանտում մնալուց հետո, Ազգայանն ու Երվանդազենն արտոբվել էին. Աղայանը՝ Նոր Նախիջևան (Դոնի Ռոստով), իսկ Երվանդազենը՝ Օդեսա: Հիշո՞ւմ եք «Արտիստը» պատմվածքի առաջին նախադասութիւնը. «Հինգ ամիս էր ընդամենը Օդեսայումն էի. չորրորդ անգամ փոխեցի սենյակս»:

Իսահակյանն ավելի երկար մնաց բանտում, մինչև 1897-ի տարիի 17-ը, զրեթե մի ամբողջ տարի: «Քուրդ Ամոն» և «Բայրամ Ալին» զրվածքները պոետի բանտային կյանքի ար-տացոլումներն են:

ԻՍԱՀԱԿՅԱՆ— Զանգվի տփին խաշաձե նստել է մտալլ ու տխրաղեմ Երևանի բանտը:

Այս վիթխարի լռալի ձախ թևի վրա մեր խցերն էին զբո-նրվում. ես միայնակ էի իմ խցում բանտաված. մի փոքրիկ

լուսամուտ նայում էր Արագածին, որի միայն բյուրեղափայլ  
զազաթն էր հայացքս զուրգուրում:

...Դուռս միշտ փակ էր, կողպած. նրա վրա կար մի փոք-  
րիկ անցք-ծակ, որի միջով գիտում էին մեզ պահակները և  
որտեղից բանտարկյալներին հաց, ջուր էին տալիս:

Հարևան բանտարկյալներս միմյանց տեսնում ու խոսում  
էինք այդ անցքի միջով...

Միատեսակ բախտը, տանջանքը մեզ բոլորին միացրել էր.  
եղբայրացել էինք միևնույն վշտի և տառապանքի մեջ: Փա-  
ղաքական հանցավորն ու քրեական հանցավորը, թուրքն ու  
հայը, քուրդն ու ասորին եղբայրացել էին իրար հետ:

ԲԱՆԱՍԵՐ—Այս տողերի մեջ խոսում է մեր պոետի բարձր  
հումանիստական ոգին, որ հակառակ էր նեղմիտ ազգայնա-  
մոլությանը և հակառակ էլ մնաց մինչև վերջ: Այլասիրություն-  
ներ, ամեն մեծ մարդու, մեծ արվեստագետի պարտադիր հառ-  
կանիչը, Բաահայկանը սովորել էր ոչ թե գրքերից, այլ կյանքից,  
փոքր հասակից տարբեր ազգերի պատկանող մարդկանց հետ  
ունեցած շփումներից: Տարբեր ժամանակներում գրած  
գործերում նա հաստատել է իր կենսափորձի վրա հենված  
համոզումը. բնավ էական չէ ի՞նչ ազգություն է պատկանում  
մարդը, էականն այն է, թե ի՞նչ մարդ է նա: Բարձր ու ազ-  
նիվ նկարագրի մարդը միշտ էլ հարուցել է մեր պոետի  
անսքող հիացմունքը, խալացի լինի («Գարիբալդիականը»),  
վրացի («Շաքրո Վալիշվիլի»), թե ադրբեջանցի («Բալբաթ  
Ալին»): Միայն թե հերոսական լինի նկարագրի, միայն թե  
ազնիվ լինի տառապանքը, միայն թե ասպետական լինի բնա-  
վորությունը: Տեսե՛ք, թե ի՞նչ հիացմունք է խաղում գրողի  
գեմքին, երբ նա, 1924-ին, Վենետիկում, մտաբերում է Բալ-  
բաթ Ալուն, 1896-ի բանտարկության ժամանակվա իր բախ-  
տակցին:

ԻՍԱՀԱԿՅԱՆ—Նրանի բանտում, իմ խցի պատահանի  
տակ, ընդարձակ պարսպած բակի մեջ, օրը երկու անգամ  
պտույտի էին հանում հանցավորներին:

Նրանք աղբրեջանջիներ էին մեծ մասով, երիտասարդ տա-  
րիքի, զվաճողական գյուղացիներ:

...Անվանի ավազակներ էին նրանք՝ կարավան կտրած,  
պետական պոստը կողոպտած:

Բեկերի և ազաւարների դեմ հողի ու չրի համար վրեժխնդիր իրավասւոյնքեր էին, իրենց իսկ ձեռքով զատաստան արած: Սիրտ հերոսներ էին նրանք, սիրած կանանց համար արշուն թափած:

Բայց այդ ազամարդկանց մեջ մեկը կար, որ ամենից շատ զրաւել էր իմ ուշն ու զգացմունքը:

Մոտ երեսուն տարեկան մի երիտասարդ էր նա, բարձրահասակ՝ անտառում բուսած եղենու նման և եղենու նման ճշկուն: Եվ խոր ու մթին աչքերով՝ քարանձավների խորութեան ու մթութեան նման:

Բայրամ Ալին:

...Մի՞ վեր նա, ի՞նչ ուներ նա այս ինքնազոհ՝ ոճրագործների մեջ: Մի բացառութեան, քանի որ նման չէր մշուսներին: Անվերջ զիտում էի նրան, և շատ էի փափագում իմանալ նրա կյանքի վեպը:

ԲԱՆԱՍԻՆՐ—Իսահակյանն այն էլ է հիշել, թե ով է իրեն պատմել Ալու կյանքի վեպը: Դա էլ արժե մեջբերել՝ ծանոթանալու համար ժամանակի բանտային բովանկան ազատ շրջերին և իր՝ Իսահակյանի բանտային կենցաղին, նաև այն բարի համարմանը, որ ինքն ունեցել է բանտարկյալների մ'շտովայրում: Թեթև հանցանքների տեր՝ կալանավոր տղանքն ազատ ելումուտ են ունեցել բոլոր խցերը:

ԻՍԱՀԱԿՅԱՆ—Այդ տղաներն էին ինձ հաց, ջուր, թեյ բերողները, և սրանց միջոցով էին տեղի ունենում հարաբերւել շանները իմ և շղթայակապների միջև, որոնք ինձ շատ էին հարգում իբրև կարգացվոր մարդու, իբրև «թաղավորի դեմ էլավոջ ջահել իգիթի» և զրոյից ստացած իրենց ուտեստներից ինձ մաս էին ուղարկում այդ տղաների միջոցով:

ԲԱՆԱՍԻՆՐ—Նրանցից մեկն էլ կարգացվոր բանտարկյալին պատմել Ալու կյանքի վեպը: Աստիճատկան մի սիրավեպ, որի հերոսը, իր սիրտ համար զուխը ետ դրած մի քաջ ազամարդ, հպարտութեամբ է կրել ահամա մեղաւորութի և շղթայակապ կալանավորի տառապանքը: Ի՞նչը կարող էր ավելի հիացնել սիրտ և տառապանքի քանամշաւ երգչին:

Տառապանքը, այն էլ մենակյաց կալանավորի, արագացնում է մարդու հասունացումը: Այդ մի տարում, ճաշակելով «թաղավորի դեմ կոճոզ ջահել իգիթի» բաժին հասած հալար-

տությունն ու զառնությունը, երիտասարդ պոետը սեփական կենսափորձով ձեռք բերեց աղատության երգչի բարոյական իրավունքը: Բշ մի կասկած, որ 1903-ի «Աղատության զանգ» բանաստեղծության հեղինակը, կովկասյան ժողովուրդներին աղատագրական պայքարի կոչ անող պոետը հասունացել էր անձնական կենսափորձով:

Ամեն մի կոչ ու քարոզ, — իսկ ճշմարիտ արվեստն ու գրականությունն այլ բան չեն, քան կոչ ու քարոզ՝ արտահայտված զեղարվեստական միջոցներով, — բարոյական կշիռ ու արժեք է ձեռք բերում նույն այդ կոչն ու քարոզն անողի անձնական վարքագծով: Մեծ օրինակները՝ Զորջ Բայրոն, աղատության երգիչը, որ գլուխը դրեց հույն ժողովրդին թուրք բարբարոսներից ազատելու գործում, Շանդոր Պետեֆի, հայ-բենասիրության երգիչը, որ զոհվեց իր հունգար ժողովրդի աղատագրության գործին... մեր նախնադասը, Աղայանը, Թումանյանը, Սիամանթոն, Վահան Տեղյանը և ուրիշ-ուրիշ նվիրական անուններ, որոնք իրենց ստեղծագործություն-զապատկանները դրել են դրշով, բայց կրել են անձնապես, տառապանքներ են քաշել հանուն այդ զաղափարների:

Իսահակյանն էլ՝ նրանց պես ու նրանց հետ:

Անձնական ու ստեղծագործական վարքագծի միասնություն: Մեկը սրբագործում է մյուսը: Մեկը կշիռ է տալիս մյուսին:

Այդպես է օրենքը: Հակառակը՝ խզումն արվեստագետի կյանքի ու գործի միջև, գրածի ու արածի միջև, կեղծիքի կնիք է դնում և՛ մեկի, և՛ մյուսի վրա:

1897-ի ապրիլի 17-ին պոետն աղատվեց բանտից, բայց ոչ ոստիկանական հսկողությունից: Շատ ժամանակ չէր մնում մինչև իր աքսորը դեպի Օդեսա: Մի տարուց քիչ ավելի, բայց այդ մի տարում նա հասցրեց շատ բան անել:

1898-ը նշանավոր տարեթիվ դարձավ հայ բանաստեղծության պատմության մեջ. Ալեքսանդրապոլում լույս տեսավ Իսահակյանի «Երդեր ու վերքեր» բանաստեղծությունների ժողովածուն: Նույն թվի զարնանն էր, որ նորահայտ բանաստեղծն առաջին գիրքը տանում էր իր ավագ ժամանակակիցների և նվիրում կրասերի խոնարհությամբ:

ԻՍԷԼԱԿՅԱՆ—Անձամբ գնում էի մեր հռչակավոր գրող-

ների մոտ և խորին ակնածանքով զրբույկս ներկայացնում նրանց։

Գրբույկս տարա Աղսյանին, իսկ մյուս օրը գնացի Պոռչանի մոտ։ Սրտատրոփ բարձրացա աստիճաններով։ Պոռչանը նստած էր գրասեղանի առաջ և գրում էր։

...Գրբույկս մի պահ թերթիւց հետո, Աղսյանի պես զրկեց, համբուրեց ճակատս, և «հայրենաշունչ բանաստեղծ ես, ապրես,— ասաց հայրական ձայնով,— Շիրակից ուրիշ տեսակ երգիչ, իհարկե, չէր կարող ծագել»։

ԲԱՆԱՍԻՍԻՐ—Պոռչանն, իհարկե, միանգամայն ճիշտ է նկատել երևույթը։ Ժողովրդական կյանքի անթերի զգացողության վիպասանն առաջին իսկ հայացքից ճանաչել է նույն այդ կյանքի անթերի զգացողության բանաստեղծին։ Եվ իր բացատրությունն էլ ճիշտ է՝ բնաշխարհից, Շիրակից ելած բանաստեղծը պետք է որ բնաշխարհիկ շունչ ունենար։ Բայց դա բացատրության մի կողմն է։

Մյուսը, ոչ պակաս էականը, ժամանակն է։

Մեկը վայրն է, մյուսը՝ ժամանակը։ Միշտվայրից ու ժամանակից դուրս ոչինչ չի բացատրվում։ Միշտվայրը՝ ժողովրդական կյանքի, ժողովրդի մարդկանց, աշուղների, բանասացների միշտվայրը, ուր մեծացել էր Իսահակյանը, մենք արդեն տեսանք։

Այժմ էլ ժամանակը զննենք։

Հայտնի է, թե բովանդակ հայությունն ազգային-ազատագրության ի՞նչ վառ հույսեր էր կապում 1877—78 թվականների ռուս-թուրքական պատերազմի հետ։ Եվ զրա համար կար հիմնավոր պատճառ։ Այդ երկու տերությունների պատերազմների փորձը ցույց էր տվել, որ թուրքերը միշտ էլ ծնկի են եկել ռուսական զենքի զորության առաջ։ 1877—78 թթ. պատերազմը բացառութիւն չեղավ։ Իսկ հայության ազատագրությունը, անցյալ դարի սկզբից ի վեր ու զրանից էլ առաջ, կապված էր ռուսական պետության արևելյան տառախաղացման հետ։ 1878-ին էլ, Երևանի առումից կես դար հետո, Ռուսաստանը ռազմական անվերապահ հաղթանակ տարավ Թուրքիայի դեմ։ Բայց ռուսական առաջխաղացմանը թշնամանքով նայող եվրոպական մեծ պետութիւնները զիջանդիտական նենգամիտ խաղերով կողոպտեցին

ռուսական զենքի հաջողութիւնները և զրա հետ միասին՝ հայ ժողովրդի ճառագած հուշները: Ի՞նչ մի մեծ բան էր Գերմանիայի «երկաթե կանցլեր» Բիսմարկի համար թղթախազի մեջ զոհել ինչ-որ աննշան մի ժողովրդի ոչ թե միայն կենսական շահերը, այլև հենց կյանքը: Կամ Անգլիայի վարչապետ Բիկոնսֆիլդի համար՝ զրա փոխարեն, իբրև կաշառք, թուրքերից ստանալ Կիսրոս կղզին: Այս ամենը կատարվեց 1878-ին, երիցս անիծյալ Բեռլինի վեհաժողովում: Զուր չէ, որ Ռուսաստանի արտաքին գործոց մինիստր Գորչակովը ռուսական հաղթանակի պատուհները կողոպտող այդ վեհաժողովը համարում էր իր զիջանագիտական կարինրայի ռամենասն էջը: Կարելի է ավելացնել՝ հայ ժողովրդի պատմական ճակատագրի ոչ թե ամենասն, այլ սև էջերից մեկը, որովհետև զրանից առաջ էլ, հետո էլ անպակաս եղան սև էջերը նրա պատմությունից:

Ահա ինչու, շատ տարիներ անց, Անգլիայի պրեմիեր-մինիստր Լոյդ Զորջն իր հուշերի գրքում պիտի աներ այսպիսի խոստովանություն.

«Եթե շիներ մեր շարարաստիկ միջամտությունը, ապա հայերի մեծամասնությունը ղեռնա 1878 թվականի Սան-Ստեֆանոյի պայմանագրով կանցներ ռուսական զրոշի պաշտպանության տակ»:

Ինչո՞ւ կատարեցինք այս պատմական շեղումը: Այն պատճառով, որ ազգային կյանքում կատարվող մեծ երևույթները. — լավ թե վատ, — անմիջապես ազդում են նրա հոգևոր մշակույթի, ուտի նաև գրականության վրա:

Հայության ողմանտիկական հուշերի խորտակումը բարոյապես անանկացրեց նրա ողմանտիկական գրականությունը, մանավանդ՝ պոեզիան: Սառը ջուր մազվեց ժողովրդի վրա ու նաև նրա բանաստեղծություն: Եվ ողմանտիկական մարտաշունչ պոեզիայի զրոշակակիր Ռաֆայել Պատկանյանին ուրիշ բան չէր մնում, քան մրմնջալ դառնագին.

Մեր հոգու վիշտը, մեր քոթն ու սուգը.

Ազնիարչ աշաց մեր արտոտուրը

Ոչ ոք չտեսավ, ոչ ոք չի ըզգաց.

Լուսավար Եվրոպ կույր ու խուլ մընաց:

1879-ին հաջորդեցին համազգային սթափեցման տարիները: Գրականության մեջ, ազգային կյանքի տեղաշարժերի անխուսափելի անդրադարձումով՝ եկան ուսմանտիկական պատրանքները թոթափելու, ղեկի պետիստական ուղղությունը քննելու, ժողովրդական կյանքի մեջ թափանցելու, ժողովրդական հեղեղանգի հաստատման ժամանակները: Ռամանտիկական ոգորումները, կոշերն ու քարոզները կորցրել էին իրենց ոտքի տակի հողը: Գոյացել էր ուրիշ կարիք, ուրիշ մի հոգ: Հայկական լսարանը կարոտ էր ուրիշ խոսքի:

Ահա ինչու այնքան մեծ հաջողություն գտավ Հովհ. Հովհաննիսյանի բանաստեղծությունների ժողովածուն, որ լույս էր տեսել 1887-ին: Դա հայ բանաստեղծական արվեստի նորահայտ մի որակ էր.

Արազն եկավ լափին տալով,  
Ժեռ քարերին, ափին տալով.  
Որտե՞ղ թափեմ ես իմ դարձը,  
Չոր գլուխս տափին տալով...

Հիմա մեր աչքին այնքան ավանդական, այնքան սովոր ու հեօրյա թվացող բանաստեղծական հյուսվածքը ժամանակին հնչել է թարմ ու նորովի՝ ձևով էլ, բովանդակությամբ էլ: Այսպես է աշխարհիս բանը նաև պոետական արվեստում. այն, ինչ ժամանակին հնչել է իբրև աննախադեպ նորություն, հետո դառնում է սովոր ու սովորական, ապա և վաղաժանոթ հնություն՝ դասական արժեք լավագույն ղեկավարում և գասազրուքների նյութ:

Միշտ և ամենուրեք:

Այն ժամանակ, երբ ասպարեզ եկավ Հովհ. Հովհաննիսյանի գրքույկը, դա հիացմունքի արժանի նորություն էր հայ պոետական մշակույթի մեջ: Դա մի նոր շրջափուլ էր նշանավորում ազգային պոեզիայի դարգացման ճանապարհին:

Երևույթը, շատ տարիներ անց, սեղմ ու սպառիչ բացատրել է Հովհ. Քումանյանը: Արևելահայ պոեզիան զարգացման երեք շրջան է ունեցել. — 1917-ին ասել է նա երիտասարդ գրողներին: — Առաջին շրջանի սկիզբը 1857-ին գրել է ուսանող Ռաֆայել Պատկանյանն իր «Ազգային երգարան» զբոսչույով, երկրորդ շրջանի սկիզբը, երեսուն տարի անց, ուսա-

նոզ չոզ՛հ. չոզհաննիսյանը՝ 1887-ին հրատարակած իր բա-  
նաստեղծութիւնների գրքույկով, երրորդ շրջանի սկիզբը,  
նույնպէս երեսուն տարի անց, նույնպէս ուսանող Վահան  
Տերչանը՝ 1908-ին լույս ընծայած «Մթնշաղի անուրջներով»  
նվ ապա. «Ինչպէս տեսնում եք՝ ես ընկնում եմ երկրորդ շր-  
ջանի մեջ և կանգնած եմ հին շրջանի ու նորագոյնի մեջտե-  
ղը: Մտերիմ ընկերներ եմ ունեցել առաջին շրջանի գրողնե-  
րից, նորագոյն շրջանի մեջ էլ ունեմ մտտիկ ու սիրելի մար-  
դիկ: Սա ցույց է տալիս, թէ ինչքան նոր է մեր բանաստեղ-  
ծութիւնը, որ մի մարդ կարող է ընկերներ ունենալ առաջին  
գրողներից մինչև նորագոյնը»:

Ինչ տարակույս, որ Բաահակյանը եւ, Թումանյանի ան-  
միջական հաջորդը, այդ երկրորդ՝ նախատերջանական շր-  
ջանի բանաստեղծ է: Փանի որ նա եւ ընթացով չոզ՛հ. չոզ-  
հաննիսյանի բաց արած հունով, նա եւ, իր նախորդների  
նման, անդիմադրելի մզվեց զեպի ժողովրդական կյանքը, ժո-  
ղովրդական բառ ու բանը, ժողովրդական կենդանի խոսքի  
հնչերանգը, նույնիսկ քարքառախառն ոճը.

Արեւն իշով սարի գրիտուն,  
Գար ու զաշտում լույս չըկա,  
Շամբ ու թըռչուն մըտան խոր քուն...  
Ա՛խ, ինձ համար քուն չըկա...

Սա խոսքի այն հնչերանգն է, այն լեզվամտածողութիւնը,  
որ հատուկ է ժողովրդի մարդուն, շիրակցուն: Ընդառնապէս,  
ինչպէս Թումանյանի վաղ շրջանի ստանալտրների հնչերան-  
գը հատուկ էր լոռեցուն: Թումանյանը և Բաահակյանն իրենց  
հետ բերում էին իրենց գալատի գույնն ու բույրը: Նվ ուրիշ  
կերպ չէր կարող լինել. քանի որ նրանք ոչ թէ ընդհանրապէս  
Հայաստանի զավակներն էին, այլ Հայաստանի շատ որոշակի  
գույն ու նկարագիր ունեցող զավառների զավակները: Նույ-  
նիսկ հետո, երբ նրանք բյուրեղացորին իրենց լեզուն իբրեւ  
ընդհանուր գրական արեւելահայ լեզու և դարձան համազգա-  
յին երեսօթներ, նրանց խոսքի մեջ այդ երանգները շանչա-  
ցան:

Տեղն է մտաբերել եւ մի հանդամանք, դարձյալ Թուման-

յանի օգնութեամբ, դարձաւ Իսահակյանի տեղն ու դերը հայ պոեզիայում հասկանալու համար:

Իր լայն հայացքով թուամեյանն ընդգրկել է հայ գրականութիւնը և հանգել այսպիսի ընդհանրացման. ի՞նչ է եղել հայ ժողովրդի վիճակը դարեր ի վեր՝ հայաժական պանդուխտի վիճակ: Այդպես էլ իր գրականութիւնը, հետո հայրենի եղբրենիք, օտար հորիզոններում ատեղծվող գրականութիւն. Պատկանյանը և Շահազիզը՝ հլուսխում, Պեշիկթաշը՝ յանը՝ Բաֆորի ամին, Ալիշանը՝ Վենետիկում... Նրանք տարաշխարհիկ բանաստեղծներ էին, որ ի սրան հնչեցնում էին հայրենասիրական եղանակներ, բայց անտեղյակ էին բնաշխարհում, բուն Հայաստանում ապրող ժողովրդի կյանքից ու կենցաղից: Դա նրանց մեղքը չէր, այլ գոթախտութիւնը: Պատկանյանն, օրինակ, «Հայոց գինի» երգի մեջ գրել է. «Հայոց աղջիկ է քաղել, քնքույշ ձեռներով քամել»: Մինչդեռ, — նկատում է թուամեյանը, — «Հայոց աշխարհում խաղողը ոտքով կոխտելով, ջարդելով են գինի պատրաստում և հայոց աղջկա քնքույշ ձեռքերն այստեղ գործ չունեն»: Կամ որ՝ դարեհացը ոչ թէ «սպիտակ, փափուկ» է լինում, այլ ընդհակառակը: Այս և ուրիշ օրինակներ է բերել թուամեյանը ցույց տալու համար, որ եթէ Պատկանյանը ուժեղ էր և ազդու «Ազատ երգերի» մեջ, ապա անհամոզիչ էր ու անիրական ժողովրդական կյանքի պատկերման մեջ:

Բոլորովին ուրիշ են բնաշխարհիկ գրողները: Նրանք կարիք չունեն սովորելու ժողովրդական կյանքն ու կենցաղը, հինգ մատի պես գիտեն և՛ մեկը, և՛ մյուսը, որովհետեւ դրանց միջից են ելել, հենց իրենք էլ հովիվ ու հոտաղ են եղել:

Իսահակյանը, թուամեյանի պես, հենց այդ բնաշխարհիկ գրականութեան հարազատ ներկայացուցիչն էր:

«Բոլորը հաստատ միայն մի բան գիտեն, որ ունեն մի թշվառ հայրենիք. բայց թէ ի՞նչ բան է այդ հայրենիքը, ինչի՞ մեջն է նրա թշվառութիւնը, ինչպե՞ս են ապրում, ինչպե՞ս են խոսում, լալիս, ուրախանում և ալլն, և ալլն նրա ժողովուրդը, ահա, այդ է հարկավոր, այդ առավելութիւնը, այդ հատկութիւնը միայն կարող է նրանց ձեռնադրել հայոց բանաստեղծ: Հակառակ դեպքում, նրանք կմնան հայ բանաստեղծներ, ոչ թէ հայոց բանաստեղծներ», — այսպես է գրել

Թուսմանյանը անցյալ պարի վերջերին՝ Եվ այն, ինչ նա պարտադիր է համարում ոչ թե հայ, այլ հայոց բանաստեղծի համար, կարող էր ունենալ բնաշխարհիկ բանաստեղծը:

Կարող էր ունենալ և լիուլի ուներ Ավետիք Իսահակյանը: Ով-ով, նա լավ գիտեր ինչ բան է իր հայրենիքը, ինչպես է խոսում իր ժողովուրդը, ինչպես է ուրախանում և, մանավանդ, ինչպես է լալիս, ինչպես է մորմոքվում:

Դա՛րպես լացեք, սարի սըմբուլ,  
Ալվա՛ն-ալվա՛ն ծագե՛կներ...

Եվ այդ ամենի հետ միասին հայրենի բնաշխարհի այնպիսի անթերի զգացողություն, շոշափնիխորեն հատակ պատկերացում, որ կարելի է նկարել:

— Պարզե՛կ գիշե՛ր...  
Աստղերն ճրկնքում լուռ պսղզում են,  
Լուսնի շողերը գիպել են սարի  
Ձյունոտ կողերին—կողերը ցուրտ,

Պե՛տին են տալիս...

Իրոք որ՝ հայրենաշունչ բանաստեղծ, հայրենիքի շնչով երգող բանաստեղծ: Այնպես որ, հասարակ խոսք չէր Պերճ Պոռշյանի ոտի վրա ասած խոսքը. «Հայրենաշունչ բանաստեղծ ես, ապրե՛ս: Երևակից ուրիշ տեսակ երգիչ, իհարկե, չէր կարող ծագել...»:

«Երգեր և վերքեր» գրքույկը դա հաստատեց միանգամից և անվերապա: Ի պատիվ ժամանակի քննադատության՝ նա խակույն նկատեց երևույթը և գնահատեց: Չվարանեց ընդամենը քսաներեքամյա բանաստեղծի առաջին իսկ գրքույկի առիթով ասել, թե նա «ձեխն էլ արգեն տիրում է վարպետի նման»: Իրոք, Իսահակյանը միանգամից ասպարեզ եկավ իր պոետական կուլտուրայի բարձրունքները նվաճած: Չեղավ սկսնակ, չեղավ աշկերտ ու ենթավարպետ: Նա իր «Երգեր ու վերքերի» շատ բանաստեղծություններին տեղ տվեց իր հետագա բոլոր գրքերում՝ առանց ձեռք դիպցնելու: Կարիք չի եղել ձեռք տալու, որովհետև այդ անզարգ, պարզալուր բանաստեղծությունները հենց սկզբից ստեղծվել են հեղինակի

պոետական մտածողության վերին օրենքով՝ այնպիսի վարպետությունը, որ շերեւս վարպետությունը: Չերեւա հեղինակի ստեղծագործական տառապանքը, թվա, թե բանաստեղծական տողերը հյուսվել են ինքնիրեն, առանց ճիգի ու ջանքի, առանց մտքի տենդագին աշխատանքի: Չնկատվող վարպետություն՝ վարպետության բարձր ձևը ոչ միայն պոեզիայում, այլև ամենուրեք:

Ժամանակի հայ գրական ամենից առաջադիմական ու լրջախոհ ամսագրում՝ «Մուրճում» հրապարակված այդ հոդվածում, որ գրել էր երիտասարդ, տաղանդավոր գրաքննադատ Նիկոլ Աղբալյանը, նկատվել է հիանալի բացատրվել է նորահայտ բանաստեղծի թերևս ամենաէական հատկությունը, որ իր անզուլանալի ուղեկիցը եղավ մինչև վերջ. ժողովրդականությունը, այն, որ նա «կարողանում է ժողովրդի պես զգալ, նրա սրտով ապրել: Իսկ ի՞նչ է նշանակում ժողովրդի պես զգալ. այդ նշանակում է համանման հոգեկան դրություններում զգալ այն, ինչ կզգա ժողովրդի մարդը. սիրում եք դուք, թե ատում, վիշտ կա ձեր սրտում, թե ուրախություն, կորցրած սերն եք ոգրում, թե խանգաղատանքով եք լցված, եթե դուք զգում եք այն, ինչ կզգար ժողովրդի մարդը, ապա դուք ժողովրդի պես եք զգում և ուրեմն ձեր երգերը ժողովրդական են՝ ձերը մնալով»:

Որքան պարզ՝ նույնքան համոզիչ բացատրություն:

Բայց այդպիսին են այդ բանաստեղծությունների հիման վրա ստեղծված երգերը նույնպես, կարծես դրանց մեղեդիներն էլ Իսահակյանն է հորինել: Իհարկե, դա պատրանք է միայն («Ա՛խ, իմ ճամփեն», «Սև աշերհն» երգերի հեղինակն Արմեն Տիգրանյանն է, «Քույր իմ նազելի», «Ուռի» երգերի հեղինակը՝ Դանիել Ղազարյանը, «Որսկան ախպեր», «Մաճկալ ես», «Մերեցի, յարա տարան» երգերի հեղինակը՝ բանաստեղծի երիտասարդ տարիների ընկեր Գևորգ (Եզոր) Առատամյանը, որ, ի դեպ, շուշեցի էր, ավարտել էր Եուզվա Հայոց թեմական հոգևոր դպրոցը, ուր երգ-երաժշտություն էին ավանդել աշքի ընկնող երգահաններ. այնպես որ՝ անխիղճ բան է այդ երգերը «ժողովրդական» հայտարարելը, ինչպես արվում է սովորաբար):

Ժսանհինգամյա Նիկոլ Աղբալյանն անհերքելիորեն ճիշտ

էր նկատել, որ քառանկերքամյա Ավետիք Իսահակյանը կյանքն՝  
ղգում է ժողովրդի մարդու պես՝

Գա՛րգըս լացե՛ք, սարի սըմբուլ,  
Արվան-ալվան ծագիկներ...

Կարծես քառերի հետ մեղեդին էլ ենք լսում.

Մաճկալ հս, բեզարած հս,  
Անը շոռ առ՝ար, շո՛ւտ արի...

Եվ մնում ուրվում երգի հեղինակի հետ.

Ա՛խ, իմ համփես մուր զեաց,  
Անտակ ժողին զեմ առա...

Ու տոշորվում ենք նրա սիրտ տանջանքներով.

Սե աշերեն շա՛տ վախեցիր,—  
էն մութ, անծեր գիշեր է...

Այս բոլորը 1898-ի «Երգեր ու վերքերից» են։ Եվ այս  
բանաստեղծությունները, առանց ձեռք դիպցնելու, տեղ ունե-  
ցան ապագա մեծանուն բանաստեղծի բոլոր դրքերում։

Ուրեմն այն, ինչ մեզ հուշում է հայ պոեզիայի վարպե-  
տի ստեղծագործության մեջ, այն, ինչ մեր մեջ զուգորդվում  
է նրա անվան հետ և Ավետիք Իսահակյանին դարձնում է  
Ավետիք Իսահակյան՝ արդեն իսկ կար քառանկերքամյա նո-  
րահայտ բանաստեղծի «Երգեր ու վերքերում»։

Հարմանքի արժանի իրողություն։

Հայ պոեզիայի երկնակամարում փայլատակեց մի նոր,  
առաջին մեծության աստղ։

Բայց, ինչպես լինում է սովորաբար, պոետական գործերը  
հաշտ չզնացին քաղաքական գործերի հետ։

Ի տարրերություն բանաստեղծականի, ավելի ու ավելի Իս-  
մթնում հայության քաղաքական երկնակամարը Գրան՝ քիչ  
չնայաստեց այն, որ 1896-ին կայսրը բարեհաճեց Կովկասի  
փոխարքա կարգել իշխան Գոլիցինին, հսկ սա էլ, 1897-ին.

«Կապիկազ» պաշտոնական թերթի խմբագիր՝ մոլագար Հայատ-  
յաց Վելիչկոյին: Երկուսն էլ Հայտնի իրենց Հետադիմական  
Հայացքներով ընդհանրապես, Հայատյացությամբ՝ մասնավո-  
րապես: Մտալլ զեմքեր, որ աչքի էին ընկնում նույնիսկ ցա-  
րական պաշտոնեություն մտալլության մեջ: Մի արտասովոր  
ևսանդով նրանք արեցին իրենց գործը՝ կայսրության թե-  
լագրանքով կովկասյան ժողովուրդներին ճնշելու, նրանց  
միջև թշնամանք սերմանելու և զործը: Մի ժողովրդի ճնշ-  
ւելու, բռնադատելու համար հարվածը հասցվում է նրա մտա-  
ծող խավի՝ մտավորականության զլխին, նրա միտքն ու հո-  
գին արթուն պահող Հաստատությունների՝ դպրոցի և մամու-  
լի վրա: Փաղաքակիրթ մարդկության բաղմազարչան ու բազ-  
մադժվար պատմության մեջ շարունակաբար կրկնվող երե-  
վոյթ: Նույնը կատարվում էր դարավերջյան Ռուսաստանում  
և, իհարկե, ոչ միայն Հայ ժողովրդի նկատմամբ:

Նույնիսկ աննշան առիթներով աքսորն ու բանտարկու-  
թյունը սովորական բաներ էին այդ ժամանակներում: Բայց  
նույն այդ ժամանակներում լինում էին նաև մեղծ, այսպես  
կոչված «ազատ» քրտուներ, ոչ մեծ ժամկետներով ու այն էլ  
ոչ թե զեպի Սիրի, հյուսիս, այլ զեպի հարավ, Օդեսա:

ԻՍԱՀԱԿՅԱՆ— 1898 թվի սկզբներին, ցարական ժանդար-  
մերիայի կարգադրությամբ, ես մի տարով աքսորվում էի  
Օդեսա քաղաքը: Աքսոր գնալիս, ճանապարհին կանգ առա  
Թիֆլիս և անմիջապես զնացի Օհաննեսի մոտ: Արդեն օրենք  
էր դարձել, որ Թիֆլիս գտնվելիս անպատճառ պիտի լինեի  
նրա մոտ, գրեթե ամեն օր:

ԲԱՆԱԿՅԱՆ— Օդեսայում տեսածի և ապրածի ուշ արձա-  
գանքներն էին «Գարիբալդիականը» և «Գրական նախանձ»  
գրվածքները (գրված 1907-ին և 1925-ին): Մեկը՝ Գարիբալ-  
դիի զինվորը եղած Զիովանիի հերոսական ու ողբերգական  
կյանքի մասին, մյուսը՝ Իսահակյանի սակավաթիվ հումա-  
րեակներից մեկը:

Իսահակյանի պոեզիան Օդեսային պարտական է ավելի,  
քան արձակը: Խոսքը բանակին չի վերաբերում: Փանակով՝ մի  
տասնյակից քիչ ավելի բանաստեղծություններ ընդամենը,  
բայց դրանց մեջ մի քանի զուխգործոց, որ հաստատուն տեղ  
գտան իր հատընտիրում: Զուտ ժողովրդական ոճով գրված՝

«Սե-մութ ամսեր ճակտիդ դիզվան, Գուման հաղար, Ալա-  
դյազ...», «Սիրեցի, յարըս տարան. Յարա տվին ու տա-  
րան...», որոնք, ժողովրդական մեղեդիներով թե առած, այն-  
պիսի հոշակ ու տարածում գտան հետազայում: Ապա և այն  
նշանավոր բանաստեղծությունը, որի մեջ պոետն առաջին ան-  
գամ և շատ ուժգնորեն, ի հայտ է բերում աշխարհի սոցիա-  
լական անարդարությունը դատապարտելու կիրք: Գա թսան  
սողանոց այն բանաստեղծությունն է, որ վերջանում է այս-  
պես.

Խեղճ աղքատը դառը գատի,—  
Գառարկ նքատի... է՛յ աշխարհ,  
էլ ինչո՞ւ ես քարը թողնում  
Քարի վրա, քար-աշխարհ:

Ա՛խ, մեր սիրտը լիքը դարդ. ցա՛ւ.  
Եր ու արե չը տեսանք.  
Վա՛խ մեր կյանքը սեռվ անցավ,  
Աշխարհից բան չի մացանք:

Սոցիալական սուր հակասություններով աչքի ընկնող նա-  
վահանգստային մեծ քաղաքումն է, որ աքսորական պոետի  
վրդովված հոգու բողոքն աշխարհի անարդար դրվածքի դեմ  
ստանում է բանաստեղծական արտահայտություն: Բողոքն  
աշխարհի կարգի դեմ այդ ժամանակից ի վեր դառնում է նրա  
ստեղծագործական ոգորումների մշտական ուղեկիցը: Սա  
կարևոր է իմանալ՝ Խահաեկյանի ուժը միայն սիրո և բու-  
թյան երգերի մեջ շտեմնելու համար: Ի դեպ, Խահաեկյանն  
այստեղ է առաջին անգամ լսել Մաքսիմ Գորկու անունը:

ԻՍԱՀԱԿՅԱՆ—Օղեսայի հակա նավահանգստի ժխորի մեջ  
թափառելիս հանկարծ առջևս հպարտ կանգնեց մի բուստկ՝  
ինտելիգենտ դեմքով և ձեռքը մեկնելով դեպի ինձ, ասաց.

— Ենորհեցեք հանուն Մաքսիմ Գորկու:

Առաջին անգամն եմ լսում Մ. Գորկու անունը: «Արդյոք  
ի՞նչ նոր սուրբ է»,— մտածում եմ ես:

Հարցնում եմ նրան.— «Ո՞վ է Մաքսիմ Գորկին?»:

— Նա մեր բանաստեղծն է, մեր ընկերը, մեր փրկոս-  
փան,— պատասխանում է նա:

նույն օրը գնում եմ Գորկու պատմվածքների երկու հատորը, և սկսում եմ կարդալ. հափշտակված կարդում եմ և նորից կարդում: Կարծես Գորկին ինձ համար էր գրել:

ԲԱՆԱՍՆՐ—Օղեսյան իր կնիքը դրեց պոետի բանաստեղծական պատկերների վրա ևս: Մովի հարևանությամբ ապրած կյանք, ծովային անժանոթ տարերքի տպավորություններ, ծովի հետ կապված պատկերները,— այդ ժամանակ ավելի, քան երբեք,— խուժում են բանաստեղծական հշտվածքների մեջ. «Ինչպե՞ս կուզեմ սիրտս թաղեմ Մովի մոայլ, մութ խորքում», «Մովը միայն վիշտս իմանա, Մովը շատ մեծ սիրտ ունի», «Մովն էր հետո մեղմ ու թալուկ՝ Մտորմունքի մեջ անծայր», «Հոգնած ծովը փրփուր բերնին՝ Ափին բնկած կհեռա», «Դու՛ման զառավ ծովը բոլոր, Նրկնուց բռնած մու՛մն առավ»:

Թղթին հանձնել այն, բացառապես այն, ինչ զգացել ես, ինչ ապրել ևս իրոք: Իրապատում բանաստեղծի հատկանիշը, որ նաև Բանաստեղծին էր:

Մի տարի Օղեսյայում մնալուց հետո բանաստեղծը բռնում է վերադարձի ճամփան: Տունդարձի ճանապարհին, 1899-ի հունվարին, նոր նախիջեանում (Դոնի Ռոստով) այցելում է նույնպես ազատ արքայի ենթարկված Ղազարոս Աղայանին:

ԻՍԱՀԱԿՅԱՆ—Կինը, տղան և աղջիկը հետև էին: Աղայանին դատ հիվանդությունից նոր ապաքինված: Գրել էր «Ժամանակակից ատենախոսությունը» և ոգևորված կարդում էր ինձ համար:

...Երեսացող ներշնչող ձայնով կարդում էր, փայլատակում էին աչքերը, բոլոր հոգով հավատացած էր իր ուսուցիչային, կրքոտ, տարամերժ մարդարենների պես ստիպում էր, որ ուրիշն էլ հավատար:

...Ռոստով եղած ժամանակս ամեն օր գնում էի Աղայանի մոտ և խոսում էինք հազար ու մի խնդիրների մասին, քայքայում բոլոր խնդիրների կենտրոնը աշխարհը վերափոխելու և մարդկությունը երջանկացնելու մասին էր:

— «Ժամանակակից ատենախոսությունը» իմ կտակն է, իմ հավատամքը:

Մնաս բարեի իր վերջին խոսքն էր սա:

**ԲԱՆԱՍԵՐ**— Տունդարձին, մի քանի օր անց, Թիֆլիսում այցելում է Բումանյանին:

**ԲՍԱՀԱԿՅԱՆ**— Օհանեսին դատ շատ ընկճված, շատ տըխուր:

Օհանեսը շատ էր սիրում հորը և միշտ էլ մեծ հիացմունքով էր խոսում հոր մասին: Տարիներ հետո էլ առանց աչքերը արցունքով լցվելու չէր կարող խոսել նրա մասին:

Գիշերը մնացի մոտը, և մինչ ուշ գիշեր պատմում էր հանգուցյալ հոր բարությունից, ազնվությունից, առաքինություններից:

**ԲԱՆԱՍԵՐ**— 1899-ին պոետը տանն է, Ալեքսանդրապոլում, հայրենի օջախում: Բայց այստեղ ևս անդորր չի գտնում պոետի անհանդիստ հոգին: Դա երևում է նրա մի նամակից, որ գրված է ի պատասխան արևմտահայ նշանավոր բանասեր և բանաստեղծ Արշակ Չոպանյանի նամակի: Այսպես, անցած դարի վերջին, առայժմ դեռ հնովից հետո՝ Փարիզից Ալեքսանդրապոլ, ծայր է առնում հայ մշակույթի երկու արդեն իսկ հայտնի դեմքերի բարեկամությունը: Չոպանյանի նամակը չի պահպանվել: Բայց Բաահակյանի պատասխանից երևում է նրա նամակի շարժառիթը՝ աշխատակցել իր «Անահիտ» ամսագրին: Ալեքսանդրապոլցի պոետն այդ նամակում իր հեռավոր-անծանոթ գրչեղբոր առաջ քաց է արել սիրտը այն հաղվազյառն անկեղծությամբ, որ, ինչպես կտեսնենք հետագայում, առհասարակ անբաժան է նամակագիր Բաահակյանից:

**ԻՍԱՀԱԿՅԱՆ**— Ո՛ր պիտի գնամ, ի՞նչ պիտի անեմ— ահա ինձ դրադեցնող այս անձնական հարցը, որ, իհարկե, շատ բնական է: Մի քանի տարի առաջ ես Եվրոպայում էի, հետո վերադարձա Հայրենիք— Կովկաս, ուր ձերբակալվեցի հայկական դատի առթիվ (ոռոսաց կառավարությունից). մի տարի բանտարկվելուց հետո, ուղարկեցին ինձ արսոր— ամբողջ երեք տարի է, որ ես անկախ չէի, կառավարության օրենքի տակ, հսկողության տակ, կապված-կաշկանդված, այժմ նոր եմ ազատվել և եկել եմ տուն, և զարթնել է այն հարցը՝ ո՛ր գնալ, ի՞նչ անել: Այս շա՛տ է տանջում ինձ, և ոչ մի վճիռ դեռ չեմ կայացրել իմ նկատմամբ— իսկ այնքա՛ն եմ տանջվել, այնքա՛ն ժամանակ եմ կորցրել՝ և որը պետք է նորից

վերականգնել, կորուստը փրկել, ուղղվել... Բայց խնայե՞ս... Արդյոք հնար ունի՞մ—լուկ միջոց անտեսական,— նորից գնալու եմ Վերոպա՝ շարունակելու ուսումս, քանի դեռ երիտասարդ եմ. իսկ եթե չկարողացա գնալ, ի՞նչ անեմ այստեղ կովկասում, որ ո՛չ մի կյանք, հոգեկան շահեր չկան...

...Իսկ մեր հայ գրողները... Խեղճե՛րը... հացի խնդիր, դառն կարիք, ժողովրդի անտարբերությունը, կառավարության ճնշումներ, հալածանք... Ուղիղն ասած՝ ուժ չկա ապրելու...

Ի՞նչ անել այստեղ... այս հարցը ինձ բուրբովին չլատում է, և ես հիմա շա՛տ հուսահատված եմ և կորած թե՛ ինձ, և թե՛ ուրիշների համար...

...Յրհասի մեջն ենք, և հաղիվ կարող ենք օդ շնչել. երանի՛ Զեյ, որ ապրում եք մտքի աշխարհում, լուսավոր մարդկանց մեջ...

Ես այստեղ անպատճառ կքարանամ և կլինեմ ամբոխի հարադատ որդին—քարե-զանդ, քարե-զանդ, որ ձայն չունի, համբ է, մեռած, և չի կարող զոդանջել վեհություն ու գաղափար...

ԲԱՆԱՍԵՐ—Իսահակյանի կյանքից անտեղյակ մարդը կարող է կարծել, թե նա չի ապրել ավելի դժնդակ, ավելի մոայլ տրեք. ծայր հուսահատություն, հույսի ու լույսի ոչ մի շող, ոչ մի ապավեն:

Մինչդեռ քնավ այդպես չէր: Գեռ ավելին՝ Իսահակյանի բովանդակ կյանքն աչքի առաջ ունենալով, կարելի է վստահ աանել, որ անցյալ դարի վերջին և մեր դարի առաջին տարիները լավ ժամանակներ էին երիտասարդ բանաստեղծի կյանքում:

Հապա ինչո՞վ բացատրել պարագործը:

Առնվազն երկու պարագայով: Մեկ, որ երիտասարդ Իսահակյանի հոգին շատ էր պահանջկոտ, անհագ ու անհանդիստ. այն, ինչ ուներ, այն պայմանները, որոնց մեջ գտնվում էր, այն ներկան ու հեռանկարը, որ իրեն ժպտում էր, անհունորեն փոքր ու նեղ էին թվում՝ բացահայտման կարոտ իր հնարավորությունների համեմատ: Մեծ հոգիները մեծ էլ պահանջներ են ունենում, իսկ այն, ինչ կար իրոք, հեռու էր իրեն հաղեցում տալուց, և այն, ինչ մեկ ուրիշին կարող էր լիուլի դո-

հացենի, իր աշխին թվում էր աննշան: Նա գրել է 1901-ի նամակներինց մեկում:

ԻՍԱՀԱՆԻՅԱՆ—Ես պիտի գնամ իմ ճանապարհով՝ բռնա-  
վորված համաշխարհային վշտի ծանրությամբ. այդ բաժին  
ընկալվեց ինձ: «Մի վիշտը հազար ուրախություն արժե»,—ասում  
է Գանթին. և ես կտանեմ իմ վիշտը,— ես չեմ փոխի այն՝  
ամբողջի հրճվածքի և առփանքի հետ. թող երբեք իմ զեմքիս  
վրա ժպիտ չծաղկի, և հույսը թող չծաղկի իմ հոգում. սիրո  
ծիսածան, վարդեր պետք չեն ինձ... Աշխարհի մոռացը տվեց ինձ,  
և վարդերի փշերը. ես կփաթաթվեմ մոռացով և կպսակվեմ  
փշերով... ու կգնամ իմ ճանապարհով—տանջվողներ, հուսա-  
հատներ, զարկվածներ շատ կան, և ես նրանց մոտ կգնամ,  
մի բարի խոսք, մի կաթիլ ջուր տալու համար...

Ո՞վ է բախտավոր աշխարհում.— այս գծվոր հարցին մի  
մեծ մարդ պատասխանել է այսպես. «Նա՞՝ է բախտավորը, որ  
լավ ստամոքս ունի և վա՛տ սիրտ...»:

Ես չեմ ուզում այդ բախտավորությունը. թշվառությունը  
նվիրական է, և թշվառ լինել, կնշանակի ավելի բախտավոր  
լինել...

ԲԱՆԱՍԵՐ—Եվ այս մոռաց մտքերը բանաստեղծը հայտնել  
է իր մի նամակում, որ գրել է 1901-ին՝ իր կյանքի և իր ժողո-  
վրդի կյանքի ամենալավ տարիներինց մեկում: Ավելացնեմ  
թերևս՝ համեմատաբար լավ: Զարմանալի է մարդկային հո-  
գեքանությունը. դժգոհել եղածից՝ բոլորովին անտեղյակ, թե  
վաղը, մյուս օրը, գալիքն ինչ է բերելու: Գալիս են առավել  
դժվար օրեր, ու հիներ, որից այնպես դժգոհ ես եղել ժամանա-  
կին, հիշվում է կարոտով ու երանությամբ:

Իսահակյանի կյանքն էլ, դժբախտաբար, եղավ այդպես:  
Դա ոչ միայն իր, այլև իր ժողովրդի կյանքի տրամաբանու-  
թյունն էր: Բայց մի՞թե այս երկու կյանքը միևնույնը չէին:

Այո, 1899-ին պոետը բողոքավոր լինելու հիմքեր ուներ  
Իրոք որ՝ ճշմարիտներ, հալածանք, «Հայ դպրոցները փակ, գրա-  
դարան-ընթերցարանները փակ, գրականությունը ճնշված՝  
ինչո՞վ ողևորվել»: Բայց ի՞նչ էին դրանք հետո եղած աղետ՝ Ե-  
րի համեմատ՝ 1905—1906 թթ. ազգամիջյան արյունոտ  
կոիվները, իր բանտարկությունը 1909-ին, հետո փախուստը  
առաջադեմ, հետո առաջին համաշխարհային պատերազմը...

1914-ին, հետո էլ 1915-ի Մեծ եղեռներ... հետո էլի՛ ու էլի՛, հայկական կյանքի բուսանդակ ողբերգությունը, որ խտացավ ժողովրդի գլխին մեր դարի առաջին երկու տասնամյակում, ընդամենը քսան տարում...

Բայց զանք հերթով, Դեռ 1899-ն է, հայ գրականության պատմության մեջ մշտապես հիշվելիք այն թվականը, երբ Հովհաննես Թումանյանի տանը հիմնվեց Վերնատուն գրական խմբավորումը: Գարծես հերքելու համար նույն թվին Իսահակյանի հայտնած «գոհունությունը, թե կովկասում «ոչ մի կյանք, հոգեկան շահեր չկան», հերքելու համար նաև Թումանյանի բողոքն իր ապրած ազատակալի օրերի դեմ և հաստատելու համար ժամանակի հայ գրողների հոգեկան և իմացական բարձր հնարավորությունները, հիմնվեց Վերնատունը: Այնպես ընդհատումներով շուրջ տասը տարի իր գոյությունը պահպանած այդ գրական խմբավորումը շատ զեղեցիկ գեր խաղաց նրա ոչ միայն մշտական անդամների (Ղ. Ազալան, Հ. Թումանյան, Ավ. Իսահակյան, Լ. Շանթ, Գ. Դեմիրճյան և Ն. Աղբալյան), այլև այն գրողների կյանքում, որ առիթից առիթ ներկա են եղել նրա հավաքույթներին:

Հայ գրականության գծով աննապարհին, հայ գրողների գծով արին կյանքում քիչ բան է եղել այնքան զեղեցիկ ու հրապուրիչ, որքան Վերնատունը, այն հավաքույթները, որ կայացել են Բեհրություն փողոցի № 44 տան ամենամիջին հինգերորդ հարկում, Հովհաննես Թումանյանի հյուրընկալ տանը:

ԻՍԱՀԱԿՅԱՆ—Օհանեսը կենտրոնաձիգ անձնավորություն էր՝ հյուրասեր, մարդամոտ: Զրույցի համար հոգի էր տալիս: Օրվա որ ժամին գնալիք նրա մոտ, ձեռքի գործը կթողներ և, ծախար գնման կնիքներ գրույցի:

Ղ. Ազալանը, Գ. Դեմիրճյանը, ես և մեր մյուս ընկերները կանոնավոր կերպով շաբաթը մեկ-երկու անգամ հավաքվում էինք նրա մոտ, իրար տեսնելու և զրույց անելու: Այսպիսով նրա առանց դարձել էր մեր հավաքատեղին: Թե՛ էինք խմում, ընթրում, խոսում, Ձմեռը վառվում բուխարիկի շուրջ՝ նստած՝ կատակում էինք, անվերջ զրույց անում, խոսում, վիճում:

Ընթերցում էինք մեր նոր գրած բաները, քննադատում,

կարծիքներ փոխանակում: Խոսում էինք հայ, ռուս և օսման  
գրական նորությունների մասին, հաղորդում իրար մեր տպա-  
վորությունները:

Կարգում էինք դասական հեղինակներից՝ արևմտացի և  
արեւելքի, նույնպես նոր հեղինակների գործերը:

Անմոռանալի գեղեցիկ ժամեր ենք անցրել Վերնատանը,  
խմաստավորված, բովանդակալից. ներշնչող պահեր:

ԲԱՆԱՄԵՐ—Գերեմիյի Գեմերճյանը՝ Վերնատան անդամ-  
ներից ամենակրտսերը. գրել է հետագայում, թե գրական այդ  
խմբավորման ստեղծումը «հասարակ քմահաճույք չէր և ոչ  
էլ պատահումներ»: Դա միավորումն էր գրական հակումնե-  
րով հարազատ այն գրողների, որ իրենց սահմանադատում  
էին ազգայնական միտումնավոր գրականությունից, տարբե-  
րում էին «ազգային և ազգայնական կուլտուրաները»: Այն-  
պես որ, որքան էլ հրապուրիչ, բայց անուսուցաստ շեն եղել  
ներանց գրույցները: «Բարեխիղճ, ուղղակի սեմինարական մե-  
թոդով» կարգացել, ուսումնասիրել են գասական գրողներին՝  
հին հունական ողբերգականներից մինչև Շեքսպիր ու Դյումե-  
ր, Բայրոն ու Պուշկին, արժարժեք են հայ ժողովրդի ճակատա-  
գրի, հայ գրականության ճակատագրի կնճառտ խնդիրները:  
«Հավաքույթներն անցնում էին աշխույժ, ուրախ և սրտալի:  
Որքա՛ն նախաճաշեր դառնում էին ճաշ, ապա երեկոյան թեյ  
և վերջը, կեսգիշերներից շատ անց, ընթրիք ու լուսաբաց»:

Անձնական և ստեղծագործական կյանքի բախտավոր ժա-  
մանակներ, որ պիտի խաթարվեին շուտով:

Այս դարի առաջին երկու-երեք տարվա մասին չէ խոս-  
քը, այլ գրանից հետո եկած տարիներին: Առաջին երկու-երեք  
տարին զեռ խաղաղ, համեմատաբար խաղաղ ժամանակներ  
էին հայ ժողովրդի ու նրա գրողների կյանքում: Համենայն  
դեպս՝ Բուժանյանի և Իսահակյանի 1901-ին նրանք շատ են  
ճամփորդել, մեկը՝ միայն Կովկասում, մյուսը՝ իհարկե Իսա-  
հակյանը, նաև արտասահմանում: Եվ, նույնիսկ անհավա-  
քալի է թվում, նա տեսնում է ու գրուցում իր պատանի հա-  
սակի պաշտամունքի՝ Ղևոնդ Ալիշանի հետ: Դա լինում է  
1901-ի գարնանը, Վենետիկում, Մուրբ Ղազար կղզում:

ԻՍԱՀԱԿՅԱՆ—Մտնում ենք հայր Ալիշանի խոցը, մի ոչ  
մեծ սենյակ ծովահայաց լուսամուտով: Գրասեղանին հակված

է մի աւեր՝ փոքրամարմին, անարշույն, դաշուկ մի սուր...  
և գրում է:

Հուզմունքով համբուրում եմ չլուս ձեռքը, որ կերտել է  
այն պատկառելի հաստորները:

...Իր հաստորների և մեր հոգիների մեջ վերակերտեց նա  
Հայաստան աշխարհը և պատեց մի վիպական, բանաստեղ-  
ծական մթնոլորտով՝ գեղեցիկ, հրապուրիչ, առասպելական,  
բայց և իրական:

ԲԱՆԱՍԵՐ—Մանոթանում է բանաստեղծը Սուրբ Ղազարի  
Մխիթարյանների վանքի արժեքներին ու դիտնականներին:  
Եվ հրաժեշտ է ապրիս Վենետիկին՝ անտեղյակ, որ հետագա-  
յում տարիներ է ապրելու իտալական այդ շքնաղ քաղաքում,  
կամենալով օր առաջ լքել աչքին ասելի դարձած Վենետիկը՝  
հայրենիք դառնալու համար: 1901-ին, երբ գնում է հայր  
Ալիշանի մոտ հրաժեշտի, ձերուսադարդ դիտնականն ու բա-  
նաստեղծը...

ԻՍԱՀԱԿՅԱՆ—...օրհնեց ինձ, բարիքներ մաղթեց և ող-  
ջույն ուղարկեց Խրիմյան Հայրիկին:

— Ինձմեն հարյուր օրով մեծ է ան,— ասաց Ալիշանը,—  
բայց կրտսն, որ շատ առույգ է, ձի կնստի. հարկավ ալգայեա  
է. ան Մասիսի հովին տակ կքնանա, Արաքսի ջուրը կխմե,  
Հայաստանի հացը կուտե, անոր հոգի ուժը կառնե...

ԲԱՆԱՍԵՐ—1901-ի ամռանը պոետն արդեն հայրենի օջա-  
խումն էր: Այդ ժամանակ, Աբասթումանում բուժվելուց, Զա-  
վախքում շրջելուց հետո (ուր տեսել էր Փարվանա լիճն ու  
Թմկարերդը և լցվել համանուն գործերի հղացումներով),  
Թումանյանն այցելության է գալիս կրտսեր ընկերոջը՝ Ղա-  
զարասյալու:

ԻՍԱՀԱԿՅԱՆ— Երկու գիշեր միայն կարողացանք մնալ  
մեր տանը: Օհանեսը անհամբեր էր, ուզում էր շուտով տես-  
նել Անիի:

Մեր գլուղից մինչև Անի հազիվ 25 կիլոմետր լինի:

Այցելեցինք Հոռոմոսի եշանավոր վանքին, որի նախագա-  
վիթը սքանչելի է: Հովհ. Կոստանյանը մեզ նկարեց Աշոտ  
Ողորմած թագավորի դամբարանի աշ-ձախ կողմում կանգ-  
նած:

ԲԱՆԱՍԵՐ—Բարեբախտաբար, այդ շատ տպավորիչ լու-

սանկարը այսօր անսովոր է։ Իսահակյանի հազվագյուտ հիշողությունն էլ այն խոսքերն է պահպանել, որ իր ավագ արվեստակիցն ասել է Անիի հրաշակերտերով զմայլվելուց հետո.

— Ինչքան մարդ պիտի անրան-անասուն լինի, որ ձեռք բարձրացնի այս հրաշալիքների վրա։

— Այսօր զարգացման ինչ աստիճանի հասած կլինե՞ր մեր արվեստը, եթե թուրք-թաթար ցեղերը չքայքայեին մեր ժողովրդին։

Իսահակյանն, իհարկե, չի մոռանում հայր Ալիշանի ողջունները հասցնել երիմյան Հայրիկին։ Էջմիածնում, նույն 1901-ի աշնանը, Դա լինում է բանաստեղծի կյանքի մեծ տպավորություններից մեկը։

ԻՍԱՀԱԿՅԱՆ—Ամբողջ գիշեր ես նրա թովիչ ձայնի, նրա արծվենի հայացքի ազդեցության տակ էի։

ԲԱՆԱՍԵՐ—Երիմյան Հայրիկը, Բեն կաթողիկոս, շատ ազատամիտ մարդ է եղել։ Կրոնական կաղապարները նշանակություն չեն ունեցել նրա աչքում։ Նրա խոսք է բացվել Դարվիլի ու նրա ուսմունքի մասին, հայ եկեղեցու պետը չի վարանել ասել. «Աստվածաշունչի պատմածը մարդու մասին—առասպել է սոսկ, այլ ճշմարիտն այն է, որ մարդն անասնական ծագում ունի։ Նա ալ կկարծեմ, որ այդպես է քանդի մարդու մեջ շատ անասնական բան կա։ Ժամանակին հռչակված ու սիրված բանաստեղծ է եղել երիմյանը, հայրենասիրության խորհրդանիշ։ Նա լավ է հասկացել հայր Ալիշանի հայրենաբաղձությունը, այն բանաստեղծի ու գիտնականի, որ Հայաստանում չլինելով, ավելի լավ գիտեր հայրենիքի աշխարհագրությունը, քան որեւէ մեկը իրենից առաջ կամ հետո։ Այնքան լավ, որ անթերի ճշտությամբ նկարագրել է ամեն գյուղ ու շեն, ամեն բլուր ու աղբյուր, թե որը որտեղ է գտնվում, որ աղբյուրը սրբան ջուր է տալիս... Ահա հավատալի է, բայց իրողություն։ Եվ բանաստեղծ երիմյանը, բանաստեղծ Իսահակյանի պատմածը լսելով, կարգադրում է Մասիսի հողից, Արաքսի ջրից ու Հայաստանի ծաղիկներից նմուշներ ուղարկել բանաստեղծ Ալիշանին։

ԻՍԱՀԱԿՅԱՆ—Ինչպես հետո իմացա, Հայրիկի կողմից ուղարկվել էր մի փոքր արկղ այդ արմաղաններով, բայց

մինչև հասնելը, դժբախտաբար, սիրելի նահապետը արգեն վախճանված էր եղել (1901 թ. նոյեմբերի մեջ)։

**ԲԱՆԱՍԵՐ**—Հայրենասիրությունը դադարեցրել է և ոչ դիտություն։ Բայց հայրենասիրությունն էլ սովորում են, դա էլ կարող է միջավայրի, ուսուցիչների, դաստիարակների, Կարճ էր երիտասարդ Բահակյանն ունենալ հայրենասիրության աղելի վանձ ուսուցիչներ, քան Արշանը, երիմյանը, քան ճարտարապետ Թորամանյանը, այն էլ՝ Անիում...

Անին շատ մեծ տեղ է նվաճել երիտասարդ Բահակյանի ներաշխարհում։ Դրա պատճառներից առաջինը թերևս Անիի մոտիկությունն էր Ղազարապատին։ Նա այնքան հաճախ է եղել Անիում, որ նույնիսկ զժվարացել է թվականները հիշել։ Եղել է ոչ թե մենակ, այլ մեծ գիտնական Նիկողայոս Մառի հետ, որի հանդեպ խորունկ երախտիք ունի հայ ժողովուրդը, Թորոս Թորամանյանի հետ, որի աննկուն ոգին անընչելի հետք է թողել բանաստեղծի սրտում, տաղանդավոր դերասան, Անիի սիրահար Արամ Վրուչի հետ, որ հայտնի է նաև Անիի աղերակների լուսանկարներով։ Եղել է ոչ թե հենց այնպես, այլև իբրև նրանց գործընկերը։

**ԻՍԱՀԱԿԱՆ**—Երբ լինում էի Անի, վաղ առավոտից սկսած մինչև կեսօր նրանց հետ այլովում էի բարկ արևի տակ, օգնում էի նրանց գործիքները տանելիս, սարքելիս և ուրիշ բաների մեջ։

**ԲԱՆԱՍԵՐ**—Կեսօրին ճաշել են, հանգիստ առել և նորից անցել գործի։

**ԻՍԱՀԱԿԱՆ**—Իսկ երեկոները մինչև ուշ գիշեր նստում էինք բացօթյա, ծխում, սուրճ խմում և անվերջ զրույց անում։

**ԲԱՆԱՍԵՐ**—Երիտասարդ Բահակյանի աչքում ուրիշ կիններ Անին սեփական ընկալմամբ և բոլորովին ուրիշ՝ ճարտարապետության վարպետի իմաստավորմամբ։ Բանաստեղծը հետադադրում մտաբերել է Թորամանյանի մտքերը.

— Անին հայկական մշակույթի հայելին է, լա՛վ նայիր Մայր եկեղեցուն, հայեցաբա՛ր նայիր. նա մեր ոճի ոգին է, Տե՛ս, ինչքա՛ն վսեմ է, որովհետև պարզ է, Պարզ է, որովհետև նա մաղվել է դարավոր մշակույթի միջից, զտվել, թափվել է վրայից աղեղորդ բաները, դարձել է բյուրեղ։

— Երբ նայում ես Մայր եկեղեցուն կամ Տեկոթի, Երև-

րույրի, Հոփփփիմեի տաճարներին, քվում է, թե լուսեղեն տե-  
սիլքի մեջ տեսնում ես նրանց: Ուրիշ ազգերի արվեստների  
գեղեցիկությունը հուզիլ է, հաճախ գրգռող և խռովիլ, իսկ  
մեր արվեստի գեղեցիկությունը անգորրոզ է, հանգստացնող,  
հայեցության տանող:

ԻՍԱՀԱԿՅԱՆ—Նրբ ես հիացած նայեցի նրան, նա զեմքը  
հանել էր Մայր եկեղեցուն, կարծես վերացած, լուսնյան մեջ,  
հիմա էլ հողով խոսում էր Մայր եկեղեցու հետ, հայոց ճար-  
տարապետության ողու հետ:

Նվ մտածում էի՝ ինչպե՞ս այն քաջված, անշուք Թորոս  
Թորամանյանը իր սխրալի գործով րոպե ժամանակների հայ  
ժողովրդի համար դառավ Թորոս ճարտարապետ, և մեծա-  
ցավ, պատմականացավ, անմահացավ:

ԲԱՆԱՍԵՐ—Ահա ինչպիսի մարդիկ են ներգործություն  
ունեցել Բազահյանի հոգեկան կերտվածքի վրա, ինչպիսի  
միջավայրում է հարստացել նրա ներաշխարհը: Վաղուց է  
առված՝ չկա վերացական, ընդհանրապես մարդ, կա մարդ,  
որ արգասիքն է որոշակի միջավայրի, բնության, ազգեցու-  
թյունների: Այն բնությունը, որ հասակ էր նետել ապագա  
բանաստեղծը, այն միջավայրը, որ խմորվել էր նրա բնավո-  
րությունը, այն ազգեցությունները, որ կրել էր նա՝ պետք է  
կերտեին խորունկ հայրենասերի ողին: Բայց, զժրախա-  
րար, կային ուրիշ պատճառներ ևս: Խոսքը վերաբերում է  
այն հալածանքներին, որ դարասկզբի առաջին տարիներին,  
ու հատկապես 1903-ին, ենթարկվում էր հայ ժողովուրդը,  
նրա լեզուն, մշակույթը:

ԻՍԱՀԱԿՅԱՆ—1903—4—5 թվականները հայ ժողովրդի  
համար ծանր տարիներ էին: Ցարական հայահալած քաղա-  
քականությունը ավելի խստացված շարունակվում էր: Փոխ-  
արքա իշխան Գուլիցինը հայերին տաելու մեջ ինքնամոռա-  
ցության հասած՝ անվերջ շարիքներ էր նյութում հայ ժո-  
ղովրդին:

Ցարն ու իր ռեակցիոն շինովներենը հայկական զրպ-  
րոցներն ու կուլտուրական հիմնարկները փակելուց չհագե-  
ցած՝ բռնի խլեցին հայ եկեղեցու րոպե կալվածքները, որ  
դարերով նվիրված էին հայ ազգի կոզմից էջմիածնի ու կա-

Յողիկոսության պահպանման համար և հոգալու հայ ժողովրդի կրոնական ու կրթական կարիքները:

Հայ ժողովուրդը, ամենուրեք, զենքը ձեռքին զիմավորեց հափշտակիչներին, և երկուստեք արյուն հոսեց:

ԲԱՆԱՍԵՐ—Այստեղ էլ ուժի մեջ մտավ անխոտոր օրենքը՝ զործողութիւնը հարուցում է հակազործողութիւն, հալածանքը՝ մաքառման ոգի, հայրենիքի գլխին կախված վտանգը՝ հայրենիքի սեր: Այդ ժամանակներում հայության նույնիսկ ապաղղայնացած տարրերը վերստին դարձան հայրենիքի դադափարին: Զուր չէ, որ Լեոն ասում էր, թե փոխարքա Գուլիցինը հայերին հայ դարձրեց:

Ժամանակները հայրենասիրության մարտական ոգի ներշնչեցին ժողովրդին, իսկ բանաստեղծը, որ իր ժողովրդի հետ էր, այդ ոգու երգիչը եղավ: Ահա ինչու հենց այդ ժամանակներում, 1903-ին է, որ պետք է որոտաձայն հնչեր բանաստեղծի քնարը, որ կարծես լարված էր հենց միայն սիրո մորմոքները շշնջալու համար.

Լքում եմ զողանշն տիեզերական,  
Ոգիս բացվում է անձիւր թևերով,  
Անձիւր թևերս դրոկում են համայն  
Աշխարհն աշխարհ, և ծովերն ծով:

Բացե՛ք զարպատներն ձեր պաշտոների:  
Ոգու հարթության լույսն եմ ձեզ բերու:  
Ես եմ զհիշուող անապատների,  
Եվ վառ նաեանը մրոսիլ ամպերում:

Եվ մարգարեի հուրն է իմ կրքերում,  
Սուրբ իմ ձեռքում, բարբառա՛ւ ազատ.  
Եվ ինձ հավիտյան անմահ եմ զգում,  
Եվ երկրի վերա թալլերես՝ հոստատ...

Ինչքա՛ն անսովոր, իր մարտական ոգով, կոշական ոճով անսովոր տողեր Իսահակյանի մեղմախոս ու տրամալի քնարի համար: Առանց ժամանակի ուշիմ չի բացատրվում, ամեն ինչ բացատրվում է ժամանակով:

Այն Իսահակյանը, որ առաջներում խոստովանում էր, թե քսիրում եմ մրմունջ-արտունջ, տանջված սրտի երգ ու վերջս,

Թէ՛, «միայն ախրս լարը մնաց սրտիս անհուն խորքերում»,  
դարասկզբի առաջին տարիներին լցվում է ուրիշ հուզմունք-  
ներով, հնչեցնում է խրոխտ շեշտերու Պայքարի շեշտերու Ահա  
քառատողեր «Ազատության դանդ» նշանավոր բանաստեղ-  
ծությունից.

Ազատության Զա՛նգ, զու վե՛հ զոգանչե՛ք  
Կովկասյան վան՛մ, վե՛ա քարձուներեբից,  
Ինչպէս մըրրիկ՝ շաշե՛, շառաշե՛,  
Մինչեւ սիգազանեմ ազատեմ Մասիս:

... Ըմբոստ ոգիեև՛ր, քե տան՛ք, հասե՛ք.  
Եվ զանգահարենք ամե՛ւր, միհամուռ,  
Զանգն ազատության զանգահարեցե՛ք  
Կովկասի համար հանե՛ւր, ընդհանե՛ւր:

... Եվ բավական է՝ տնարդ լըծի տակ  
Մենք ստրուկ մնանք՝ ձեռներըս չըզթա,  
Կապանք փշրելու մեզ թո՛ւյն ու կըրտէ,  
Մեզ ուժ ե կորով, վրեժ որոտու:

... Եվ ազատության նորոգ արեթ  
Ռակի ներբողըդ, Զա՛նգ, զըվարթ հընչե՛.  
Բյուր զազաթներից ազատ Կովկասի  
Սուրբ եղբայրության տանին մեզ կտնչե՛:

Ո՛ւր մնաց «մրմունջ-տրտունջի» երգիչը. սա բացահայտ  
հեղափոխության կոչ է, պայքարի երգ, և այն էլ այնպիսի  
պայքարի, որ ի մի է բերում ազգային ազատագրության և  
սոցիալական ազատագրության զազափարները՝ ժողովուրդ-  
ների եղբայրության նշանաբանով: Որքա՛ն մեծացել էր բա-  
նաստեղծի զազափարական ընդգրկումը՝ ժամանակի հեղա-  
փոխական ոգու ազդեցությամբ: Իսահակյանի անցած  
ճանապարհին հետեւելով, կարելի է բավականաչափ ստույգ  
որոշել նրա ապրած հասարակական տրամադրությունների  
վերելքն ու վայրէջքը, բոլոր տատանումներով: Մի քանի տարի  
անց, երբ 1905 թ. հեղափոխությունը պարտվում է և համայն  
Ռուսաստանում տիրում է հուսալքում՝ Իսահակյանի քնարը  
ևս, համակված հոռետեսությամբ, հնչեցնում է մոռյլ, արտը-  
մալի մեղեդիներ:

Իսկ առաջիմ, հեղափոխությունը նախորդած հասարակական վերելքի և հենց հեղափոխական վերելքի ժամանակներում, պետքը համարձակ է ու խրոխտ նույն այդ ժամանակների պես:

Այդպես է օրենքը. գրողը, արվեստագետը, եթե նա ճշմարիտ գրող է ու արվեստագետ, մշտապես իր ժամանակի հետ է, իր ժողովրդի, իր միջավայրի հետ՝ շունչը շնչի, իր տեսածի ու ապրածի հետ: Իսկ ի՞նչ էր տեսնում Բաահակյանն այդ ժամանակներում: Տեսնում է ազգային ճնշում, սոցիալական ճնշում, բայց նաև ընդվզում և՛ մեկի, և՛ մյուսի դեմ: Մանոթանանք և՛ մեկին, և՛ մյուսին: Բանաստեղծն ընկերոջ հետ այցելում է Արարատյան դաշտավայրի գյուղերից մեկը, որը նույնպես զաղտնի դպրոց է պահել: Ինչո՞ւ զաղտնի:

ԻՍԱՀԱԿՅԱՆ— Ցարական կառավարությունը փակել էր հայկական դպրոցները՝ քաղաքների և գյուղերի, գրավել էր դպրոցների պատկան շենքերն ու եկամուտ բերող կալվածքները: Հայ ժողովուրդը զրկվել էր ազգային կրթության ստանալու միջոցներից ու հնարավորություններից: Հայ ժողովրդի ղեկավարն մասը գիտակցում էր հայությանը հասած ծանր հարվածը, և հայրենասեր անհատներ ինքնաբերաբար մտածում էին կարելի չափով հակազդել պետական ալյասերող քաղաքականությանը: Հայկական զավառներում տեղափոխվել, տակավին սակավաթիվ գյուղերում, սկսեցին գործել զաղտնի դպրոցներ, համեստ միջոցներով... Հետագայում այդ տարրական դպրոցների քանակը շատացավ:

Այդպիսի դպրոցներից մեկն էր, որ մենք այցելեցինք:

ԲԱՆԱԿՅԱՆ— Սա ազգային ճնշումն էր, ավելի ճիշտ՝ դրա արտահայտություններից մեկը: Բայց Բաահակյանը տեսնում էր նաև սոցիալական ճնշումը, որ ծանրանում էր Ռուսաստանի բոլոր ժողովուրդների ուսերին, հարուցում նրանց լավագույն զավակների բողոքն ու ցասումը: Բաահակյանը տեսել է այդ հերոսներին ու հիացել նրանցով: Նա 1906-ին է գրել «Շաբրո Վալիշվիլի» պատմվածքը:

ԻՍԱՀԱԿՅԱՆ— 1905-ին էր, հավիտյան անմոռանալի այդ թվականը, երբ անձայրածիր Ռուսաստանի վրա, նրա մի եղբից մինչև մյուսը, հեղափոխության դրոշն էր ծածանվում, որի




Ալեհանդրապոլ Բաղաթի այն տունը, ուր ծնվել է Ավետիք Բաճակ-  
յանը (մականոյ) :



Բաճակյանի մայրը՝ Ավետի  
Ղուկասյանը, 1914:



Փոքրիկ Ավիկեն իւ պապի՝  
Իսաբրինկ Գլանյանի հետ,  
Ալեքսանդրապոլ, 1882:



Ավետիք Բաճակյանն էջ-  
միտման Գևորգյան համալսարանի  
սան, 1890:






Նուշանիկ Մատակյան (1877—1944): Բանաստեղծի  
առաջին սեր և իր պոեզիայի ներուժին:



Հովհաննես Կասաբեյան, Հովհաննես Քասաբեյան և Ավետիս Խանադյան. Ալեքանդրապոլ. 1901;






Հովհաննէս Թումանյանը և Ավետիք Իսահակյանը Անիում, Ալուս Թորմաճի շիրիմի մոտ. 1901:

«Աւրաստուն» գրական խմբակցության անդամներ Ավետիք Իսահակյան, Դադարուս Ապայան, Հովհաննէս Թումանյան, Սոն Շանյը և Գեւորգի Գեմինյան. Թիֆլիս. 1903:







Նկարիչ Գևորգ Բաշինջադյանի արվեստանոցում. Ավետիկ Խաճատյան, Հովհաննես Թումանյան, Գևորգ Բաշինջադյան, Ղազարոս Աղայան, Վերանես Փափազյան, Կոմիտաս և Աբշակ Չոլանյան. Թիֆլիս. 1909:


◀ «Արեւատուն» գրական խմբակցության անդամների լրիվ կազմը.

Գերենիկ Դեմիրճյան, Ավետիկ Խաճատյան, Ղազարոս Աղայան, Ասոն Շանթ, Հովհաննես Թումանյան, Նիկոլ Աղբալյան. Թիֆլիս. 1904:



Միկայիլ Բանանկյան, Թիֆ-  
լիս, 1910:

Միամանր և Միկայիլ Բանանկյան, Պոլիս, 1914:





Եղիշ Չառենցը և Ավետիք  
Բաանակյանը Վենետիկի  
Մուրք Մարկոսի հրապա-  
րակում, 1925:

Գարեգին Առնյան, Մխիթար Մանվելյան, Աբեղաբեկ Շիրվանզադե,  
Հովհաննես Հովհաննիսյան, Ստեփան Զուրյան, Ավետիք Բաանակյան, Երևան,  
1926:






Ավետիք Իսահակյան, մատի-  
տանկար Մարտիրոս Սարյանի,  
1930:



Ավետիք Իսահակյան, 1937:




Հրաչյա Ներսիսյան, Ավետիք  
Իսահակյան, Արուս Բականյան,  
զբաղանազեւ խորհն Սարգս-  
յան, Սանա կղզի. 1940:



Մարտիրոս Սարյան և Ավետիք  
Իսահակյան. 1945:



Ավետիք Բաաճակյանն իր աշակերտներին հետ, 1946:



Ավետիք Բաաճակյան, 1950:



Հովն. Քումանյանի ընտանիքում. Նվարդ, Աշխեն, Սեդա Քումանյան-  
ներ, Ավետիք Խաճակյան, Ստեփան Ջորյան, Օլգա Քումանյան, Մուշեղ  
Աղայան. 1933, ապրիլի 15:



Ավետիք Խաճակյանը բռնանալով  
Ավիկի ճեռ. Երևան. 1952:



Ավետիք Բաճակյանը, ծովակալ Իվան Խաչիձը և Մարտիրոս Սարյանը  
Մատենադարանում, 1953, նոյեմբերի 17:



Ավետիք Բաճակյան և Գերենիկ  
Դեմիրճյան, 1954:





Ավետիս Բամանկյանը մի խումբ զինվորների հետ. 1955:

Մոֆի Բամանկյան, Ավետիս Բամանկյան, զերասան Քաղեա Սարյան.  
1955:





Ավետիք Խաճակյանն Արուսյանի հուշարձանի (գործ Անդրեաս Տեր-Մարտիանի) առաջ, Հրազդանի ձորում, 1955:



Վարդանի վերին ձեռագրերից:



տակ համարվում էին բոլոր իրավադուրկները, բոլոր տանջ-վածները, բոլոր ազատասերները:

**ԲԱՆԱՍԵՐ**— Այս նախարանից հետո Իսահակյանը ներկայացնում է հեղափոխական քարոզչին, որ պայքարի կոչ է անում. «Մենք հող և ազատություն ենք պահանջում: Հողը և ազատությունը տերերի և իշխանների ձեռքին են. մենք կրողով պիտի տիրանանք մեր իրավունքին՝ արյունով և սրով: Ո՞վ պետք է կովի առաջնորդի ապստամբներին: Առաջ է դալիս մի երիտասարդ՝ «սպառազեն և խրոխ»: Շաքրո Վալիշվիլին է դա, և ամբողջ գրվածքը ժողովրդի համար գլուխը ետ դրած, բռնակալության դեմ կովոզ ու քաջաբար զոհվող հերոսի գրվատանքն է:

Հեղափոխության դադափարներն այսպես, ժամանակի հրամայականով, թափանցում են Իսահակյանի աշխարհայացքի ու ստեղծագործության մեջ: Հետևելով բանաստեղծի աշխարհայացքի դարգացման ընթացքին, կարելի է նկատել, թե ինչպես ազգային ազատագրության երազանքին փարած գրողը հանգում է նաև սոցիալական ազատագրության դադափարին և բռնակալության խորտակման հետ է կապում ն՝ իր, և՛ մյուս ժողովուրդների ազատագրությունը ազգային ու սոցիալական ճնշումներից:

Գարասկզբի առաջին տարիները եղան Իսահակյանի մտքի ոլորտների ընդլայնման, աշխարհայացքի հաստատման, ճանաչողական տեսադաշտի մեծացման տարիներ:

Նոր վայրեր, նոր մարդիկ, նոր ապավորություններ: 1904-ին առաջին անգամ լինում է Մոսկվայում: Մանոթանում է Ալեքսանդր Մատուրյանի հետ:

**ԻՍԱՀԱԿՅԱՆ**— Այն ժամանակ ես քառասուն տարեկան էր, քաղցր զիմազմեր ուներ, զեզեցիկ, զանգուր մազեր և չզային հիվանդ, կրակոտ աշքեր:

**ԲԱՆԱՍԵՐ**— Այցելում է նաև Հազարյան ճեմարան: Հենց այստեղ է առաջին անգամ հանդիպում Վահան Տերյանին, իր կրտսեր արվեստակցին, որ Իսահակյանից փոքր էր 10 տարով, բայց նրանից 37 տարի վաղ հեռացավ այս աշխարհից: Դա աշնան է խառնում մեր պատկերացումները, որ զժվարանում ես համատար՝ Տերյանն իրեն շատ փոքր է զգացել և քաշվել:

սկնածնէլ է «Երզնի ու վերքերի» հեղինակից: Զեմարանցիները շրջապատել են նրան, ասել, խոսել...

ԻՍԱՀԱԿԻՅԱՆ—...մինչդեռ Վահանը լուռ ու անխոս հետեւում էր մեղձ՝ աչքը վրայիցս չհեռացնելով: ...Մի երկու օր հետո Վահանն իր ընկերոջ հետ մօտս եկավ... Երբ նայում էի նրան, հուզվում էր, գլուխը կախում: Զգում էի, որ հայացքս ճնշում է այս երկշտ, վեհերոտ տղային, և խուսափում էի նրա աչքերին նայելուց:

ՔԱՆԱՍԵՐ—Սա 1904-ի դարնան էր: Հաջորդ տարվա ամառն էր սահակյանի թափառական կերպարանքը հայտնվում էր Գանձա գյուղում՝ Տերյանի հայրական հարկի տակ: «Վահանի լեզուն բացվել էր, այլևս չէր փաշվում ինձինք»,—մտաբերել էր սահակյանը: Գանձայում, ուխտավոր գեղջուկների տոնախմբությանը նայելիս, Տերյանն ավագ ընկերոջն ասել էր այսպիսի խոսքեր. «Այս ժողովրդին մեր ինտելիգենցիան չի կարող հասկանալ, ո՛ւր մնաց օտարը: Մեր նոր գրողներից Քումանյանը և դու, միայն երկուսդ, զգում եք մեր ժողովրդին: Զեղնից հետո կամ նոր, բոլորովին նոր երգ պիտի ասել, կամ պիտի լուր:»

Շատ շահագրեց այդ բոլորովին նոր երգը. չորս տարի անց «Մթնշաղի անուրջները» ժողովածուն արդեն հրապարակի վրա էր:

1905 թվականի անհանգիստ օրերից մի անմոռանալի հուշեմ մնացել էր սահակյանի զարմանալի հիշողության մեջ: Ուշ աշնան մի գիշեր թափառելիս էր եղել Թիֆլիսի փողոցներում՝ ապաստան գտնելու տարտամ հույսերով:

ԻՍԱՀԱԿԻՅԱՆ—Ազգական ունեի քաղաքի ձախափում, բայց սիրտ չէի անում կամուրջից անցնել, որովհետև զինվորական սպահակները խուզարկում էին երթևեկողներին: Շվարած թափառում էի և մտածում, թե ում մոտ ապաստանեմ այս գիշեր:

Այդ պահին հանկարծ գեմա ելավ Հակոբյանը, որ տուն էր գնում, նա ապրում էր Սուրբազի կողմերը:

ՔԱՆԱՍԵՐ—Հակոբ Հակոբյանը գրչնկերոջը տանում է իր բարեկամի տուն (իր տունը լցված է լինում Գանձակից փախած ազգականներով): Հակոբյանը փաշալներում, սիրտ էր տալիս վշտահար ընկերոջը:

ԻՍԱՀԱԿՅԱՆ—Ուշ գիշեր էր, երբ բաժանվեց ինչուսից: Յսմնացի մենակ, բայց սիրովմած էի: Հիացած էի նրա ամբողջականության վրա, աներկմիտ, անհողողող:

ԲԱՆԱՍԵՐ—1905—6—7 թվականները թափառումների ու գործունեության տարիներ էին Իսահակյանի կյանքում: Կարծես զգում էր, որ շատ շանցած սլետք է վտարանդի դասնա և Կովկասի երեսը շարտի տեսնի ամբողջ տասնհինգ տարի: Եղել է Դսեղում՝ Բումսնյանի հետ, նրա հայրական տանը և շրջել Լոռիում, եղել է էջմիածնում և մի վերջին անգամ տեսել երիմյան Հայրիկին, եղել է Բաքվում և տեսել իր վերջին օրերն ապրող Պերճ Պոռչյանին:

Մեր ասես չի եղել Իսահակյանն այդ տարիներին: Ապրել է Թիֆլիսում, Ալեքսանդրապոլում և Ղազարապատում: Ամենից լավ գրել, կարդացել, պարապել է հայրենի գյուղում, պայհնական ջրաղացի մոտ եղած տանը, իր աշխատասենյակում: Իր բանաստեղծություններից շատերն այստեղ են ստեղծվել: Այստեղ է գրվել նաև «Արու-Կալա Մահարին»:

Մի անշուք տուն էր Իսահակյանի ունեցածը, բայց դա էլ կարող էր շարժել հայ գրողի նախանձը, ավելացնենք՝ բարի նախանձը. «Երանի քեզ, որ մի անկյուն ունես ու գլուխդ ազատ, ականջդ դինք կարողանում ես նստես ու պարապես. ինձ համար էդ էլ է կտրված»,— գրել է Բումսնյանը կրտսեր ընկերոջը 1908-ին:

Բարեբախտություն է, որ ունենք այդ տան ու միջավայրի ստույգ նկարագրությունը, զրված թարմ տպավորությամբ, Լեոյի ձեռքով: Ժամանակի մամուլում նա հրապարակել է ականարկաշար՝ «Իմ ամառային թափառումներից» վերնագրով: Ակնարկի թերևս ամենագեղեցիկ շեշտն այդ նկարագրությունն է: Դեռ շատ երիտասարդ, բայց արդեն արժանի հույակ վայելող պատմաբան Նիկողայոս Ազոնցի հետ միասին Անի մեկնելիս, Լեոն նրա հետ հյուրընկալվում է Ղազարապատում: Անտառաղուրկ զաշտավայրում երևում է ծառերի մի պուրակ՝ ջրաղացի շուրջը: Զրաղացը պատկանում է «Իսահակյան եզրայրներին, որոնցից մեկը, Ավետիքը, մեր աչքան հայտնի բանաստեղծն է»:— Գրել է Լեոն:— «Նստած ենք բանաստեղծի սենյակում: Բայց դուք, ո՞վ գիտե, երևակայում եք մի վիշա գետի ափում, հարմարություններ և այլն... Ավելի քան

Համեմատ մի սենյակ, մի քիչ լավ գյուղական սենյակից, հասարակ կահ-կարասիքով... Ամբողջ տունը լիքն է բնակիչներով. նույնիսկ նախասենյակն էլ ննջարան է: Բայց սենյակն ունի մի մեծ զարդ՝ զրքերով լիքը պահարաններ, ամբողջ մի զրադարան, բավական հարուստ՝ Ղազարի գյուղի համար: Ձմեռը, երբ Շիրակը խոր ձյունի տակ է, խակ ձյունի վրա աղառ թաղավորողը բուքն է, երբ սառչում է Արփաշայը, և լուռ է ջրադաշի շաշանակը, Իսահակյանների տունը դատարկ է և մենավոր. Ավետիքն է միայն, որ ընկերուհում է իր զրքերին և իր սիրած լուսնյան ու մեկուսյան մեջ իր զարդերն է նորոգում: Նրա բանաստեղծությունների մեծագույն մասը այստեղ է գրված:

...Այստեղ, ժողովրդի ծոցում, նա ոտից մինչև գլուխ ինքնուրույնություն է, տեղացիություն է, անթարգմանելի տեղացիություն, որ կարելի է զգալ, ըմբռնել, հաստատել միայն տեղում. նույն հողի վրա, ուր զարբերի ահեղ հոսանքի տակ ժողովրդի կյանքն է ձևակերպվել»:

Սա գրված է 1908-ի աշնան տպավորությամբ:

Դա նշանավոր տարեթիվ է Իսահակյանի կյանքում. շատ խաշտարդեա՝ զրադմունքներով, շատ տարբեր՝ վիճակներով ու վայրերով: Այդ թվին նույնիսկ պաշտոնավարել է, կյանքում թերևս առաջին ու վերջին անգամ:

ԻՍԱՀԱԿՅԱՆ—Ես մի կարճ ժամանակով Բաքվի «Կուլտուրական միության» հրատարակչության մասի վարիչն էի: Իմ թեկադրանքով և իմ հակողությամբ լույս ընծայվեցին Հ. Հովհաննիսյանի բանաստեղծությունների հատորը, նաև Խ. Աբովյանի «Վերք Հայաստանին»:

ԲԱՆԱՍԵՐ—Այդ թվականին ավելի քան երբևէ բազմազան են եղել նրա գրչի հրապուրանքները: Եվ առհասարակ, միայն 1907—10 թվականներին է, մինչև արտասահման վտարանդվելը, որ Իսահակյանը ոչ միայն բանաստեղծություններ է գրել ու արել թարգմանություններ, այլև գրել է հայ և ռուս գրականությունների տարեկան տեսություններ, հոդվածներ արևմտահայ բանաստեղծների, ռուս և եվրոպական գրողների մասին, նույնիսկ՝ թատերախոսականներ հայկական ներկայացումների մասին... Գրանք, ամբողջության մեջ, ի հայտ են բերում վերին աստիճանի զարգացած միտք՝ նա-

խասիրութիւնների մեծ շրջանակով, լայն խմացութիւն և նուրբ ճաշակ:

Մենք սովոր չենք Բաճակցանին ճանաչել իբրև լրագրողի, ուստի և հարկ կ'իյնի ծանոթանալ նրա այդ, մեծագույն մասով այլևս չհրապարակված, գրվածքներին: Մանավանդ որ զրանք հստակ պատկերացում են տալիս նրա գրական-գեղարդիտական հակումների, նախաքրութիւնների մասին:

Ժամանակի ուս հռչակված գրողների երկերից կազմված «ЗЕМЛЯ» ժողովածուի մեջ Բաճակցանին ոչինչ ավելի չի հրապարակում, քան Ալ. Կուպրինի «Սուլամիթ» պատմվածքը: Բիրյիտկան պատումի այդ շողշողուն ոճավորմամբ հիացող Բաճակցանի մեջ կարելի է տեսնել այն գրողին, որ այդ ժամանակից ի վեր պետք է փայլուն կերպով ոճավորեր մի ամբողջ շարք արեւելյան և առասպելներ և բիրյիտկան պատումները: 1907-ին նա արգեն գրել էր «Երգհարը», «Եր-Հոանգ-տի Բողոքխանը», «Չինգիզ-խանը», 1908-ին՝ «Անանգան և մահը», որոնց առիթով քննադատութիւնը հեղինկ է նրան. «Բաճակցանը, այժմ կարծես ոչինչ չգտնելով, շինական արիւթիկներն է քափառում ճշմարտութիւն զտնելու»: Հետագա տարիներին, առանց այդ քննադատութիւնն ականջ դնելու, նույնպիսի փայլուն ոճավորմամբ ստեղծում է «Ուշի-նարան», «Սաագիի վերջին զարունը», «Լիլիթը», «Լի-Քայ-Պոն» և ուրիշ. — գրողի վառ երեսակայութիւնը, հայոց լեզվի արտահայտչական հնարավորութիւնները նորովի բացահայտող, մայրենի գրականութիւնն անծանոթ պատումներով, մտքերով ու անուններով հարստացնող, — գրվածքներ:

Նույն 1908-ին Բաճակցանի գրած մեծաթիվ հոգվածներից մեկ ուրիշը ևս խորապէս հատկանշական է իբր ստեղծագործական նկարագրին: Դա Կնուտ Համսունի «Պան» և «Լիկտորիա» վիպակներին նվիրված հոգվածն է՝ հագեցած բնութիւն այն պաշտամունքով, որ հատուկ է նորվեգ գրողի ստեղծագործութիւնը: Կարգալով Համսունի գրվածքները, — գրել է Բաճակցանը լրագրային հոգվածին սաղ շնկող ներշնչանքով, — «սիրում եք բնութիւն ամեն մի արտահայտչութիւնը, և օրհնում եք նրա թե՛ մարիկները, թե՛ սարսափները. եղբայրանում եք թռչունների և անասունների հետ, և տեսնում եք, որ մարդը միայն բնութիւն մեջն է խելոք, մաքուր և բնա-

կան, և աղնիւմ...», «ստեղծութեամբ լցվում եք զեպի քաղաք-ներն աղմուկն ու էնզիմներ», «մարդկանց աշխրհից հեռու, հեռու օրհներգում ես բնութիւնը, նրա քարն ու քույր, մրջյունն ու աւերը, և ամեն ինչ, ամեն ինչ, և զգում ես քեզ զո՛ւ ու բախտավոր, շնորհակալ, որ ապրում ես, կյանք ունեւ և զբաղւում ես բնութեան պէս մի հոյակապ, գերհրաշ տաճարում»:

Սա բնապաշտ բանաստեղծի հոգու խոստովանութիւնն է. բնութեան սիրահար բանաստեղծը, «Աբու-Լալա Մահարի» պոեմի մոտաւորապէս հեղինակը՝ մեկ ուրիշ գրողի ստեղծագործութիւնը զնահատույի գերում: Հոգվածագիրը նախանձով է խոսում հաղիմ երկումիլիոնանոց նորվեգիայի մասին, որ տալիս է աշխարհահռչակ գրողներ, ինչպէս՝ Իրսեն, Համսուն և ուրիշներ, որոնք «ներկա ոգու խոշոր քանդակագործներից են»:

Իսկ ինչո՞ւ հայ գրականութիւնը չի տալիս այդպիսի անուններ: Նույն շրջանում գրած մեկ ուրիշ հոգվածում, որ Բահակյանն անում է ծանր խոստովանութիւն («Մենք գործում ենք ինքնապանութիւն և անտարբերութեամբ թաղում ենք այն անգնահատելի դանձը՝ մեր լեզուն, որ մեր ժողովուրդը անասելի տառապանքներով ու զրկանքներով բերելահասցրել է մեր օրերը...»), նա երևույթը բացատրում է այսպէս. «Հայ ժողովրդի քաղաքական բաժան-բաժան վիճակը վերին աստիճանի աննպաստ է անդրադառնում մեր գրականութեան վրա: Ամբողջութիւն չենք կազմում և այդպիսով ամբողջութեամբ չենք զգում ու խորհում, և չենք կարող մի ամբողջ գեղեցկութիւն ստեղծել»: Եթե սա երևույթի սպառիշ բացատրութիւնը չէր, ապա դրա շատ էական կողմերից մեկն էր, որ կոահել էր հոգվածագրի որոնող միտքը:

Թե ինչքան խոստապահանք, արվեստի բարձր չափանիշներով մտածող քննադատ էր Բահակյանը, երևում է նրա թատերախոսականներից: Դրանցից մեկը վերաբերում է «Դոն Քիշոտ» ներկայացմանը. «Ահա երևում է բնի վրա մեր մանկութեանից շատ սիրված հերոսը — անուղղելի իդեալիստ Դոն Քիշոտը՝ նիհար, վերալաց հայացքով և բարակ ոտքերով. նրա ետևից՝ հաստ, կենսութախ, առականքով խոսող և զեպի նյութը միշտ հակված մատերիալիստ Սանչո-Պանչոն՝ ինքը ժո-

ղովուրդը»։ Ապա, դառնալով գլխավոր գերակատարին, որ ժամանակի հռչակավոր գերաստաններից մեկն էր՝ Իսահակ Ալիխյանյանը, Բատերախոսը նկատել է՝ գերաստանը հասկացել է դերի լրջությունը, բայց «չունեք այն անհողող չափաբար գեպի իր իղեպն ու իր կարողությունը, չունեք այն պափոսը, որ անժխտելիորեն հարկավոր էր սղեբոված Դոն Քիշոտին»։

Պշիբշևակու «Երջանկություն համար» պիեսի բեմադրության առիթով Իսահակյանը այնպես է վերլուծում երկը՝ նիցշի հետ հեղինակի ունեցած առնչություններով, ինչպես կարող էր վերլուծել ինքը՝ եվրոպական գրականության նորագույն երևույթներին լավատեղյակ բանաստեղծը։ Նա համարում է հայ գերաստանների խաղն այդ պիեսում, և դա հասկանալի է՝ զրամայի շորս գերը կատարում էին ժամանակի հայ բեմի հռչակավոր արտիստները՝ Զարիֆյանի (ի դեպ, իր մորաքրոջ որդին), Օվի Սևումյանը, Սաթենիկ Աղամյանը, Օլգա Մայսարյանը։ Բայց երբ խոսքը գալիս է Կոնիդ Անդրեևի «Սով-Քազավորը» պիեսին, Իսահակյանը, առանց զրոգի մեծ հռչակին նայելու, խոսք չի խնայում նրա գրվածքը քննադատելու համար։ Որքան էլ անողոր, բայց իրավացի է նրա քննադատությունը. «...սա մի անարվեստ, անճաշակ զրվածք է, ձեռք, որպես թե ուլտրա-մոդեռն՝ այնինչ շատ պրիմիտիվ, կապիտոլ շինած. ոչ տիպեր կան, ոչ տրագիկ դրություն և ոչ կենսական ճշմարտություն»։ Թե որքան իրավացի էր Իսահակյանն իր քննադատության մեջ, կարող է վկայել թեկուզ և այն, որ Կորենյ Չուկովսկին, ժամանակի թերևս ամենանբեամիտ ռուս քննադատը, մի քանի տարի անց նույն պիեսի հանդեպ ունեցավ գրեթե նույն վերաբերմունքը՝ անճաշակ զրվածք, ուր կան «գերբնական հարուստներ և գերբնական աղքատներ», ուր «մարդիկ դարձել են մեքենայի մասեր» ու քանի որ գործող անձինք զուրկ են հոգեբանությունից, մենք «միանգամայն անտարբեր ենք» պիեսում հանդես բերված սովահարների հանդեպ։

1908-ն առհասարակ հարուստ եղավ Իսահակյանի կյանքում. շատ բանաստեղծություններ, արձակ էջեր, հոդվածներ ու գրախոսություններ է տպագրել այդ թվին։ Նույն թվին էլ Թիֆլիսում լույս տեսավ նրա բանաստեղծությունների նոր

ժողովածուն՝ հնի խորագրով՝ «Երգեր ու վերքեր», որի առկնիով մամուլը ղվարանեց գրել. «Բուհական վարպետ մէկ և այդ ժողովրդական ձևի նվիրագործողն է, եթե ոչ հաստատողը: Եթի բանաստեղծը հասնի այդ աստիճանին, իր պակասութիւնները առանձնահատկութիւններ կդառնան և որով սիրելի»:

Բուհականն արդեն ճանաչված ու զնահատված պոետ էր այդ ժամանակ և արդեն իսկ հասած մի բախտի, որին այդքան շուալլորեն հաղվագլուտ ընտրյալներն են արժանանում՝ Թափանցել էր իր ժողովրդի սիրտը, դարձել էր հայ ժողովրդի երգվող բանաստեղծը, ամենից սովելի երգվողը: Իր անվերջանալի Թափառումների ժամանակ հայկական հեռավոր գլուղներում, հենց Ալեքսպոլում ու Քիֆլիսում կարող էր լսել իր երգերը՝ անհայտ ու անանուն հեղինակների հրապարիշ մեղեդիներով: Այսպէս պոետը մոտենար ու հարցներ երգողին, թե ովքեր են զրանց խոսքերի ու մեղեդիների հեղինակները, ամենայն հավանականութեամբ շէր լսի ո՛չ մեկի, ո՛չ մշուտի անունը: Քչերը գիտէին, որ «Մանկալ էս, բեղարած էս», «Սե-մութ ամպեր...», «Որսկան ախպեր» և մշուտ երգերի խոսքը Բահականինն է:

Երգող ժողովրդի աչքում զրանք անհեղինակ երգեր էին, ինչպէս լինում են ժողովրդական երգերը: Լինել ժողովրդի մեջ երգվող հեղինակ այնպէս, որ ժողովուրդը կարծի, թե ինքն է այդ երգերի հեղինակը:

Հաղվագլուտ բախտ աշխարհիս ամեն մի բանաստեղծի համար:

Բանաստեղծ, որի առաջին իսկ գրքի, քսաներեք տարեկան հասակում լույս ընծայած գրքի բանաստեղծութիւնները երգիչը դառնան ժողովրդի մեջ և ուղեկցեն նրան տասնյակ տարիներ ուրախութեան ու, մահավանդ, տրտմութեան ժամերին: Այս իմաստով հայկական Պառնաստում ոչ որ չի կարող համեմատվել Բահականի հետ: Իհարկե, տարիները զնալով հարստացրին նրա ձայնագարանը, Բահականի մեծահարուստ երաժշտականը ստեղծվեց տասնյակ տարիների ընթացքում, բայց 1908-ին արդեն նա ամենից շատ երգվող, ամենից ժողովրդական հայ բանաստեղծներից էր: Բայց, որքան էլ դա տարօրինակ լինի ժամանակակիցներին աչքում,

նա գրական վաստակով քնալ էլ ապահովված չէր: Ժամանակի մամուլը չի թաքցրել իր տարակուսանքը. «Ավետիք Իսահակյանի երգերը երգում է ամբողջ հայ ժողովուրդը: Բայց այդ երգերի ժողովածուից քանի» հաս է ծախվում: Պետք էր սպասել, որ այդպիսի մի ժողովրդական բանաստեղծի գերվածքները միանգամայն ապահովեն հեղինակին, մի շարք հրատարակությունների արժանանային»: Մինչդեռ քնալ այդպես չի եղել, գրքերը թափված են մնացել գրախանութներում, իսկ հեղինակն ապրել է անապահով կյանք, հույսը՝ պտպենական ջրաղացի համեստ եկամուտի վրա:

Այդպես էր փոքր ժողովրդի, գրական փոքրիկ շուկա ունեցող ժողովրդի, իր մեծ մասով անգրագետ ժողովրդի բանաստեղծի ճակատագիրը: Իհարկե, Իսահակյանը մենակ չէր իր ճակատագրով: Գուցե միայն Գարրինը Սունդուկյանի բացառությամբ, հայ գրողներն ապրել են մշտապես կարիքի մեջ, որ հետապնդել է նրանց շարունակ, խանդարել ու խափանել ամեն քալափոխի:

Այդպես էին, անմոռուն մաքառումով, մեր մեծերը ստեղծում ազգային գեղարվեստական մշակույթը:

Իսահակյանը նրանց հետ էր ու նրանց մեջ և՛ սակավաթիվ ուրախության, և՛ մեծաթիվ տխրության ժամերին: Մի այդպիսի հազվագյուտ ուրախ օր մտարերիկ է պոետն իր հուշերում: 1908-ի աշնանը նկարիչ Գևորգ Բաշինջաղյանի ընդարձակ ու հյուրասեր տանը, միևնույն հարկի տակ միմյանց հետ սեղան են նստել Ղազարոս Աղայանը, Հովհաննես Թումանյանը, Կոմիտասը, Արշակ Զոսյանյանը, Վրթանես Փափաղյանը:

ԻՍԱՀԱԿՅԱՆ—...բավական ուշ սեղան նստեցինք և շատ ուրախ ճաշասեղան ունեցանք, մինչև ուշ գիշեր խոսք ու զրույց, կատակ ու ծիծաղ: Կոմիտասն էլ երգեց ու նվագեց:

Այդ անմոռանալի օրը Վ. Փափաղյանը հավիթժացրեց՝ լուսանկարելով մեր խումբը նկարչի գեղեցիկ պատկերասրահում:

ԲԱՆԱՍԵՐ—Իրոք որ անմոռանալի, հազվագյուտ օր: Այլևս երբեք նրանց լվիճակվեց միասին լինել և մտնել մեկի ուրախանալու: Նկան ծանր ժամանակներ: Այդ օրվանից քիչ անց...

**ԻՍԱԶԱԿՅԱՆ**—1908 թվի գեկտեմբեր ամսին ցարական ժանդարմերիան Օհաննեսին և ինձ ձերբակալեց և, զանազան հակապետական մեղադրանքներով, վեց ամիս պահեց Քիֆլիսի Մետեխի բանտում։ Կամերաներով զրացի էինք իրար։

**ԲԱՆԱՍԵՐ**—Այդ բնթացում, 1909-ի մարտին, վախճանվում է աշուղ Զիվանին։ Ինչպես մտաբերել է նրա որդին՝ Գարեգին Լևոնյանը, հուղարկավորության ժամանակ մարդիկ հայացքները դարձրել էին դեպի Մետեխի բանտը։

«—Տեսեք, տեսեք, այն ովճե՞ր են բանտի լուսամուտից թաշկինակներ շարժում։

Նայում եմ և ո՞ւմ տեսնում—Հովհ. Թումանյանին և Ավ. Իսահակյանին, որոնք, ձեռները լուսամուտի երկաթյա վանդակից դուրս հանած, թափահարում են թաշկինակները, իբր իրենք ևս մասնակից են հուղարկավորությանն ու սգահանդեսին։ Այդ ինձ համար մեծ բախտավորություն էր»։

**ԲԱՆԱՍԵՐ**—Իսահակյանը, իր բախտակիցների հետ միասին, բանտում մնում է կես տարի։ Դրանից հետո, ինչպես Թումանյանը և ուրիշները, ժամանակավորապես կալանքից ազատվում է դրամական երաշխավորությամբ։ Դա նշանակում է, որ ամեն մեկի համար մի որոշյալ դրամադուլիս պետք է մուծվեր՝ պայմանով, որ մեղադրյալներն ազատ արձակվեն, բայց Կովկասից շհեռանան մինչև գատավորության սկսվելը։

Բաժական երկար, ավելի քան երկու տարի է տևում, մինչև որ ցարական բյուրոկրատիան կազմում-ձևակերպում է մեծաթիվ ամբաստանյալների մեղադրական գործը։ Այդ ժամանակամիջոցը նշանավորվեց Իսահակյանի և՛ ստեղծագործական, և՛ անձնական կյանքում. մեկը «Արու-Լալա Մահարի» պոեմի ստեղծումն է, մյուսը՝ ամուսնությունը։ Առաջինը վերաբերում է 1909, երկրորդը՝ 1910 թվականներին։

«Արու-Լալա Մահարին» Իսահակյանի տաղանդի մեծագույն պոեմիկումն է, ստեղծագործության վերին զաղաթնից մեկը, որ արտասովոր ուժով խտացրել է բանաստեղծի մտածմունքները կյանքի մասին։ Մոռյի, դառնադին մտածմունքները։ Եվ տարօրինակ կլինեք, եթե այդպես չլինեք,

քանի որ դա բողոքն էր մի բանաստեղծի, որ, ինչպես տեսանք, հալածված էր հանրապի, քանիցս կալանված ու արքայադաված, հենց պոետը գրելիս էլ գտնվում էր դատի տակ, և այդ բանաստեղծն էլ զավակն էր մի ժողովրդի, որ հալածվում էր հանրապի, բռնադատվում, բնաջնջվում ու հենց պոետը գրվելու թվին էլ 50.000 զոհ տվեց Ադանայի շարդին։ Ուրիշ ի՞նչ մտածմունքներ կարող էր ունենալ այս ճակատագրի տեր ժողովրդի զավակը, այս ճակատագիրն ունեցող բանաստեղծը։

Ուրեմն, «Արու-Լալա Մահարին» Իսահակյանի կենսագիրը արտահայտությունն էր։ Բայց ոչ միայն սեփական կենսագիրը, այլ կրած ազդեցությունները։

Տեղն է եկել խոսելու Իսահակյանի կրած ազդեցություններից։ Նախապես ասենք, որ ամեն մի արվեստագետ, ամեն մի գրող կրում է ազդեցություններ։ Եվ նրա տաղանդի նշանը ոչ թե ազդեցություններ չկրելն է, եթե դա հնարավոր է առհասարակ, այլ կրած ազդեցությունների տակ իր ինքնուրույնությունը, իր անհատականությունը, ինքնատիպությունը չկորցնելը։ Եվ Իսահակյանի մեծությունն այն է, որ նա, թերևս, ավելի շատ ազդեցություններ է կրել, քան մեկ ուրիշը։ Բայց իր բնատուր ձիրքի շնորհիվ պահել է ինքնուրույնությունը։ Ամբողջ կյանքում նրա մշտարթուն միտքը ղեղերել է ամենատարբեր ուսմունքների ոլորտներում։ Ազդեցություններ բանաստեղծը կրել է երիտասարդ տարիներից, կրել է իր աշխարհայացքի, հասարակական ու բարոյական համոզումների, իր մտածողության ու մտածելակերպի, ուրեմն նաև իր բանաստեղծական մտածողության վրա։ Եվ խնդիրը ոչ թե այդ ազդեցությունները, նաև նիցշեի ազդեցությունը «Արու-Լալա Մահարի» պոետի վրա, ժխտելն է, ինչպես վարվել են որոշ գրականագետներ՝ վստահ, թե լավություն են անում բանաստեղծին, այլ երևույթը, ազդեցությունների բարդ ու հակասական երևույթը, բացատրելը։

Դեռ 1909-ին Լեոն Իսահակյանի ստեղծագործության մեջ նկատել է երկու դիժ, երկու հոսանք. մեկը պայմանավորված բնաշխարհիկ ժողովրդով, մյուսը՝ դրսով, մեկում նա ռավելի լացող է, քան ժպտացող, քանի որ այդպես է ռմայր երկի-

րը», մշուսում՝ մասլլ հոռեաեա, որ փրկութիւն է որոնում «գերմարդկութեան դրկում»։ Առաջինում նա ինքնաւրույն է, երկրորդում՝ ամէլի հետեորդ, քան ինքնաւրույն։

Իսահակյանի ստեղծագործութիւնը հետադա երկար ու ձիգ տասնամյակներում էլ զարգացում երկու հասանքով՝ զուտ ժողովրդական, որ ձգվում է 1893-ի «Բինդյուլը» մինչև 1941-ի «Բինդյուլը» և անհատական, որ ձգվում է 1893-ի «Սիրաբա երկինք է» բանաստեղծութիւնից մինչև 1957-ին իր գրած վերջին՝ «Մարդու տենչանքն է՝ հալիտյան ապրել...» շորս տողանոց բանաստեղծութիւնը։

Առաջին հասանքը, սերված ժողովրդական, ֆոլկլորային տկունքներէից, բնականաբար շէր կարող ընդունել և ոչ մի օտար ազդեցութիւն. օտարամուտ նույնիսկ աննշան հնչե-  
րանցն աշատեղ իսկույն կմատնէր իրեն, քանի որ շէր մեր-  
վի հայ ժողովրդական մտածողութիւնը։ Նրկրորդը, սերված բանաստեղծի հետզհետե հարստացող, զարգացող, ժամա-  
նակի հոլովութիւնի հետ փոփոխվող անհատական աշխարհից,  
կարող էր ընդունել ամեն մի օտար ազդեցութիւն, որ այս  
կամ այն շափով կրել էր ու ձուլել իր անհատականութիւնը։  
Զէ՛ որ բանաստեղծական անհատականութիւնն էլ ի ծնե  
տրված էութիւն չէ, այլ նաե իր տպրածի, տեսածի, կարդա-  
ցածի բնական արդասիրը։ Եվ այս բնութիւնը դործեբում Իսա-  
հակյանի խոսվածքն էլ ուրիշ է դառնում, ոչ այնպես, ինչպես  
կխոսէր ժողովրդի մարդը՝

Շարա՛ն-շարա՛ն ամպերն եկան.

Ա՛խ, մումն առավ իմ համբին...

այլ այնպես, ինչպես կխոսէր գեղադիտական մեծ կրթու-  
թեան տեր, Արեւելքի և Արեւմուտքի պոետական ու փիլիսո-  
փայական կուլտուրաներն ամբարած բանաստեղծը՝

Մեզի փոփկութեան մեջ Բաղդադն էր ներհում

չենեաթի շքեղ, վառ երազներով,

Պայլիստաններում բլրույն էր երգում զապեւներն

անուշ՝ սիրտ արցունքով,

Շատրվանները բրբջում էին պայծառ ծիծաղով

աղամանդեզեն...

այսպէս շէր խոսի, շէր կարող խոսել ժողովրդի մարդը, այսպէս կխոսեր զարգացած բանաստեղծական անհատականութիւնը: «Աբու-Լալա Մահարի» պոեմն այդ անհատականութիւնն ամենահզօր ներշնչանքն է:

Զուր և ավելորդ բան կլիներ անդիտանալ հոռետեսութիւն շեշտերն այդ պոեմի մեջ, աշխարհի բարոյական հիմքերի ժխտման կիրքը, այրող ատելութիւնն այս աշխարհի դժբախտների հանդեպ, ինչպէս զուր և ավելորդ կլիներ ժխտել արեւելյան ու արեւմտյան բանաստեղծութիւնն ու փիլիսոփայութիւնն ազդեցութիւնը պոեմի վրայ ժխտելու փոխարեն լավ է բացատրել երևույթը:

«Աբու-Լալայի» հոռետեսական տրամադրութիւնն ակունքը, անկախ որն է ազդեցութիւնից, բանաստեղծի և իր ժողովրդի ողբերգական վիճակն էր: Շատ տարօրինակ կլիներ լավատեսական զեզդեղանքներ ապասել անձնապէս դատի տակ գտնվող, աշքի առաջ նահատակվող ժողովրդի բանաստեղծից, որ, զժբախտաբար, բոլոր հիմքերն ուներ ասելու.

Ես՝ զավակ ճեղքած ու դժբախտ ազգի,  
Որ արշուժով է իր ուղին թրջում,  
Որ դարե՞ր, դարե՞ր թափը իր բազկի  
Շղթան է կրծում ժանգոտ, շառաշուն  
Շղթան շառաշուն, ծանրը ու ծանցոտ,  
Ինձ առաջաւել է, կաշկեանգել գետերն...

Մեզ համար զժվար է անձնավորվել 1909-ին «Աբու-Լալան» զրող պոետի կերպարում, բայց պետք է դա՛ պոեմի մոայլը, ամենամեծ ողին հասկանալու համար: Մենք, հասարակ մահկանացուներ, մեր կյանքի ծանր ժամին կարող ենք ատել ամենքին և ամեն ինչ, ուր մնաց զերդպայուն քրնարական բանաստեղծն՝ այդ մոայլ ժամանակներում (ուրիշ բան, որ հետագա աղետների համեմատ նույն այդ ժամանակները տանելի պիտի թվային պոետին):

«Աբու-Լալայի» վրա օտար ազդեցութիւնները եւ ակներեկն ու բացատրելի: Չեի իմաստով՝ արեւելյան պոեզիան, փիլիսոփայական իմաստավորման մեջ՝ Ֆրիդրիխ Նիցշեն:

Պոեմը, որ բաղկացած է 383 տողից, բաժանված է չոթ տուրահի: «Սուրահ» բառն արդեն արաբերենն է, այդպէս են

կողմում խաւամական դաւանանքի սուրբ գրքի՝ Ղուրանի մա-  
սկրը։ Ամբողջ պոեմն ունի արեւելյան թանձր կոլորիտ՝ անա-  
պատը, հարաւային գիշերը, ուղտերի քարավանը, խոտքի  
հլուսվածքը. ինչպէս՝ «Դյուլիստաններում բլրույն էր երգում  
զազկեններն անուշ՝ սիրո արցունքով», «Եւհմա-արեն ելամ՝  
շքեղ, լուսավառ...», «Սալամ բեղ, արեւ, շլուքը բլուրա-  
բլուր...»։ Պոեմի վերնագիրն էլ կրճատված ձևն է արաբա-  
կան միջնադարյան հռչակավոր բանաստեղծ-փիլիսոփայի  
անվան՝ Աբուլ-ալլա ալ-Մահարի։ Արաբ բանաստեղծը սովո-  
րել է Հալեպում, ապրել է նաև Բաղդադում, որտեղից, երբ  
քաղաքը «քուն էր մտել Տիգրիսի նոճիածածկ ափերի վրա»,  
իր քարավանն առած, հեռացավ Իսահակյանի Աբու-Լալան։  
Իհարկէ, նմանութեան եղբեր կան արաբ բանաստեղծի և  
Իսահակյանի Աբու-Լալայի միջև՝ ատելութիւն աշխարհի ան-  
արդար գրվածքի, մարդկային արատներին, կա հոռեանասկան  
աշխարհայացք (եթէ ընդհանրութիւններ չլինեն, Իսահակ-  
յանը նրան չէր դարձնի իր պոեմի հերոսը), բայց Իսահակյանի  
Աբու-Լալան ոչ թէ արաբ բանաստեղծն է, այլ հենց ինքը՝  
քաներորդ դարի հայ պոետը՝ պայմանաւորաւ անձնավորված  
արաբ բանաստեղծի կերպարում։ Պոեմն այլ բան չէ, քան մի  
ողբերգական մենախոսութիւն, որ հեղինակի բողոքը, ընդմի-  
ջումը, հոգու ազազակն է իր ժամանակի հասարակական կե-  
ցութեան դեմ՝ խորապէս հարազատ, բոլոր թելերով կապված  
իր բովանդակ ստեղծագործութեանը։

Որքան պոեմի ձևի վրա ակներև է արեւելյան պոեզիայի  
ազդեցությունը, նույնքան ակներև է Ֆրիդրիխ Նիցշեի ազ-  
դեցությունը պոեմի բովանդակութեան վրա։ Դրա մեջ եւս ոչինչ  
չկա վիրավորական կամ աննպաստ Իսահակյանի ո՛չ բանաս-  
տեղծական ինքնատիպութեան, ո՛չ էլ զազափարախոսութեան  
համար։ Ինչո՞ւ։ Որովհետեւ չպիտի սասել՝ Նիցշեն ռեակցիոն  
փիլիսոփա է, հետեւարար նրա ազդեցությունն էլ ռեակցիոն  
է, ասել ու անցնել։ Պետք է աչքի առաջ ունենալ, որ Նից-  
շեն բազմադեմ մտածող էր և փիլիսոփա, որի գրքերում,  
ինչպէս ցույց է տրված «Փիլիսոփայական հանրագիտարա-  
նում», տեղ են գտել զազափարներ, որոնք զգարացքն են  
փիլիսոփայական ամենատարբեր ուղղություններ։ Նիցշեն,  
այո, դեմոկրատական շարժման երգվյալ հակառակորդն էր,

ուժեղ անհատի, այսպէս կոչված «գերմարդուն» պաշտամունքով, այն բնարյալ անհատի, որ արհամարհանքով է նայում ժողովրդական զանգվածներին: Եվ այս հետադիմական զաղափարները մտան անհատապաշտ, հակաշենոկրատական գրողներին զինանոցը: Բայց ուրիշ առաջադիմական մտածողներ ու գրողներ էլ, ինչպէս Ջեյ Լոնդոնը, Բերնարդ Շոուն, Թոմաս Մանը և ուրիշներ, նիցշեի զաղափարներինց առան ալն, ինչ իշնեց հարկավոր էր բուրժուական փոխադասութեան, բուրժուական բարոյականութեան և արվեստի քննադատութեան համար: Նիցշեի գրքերին լավ ծանոթ Ավետիք Բաաճակյանին շէր կարող շհրապուրել գերմանական փոխադասութեան ոչնչացնող քննադատական վերաբերմունքը բունականութեան և բուրժուական բարոյախոսութեան կեղծիքի նկատմամբ: Նայած, թէ ով ինչ է առել Նիցշեից ու ինչպէս է մեկնաբանել: Այսպէս, հնդկի բանաստեղծ և փոխադաս Մուհամեդ Իկրայն, օրինակ, Նիցշեական «գերմարդուն» մեկնաբանել է խորապէս հումանիստաբար, իբրեւ «կատարյալ մարդուն» իղեալ: Բաաճակյանի «Արու-Լալալում» Նիցշեի ազդեցութեանը հրեում է իբրեւ աշխարհակարգի, հասարակական նախադասարմունքների, կեղծ ու պատիր բարոյական շախանիշների, հակամարդկային կարգերի, օրենքի ուժով սրբազորմոված բունութեան ու բունականութեան, մարդուն ստորացնող ու սարկացնող ամեն ինչի գեմ:

Ի՞նչ է օրենքը,— մարդկանցից օրհնած, բիրտ ուժեղների  
այդ սուրը զաւան,  
Անգորի գլխին կախված հաճիւտան, խեղճին խոշորազոյ,  
Հոգի պաշտպանի  
Ե՞վ իրաւունքը, և՞ օրենքները բոլոր զայրութեով  
առում եմ, առում,  
Գարշ իրաւունքով բռնաբարում եմ և գարշ օրենքով  
լնում ու մօրթում:  
Յոթն ունգամ ահա՛ առում եմ, առում իշխանութեանը—  
սերունդներ լափող,  
Անհագ վախառու, անկուշտ ձրիակեր, պատերազմների  
հաճիւթ հերթադր

Բանաստեղծն, ահա, իր մեծահարուստ բառարանում բառեր չի գտնում իր հոգու բովանդակ ատելութեանը, զրգ-

վանքը, արդահատանքը դուրս վիժեալու համարս ու թվում է,  
թե հայոց լեզվով շեն գրվել աշապիսի խանձող տաեկության  
խոսքերը.

Եվ ո՞վ եւ մարդիկ... ազգեաների հոտ, հասմուչ անհուն,  
որացող, մատնիչ,  
Անկումիդ ուրախ, արշուններ լակող, զազան մանկասպան,  
և դահի՛ն, դահի՛ն  
Աղքատության մեջ՝ բժնի, վաճառվող, թշվառության մեջ՝  
վախկոտ, դավաճան,  
Հարատւության մեջ՝ լկտի, լարախիկեղ, և վրիժառու, և՛  
ամբարտաւճան

Օտարացել է Արու-Հալան մարդկային հասարակութու-  
նից, ամեն ինչից ու ամենքից, և՛ ինչ կա ինչ-որ բան  
նիցշեական ուժեղ անհատից՝ «զերմարդուց», ապա դա այն  
տիեզերական հանդգնութիւնն է, որով նա ժխտելով ժխտում  
է նաև ընկեր ու բարեկամ՝

Ի՞նչ է ընկերը և բարեկամը՝ նենգ ու գրոման,  
չարակամ ու վատ...

և նաև ամբոխն ու մարդկանց՝

Ի՞նչ է ամբոխը—մեծ հիմարն է նա, ոգին հալածող  
և տարբը շարի,  
Բռնության խարխալ, և՛ սուր երկնայրի, և՛ զայրույթի մեջ  
զազան վիթխարի...

և նաև կի՛ն ու սե՛ր՝

Փախի՛ր կնոջից, սիրուց, ընկերից, շնչահեղձ փախի՛ր  
մարդու ստվերից...

և մի միակ կնտը, ուր երանութիւնն է զտնում հալածական  
անհատապաշտի ամենատաշաց հոգին՝ մայրն է ու մայրական  
սերը.

Դու միակ բարի, դու միակ իմ սեր, դու միայն  
սա՛ւրբ, սա՛ւրբ, մայրակա՛ն գու գիրկ.  
Նո՛ւ հավատ գիտա, մա՛հը խորտակող, դու գերա՛հրաշ,  
միակ գեղեցիկ...

3 Զարմանալի բան. այսքան առեւիկ կիներ մայրական-կերպարանք առնելով՝ ծնրագիր պաշտամունքի ստարկաւ քառնում։ Արու-կալայի աշրում։ Մայր, մայրական սեր,— Իսահակյանի ստեղծագործութեան կենտրոնաձիգ զգացմունքներից մեկը,— առեւ ի թե՛ կյանքի սեր։ Եվ դա Արու-կալայի կյանքի սիրտ ու կյանքի հաստատման բնավ էլ միակ վկայութիւնը չէ։ Դա նաև ազատութեան, կյանքի ամենավսեմ արտահայտութեան, սահման չունեցող սերն է.

Բ՛վ ազատութիւն, դու գրախառնին լույս-բլուրներ  
անմահ Ալ-կարան...

Եվ, վերջապես, կաթողին սքանչացումը կյանքով ու աշխարհով.

Աշխարհն էլ, ասեա, մի հեքիաթ լինի՝ անակիցը, անվերջ,  
հրաշք գլխավանդ  
Եվ ո՞վ է հուսել հեքիաթն այս վսեմ, հյուսել աստղերով,  
բոլոր հրաշքներով,  
Եվ ո՞վ է պատմում բոլոր-բոլոր ձեռքով՝ անգույն ու անխոնջ՝  
այսպէս թափանքով։

Կարելի է ասել՝ որքան մեծ է Արու-կալայի առեւելութիւնն աշխարհի կարգերի դեմ, նույնքան մեծ է սերը նույն աշխարհի, կյանքի հանդեպ, նույնքան մեծ է հիացումն այդ վսեմ հեքիաթով, որ, իր մոռաց առեւելութեան խոսքերից դատելով, կարծես թէ նսնձ պիտի կոշվեր։ Այս հակադարձութեան զուգակշիռն է, որ Արու-կալային ազատում է մոռաց հոռետեսութեան զրկից և, անխմանալի մի անգրագարծումով, կյանքի առեւելութեան պոռնը հնչեցնում է իրեն կյանքի սիրտ պոռն, ավելին՝ կյանքի սիրտ հիմն։ Անխնա և անողոր է Արու-կալան աշխարհի կարգի, մարդկային հասարակութեան պետական, իրավական, բարոյական բոլոր օրենքների ժխտման մեջ, բայց չէ՞ որ Շեքսպիրի Համլետն էլ, մեծագույն անողորը բացասումներն մեջ, այսպէս է խոսում. «Թող անգութ լինեմ հենց միայն բարի լինելու համար»։

Ըստ երևութիւնն սա է հակասութեան յուժման բանալին.

«Արու-կալա Մահարին», ոչ ամբողջարար, հրապարակ-

վեց Գարեգին Լեոնյանի «Գեղարվեստ» հանդեսում (1909, № 3) և մեծ տպավորություն թողեց, միանգամից ընդլայնեց Բասճակյանի դրաված տեղը ժամանակի հայ բանաստեղծության մեջ: (Պոեմն ամբողջապես հրատարակվեց Պոլսում, 1911-ին):

Իրոք, 1909-ը բախտորոշ եղավ Բասճակյանի ստեղծագործական կյանքում՝ «Աբու-Լալայով», ինչպես 1910-ը՝ անձնական կյանքում՝ ամուսնությունը, ինչպես 1911-ը՝ ճակատագրական եղավ փախուստով ղեպի արտասահման:

Բասճակյանն ամուսնացել է 1910-ի ամռանը Սոֆյա Քոչարյանի հետ, այն աղջկա, որ 1909-ին այցելել է Մեանիսի բանտում գտնվող բանաստեղծին, տեսակցել կալանավորի հետ:

Ինքնատիպ է եղել Բասճակյանի պսակադրությունը. ամուսնացող զույգը Թիֆլիսից ժամանում է Ալեքսանդրապոլ, այստեղից, քաղաքում հայտնի կառապան Կոռնեկի եռանի ֆուրգոնով, հարսանջավորները զալիս են Ղազարապատ, այստեղից էլ, մյուս բարեկամներին առած, Նույն ժողկազարդ ֆուրգոնով, մեկնում են Անի և պսակը կատարում Մայր տաճարի կամարների տակ: Հանդեսին ներկա են եղել Մաղը, Թորամանյանը, Վրույրը: Խաչեղբայրը եղել է բանաստեղծի շորս եղբայրներից ավագության կարգով երկրորդը՝ Գևորգը (1855—1911), Ղարսի ճակատամարտի հերոսը, որ կովել էր Լորիս-Մեկիթովի զորագնդում և արժանացել Ս. Դեորգի շքանշանի:

Մի կողմից պսակ ու հարսանիք, մյուս կողմից դաս ու դատավարություն: Քիչ ժամանակ էր մնում բանաստեղծին լինելու իր եղբայրների ու արվեստակիցների հետ, որոնցից շատերին այլևս երբեք չէր տեսնելու: Վտարանդի կյանքի երկար ու ձիգ տարիներին նա երանության միտք պիտի մտարեր իր այս ժամանակները, հատկապես 1911-ի մայիսի վերջերի այն շքեղ օրը, երբ հայ զբաղանքության մեծերը հավաքվել են Հավլարաբում՝ Շիրվանդադեի գործունեության 30-ամյակի հոբելյանի առիթով: Հավլարարի հասարակ ժողովրդի մեջ հանդես է կատարվել և հացկերույթ է եղել: Մասնակիցների մեջ՝ ձերբանազարդ Գաբրիել: Սունդուկյանը և Ղազարոս Աղայանը, Հովհաննես Թումանյանը և Լեոն, նաև

Ավետիք Իսահակյանը, ժողովրդի մեջ աշաշտամունքի հասած անունները նրանք արժանացել են այնպիսի արտալի ու ցնծագին ընդունելության, որ Լեոն հարկ է համարել նկարագրել մամուլում:

Սա եղել է Իսահակյանի վերջին սքանչելի օրերից մեկը հարազատ միջավայրում: Դրանից քիչ անց բանաստեղծը կնոջ և տղայի՝ Վիգենի հետ մեկնում է ամառանոց՝ Ղարաքիլիսա, որ այժմյան Կիրովականն է: 1911-ի հունիսին էր... ԻՍԱՀԱԿՅԱՆ—...Երբ լսեցի Աղայանի մահվան բոֆը, շտապեցի Քիֆլիս: Խորազգաց վշտով հողին հանձնեցինք մեր անհուն սիրելի նահապետի մարմինը, և նույն գիշեր ևս էլ հրաժեշտ ավի Քիֆլիսի իմ բարեկամներին և Հ. Քումանյանի տանից ուղղակի մեկնեցի կայարան, այնտեղից էլ Քուրքիայի սահմանը...

ԲԱՆԱՍԵՐ—Իսահակյանն այստեղ կարճ է կացել: Աղայանը վախճանվել է 1911-ի հունիսի 20-ին: Իսահակյանն արտասահման է վտարանդվել հուլիսի 13-ին: Աղայանի թաղումից հետո Քումանյանի հետ զնացել է նրա տուն:

ԻՍԱՀԱԿՅԱՆ—Տխուր, սգվոր օր է: Հավիտյան զրկվեցինք մեր սիրելի նահապետից, և ևս էլ պիտի թողնե՞ն հայրենիքս և թերևս անգարձ: Աննկարագրելի են այդ հրաժեշտի ծանր վայրկյանները:

Արդեն ուշ գիշեր էր:

Վերջին անգամ մենք զրկեցինք իրար, երկուսս էլ լուռ էինք. ոչ մի խոսք:

Այս եղավ մեր վերջին տեսակցությունը...

ԲԱՆԱՍԵՐ—Այսպես, նույն գործով դատապարտված ընկերներից մեկը մնում է դատվելու (տ՛ւր պիտի փախչեր ահագին ընտանիքն առած. զուր չէ, որ Քումանյանի գրամական հրաշխավորության համար անհամեմատ փոքր գումար էր պահանջվել), մյուսը դերադասում է փախչել:

Իսահակյանը վերադառնում է Ալեքսանդրապոլ, տեսնելով մյուս բայիկների հետ և հուլիսյան մի տաք երեկո Ղարաքիլիսի վրայով անցնում սահմանը: Բանաստեղծին ճանապարհ են դրել իր եղբայր Գեորգը և սրա տղան՝ Իսահակը, որի հետ բանաստեղծը կապված էր մի առանձին սիրով:

Մեծ բարդություն չի ներկայացրել պետական սահմանն

անցնելը. մի քիչ կաշառք և թուփուն սահմանադրւո՛ւց կազակներին, և քանաստեղծը հայտնվում է սահմանագծի մյուս կողմում: Վերադարձի նամփան փակ եղաւ՝ հայրենիքից արտաքսւմանի համար շատ ավելի երկար ժամանակով, քան ինքը կարող էր ենթադրել՝ ամբողջ տասնհինգ տարի:

1911-ի հուլիսի 14-ից արդեն Իսահակյանն ալլա Ռուսաստանի քաղաքացի չէր, այլ քաղաքական վտարանդի, որ վերագրւծի ղեկորում կարող էր ձերբակալվել իրրե քաղաքական հանցամարտ, քանի զեռ կանգուն էին ցարական կարգերը:

Շուրջ երկու տարի քանաստեղծն ապրում է սահմանադրական Թուրքիայում: Բնականաբար, նա պիտի ապաստան գտներ Կոստանդնուպոլսում՝ Ստամբուլում, երկրի մայրաքաղաքում, այնտեղ, ուր խմորվում էր արևմտահայության քաղաքական ու զեղարվեստական կյանքը, ինչպես արևելահայությանը խմորվում էր Թիֆլիսում:

Թուրքիայի շքեղատես մայրաքաղաքը դուր չի եկել Իսահակյանին, և 1911-ին նա դրել է իր ամենասիրելի հասցեատեղերից մեկին՝ Վիկտորյա Արովյանին՝ մեծ լուսավորչի թոռուհուն:

ԻՍԱՀԱԿՅԱՆ—Կ. Պոլիսը շնայելով իր զեղեցկութուններին՝ բայց դուրս չեկաւ, չհաւանեցի, կուտուրապես ցած և պոռնիկ քաղաք է, մտավոր-հոգեկան-զեղարվեստական կյանք չկա. կա միայն շաալլութուն, փողի մեծ տենչ, վաճառականութուն և պոռնկութուն. եվրոպական բուրժուաների փողերը աչտեղ են հոսում, և միայն մսեղեն վաչելք. զրականությամբ և զիտությամբ պարապողների համար անհարմար, անպետք միջավայր է:

ԲԱՆԱՍԵՐ— Բայց Իսահակյանը Ստամբուլ մայրաքաղաքը չի սիրել ոչ միայն վերը գրված պատճառներով, ոչ էլ միայն այն պատճառով, որ այնտեղ ժայրահեղութեն վատ է ապրել («...սակայն իմացած եղիր բառացի իմաստով, որ քաղցած եմ... գրում եմ, որ հետո շատեք, թե ինչո՞ւ չգրեց. չգիտե՞ինք...»): աչ տողերն առնված են Հովհ. Թումանյանին 1912-ին ուղարկված նամակից): Իսահակյանի զմտահոթութունն ուներ նաև ավելի մեծ՝ քաղաքական պատճառներ:

Սահմանադրական Թուրքիա, որքա՞ն մոլորութուններ

դառնազին մուրուքյունների, որքան սխալների՝ ճակատադրական սխալների ակունք է եղել այդ սահմանադրական հորըրըշումը հայ գործիչների ու գրողների համար 1908-ի հուլիսյան հեղաշրջման հետևանքը եղավ այն, որ իշխանության գլուխ անցան երիտթուրքերը և երկիրը հայակեցին սահմանադրական: Նույն թվի ղեկավարների 4-ին բացվել էր թուրքական նոր պառլամենտը, որի 230 տեղից 150-ը զբաղեցրել էին երիտթուրքերը: Պառլամենտի անդամներից տասը հայեր էին, որոնցից մեկն էլ Գրիգոր Չոհրապեն էր՝ ոչ միայն առաջնակարգ գրող, այլև իրավաբան և հետոքու նրա ճառերը պառլամենտում լսվում էին խորին ուշադրությամբ, լույս տեսնում թուրքական թերթերում:

Ազատության, եղբայրության, հավասարության հրավառությունը կլանել, շլացրել էր ամենքին, նույնիսկ ամենազգաստ գործիչներին պարտուրել վերին աստիճանի հրապուրիչ և ինչպես քիչ ժամանակ անց պարզ դարձավ, սին պատրանքներով:

Ուշ ժամանակների մեկնաբանների համար հեշտ է հետին թվով դատապարտել այս ժամանակների մարդկանց՝ ինչպե՞ս հայ գործիչներն այդպես դուրսվեցին հավատացյալների թուրքերին: Այո, հետին թվով հեշտ է դատել նախորդների: Հաղիվ թե հետնորդներն ավելի խորաթափանց մտքի տեր լինեին, քան Գրիգոր Չոհրապեն էր, իսկ Չոհրապը 1908-ի հուլիսին Փարիզ՝ Արշակ Չոպանյանին գրած նամակում արտահայտում էր անվերապահ խանդավառություն, հավատ ու հրմվանք. «Օսմանյան սահմանադրությունը անխախտ կերպով վերահաստատված է հոս, ամենակատարյալ ազատական ուժի մը հետ: Սուլթանը քուրդի վերածված բուլբուլին», երիտթուրքերը «հատուկ շահադրություն մը ունին մոռցնելու մեղի ու քնքելու արյունալի անցյալը, որ զմեզ իրենցմե կը բաժնեւր: Այս բոլորը անհավատալի և ստույգ է», «Ծշմարիտ եղբայրակցություն մը կա. մեր նահատակները մերինեն ավելի իրենց սրտին մեջն են և իրենց մեծարանքին առարկա: Սիրտ ունեցող հայ մը անզգա չի կրնա մնալ սասանկ արտահայտության մը առջև», «Ուրախ եմ, վասնզի ազգիս երեսը առաջին անգամ բլալով կը խնդա կոր. կը համբուրեմ գրեզ»:

Այս խոսքերն անհնար է կարգաւ առանց սիրտը բռնելու, առանց դառնագին տխրասանքի՝ որքա՞ն անկեղծ և որքա՞ն զուր, զո՞ւր է եղել մարդկանց հավատը: Խեղճ Գրիգոր Զոհրաս, երիտթուրքերի մոտակա ոճրագործության զոհ, որ 1909-ին գրած նամակներից մեկում մորմոքվել է Մետեխում կալանված գրչեղբայրների ճակատադրով, «Սիրտս խշխշաց բոլոր հայերուն համար, որոնք ուսական խտուխայնց ենթարկված են» ու դեռ վճռել է, թե «Թումանյանի և Բասաշեյանի համար դիմում պիտի ընեմ դեսպանին», ապա նաև՝ օկտյաբրիստների պարագլուխ Գուչկովին, որ թեթևացնի նրանց ճակատադիրը:

Որքան էլ տարօրինակ, բայց, հենց Զոհրասի նամակի բառերով ասած, «այս բոլորը անհավատալի և ստույգ է»: Ասենք, երևույթը տարօրինակ էլ չի թվա, եթե ժամանակաշրջանի արևմտահայ իրականության և գրականության հմուտ մասնագետ, բանասեր Գ. Ստեփանյանի օգնությամբ փորձենք թափանցել ժամանակի պոլսահայ կյանքի մեջ. «Հեշտ էր խարվելը: Մահմանադրության առաջին ամիսներին կատարվում էին ազգամիջյան, մասնավորապես հայ և թուրք ժողովուրդների համերաշխության այնպիսի ցույցեր, որ զբժվար էր կասկածել գրանց անկեղծությունը: Կազմակերպվում էին միացյալ հավաքներ, որտեղ թուրք պետական պաշտոնյաները արտասանում էին հայասիրական ճառեր, պետական նվազախումբը հնչեցնում էր հայկական քայլերդեր, երեկույթներում հայ աշակերտուհին արտասանում էր թուրք զրուդի ոտանավորը. երիտասարդ մի թրքուհի՝ Պալքիսը, արտասանում էր Միքայել Նալբանդյանի «Աղատությունը», այն էլ հայերեն լեզվով, մաքուր առողանությամբ: Հայերեն վեց մեծ օրաթերթեր ու տասնյակ շաբաթաթերթեր, ամսագրեր զարկ էին տալիս հայ մշակույթի զարգացմանը, մասնավորապես զեղարվեստական գրականությանը, հրապարակախոսությունը»:

Այսպիսին էր իրողությունը: Երիտթուրքերի քաղաքականության չույթունը չէր ըմբռնվում: Ինչքա՞ն համատարած պիտի լիներ արքեպիսկոպոսի կիլիկիայի շարդերը սթափեցում չբերին: 1909-ի ապրիլի առաջին երկու շաբաթում 30.000 հայություն կոտորվեց երիտթուրքերի կառավա-

բած երկրում, Ադանայում ու նրա շրջակայքում: Բայց, ինչպես գրել է Գ. Ստեփանյանը, «թուրքական մամուլը, անգամ Համիդի զահը ժառանգած նոր սուլթանը՝ Ռեշադը, համոզում էին հայերին, թե կիլիկիայում կատարվածը արդյունք էր հետադիմական տարրերի մոլեռանդության: Նոր-նոր քաղաքական ասպարեզ մտած Թալեաթը երզվում էր, թե այլևս նման բաներ չեն կարող կրկնվել»:

Մարդիկ միամտաբար լսում էին այս ամենը և, զժրախտաբար, համատում: Այնպես որ, ազատության պատրանքները զեռ շէին փարատվել, երբ 1911-ի ամռանը բանաստեղծը հայտնվեց Կոստանդնուպոլսում: Նա ինչպե՞ս կոզմենորոշվեց Պոլսում տիրող քաղաքական իրադրության մեջ և խ՞նչ կոզմենորոշում ունեցավ արևմտահայ գրական նորահայտ ուզությունների հանդեպ:

Երկու դեպքում էլ զարմանալիորեն դուսպ և հետեղական: Իսահակյանը շոգեկորվեց ո՛չ Պոլսում տիրող ազատության շեփոհահարմամբ, ո՛չ էլ արևմտահայ պոեզիայի նորագույն հրապույրներով: Համենայն դեպս այն, ինչ այդ բնթացքում նա հրապարակել է պոլսահայ մամուլում, այդ են հաստատում անհերքելիորեն:

Ժողովրդական դարավոր իմաստությունն էր, որ ժողովրդական պոեզիայի անտես երակներով անցել էր իր մեջ, իր ժողովրդի դարավոր ու գառնագին էկենսափո՞րձը, որ բռնավ շէր տրամադրում լավատեսության, թե իր բնատուր հոռետեսությունը՝ զժվար է ասել, թե սրանցից ինչը կամ այս ամենը միասին Իսահակյանին հեռու պահեցին Թուրքիայի մայրաքաղաքում թևածող խանդավառությունից. այն զգացումն էլ շունեցավ, թե դուրս է եկել միապետական բռնակալությունից ու հայտնվել սահմանադրական ազատության երկիր Թուրքիայում: Ընդհակառակը, Պոլսում նա հրապարակեց ամենատրտամալի խոհերով շնչող «Ողբում եմ» արձակ բանաստեղծությունը, որ ազդեցություն ուժով կարող է համենամովել հայոց միջնադարի ամենախորագույց ողբերի, Մովսես Խորենացու նշանավոր ողբի հետ՝ գրված համեմատ ոճավորումով: «Ողբում եմ դառն վիճակդ տխուր, ով հայ ժողովուրդ, տանջանքիս աղբյուր: Եվ ո՞վ կուտա ինձ արցունք ծովերով լալու երկիրդ արյուն ու թափուր...», — գրում է բա-

նաստեղծն «ի խորոց սրտի», և մեծ վիշտը բացում է ողբերգակի հոգու բովանդակ խորքը.

«Իմ վեհ հայրենիք, հովիտ թախծության, արյուն-արցունքի օվկիանոս անձիր, որ ծանրացել ես հազար տարիներ մարդկության մեռած, քար խղճի վրա և փոթորկաշունչ բուռն հորձանքով նզնում ես փշրել զայրույթդ սպառող ամերդ հրակա...»

Ողբում եմ դառը վիճակդ տխուր, ո՞վ իմ վիրավից, խոցված հայրենիք. շինականներից, որ հողդ են հերկում արյունքրախնքով և քաղցած նստում, և հարուստներից, մեծատուններից՝ վախկոտ, փերեղակ, տխմար ու տմարդ ու արծաթասեր, իսկ դիտուններից, ողու այդ նանիր, հեղկ զանաճները, որոնք կույր ու խուլ՝ օրհասիդ հանդեպ, որոնք մոռացած քո արյուն ծովը թե կանառներում փուշ ամբիոններից ճշում են անվերջ ունայն...»:

Համատարած մռայլ է ներկայանում իրականությունը բանաստեղծի աչքին, և նա, Հայնեի նման, իրեն նմանեցնում է հայրենիքը հսկող հավատարիմ շան.

«Ողբում եմ նորից քո արտասովալի վիճակդ անգութ, դու խավարի մեջ միշտ լույս որոնող, իմ հայ ծողովուրդ.— արդ՝ առավոտից մինչև առավոտ ոտներիդ ներքև ես քեզ եմ հրակում անխոնջ ու անքուն՝ քո շունը որպես...»:

Բայց Իսահակյանը Իսահակյան, «Ազատության դանդի» հեղինակը չէր լինի, եթե, ի տարբերություն միջնադարյան ողբերգակների, իր «ողբ հայրենասերին» չավարտեր ըմբոստության կոչով.

«Դու պետք է ապրես, դու կուզես ապրել. ո՞վ դու ախռյան լույսի, գեղեցիկ. կովել, ոգորել դու վազուց գիտես— փշրիր, փռիսացրու օրենք ու կուտքեր, բարվո և չարի տախտակները հին և բազմաշարշար քո հոգու խորքից ստեղծագործիր ոգու սավառման մի նորոգ աշխարհ՝ բուրբ տառապած, բոլոր խոշտանգված, ծարավի, ցավի մեր ոգիների փրկության համար»:

Սա ըմբոստության ու բնդվզումի բանաստեղծական կոչ է, որը, իհարկե, շատ է բնդհանուր՝ գործողության ծրագիր լինելու համար: Սա Աբու-Լալայի՝ մարդկության բոլոր ա-

վանդական օրենքներից ու կարգերից հոգնած ու զգոված ան-  
խշխանական բանաստեղծի բողոքն է ամենքի և ամեն ինչի  
դեմ, որովհետև այդ ամենքն ու ամեն ինչը փրկություն չբե-  
րին տառապած մարդկությանը:

«Ազատության գանգում» կար գործողության ծրագիր.  
խանդավառ մի հրավեր կովկասյան բոլոր ազգերին՝ ի մի գալ,  
ելնել պայքարի ընդդեմ ցարական միապետության: Բայց դա  
գրվել է ռուսական առաջին հեղափոխության նախադրանք՝  
1903-ին, սոցիալական մեծ տեղաշարժերի ոգեշնչումով: Իսկ  
հիմա, Պոլսում, երկրորդների հեղաշրջման հետ հույաներ  
չկապող բանաստեղծը չէր տեսնում ոչ մի իրական ելք՝ ան-  
թափանց մռայլ միայն և ըմբոստության թևն շատ ոգեշունչ,  
բայց անորոշ կոչ:

Պոլսում անցկացրած երկու տարում գրած ոչ բանաստեղ-  
ծություններում, ոչ էլ արձակ էջերում ու հրապարակախո-  
սական հոդվածներում Իսահակյանը չունի և ոչ մի ակնարկ,  
որ մատեներ որեւէ հույս և սպասելիք՝ երկրում տիրող նոր ի-  
րադրությունից:

Ծիշտ այդպես էլ նույն այդ գրվածքներում չկա որևէ նը-  
շան, որ մատեներ Իսահակյանի համակրանքը արևմտահայ  
պոեզիայի նոր հովերի հանդեպ: Իսահակյանը շափաղանց  
խորն էր կապված ժողովրդական պոեզիայի ակունքների հետ,  
շափաղանց արժատական էր իր դասական կերտվածքը՝  
վաղանցուկ ազդեցությունների ենթարկվելու համար: Ծիշտ  
է, Պոլսում դեռ լույս չէր տեսել «Նավասարդ» տարեգիրքը,  
որի ոգին «հայկական հեթանոսությունն» էր, այն գիրքը, որի  
մեջ Հակոբ Միրունին հրապարակել էր բանաստեղծական  
արվեստն ինքնաբավ գեղագիտական երևույթ հռչակող իր  
հոդվածը և «Մշակի» էջերում արժանացել Հ. Սուրխաթյանի  
ոշնչացնող քննադատությանը. դեռ չէր տպագրվել «Մեհյան»  
հանդեսը, որի մեջ Կոստան Զարյանն իր և իր գրչակիցների  
դավանանքը ներկայացնում է այսպիսի ձևակերպումներով.  
«Մի անգամ ընդմիշտ հասկանանք՝ կյանքը արտացոլումն է  
մարդկային գերագույն եսին», «Արվեստը բացարձակ խնե-  
թություն է», «Մեներ կրճարները բովանդակ կյանքը իբրև մեր  
եսի դարձանահրաշ տեսիլ մը»: Ծիշտ է, ոչ «Նավասարդը»,  
ոչ էլ «Մեհյանը» գեռ լույս չէին տեսել (գրանք հրատարակ-

վեցին ավելի ուշ՝ 1913—14 թվականներին), բայց գրանց շուրջը խմբավորված հեղինակների հրապարակները ծագել էին թուրքական սահմանադրության հռչակումից՝ 1908-ի հոկտեմբերի կեսից ի վեր, երբ գրաքննության իսպառ վերացվել էր և հանկարծահառու վաղանցուկ ազատությանը հիշ էր տվել հանկարծահառու վաղանցուկ արամադրությունների:

Իսահակյանին շրջավեցին ո՛չ հայկական գաղափարական ֆառարկողներ, ո՛չ սուրյնկաթիվ իդեալիզմի, ո՛չ ծայրահեղ անհատապաշտության, ո՛չ ինքնաբավ էսթետիզմի, ո՛չ մերկ մարմնի պաշտամունքի արտահայտությունները: Ո՛չ էլ հայկական նորահայտ հեթանոսության ճառագումները՝ նույնիսկ իր տաղանդավոր, ներշնչված գրսեորումներով:

Ավետիք Իսահակյանը՝ այնքան մեղմարարո, ներդաժիտ, սիրահոծար այդ մարդկային անհատականությունն անգիշտ, անխոտոր հետեղականությամբ մնում էր իր բանաստեղծական աշխարհի, իր հարազատ ըմբռնումների, իր սկզբունքների հետ:

Պետք չէ հեռու գնալ Իսահակյանի գեղագիտական սկզբունքների անկյունաքարը գտնելու համար: Ինքն է ցույց տվել, և վերստին «Հիշատակարանում», ղեկ ըստնամյա հասակում, «Կյանքի հիմքը զգացմունքն է, միտքը հեռագայի բան է, զարգացման արդյունք»: Ապա մի տարի անց. «Միտքը մեռցնում է զգացմունքը: Զգացմունքը մեռցնում է միտքը: Բայց երբեմն երկուսը եղբայրացած միմյանց հետ—տիեզերքն են գրկում»:

Ասված է հիանալի, և կարծես իր իսկ ստեղծագործության մեկնարանության համար. «Դա՛րդըս լացեք, սարի սըմբուլ...»՝ զուտ զգացմունք, «Տիեզերական զանգ»՝ զուտ միտք ու մտածում, «Բավեննայում»՝ «երբ երկուսը եղբայրացած—տիեզերքն են գրկում»:

Այսուամենայնիվ, Իսահակյանի ստեղծագործության գերակշիռ ու ծանրակշիռ մասը զգացմունքայինն է, հուզականը, սրտի հետ խոսող պարզալուր բանաստեղծությունը: Այդ հուզականի մեջ էլ՝ վիշտը, տրամոլությունը, թախիծը, կորստի ու կարոտի, անգարձ կորստի ու անհագ կարոտի երգը: Ուրիշ ինչպե՞ս լինել, եթե ողբերգականի զգացումն էր ամեն-

նից զորեզը նրա բնավորութիւն մէջ, եթէ ճակատագիրն այն-  
քան անագորույն բախտ էր վիճակել իր ժողովրդին, իրեն, իր  
միակ սիրուն:

ԻՍԱՀԱԿՅԱՆ—Ես չեմ կարող երգել:

Մառլ է երկիրը, և թշուառ մարդը ու ողորմելի է նրա  
սիրտն ու կյանքը. ևս չեմ կարող երգել՝ լայն, լիքը, անուշ ու  
չքնաղ երգեր... Իմ երգը լացն է.— հոնգո՛ւր, հոնգո՛ւր լացը...

Թ՛, ևս շա՛տ եմ լացել—անքուն գիշերներով լացել եմ, ար-  
տասունքներիս մէջ խեղդվել է իմ երգը— նրա միմունջները:

Ես չեմ կարող երգել՝ ևս միայն լալ կարող եմ:

ԲԱՆԱՍԵՐ— Կա՛ մեկնաբանութիւն կարիք: Զկա: Իսահակ-  
յանն ինքն է տվել իր ստեղծագործութիւն բարդ հանդույցների  
բանալին: Միայն գտնել է հարկավոր:

Ես, ճիշտն ասած, միշտ այն եմ մտածել, ու հիմա էլ մտա-  
ծում եմ, որ Իսահակյանն իր ապրած մեծ կյանքի համեմատ,  
իր մտքի հարստութիւնն ու վիթխարի ծրագրերի համեմատ՝  
քիչ է գրել, գրական բյուրեղացած մեծ ժառանգութիւն չի  
թողել:

Իսահակյանն ինքն էլ դեռ վաղ հասակում արել է խոստո-  
վանութիւն՝ «Շատ մտածեցի, բայց քիչ գրեցի», և դրա  
բացատրութիւնն էլ տվել է:

ԻՍԱՀԱԿՅԱՆ— Ո՞վ սիրեց ինձ կյանքում,— միայն մայրս,  
իսկ ամբողջ աշխարհը ինձ հարվածեց միայն, վերք վերքի  
վրա տալով. նույնիսկ մի օր հանդիսաւ շունեցա՝ ինձ ժողովի,  
երգի, և ահա թե ինչո՞ւ իմ ծով-ղզաշմուշկիս, տաղանդիս  
հետ միասին, ևս զժգույն երգեր երգեցի միայն. թույլ երգեր.  
տանջանքից աչք չբացեցի, որ երգեի... Այնպիսի տանջանքներ  
եմ զգացել, որոնք մի-մի մահ արժեին...

ԲԱՆԱՍԵՐ— Եթէ բանաստեղծն այսպես է գրել իր կյանքի  
բնավ էլ ոչ ամենամառլ տարում, հակառակը՝ գուցե և ամե-  
նալավ տարում՝ 1901-ին, այն էլ ծննդավայրում, հապա ի՞նչ  
ասես հաջորդ տարիների մասին, որ դեռ պիտի թերթենք: Եվ  
թերթելիս մեղավորի պես հետ վերցնենք մեր այն մտածումը,  
թե ինչու քիչ է գրել:

Մինչդեռ ի՞նչ ծրագրեր ու մտահղացումներ է ունեցել մեծ  
վշտավորը, սկսել ու թողել անավարտ:

ԻՍԼԱՆԴԱԿԱՆ— Գրեկու եւմ երկու խոշոր, մեծ, գրանդիոզ երկեր—պոեմատ, որ ամփոփեն հայկական շարժումը... և «նոր ուխտա», Ամենատարանս՝ «Յոթն օր ապատում...»:

ԲԱՆԱՍԻՆՐ— Հապա «Ուստա Կարոն»։ Բայց դրա մասին՝ իր տեղում։ Իսկ հիմա շարունակենք մեր խոսքը Իսահակյանի գեղարդիտական սկզբունքների մասին։ Ուշ ժամանակներում, արդեն 1925-ին, Իսահակյանի գրած համականերից մեկը պարզ ցույց է տալիս, որ իր գեղարդիտական կողմնորոշումը ոչ թե բանաստեղծական տարերքի ահամա թելադրանքն էր, այլ միանգամայն դիտակցված սկզբունք։ Նա գրել է, թե Պոլսում եղած ժամանակ ինքը շեշտված քննադատական վերաբերմունք է ունեցել արևմտահայ որոշ բանաստեղծների «փշաքանդ, ֆրանսալիստ ճաշակի», նրանց սիմվոլիզմի և էրած օտարամուտ, հայ պոեզիային անհարիր ազդեցությունների նկատմամբ. «Ճշմարտությունն այն է, որ եթե ես, Ն. Թումանյանը կամ Ն. Հովհաննիսյանը օգտվում ենք հայ ժողովրդի ոճերից—ձեռքից, այն մտածումով թե՛ հայ տոհմիկ գրականություն ենք մշակում»:

Բանկագին մի վկայություն, որի մեջ պարզ ու պայծառ ցույանում է ոչ միայն Իսահակյանի, այլև գրական մի ամբողջ ուղղության ստեղծագործական ծրագիրը:

Ըմբռնելի լինելու համար Իսահակյանը նույն այդ նամակում ցույց է տալիս, թե որն է իր աչքում ճշմարիտ պոեզիայի շափանիշը. «...ճաշակի հարց է։ Ինձ համար Գյոթեի «Über allen Gipfeln ist Ruh»-ն ամենաթանկ գոհարն է տիեզերական գրականության. գրան չի հասել ողջ ֆրանսիական գրականությանը։ Եվ դա իմ իդեալն է, կազապարը։ Դրան եմ բերում աշխիս ուռաշ, երբ մի բան եմ գրում։ Պարզ, անպաճույճ, նախ, բայց խորն ու զգացած...»։ Այնքան անվերապահ է Իսահակյանի հիացմունքը, որ արժե բանաստեղծական արվեստի նրա շափանիշն ըմբռնելու համար մեղրել գերմանական բանաստեղծի այդ փոքրիկ դուխագործոցը.

Լեռանց շարքերը  
Ներում են մթնում,  
Խաղաղ մարգերը  
Մըշուշ է պատում.  
Ճամփեն հանգարավել.

Սա Հովհ. Քումանյանի թարգմանությունն է: Կա նաև Զարենցի թարգմանությունը՝ այն էլ երեք տարբերակով. Զարենցն ինչո՞ւն պիտի հավաներ զորքը՝ երեք տարբերակով թարգմանելու ու երեքին էլ «Գիրք Հանապարհի» ժողովածուի մեջ տեղ տալու համար: Պոետական երևակայությունից առաջ, ամեն ինչից առաջ բանաստեղծությունն անպայման կյանքի փաստ է, անպայման անձնապես ապրված, անպայման իրական իրողությամբ, իրական առիթով թելադրված, — այս էր Իսահակյանի դավանանքը: Նա՛ն Իսահակյանի, քանի որ նա այս դավանանքն ունեցող ոչ առաջին բանաստեղծն էր, ոչ էլ վերջինը: Եվ հայրենիքից վտարանդվելուց հետո էլ, Պոլսում, ակնեջ չղնելով ոչ մի օտարամուտ աղղիցությամբ, նա պիտի գրեր հենց այն, ինչ թելադրում էր իր վիճակը, իր տրամադրությունը, իր ապրումը՝ զիտումնալուր կերպով «պարզ, անպաճույճ, նախ, բայց խորն ու զգացած»:

Հայրենի գետի զմրուխտ ափերին  
Մեր հին տնակն է կըքել մենավոր,  
Ա՛խ, ես հեռավոր Հանապարհներին  
Ժալում եմ հիմա մենակ ու մոլոր:

Շաշում է ահեղ իմ դիմի վրա  
Աննաե ցուրտ քամին այս մութ գիշերին...  
Արդյաք վաճա՞ւմ է սլախս հիմա  
Հայրենի գետի զմրուխտ ափերին...

Սա բանաստեղծական արվեստի հենց այն որակն է, որ շարժում էր Վահան Տերյանի հիացմունքը. «ինքնուրույն ու պատկերավոր զեղեկություն», «զղացմունքի տարերային անմիջականություն», այն «բանաստեղծական ձևը և ոճը», որ «շկուղա է ստեղծել մեր գրականության մեջ»:

1911-ի զեկտեմբերին Պոլսում գրված այս բանաստեղծությունը լույս է տեսել 1913-ին Թիֆլիսում հրատարակվող «Նոր հոսանք» ամսագրում: Իսահակյանն այդ ժամանակ արգեն հեռացել էր Պոլսից և հանգրվան գտել Եվեյցարիայում:

Բախտը ժպտացել է բանաստեղծին: Ոչ մի կասկած, որ, եթե մեար Գոլտում, 1915-ի զարնանը շախտի խոսատիեր այն ողբերգական ճակատագրից, որ բաժին բնկավ Սիամանթոյին, Վարուժանին, Զոհրապին, Ռուբին Սևակին և ուրիշ շատերի:

Հեռացել էր Իսահակյանը անցյալ ոճերներով ծանրաբեռ և մոտալուտ ոճերներով հզի կոստանդնուպոլսից: Անկարգ ու անմարտը այդ զնգանիստ քաղաքից, ուր այնքան հեղհեղուկ էր մարդկային սմեկն մի ճակատագիր ու մանավանդ հայ մարդու ճակատագիրը, առավել ևս՝ մտածող ու գործող հայ մարդու ճակատագիրը, և ապաստան էր գտել Շվեյցարիայում. հավերժական շեղորոշյալն ու բարորոշյալն, սրբությամբ պահպանվող շքեղ բնության և դարավոր ավանդներով սրբազորված կարգունանոնի անդորրավետ երկրում:

Բայց որքան անգործ էր հանգրվանած երկիրը, նույնքան անհանգիստ էր ու խռովքով լի Շվեյցարիայի նորահայտ բնակչի հոգին: Աչքի առաջ՝ հոգեպարար Շվեյցարիան, մըտքում՝ իր արյունուն, հոգի ծվատող հայրենիք...

Մենք շատ տվյալներ շունենք Իսահակյանի արտասահմանյան կյանքի հատկապես առաջին համաշխարհային պատերազմի և դրան նախորդած ու հաջորդած տարիների մասին: Այդ տարիներին քիչ է շփվել հայրենակիցների հետ՝ քիչ են հուշերը, խառը ժամանակների անկանոն նամակագրությամբ՝ քիչ են նամակները, բանաստեղծին, առավել ևս հայ բանաստեղծին ոգեշնչում չափող ժամանակներ՝ քիչ են գրվածքները:

Դիմում ենք «Հիշատակարանին», բայց սա ղեպերի ու դիպվածքների գիրք չէ՝ ի՞նչ է արել, ո՞ւմ է հանդիպել, որտե՞ղ է եղել, սա ապրումների, մտածումների, խոհերի գիրք է: Իսկ ապրումն ու մտածումը, ապրումի ու մտածումի տառապանքը կազմել են Իսահակյանի տարերքը: Դեռ վաղ հասակից: Քանքը դեռ շրջափռած՝ նա կամեցել է ստեղծել Գերմարգու մի կերպար, որ պետք է լիներ...

**ԻՍԱՀԱԿՅԱՆ**— Խելոք, մտածող ու քննող, անալիզ անող ու հարցասեր, սկեպտիկ և միշտ մտորող... Նրա գլխում միշտ այս հարցերը պիտի խռնվեն.— Ո՞ւր, ինչո՞ւ, ի՞նչ է, ինչո՞ւ համար, ե՞րբ, որտե՞ղ, ո՞վ ևս, ի՞նչ ունես, ո՞ւր էիր, ինչո՞վ, ինչո՞ւ, ի՞նչ պատճառով, որտեղի՞ց, ո՞ւր, ինչո՞ւ, ինչո՞ւ...

**ԲԱՆԱՍԵՐ**— Սա հենց ինքն է՝ մեր բանաստեղծն է իր էությամբ, ինքնաճանաչման, կյանքի ճանաչման, երևույթների խորքերը թափանցելու և ըմբռնելու անհաղ տենչանքով։ Երիտասարդ Իսահակյանն այդ տենչանքի մեջ տեսել է բարձր եկարագրի տեր մարդու հասկանիշը, բայց ոչ երջանկությունը։

**ԻՍԱՀԱԿՅԱՆ**— Չմտածող մարդու համար ամեն բան պարզ է. նրա մտքովը չի անցնում «ինչո՞ւ» հարցը... Այդպես նա չի տանջվում, նա երջանիկ է. բայց մեկը, որ մի անգամ դնում է «ի՞նչ», ինչո՞ւ» հարցերը՝ նրա երջանկությունը մարում է, և աշխարհը սկսում զազանիքների մեջ...

**ԲԱՆԱՍԵՐ**— Եվ Իսահակյանի ամբողջ կյանքն անցավ տանջալի մտածումների մեջ՝ աշխարհի անկատարելության մասին և ազգային ողբերգական ճակատագրի, մարդկային կեցության խմաստի մասին և սեփական գոյության, բնության մասին և քաղաքականության զարգացման, համաշխարհային վշտի մասին և իր անձնական տանջանքի... «Հիշատակարանը» մատչան է հենց այդ մտածումների, որոնց ծանոթանալով միայն կարելի է հասկանալ Իսահակյանի խորունկ հոգին, ուրեմն՝ ստեղծագործությունը նույնպես։ Իրոք որ՝ «Մտածումների մատչան»։ Որքան որ տարբեր են այդ մտածումներն իրենց բնույթով, մի քանի գիծ պարզորոշ անցնում են դրանց միջով։ Այտրուիզմի՝ ալլասիրության վսեմ զազափարը։

**ԻՍԱՀԱԿՅԱՆ**— Ծանաչեցեք ձեզ, որ կարողանաք ուրիշին սիրել, ուրիշը՝ ուրիշ ոչ ոք է, եթե ոչ՝ դուք նրա մեջ։ Օ՛, մարդիկ, դիացեք, որ դուք ուրիշի մեջ ուրիշին չեք սիրում, ուրիշի մեջ դուք ձեզ եք սիրում։ Դուք սիրում եք ուրիշի մեջ ձեր մղտնեքը, զգացմունքները, զազափարներն ու ձգտումները։ Դուք ասում եք ուրիշի մեջ այն, ինչ որ ձեր մեջ և երկրի վրա ասելի է։ Դուք ասում եք ուրիշի մեջ ձեզ, նրան ու երկիրը։ Դուք ասում եք, որովհետև սիրում եք։

**ԲԱՆԱՍԵՐ**— Եվ տեսեք, թե մեծ մտածողին հատուկ ինչ փալլուն ընդհանրացում։

**ԻՍԱՀԱԿՅԱՆ**— Մարդ այնքան մեծ է, ինչքան որ նա ընդունակ է ուրիշներին սիրելու։

Երբ սիրում ես քո ընկերին, ավելի մեծ ես, քան եթե սիրես միայն քեզ՝ միայն քո ես-ը։

Երբ արթւում ես մի ամբողջ ժողովուրդ, ավելի մեծ ես,  
քան եթե սիրես միայն ընկերիդ:

Մարդկությունը սիրիր—մարդկության շափ մեծ կլինես:  
Տիեզերքը սիրիր—տիեզերքի շափ մեծ կլինես:

ԲԱՆԱՍԵՐ—Ամենքս զիտենք, որ Իսահակյանը բնա-  
պաշտ էր՝ պանթեիստ: Բայց միայն «Մտածումների» մատ-  
յանն է քաջահայտում նրա պանթեիզմի ներքին շերտերը:

ԻՍԱՀԱԿՅԱՆ—Առաջ, որ սիրում էի բնությունը, բայց ոչ  
բույր սրտով, այնտեղ մի զգացմունք սերս զնայի բնությունը  
մթնեցնում էր, այդ զգացմունքը այն էր, թե որքան զեղեցիկ  
է բնությունը, բայց նրա կուրծքը մարդկանց համար չի բա-  
խում, որ ես մեղ շատ անգամ տանջում է, խեղդում, այրում,  
սառցնում, մեռցնում է,— ուրեմն ես մեր թշնամին է. բայց  
այն միտքը, որ մոտեհա զլիսումս զարթնեց, թե ինքը՝ մեր  
ողջ երկիրը, արեւ, լուսին ու աստղեր՝ մեղ պես խաղալիք են  
ոչ թե բնության, այլ Նյութ-ումի օրենքների ձեռքում, ինձ  
ավելի կապեց բնության հետ, և ես կարեկցում եմ ողջ բնու-  
թյան վրա: Երբեք մեղավոր չէ սարը, որ լավա է վիժում ու  
մարդկանց մեռցնում: Զէ՛ որ այդպիսով ինքն էլ իր բարձրու-  
թյունն ու պաշտվոր լանջերը կորցնում է, իր գետերը ցամա-  
քեցնում... Դրա մեղավորը ոչ թե սարն է, այլ Նյութ-ումի  
օրենքը: Սարը պիտի դառնա դաշտ՝ դարձյալ եւսյն օրենք-  
ների կամքով:

ԲԱՆԱՍԵՐ—Ի՜նչ պանթեիզմ, բնության պաշտամունք, երբ  
եւ մարդկային հասարակության մեջ, կենդանական աշխար-  
հում և ամենուրեք տեսել է գոյության պայքարի զարհուրանքը:

ԻՍԱՀԱԿՅԱՆ—Զգվելի են զիշատիչ կենդանիները. բնու-  
թյան դաժան հոգին ունեն, կատաղի են, չար, բնության չար  
ուժերի մարմնացումն են:

Մասկեր կենդանիները, մարդն էլ նրանց զլիսավորը. աստ-  
ված, մորալ, գույք, սեր շունեն:

Ուրիշին ուսողը սեր և մորալ կունենա՞: Բնա՛վ երբեք:

Մարդկությունը՝ երկու միլիարդ... երկրի վրա, ընկած  
կենդանիների, փղունների, ձկների ջանին...

Նույնը և կենդանական աշխարհը, տրիլիոններով, տրի-  
լիոններով ուսող արարածներ, իրար ուսող:



դում շրջելիս «գյուղացիք զլիարկները հանում էին և խոնարհ բարևում բանաստեղծին, կամ եթե նստած էին՝ վեր էին կենում»։ Նաև այն, որ մայրաքաղաքից նրան հաճախ այցելության են եկել «հայ և ալյազղի ուսանողներ, զրոգներ, արվեստագետներ»։ Մի շարաթ նա ապրել է բանաստեղծի տանը։ Հրաժեշտի ժամին Բաահայանը մի խնդիրք է արել հայրենիք վերադարձող ընկերոջը. «...երբ հասնես Թիֆլիս, նեղություն կրիր զոնե մի օրով դնա Ալեքսանդրապոլ՝ չեն տուն, մայրիկիս տես, իմ կողմից շերմազին բարևիր և ապա ինձ նամակ գրիր, քե ինչպես տեսար նրան»։

Քեև աղսամ ուշացումով, Լեոնյանը կատարել է բանաստեղծի խնդիրքը։ Մտել է նրա հայրական տունը։

«Սաքուի փափուկ բարձերին թիկն տված՝ շալը ուներին, նստած էր Ալմաստ խանումը։ Մոտեցա, ձեռքը համբուրեցի, իրեն քեֆն ու հալը հարցրի և հաղորդեցի Ավետիքի շերմ բարևները։

Նա ուրախությունից լաց եղավ։

Շատ էր պառավել մայրիկը, բայց դեմքի արժանավայել և համակրական գծերը դեռևս պահպանվել էին։

— Մոտիկ արի, աչքերդ պաքեմ, Գարեգին ջան, դու իմ Ավետիքի քովեն ես եկել, ապա ե՞րբ է գալու, բան չըսած, ախր շատ եմ կարոտեցել»։

Սա հեռ 1913-ի վերջն է։ Հետո եկան այնպիսի ժամանակներ, — կես տարի անց պայթեց առաջին աշխարհամարտը, — որ մօրն ու որդուն բաժանեցին առհավետ։ «Շատ եմ կարոտեցել» խոսքը հենց Շիրակի բարբառով էլ արժիպում էր նաև որդու սրտում։ Եվ եթե ճիշտ է այն միտքը, քե պոեզիան կարոտի արտահայտությունն է (պարտոից է առաջ զայիս ամեն բարձր բան։ Իդեալներն ինչ են որ, — հոգու կարոտներ», — գրել է Թումանյանն իր նամակներից մեկում), ապա Բաահայանի կարոտը մոր հանդեպ, որ այնքան վիշտ ու մորմոք է պատճառել նրան, վեր է ածվել պոետական արվեստի անանց արժեքների։ Ավելին՝ կաթողին, ծնրադիր, մշտավառ, սրբազործված սերը մոր նկատմամբ դարձել է Բաահայանի հոգու անլուելի մեղեդին, երրորդ մեծ սերը՝ հայրենիքի սիրո և կնոջ սիրո կողքին, երրորդ մեծ շեշտն իր բովանդակ ստեղծագործության մեջ։ Այնքան մեծ ու այնքան

հարազատ, որ ժողովրդական գիտակցության մեջ Իսահակ-  
յանն ընկալվում է իբրև մայրական սիրո երգիչ՝ թերևս ամեն-  
նից առաջ, Համենայն դեպս, մեր սիրո ամենասրտալի երգիչը  
հայրենական զրականության մեջ, Նվ արդար է այդ պատիվը,  
քանի որ մարդկային բարոյականության բոլոր մտածելի  
արժեքներից այդ սերն է ամենաբարձրը մեր պոետի աչքում,  
ամենից, եթե ոչ միակ (ինչպես Սերու-Լալայում), անդամա-  
ճանը, ամենից, եթե ոչ միակ, համբուրելին, անձնվեր, ծնրա-  
դիր պաշտամունքի արժանին:

Շվեյցարական սիրունիկ գյուղում մեր և հայրենիքի,  
սրտակից ընկերների և զրական հարազատ միջավայրի  
կարոտով թախծող Իսահակյանն անտեղյակ էր, որ իր  
ստեղծագործությունը վեճերի առարկա է դարձել այդ միջա-  
վայրում: Հովհ. Թումանյանի հիմնած ու զլսավորած հայ  
զրույնների ընկերությունը, 1913-ի մարտին, իր հերթական  
երեկոն նվիրել էր Իսահակյանին: Զեկուցում է տվել Ա. Հա-  
րությունյանը, բանավեճ է բացվել, որին մասնակից են եղել  
Դերենիկ Դեմիրճյանը, Նիկոլ Աղբալյանը, Մամբրե Մատենա-  
յանը, Հարություն Ճուղուրյանը: Թեր և դեմ կարծիքներ են  
ստվել նրա պոետական ուղղության ու լեզվի մասին, նաև  
բավական անհեթեթ կարծիքներ, բայց ամենից էականն այն  
է, որ նկատվել է Իսահակյանի համար ամենից թանկագինը՝  
այն, որ բանաստեղծը, անվերջ իր ժողովրդի գեղարվեստա-  
կան մտածողության ակունքներից, ստեղծում է նրան հա-  
րազատ ոճ, պոետական ազգային ոճ, ինչպես Հովհ. Հով-  
հաննիսյանը և Հովհ. Թումանյանը: Նույն թվականին քրե-  
նագատությունն Իսահակյանին տալիս է այնպիսի դեմա-  
տություն, որ առաջներում նա չէր կարող սպասել. զա շատ  
կուրախացներ իրեն, եթե հեռու Շվեյցարիայում ստանար ու  
կարդար հայկական թերթերը. «Ուրիշ հասարակության մեջ  
Ավետիք Իսահակյանը ազգային հպարտություն կլիներ...»:

Այս ժամանակներում, իհարկե, զրականության ու գեղ-  
արվեստի հարցերը չէին, բնավ էլ այդ հարցերը չէին հայ  
մտածող հասարակության, հայկական մամուլի ու հրապա-  
րակախոսության սենտուն մտահոգությունները: 1912-ից,  
Բուլկանյան պատերազմի հետևանքով ստեղծված իրադրու-  
թյան մեջ, մի նոր թափով ապարեն է նետվում Հայկական

հարցը և ամենքին ու ամենուրեք առնում իր ուղորտի մեջ: Հայկական հարցն արժարժման առարկա է դառնում ամենատարբեր հասարակական հոսանքներ ներկայացնող օրգաններում՝ «Պրավդայից» և հայ բոլշևիկյան թերթերից սկսած մինչև լիբերալ մամուլը, աղգայնական և պահպանողական-կղերական ուղղության թերթերն ու հանդեսները: Նույնն էր քննության ու մտահոգության առարկան, բայց շատ տարբեր էին տեսանկյուններն ու տեսակետները, մեկ-նորանուխյունները և հարցի լուծման առաջարկվող ուղիները:

Այս շրջանից սկսած, յոթ-ութ տարի, գրեթե մինչև 1920-ի վերջը, այն բախտորոշ օրը, որ վերջակետ գրեց հայության բոլոր տանջալի գեղերումներին ու անլուր տառապանքներին, քաղաքագետ էին դարձել բոլորը՝ հայկական մամուլը հեղեղելով ամենատարբեր դիրքորոշման հոգվածներով:

Արշակ Զոպանյանի դադար չառնող գրիչը հրապարակ էր հանում հոգված հոգվածի հանից՝ լի պայծառ ու միամիտ հույսերով, որոնց ակունքն ավելի ավանդական հումանիզմի հավատն էր, քան ուժերի հարսերություն իրական ըմբռնումը:

Հովհ. Թումանյանը արդեն 1912-ին գուժում էր սպասվող աղետը՝ «նորից կոտորածի մոռյլ մղձավանջը ծանրանում է մեր հողնած սրտերին և նորից ամենուրեք զալկանում է Արևելքի հին տառապյալը—հայ ժողովուրդը»: Դուժում էր և բազմաշարժար հարցի գրական լուծումը կապում բացառապես և միայն ռուսական կողմնորոշման հետ:

Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ 5-րդը 1912-ի հոկտեմբերին կողկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովի միջոցով գրմում է նիկոլայ երկրորդին Արևմտյան Հայաստանի ռեֆորմների հարցը նորից առաջ քաշելու համար:

«Մեր գծախառ դատին համար կաշխատիմ գիշեր ու ցորեկ...», — 1913-ին գրում է Գրիգոր Զահրապյե Արշակ Զոպանյանին: Առավել կամ պակաս շփով այս նույնը կարող էին ասել արևմտահայ ու արևելահայ մյուս գործիչները ևս՝ Պոլսում, թե Քիֆլիսում, Մոսկվայում, թե Փարիզում և այլուր: Դա էր հայկական կյանքի օրվա կարգախոսը, որ իր հասանքի մեջ էր առել բոլորին:

1913-ի վերջին, Մոսկվայում, քառյութամյա Ալեքսանդր

Մյասնիկյանը դասախոսություն է կարդում Հայկական հարցի մասին: Գրան հաջորդում է մտքերի փոխանակություն, որին մասնակից են լինում բանաստեղծ Ալեքսանդր Սատուրյանը, զբաղանազեա և արվեստարան Ալեքսեյ Զիվիլեզովը՝ իտալական վերածննդի նշանավոր մասնագետը, որը նույնպես այս շրջանում իր վրա էր առել քաղաքագետի գերը, ուսմական մամուլում շարունակ բորբոքում էր հայկական իրավունքների հարցը, Ստեփան Մամիկոնյանը, որ մի քանի տարի անց պետք է դառնար Մոսկվայի հայկական կոմիտեի նախագահը, այն կոմիտեի, որի զեղեցիկ գործերից մեկն էլ «Поезия Армении» փառահեղ հատորի ստեղծման նախաձեռնությունն էր:

Մյասնիկյանն իր դասախոսության մեջ քննության է առնում հայկական դատի լուծման երեք հնարավոր ուղիները՝ հայկական վիլայեթների անեքսիա՝ Ռուսաստանի կողմից, ռեֆորմների իրականացում՝ Արևմտյան Հայաստանում, թե՛ ինքնավարություն: Քաղաքական կացությունը Բալկանյան պատերազմի հետևանքով, այնպիսին էր, որ երիտասարդ դասախոսին թույլ էր տալիս մտածել, թե անեքսիայի միջոցով երեք վիլայեթը կես միլիոն հայությանը, Ռուսաստանին անցնելու փոխ կլինի, երեք վիլայեթը քիչ է, զա հարցի բավարար լուծում չի լինի: Միայն թե արևմտյան մեծ պետությունները՝ Հայկական դատի մշտական հակառակորդները, դեմ չլինեն...

Այլ. Մյասնիկյանի ենթադրած միջոցներից հնարավոր է դառնում երկրորդը՝ բարեփոխումների պարտադրումն Արևմրտյան Հայաստանում: Նրա դասախոսությունից երկու ամիս էլ չէր անցել, երբ Գրիգոր Զոհրապը 1914-ի հունվարի վերջին Արշակ Զոպանյանին գրում է այսպիսի հուսալի առողեր.

«Այսօր, այս ժամուն, հայկական բարենորոգումներու պայմանագիրն ստորագրվելու վրա է Բ. Դոան և Ռուսիո զեապանատան մեջ:

Նամակիդ պատասխանն ուշացուցի գիտմամբ, որպեսզի այս ազվոր լուրով զարգարեմ զայն և ուրախացնեմ քեզի, որ ազգքան տարիներ ի վեր մեր զժրախտ Դատին նվիրել ես կլանքդ ու տաղանդդ»:

Իրոք, 1914-ի հունվարին Պոլսում Ռուսաստանն ու Թուրքիան (Բ. Դուռը՝ Բարձրագույն Դուռը, Թուրքիայի կառավարության գերագույն մարմինն էր) ստորագրում են հայկական բարենորոգումների պայմանագիրը: Իհարկե, դա առևտական պետության և դիվանագիտության գործադրած ճշնման արդյունքն էր: Դժբժի հաջողությանը (առաջիմ հաջողությանը, քանի որ կես տարի էր մնացել մինչև առաջին աշխարհամարտի բռնկումը, որ ի շիջ դարձրեց ամեն մի պայմանագիր) նպաստել էր անդադրում Ջոհրապը՝ Պոլսի առևտական գնապանատան իրավախորհրդատուն: Թուրքական կառավարող շրջաններին ու սրանց գործունեության մոլթ ձևերին լավատեղյակ գրողն ու իրավաբանը, որին այս ժամանակներում ամենից քիչ էին հետաքրքրում իր գրական աշխատանքն ու կոչումը, գործի էր դրել ամեն հնարավոր միջոց՝ առավելագույն արդյունքի հասնելու համար: Եվ հիմա նա երջանիկ էր իր ընկերոջը, բարեկամին ու գործակցին, հայկական բազմաշարժար Դատի երպմյալ գինվորին, որ իրավունք ուներ առաջինն իմանալու բաղձալի լուրը, հայտնելու ձեռք բերված արդյունքների մասին: Հունվարի 31-ի ժ. 4-ին (բացառիկ դեպք, երբ նամակի գրության ժամն էլ նշվում է՝ իբրեւ պատմական ժամ) նա գրում է, որ, ըստ պայմանագրի, երկու եվրոպացի քննիչ, իրապես՝ գործադիր իշխանության տնօրեններ, պետք է նշանակվեն Արևմտյան Հայաստանի վիլայեթներում, թե հայերենն այդ վայրերում զառնում է պետականորեն ճանաչված լեզու, թե պետական պաշտոնյաների լեզու հայեր պիտի լինեն և այլն, և այլն:

Ջոհրապը չի մոռանում ասել, որ այս ձեռքբերումների մեջ չհիմը և իրականը առևտական պետության պաշտպանությունն էր և ատոր շնորհիվ ձեռք բերինք ամեն բան: Նա չի կասկածում, որ Ռուսաստանի հետ հաստատված «մտերմական հարաբերությունները» մոտիկ ապագայում ավելի մեծ արդյունքների պիտի հասցնեն:

«Վեց ամսն ի վեր այսօր առաջին անգամ ըլլալով ուրախ եմ», — այսպես է ավարտվում հոգնատանը ընկերոջը հոգնատանը Ջոհրապի գրած նամակը:

Այն, ինչ գրված էր այս նամակում, այսօրան ուրախառիթ արդյունքների, միանգամայն իրական էր և՛ դժբախտաբար

իրական: Գծրախտաբար, քանի որ Քուրքիայի կառավարիչներն առաջին անգամ համոզվեցին, որ օտարերկրյա միապետությունների և առաջին հերթին Ռուսաստանի միջամտությունը կարող է շատ հեռու գնացող հետևանքներ ունենալ: Բայց առայժմ ուժի գնձ ոչինչ անել չէր կարելի, և Քուրք վարչակարգին մնում էր հաշտվել ստեղծված վիճակի հետ:

Բանն այնտեղ էր հասել, որ զնդապետ Հոֆը՝ Նորվեգիայի ռազմական նախարարի նախկին օգնականը, որ մեծ պետությունների որոշմամբ և օսմանյան կառավարության ճարահատյալ հավանություններ նշանակված էր Վանի, Բաղեշի, Տիգրանակերտի և Խարբերդի նահանգներում բարենորոգման ծրագիրը գործադրող, փաստորեն՝ կառավարիչ, 1914-ի հուլիսին մեծ անձնակազմով արդեն ժամանել էր Վան: Երկրորդ կառավարիչը՝ Վեսթենհեկեր (հունացական զազուս Ինդոնեզիայի Բոռնեո կղզու նախկին կառավարիչը), որին արամազըրված էին Քուրքիայի մյուս հայաշատ նահանգները (Կարին, Սերաստիա և Տրապիզոն) նախապատերազմյան խառն իրադրության պատճառով հապաղեց իր պաշտոնավայրը ժամանել: Բայց Հոֆը ժամանեց՝ խորապես անհանգստացնելով Վանի կուսակալ Քահսին բեյին:

Մատթեոս էպիղաթյանը՝ Վանի պատմական դատարանի նախագահը, որ 1914-ի հուլիսին նշանակվել էր զնդապետ Հոֆի թարգման, իր. «Կյանք մը ազգիս կյանքի մեջ» գրքում (1987, Անթիլաս) մանրամասն նկարագրել է այս անցուցարձերը: Նրա վկայությամբ՝ Քահսին բեյը Մատթեոսից պահանջել է հետ կանչել նոր միայն ժամանած Հոֆին, քանի որ «ապագա անհամությանց պատասխանատվությունը ինք չուզեր ստանձնել, և կիսնդրե ընդունիլ իր հրաժարականը»:

Եվ հենց այստեղ էպիղաթյանը՝ իրավաբանության զուտորը, անում է մի խորամիտ դատողություն, որ ավելի քան արդիական է Լեոնային Ղարաբաղի և նրա շուրջը ստեղծված մեր օրերի պատմության համար:

«Անշուշտ, ամեն մարդն ավելի նախարարությունը կհասկընար թե ի՞նչ կուզեր կուսակալը: — Գրել է էպիղաթյանը: — Քուրքիո մեջ ժողովրդային բողոք և պոռթկում չէր ըլլար, եթե կառավարությունը ասիկա չուզեր: Քահսին այս ամենը կփա-

փառքեր սարքել, և պարզապէս կուղեր կառավարութեան հաժմանութիւնը ստանալու:

Նույնը չէ՞ր Լեոնային Ղարաբաղի պատմութիւնը 1920-ականների սկզբին:

Նույնը չէ՞ մեր ժամանակներում:

Միայն թե այն, ինչ հիանալի հասկանում էր էպլիզաբեանը, մեր քաղաքագետները չեն հասկանում կամ չեն ուզում հասկանալ:

Շարագրանքի հունից դուրս դալու գնով ես այս շեղումն արեցի զիտակցարար՝ ցույց տալու համար, թե ինչպէս կրկնվում է պատմութիւնը, և հայագնմ սպառնական քաղաքակա-նութիւնը՝ նույնպէս:

Վերագտանանք 1914-ի ամառվա զեպերին: Ի՞նչ մեծ բարեբախտութիւն հայութեան համար, որ մեծ պետութիւնների ներկայացուցիչների զխաղորդութեամբ պետք է բարեփոխումներ արվեն Արեւմտեան Հայաստանում: Բայց այդ աստիճան հայանպաստ իրողութիւնը դարձավ վերին աստիճանի հայազնաս պատմական հանգամանքների (այս զեպըում՝ առաջին համաշխարհային պատերազմի) պատճառով, քանի որ թուրք կառավարիչները համոզվեցին, որ մեծ պետութիւններն այս անգամ կատակ չեն անում, և դա ավելի ևս ամրապնդեց Հայոց հարցը սրով ու հրով լուծելու նրանց վճռականութիւնը:

Դրանից վեց տարի հետո նույն հայազնաս զերը պիտի կատարեր այնքան հայանպաստ Սերի դաշնագիրը, քանի որ հայանպաստ որոշումները մնացին թղթի վրա, իսկ հայակործան գործերն ի կատար ածվեցին. հայոց պատմութեան հաճեթմական ոգրերգութիւնը:

Եվ այսպէս, 1914-ին երիտթուրքերն ասումները սեղմած սպասում էին իրենց ծրագրերը գործադրելու հարմար առիթի: Եվ առիթը շուշացավ քիչ, շատ քիչ ժամանակ էր մնում մինչև առաջին համաշխարհային պատերազմը (և արդյոք Հայոց հարցն իրենց իմացած ձևով լուծելու համար չէ՞, որ երիտթուրքերը մտան պատերազմի մեջ):

Բայց ո՞վ կարող էր կռահել վերահաս աղետը: Հայութիւնն օրորվում էր մեծ պետութիւնների միջամտութեան հետ կապված հրապուրիչ պատրանքներով: Եվ ժողովրդի գործիչ-

ներքը, ամեն մեկը յուրովի, շանում էր նպաստել ազատագրության նվիրական գործին:

Ավետիք Բասճակյանը նույնպես:

1914-ի մայիսի Հայկական քերթերից մեկում կարելի էր կարգաւ Հայպիդից առաքված այսպիսի մի լուր. «Անցյալները այստեղով Բեռլին գնաց Ավետիք Բասճակյանը գերմանա-Հայերեն ամսագրի խմբագրական կազմի մեջ մտնելու համար»: Իրոք, Բեռլինում հիմնվում է «Գերմանա-Հայկական ընկերություն», որ ուներ գերմաներեն և հայերեն լույս տեսնող իր շաբաթաթերթը՝ «Մեսրոպ» անունով: (Այդ հանդեսի աշխատակիցը լինելով է, որ Բասճակյանը մտերիմ նամակ է գրել իր գրչեղբայր Սիամանթունին՝ տպագրության համար բանաստեղծություն ուղարկելու խնդրանքով):

Երկու ժողովուրդների փոխադարձ ճանաչմանը նպաստելու կոչված այդ ընկերության մեջ էին անձնվեր հայասեր դոկտոր Լեփսիուսը, նշանավոր հայագետ, պրոֆեսոր Մարկվարտը, ուրիշ հայ և գերմանացի գործիչներ, որոնց մեջ և Բասճակյանը:

Բայց ժողովուրդների բախտը հումանիստներն ու բանաստեղծները չեն, որ տնօրինում են:

Սա արդեն առաջին աշխարհամարտի նախօրյակին էր: Պատմության որպիսի՝ ծաղր:

Ինչպիսի՝ հույսերով, միամիտ հավատով հայ բանաստեղծը մեկնել էր գործելու իրեն լավ ծանոթ Գերմանիայում, այն իր սիրած Գյոթեի, Հայնեի, Բեթհովենի Գերմանիայում, այն իր պատերազմի տարիներին, վատխառնույն գերը պիտի խաղարկեր հայ ժողովրդի հակառակորդ: Եվ բանաստեղծի այնքա՛ն առեւտրային կապերական Գերմանիայի նկատմամբ իրոք պիտի միայն նրա մեջ առաջին աշխարհամարտից մինչև երկրորդը՝ այս անգամ արդեն հիտլերյան Գերմանիայի դեմ պոռթկալու համար:

Ատելություն կուտակումները հետագա տարիների կենսափորձը բերեց, իսկ մինչև առաջին աշխարհամարտի սկսվելը Բասճակյանը, շատ շատերի հետ, հույսեր էր կապում թե՛ պետականորեն կնքված համաձայնագրի, թե՛ տարբեր եր-

կրքներում ծագող հայասիրական շարժումների, թե՛ հումանիտական ընկերությունների հետ:

1914-ի հուլիսի 19-ին պայթեց առաջին աշխարհամարտը, և կարևոր տեղաց բոլոր շիկացած հույսերի վրա: Ի դերն եղավ ամեն ինչ: Իհարկե, ոչ ոք չէր կարող իմանալ, որ դրա հաջորդ իսկ օրը՝ հուլիսի 20-ին, Ստամբուլում զաղտնի համաձայնագիր է կնքվել Գերմանիայի և Թուրքիայի միջև, բայց ամենքի համար պարզ էր, որ Թուրքիան պետք է լծվի Գերմանիայի կառքին: 1914-ի հոկտեմբերի 16-ին արդեն Թուրքիան մտավ պատերազմի մեջ, երկու օր անց ռուսական զորքերը հրաման ստացան թուրքական սահմանն անցնել:

Հոկտեմբերի 21-ին ռուսական զորքերը գրավեցին Դիադինն ու Բայազետը:

Հոկտեմբերի 27-ին Խանասորի լեռնանցքում պարտություն մատնեցին թուրքերին:

Հոկտեմբերի 28-ին Ալաշկերտի ամրոցը հովիտը ռուսական զորքերի ձեռքին էր:

Նոյեմբերի 10-ին թուրքական զորքերը պարտություն կրեցին Էրզրումի ամրոցը ճակատով:

Դեկտեմբերի 23-ին, Սարիզամիշի մոտ, էնվեր փաշայի ղեկավարած թուրքական երրորդ բանակի կատարյալ ջախջախումը և Անդրկովկասը նվաճելու թուրք-գերմանական ծրագրի խորտակումը:

Ռուսական զորքերի հետ կռվում էին նաև հայկական կամավորական զորամասերը: Թիֆլիսի լազարեթները լցվեցին ռուս և հայ վիրավոր զինվորներով:

Երևասարգ Ստեփան Զորյանը, որ այդ ժամանակ «Մըշակ» լրագրի աշխատակիցն էր, 1914-ի նոյեմբերին հրապարակած իր առաջին ակնարկներից մեկում նկարագրել է իր հանգիստը վիրավոր զինվորների հետ: Ճակատում զինվորները երգել են նաև: Ի՞նչ էին երգում, — հարցրել է թղթակիցը.

«— Ես ինչ գիտեմ, — ասաց ունտեր-օֆիցերը ժպտալով. — Ժողովրդական ամեն տեսակ երգեր:

— «Յայլուզս կորավ ձեր գուռը», — վրա բերեց մեկը:

— «Դարգս լացեք», — հեռվից ձայնեց մի երկրորդը:

— «Որսկան ախպեր», — ավելացրեց մի ուրիշը։

Հայրենիք դառնալու իրավունք շունեցող վտարանդի բանաստեղծին մնում էր անգործավետ Շվեյցարիայից անհանգիստ սրտով հեռանել իր ժողովրդի բախտի տարուրերումենքին։ Իսկ ժողովուրդն ապրում էր և՛ դարավոր ոսոխի դեմ ռազմի դաշտում տարած հաղթանակների ցնծությամբ, և՛ հնարավոր եղեռնի ահավոր սպասումներով։ Հնարավորություն իրականություն դարձավ այնպիսի վիթխարի չափերով, որ նույնիսկ ամենամռայլ երեսակայությունը չէր կարող պատկերացնել։

1914-ի դեկտեմբերից արդեն ծայր առավ արևմտահայության անդահանությունն ու բնաջնջումը, որ 1915-ի ապրիլի 24-ից արդեն սկսեց իրագործվել իբրև պետական ծրագիր։ Դա թուրքական կառավարողների զարեր ի վեր որոնվող ու գործադրվող քաղաքականության զարհուրելի շարունակությունն էր ու ավարտումը։ Դրա համար կար նշատակահարմար իրադրություն՝ պատերազմական իրադրությունը, կար պատրվակ՝ ռուսական զորքերի առաջխաղացման հենակետերի վերացման և արևմտահայության ապստամբության պատրվակը, կար մեծ պետության աշակցությունը՝ կայսերական Գերմանիայի աշակցությունը, չկար միջազգային ու մարդկային որևէ իրավունքի ճանաչում, չկար ոճիրն ի կատար ածելու միջոցների մեջ խտրություն դնելու խղճի նշույլ անդամ։

Այս դժնդակ ժամանակներում ապրած, ողբերգության ականատեսը կամ ականջալուրը եղած ամեն մի հայ մարդու մեջ, մտավորականի, գրողի հոգում եղեռնը բացեց այնպիսի վերք, որ շրտվեց այլևս։ Բայց ամենքի ստեղծագործության, նամականու, գրառումների մեջ չէ, որ արտահայտվեց այնքան խորունկ ու սրտակեղեք, որքան Ավետիք Իսահակյանի։ Եվ դա զովար չէ հասկանալ. ի բնե ողբերգակ, օժտված ողբերգականի բացառիկորեն սուր զգացողությամբ, կենսազգրության զեռ պատանեկան էջերից բոլոր թելերով կապված հայ ազատագրական շարժման հետ՝ այդպե՛ս պետք է լիներ։

Հովհաննես Թումանյան, Ասում Յարճանյան, Գրիգոր Զօհրապ, Վահան Բեքեյան, Արշակ Զոպանյան, Վահան Տերյան, Եղիշե Զարենց...

Հայ ժողովրդի վշտերից մեծագույնն ապրած և դողացող

ձեռքով թղթին հանձնած, ժերադիր խոնարհումի արժանի այս մեծ անունների մեջ իր անփոխարինելի տեղն ունի Ավետիք Բասադկյանը՝ ողբերգական երևույթի իմաստավորման ժամանակային մեծ ընդգրկումով, խորունկ մտքով, հուղական ազդեցությամբ զորությամբ:

1894 թիվ, սա Մեծ եղեռնի դեռ նախերգանքն է:

**ԻՍԱՀԱԿՅԱՆ**— Հայաստանում արշան հեղեղ կա— տաճիկը 8—10000 հայ մարդ է սպանել, կանայք ու աղջիկներ է բռնաբարել ու սպանել, մարդկանց կենդանի վառել, 25 դուռ ավերել... Գազա՛ն, գազա՛ն մարդկություն... Իսկ Եվրոպան ուրախանում է— ես իր շահերի օգուտն է խկույն տեսնում այդտեղ... Թյո՛ւ, թյե՛լ Եվրոպայի ու իր եսական կուլտուրայի վրա... Իսկ ինչո՞ւ իմ մեջ չի վառվում վրեժ— ինչո՞ւ ես չպիտի այժմ կատաղեմ ու դինամիտով վերջ տամ ամբողջ Եվրոպային ու փշաջամ մարդկությանը...

**ԲԱՆԱՍՆԵՐ**— Սա 1894-ի նոյեմբերի 7-ին Հայացիքում տրած գրառումն է «Հիշատակարանում»։ Դրանից տասներկու օր հետո երիտասարդ Բասադկյանն անում է այսպիսի մի կոաչում:

**ԻՍԱՀԱԿՅԱՆ**— Մինչև այժմ ես այն կարծիքին էի, որ պիտի կռվեի և Տաճկահայաստանը ձեռք բերել— իբրև ազատ երկիր— անկախ նույնիսկ ուրիշ ազգերի միջամտությունից, միայն մեր արյունի շնորհիվ, բայց Սասունի կոտորածի լուրը ինձ փոխեց. այս ճամփով տաճիկը մեզ կջնջ վերջնականապես աշխարհի երեսից, նրանք ունեն զորք, զենք, թնդանոթ և փող, իսկ մենք ունինք և սոված ենք... Նրանք մեզ հում-հում կուտեն:

**ԲԱՆԱՍՆԵՐ**— Անհերքելիորեն պարզ, անհերքելի տրամաբանություն (որ շատերին մատչելի չեղավ): Ուրեմն, ո՞րն է կիրք...

**ԻՍԱՀԱԿՅԱՆ**— ...պետք է ջարդել ու փշրել տաճիկին հօգուտ Ռուսաստանի Ծառ, շա՛տ լավ կլինի, որ Ռուսաստանը և ողջ Հայաստանը տիրե. զոնե մեր ժողովուրդը էլ չի ջարդվի— սովից ու սրից,— զոնե ռուսը օրենք և սիրտ ունի:

**ԲԱՆԱՍՆԵՐ**— Սա այլ բան չէր, քան այն ուղեգիծը, որ ավանդաբար գալիս էր Արովյանից ու Նալբանդյանից և հասել էր Թումանյանին, Զոհրապին, Զոպանյանին. նաև Բասադկ-

յանին: Եվ ոչ թե ըստ գրքերի, այլ ըստ պատմական զեպքերի տրամաբանության: Իսահակյանն այնքան էր համոզված դրա ճշտությանը, որ պատրաստ էր նվիրվել այդ ուղեգծին:

**ԻՍԱՀԱԿԻԱՆ**—Ես այսուհետև ինձ կպատրաստեմ մի գին՝ վոք. ուրիշ գինվորների հետ արյունա կթափեմ ռուսի զորականի տակ և հայրենիքս կփրկեմ կրակից ու արյունից ու սովից: Պետք է այս քարոզել ու խրախուսել Ռուսաստանին:

**ԲԱՆԱՍԵՐ**— Փնարական բանաստեղծն արյուն թափող գինվոր չգարձավ, բայց գինվորագրվեց այդ նպատակին: Ոչ միայն գրեով (իր հայդուկային սրտագրավ երգերը), այլև գործով ու գործունեությամբ, քարոզչական աշխատանքով: Բայց պատմական զեպքերը դարգացան ոչ թե նպատակ հայ ժողովրդի և ռուսաստանարևակ ուրիշ ժողովուրդների: Ալեքսանդր Ներսիսյանի վաթսու տարեկանության (1881) և Մ. Լորիս-Մելիքովի լիբերալ քաղաքականության խորտակումից հետո ցարական իշխանությունը բռնեց բիրտ հետադիմություն, ժողովուրդների ճեշումն ահավոր շափերի հասցնելու ուղին: Ցարական պաշտոնեությունը (Պրեզիտոսցե, Գուլիցին) անհրաժեշտ նկատեց փակել հայոց զգրոցները և բռնադատվել հայ եկեղեցու ունեցվածքը:

Ցարական հայահալած այդ կարճամիտ քաղաքականությունն էր միայն, որ Հայ հեղափոխական դաշնակցությանը զրոհեց իր պայքարն ուղղել նաև ցարական իշխանության դեմ, մի բան, որ հարկավոր չէր ո՛չ այդ իշխանությանը, ո՛չ էլ հայ ժողովրդին: Նրխատասարդ Իսահակյանն այդ կուսակցության անդամն էր, դասակիով ըստ 1904-ի նամականերից մեկի՝ ոգեշնչված անդամը: «Եվ ես միայն հիմա եմ մի փոքր կազդուրված՝ շնորհիվ այն վեհ, սրբազան զործի, որի մեջ եմ, որի համար աշխատում եմ ու ապրում—հայրենիքի սուրբ գործի...»:

Դաշնակցության բռնած հակացարական ուղեգիծն էր պատճառը, որ այդ կուսակցությանը պատկանող, նույնիսկ չպատկանող, այլ հայ ազատագրական պայքարին հարող գործիչներից շատերը (թվով 165) 1908-ի վերջերին կալանքի տակ առնվեցին և Պետերբուրգում դատվեցին 1912-ի դարեանը: Բայց ցարական դատարանը նրանց մեծագույն մասին արբաբացրեց, բանտարկվեցին հազիվ 5—6 հոգի: 1908-ին

կալանավորվածների մեջ էին նաև Քումանյանը և Իսահակ-  
յանը (նրանք կես տարի կալանված են մնացել Թիֆլիսի  
Մետեխի բանտում)։ Քումանյանը 1912-ին դատվեց և ան-  
պարտ հանաչվեց, իսկ Իսահակյանը, ինչպես ուրիշ շատերը,  
որ դրամական գրավականով ազատ էր արձակվել կալանքից,  
դատից խուսափելու համար մի քանի ուրիշների պես փախավ  
արտասահման, ուր մնաց մինչև 1926-ը։

Այսպես անօրինակ Սվետիր Իսահակյանի բախաը։ Մեծ  
եղեռնի բոլոր նա առավ Բեռլինում։ Բայց մինչև այդ, 1915-ի  
ապրիլի 2-ին, նա իր «Հիշատակարանում» արել է մի հայ-  
րենաբաղձ դրառում՝ այնքա՛ն հոգեպարար, այնքա՛ն զեզեցիկ,  
որ չեմ կարող մեջբերում անելուց հրաժարվել՝ մեջբերում-  
ներով առատ այս գրքում։ Ես դա անում եմ հետագա շարա-  
դրության հետ հուզական հակադրությունն ուժեղացնելու  
համար։

ԻՍԱՀԱԿՅԱՆ— Նորից հայրենի հողի վրա եմ ուր մանկու-  
թյան առաջին հեքիավթը հյուսվեց, ուր առաջին ծաղիկը քա-  
ղցի և հավերժական աստղերը տեսա...

Ահա՛ ստվերի պես անցնում է հայրս՝ մտախոհ և բարի՝  
ծանոթ շավիղով հառաջ եմ վազում ես։

Ահա մանկությանս ընկեր-գետը՝ նույն կայտառ ալիքներով,  
ասես վճիռ ջրերի հայելիի մեջ ինձ եմ տեսնում—լուսնա-  
լիս... տեսնում եմ իմ մանուկ պատկերը։

Համբուրում եմ սուրբ հողը, որ ծածկում է հիմա հորս և  
սիրելիներիս... Ահա՛ մեր տունը, օրհնա՛ծ լինիս դու, արբադան  
օջախ, որ ղեռ մայրս վառ է պահում. այդ սուրբ ծուխը անցած  
երջանկությամբ հյուսվում է իմ գլխի վերև, իմ շուրջը։

Եվ բախտավոր եմ զգում ես ինձ. ոչինչ չեմ տենչում այս  
ծուխից ավել՝ ո՛չ փառք, ո՛չ համբավ, ո՛չ փող և ո՛չ կին,  
ո՛չ օտար ափեր և ո՛չ արկածներ...

Կցանկամ նստել մեր տան պատի տակ, հորս նստած տե-  
ղում, և առջևս խայտա երեխասս՝ վերադարձնելով մանկու-  
թյունս ինձ, և գլխիս վերև՝ մորս օջախի ծուխը...

ԲԱՆԱՍԵՐ— Եվ հանկարծ՝ Եղեռնի բոլբոլ։

ԻՍԱՀԱԿՅԱՆ— Ընթաղն ազոտ լույս է տալիս սենյակիս  
մթության մեջ. երգիս մեջ կրակ չկա. օտար աշխարհ, օտա՛ր—  
նստած եմ սենյակում՝ գլուխս ափերիս մեջ բռնած. առջևս

մի նամակ հեռավոր, սգավոր հայրենիքից, և մի սպիտակ, չգրված թուղթ, որ մեռելի սավանի պես փռված է...

Կարգում եմ նամակը...

Իմ հայրենիքը—ավեր, արյուն, նախաժիր, որբեր, հրդեհ, ավար... Սարսափը համակել է ինձ, լսութուն. վախից շնձ կարող հետ նայել, կամ կողմերս.— ինձ թվում է, թե իմ աջն և ձախը, հետևն և առաջս տարածվում են գերեզմաններ, եղբայրական գերեզմանների ծով, անթաղ գիականք—բյուրավոր, բյուրավոր և նորից բյուրավորներ. մեքիս ետև սեղմում են ինձ գերեզմանները— իմ անդին բնկերների— Սիամանթո, Վարուժան, Խաժակ... Գերեզմաններ. հրդեհների և ծովերի մեջ, ջրհորների և գետերի մեջ... Արյունատ Եփրատ, Միջագետք. սոսկալի Դենիք-Ջոր... քաշում են ինձ գնալ իրենց...

Ի՞ր ոճրագործ, զխլական ձեռքն արեց.— Վիշելձ, Բրիան, Հորվեզ, Բալեհաթ, Էնվեր, գերման, թուրք և քուրդ խաժամում, հավիտյան նզովք ձեր անունին ու սերնդին. ո՞ր պիտի զնաք մաքրելու ձեր արյունատ ձեռները: Ի՞ր օվկիանոսը կարող է մաքրել...

ԲԱՆԱՍԽԵԴԹ— Բանաստեղծի հոգին ծվատող այս վիշտն այլևս չբեց նրան մինչև իր կյանքի վերջը, ո՞ր մնաց ոճիրն ի կատար ածվելու ժամանակ:

ԻՍԱՀԱԿՅԱՆ— Այնքան մեծ է հայության վիշտն ու տառապանքը, այնքան ահռելի է ու անօրինակ, որ մեծությունը շափելու համար տիեզերքի անհունությունն ու խորությունը պիտի առնել, իսկ ահռելիությունը սարսափների՝ որակելու համար բառարաններում բառեր չկան: Եվ ո՛չ մի բանաստեղծ չի կարող արտահայտել, և միայն պիտի զգալ այն հասկանալու համար. իսկ զգացողն էլ չի կարող այդ ապրել՝ կմենի այդ սարսափն զգալով...

...Դարեր պիտի գան ու գնան, և խոսքի հանճարները չպիտի կարողանան հայկական սարսափների, տառապանքի, մարտիրոսության անհունը սպառել...

Սա պիտի նստիմ Մասիսի ստորոտին, գլխիս մոխիր ցաննձ և լամ, լա՛մ՝ նզովելով ամբողջ աշխարհը՝ բարեկամ ու թշնամի, և ամեն հայի սրտում վառելով վրեժի օձ ու թույն:

Դարերի մեջ, ամբողջ հազար տարի և ավելի երկար, արաբական արշավներից սկսած, Հայաստանը շատ փուլովաններ

է ունենցել, բայց նա այսպէս կամ այնպէս կանգուն էր, սակայն այս վերջինը զլիւսեց ու անցաւ, անգամ Լենկ-Քեմալի, Շահ-Աբասի և Համիդի ավերումները շնչին, աննշան համեմատութիւններ են ներկայացնում այս վերջին, բոլոր ազգերի, բոլոր դարերում եղած սարսափներից զերազանց աղետի հանդեպ... Աշխարհի մեջ ամենատարածակիւն, ամենահազարէր, ամենատահելին ու ամենամեծը բաժին ընկաւ հային, նա շունի իր վիճակակիցը. այդ սարսափներից այն կողմն էլ սարսափ չկա. դա սահմանն է...

ԲԱՆԱՍԵՐ— Ժամանակն անցնում է, 1918 թիւն է արդեն, Եղեռնը շարունակվում է (Մեծ եղեռնը 1915-ը չէ միայն, այլ 1915—1922 թվերը, երիտթուրքերից հետո՝ Մուստաֆա Քեմալի ժամանակ): Անդորր ու անվրդով ժնեում նստած, կյանքի և մահվան սահմանագծում տառապող բանաստեղծը դա լավ հասկանում էր:

ԻՍԱՀԱԿԻՅԱՆ— Այս սարսափելի օրերում, երբ հայ ամբողջ ազգի լինել-չլինելու առջին ենք կանգնած՝ քնելն է իմ երջանկութիւնը. միայն առանց երազի քունը, քանի որ երազներս նույն անհույս իրականութիւնն այլանդակ շարունակութիւնն են, իսկ երբ առանց երազի քնում եմ, երբ աչքերս բանում եմ՝ սարսափելի իրականութիւններ պաշարում է ինձ սուսերամերկ, և սիրտս հալշում է ու մարում, ուզում եմ նորից քնել, քնել և շղարթնել երբեք:

Վրաս հողի չկա, հազիվ եմ ապրում ու շարժվում: Կյանքիս մեջ այսպէս դժբախտ չեմ եղած. հազիվ՝ ասեղի ծակից մի նվազ հույս է շողում...

Երբ կարդում եմ քերթերը՝ սարսափից աչքերս ծածկում եմ, ասես թե՝ մեռնում եմ...

...Հայութիւնը աներեակայելի վտանգի մեջ է հիմա. եթե անկորուստ դուրս պրծնի այս մահամերձ վիճակից, խոսք եմ տալիս ինձ՝ կյանքիս մեջ երբեք ախ չքաշել, շտխրել, շուսահատվել, այլ ուրախ ու զվարթ, հարբած՝ ողևորված ապրել ու գործել...

ԲԱՆԱՍԵՐ— Անցնում է ևս մի տարի, 1919-նն է: Իսահակ-յանի խոշտանգված միտքը թզթին է հանձնում -ցասմանակի խոսքեր, մեկն այն ահեղաշունչ խոսքերից, որ երբևէ գրվել է Եղեռնի մասին:

**ԻՍԱՀԱԿՅԱՆ** — Երեխայական, կանացի, սովորական բան է լացը, լացով չի ասվի մեր կակիժը. օռնանք պիտի մենք, խենթազին, մոլաբար, խուազին պիտի օռնանք, պիտի օռնանք երկինքն ի վեր, պիտի մեր օռնոցը փոթորիկ լինի, մի ահեղ քամի, սաստկաշունչ հողմ, որ մտնի ամեն երկիր, ամեն տուն ու ապարանք՝ պիտի հանգչեն բոլոր ճրագներն ու լույսերը, և խափարը սփռն աշխարհքի վրա, պիտի փռչի դարձնե ամեն ինչ, և փռշով ծածկե մարդկային կեղծ խիղճը, արդարությունը, բոլորի քունը պիտի կտրե, բոլորի կրծքերին պիտի նստի ահավոր մղձավանջի պես և հույսը մեռցնեն բոլորի հոգու մեջ. ավելին, մեր խենթությունը, անհույս խենթությունը պիտի մարն աստղերն ու արևները, պիտի իրար շաղախե նրանց, և փեղեղերքի խորքերից պիտի դռնի, զուրա հանն փակված ու թաքնված աստծուն, և նրա օծիքից բռնած պիտի ջախջախենք նրա զլուխը մեր ավերակների սալաքարերի վրա...

**ԲԱՆԱԿՆԵՐ** — Ով-ով, բայց Խաչահյանն ամենից լավ դիտեր համաշխարհային քաղաքականության խաղաղած հայակործան դերը կատարվող ոճրագործության մեջ:

**ԻՍԱՀԱԿՅԱՆ** — Հայ ժողովրդի անանուն տառապանքը, եթե զրեկու լինի մարդը, պիտի միլիոն հատոր լեցնե, որովհետև միլիոն զոհի զարհուրելի պատմությունն է, որ պիտի պատմվի, ամեն մի զոհի տառապանքները մի հատոր կոչարունակեն, սակայն, մի քանի խոսքով պատմելու որ լինենք, այսպես կլինի.

Անտանտր արդարության, ազատության, փոքր ազգերի ազատագրման՝ բազմիցս մեծագործող խոստումներով զարդարեց իրան, հայ ժողովուրդը, հավատալով այդ խոստումներին, կռիվ մտավ և ջարդվեց ու կոտորվեց. Անտանտր օգտագործեց այդ ջարդերը իր պատերազմական շահախնդիր նպատակների համար, աշխարհի համակրությունը գրավելու համար, խորամանկ կերպով իր սրտի դավերը իր ստոր զեմքի ժպիտներով ծածկելով: Եկավ դինադադարը. առաջին դավաճանությունը ծայրը ցույց տվեց. Հայաստանը չգրավեցին, դատարկել չտվին, ապա գնացին Կովկաս, գինեցին թաթարներին՝ նավթի համար՝ մեր զեմ, թյուրքերին շոյեցին... Թույլ տվեցին Կիլիկիայի և Հայաստանի հանրապետության ջարդերը...

Ահա՛ այս ահավոր դավաճանությունը, պատմության մեջ

չտեսնված, պատմությունն անշ անունը չունեցող մի մեծ ոճրի հանդեպ:

Մո՛ւտ են մարդկայնություն, խիղճ, արգարություն, քրիստոնեություն խոսքերը, Եվրոպան գաղան է և ավազակ, արյունարբու և ոճրագործ. խեղճել բուլսրին, բուլսրին... և ինքնասպան լինել, ջնջվել այս լիրբ աշխարհից...

ԲԱՆԱՍԵՐ— Եկավ 1921-ը: Իսահակյանը հիմա էլ Վենետիկումն է (այստեղ ապրելն ավելի դյուրին էր դրամադուրկ աստանդակների համար): Սոցսատուի 21-ին, Վենետիկամերձ Աղոլոյում եղած ժամանակ բանաստեղծին այցելում է Կրիկիայից եկած մի մարդ...

ԻՍԱՀԱԿՅԱՆ—...Քեշիշյանը, որ կուսակցական մարդ չէ, վաճառական է, հետևյալն ասաց.— Քյուրքերը պատերազմի մեջ մտան հայությունը խաղաղ-սպուռ ջնջելու համար. միայն այդ նպատակի համար. չեզոք մնալինք-չմնալինք՝ պիտի ջարդելն:

ԲԱՆԱՍԵՐ— Իսահակյանը հավատում է նրա ասածին (ճիշտ ասած, այսօրան տարիներ անց՝ ես նույնպես): Անցնում է էլի մի տարի, 1922-ն է, Մեծ եղեռնը մոտենում է ավարտակետին՝ ջնջելով ու բնաջնջելով այն ամենը, ինչ զեռ կարելի էր ժրելել: Եվ ամեն ինչ՝ Անտանտի հանցավոր աշքի առաջ:

ԻՍԱՀԱԿՅԱՆ— Որքան գրում եմ դաշնակից պետությունների դավաճանության մասին, նորեն չեմ հագենում:

Հայ ժողովրդի ահավոր վիճակը, իր փորձությունները, հուսալարությունները, լքվածությունը... Այս բոլորը մի անդամ էլ, ավելորդ մի անգամ էլ դալիս են ցույց տալու, որ աստված չկա, քրիստոնեություն չկա, մարդկայնություն, արգարություն չկա, այլ կա կոպիտ շահ... ավազակություն, սրիկայություն, գաղանություն, մարդակերություն, կեղծիք, նյութամոլություն և բոլոր մահացու մեղքերը...

ԲԱՆԱՍԵՐ— Եվ ինչպե՞ս բուղթը չի այրվել բանաստեղծի գրչի տակ:

Քողններ Մեծ եղեռնի մասին եղած անհամար տվյալներն ու նկարագրությունները, մեջբերում անենք ուչ ժամանակներում անդիակական պատմաբան Վ. Գոտլիբի գրած աշխատությունից, որ 1930-ին լույս է տեսել Մոսկվայում: Դիվանագիտական փաստաթղթերի սառն ուսումնասիրության հիման վրա

գրված այդ աշխատության մեջ, որն ունի «Գաղտնի գիմանա-  
դիսություն առաջին համաշխարհային պատերազմի ժամա-  
նակ» վերնագիրը, անգլիացի պատմաբանը գրել է, «Անտան-  
տին տված հակահարվածն ազատեց նրանց ձեռքերը, ովքեր  
ուզում էին յաթաղանն իջեցնել հայերի գլխին: Թուրքերը նա-  
խանձում էին այդ եռանդուն, կուլտուրական և տնտեսական  
իմաստով իրենցից առավել ուժեղ ժողովրդին: Նրանց զայ-  
րացնում էր հայերի կապը Պետրոգրադի և Փարիզի հետ, ինչ-  
պես նաև Կովկասում խառնակություն գեցելուց հրաժարվելը»:  
եվ ապա. «Սեփականազրկումն ու աքսորը» «Յշնամու հետ  
համագործակցելու» պատրվակով հայ ժողովրդին ռազմական  
գործողության վայրերից հեռացնելը գրկանքներն ու հիվան-  
դությունները, ճամփեզրերին ու ամայի վայրերում թափված  
գիակները, սպանությունները բանտերում, հարյուր հազարա-  
վոր մարդկանց ոչնչացումը ամբողջ երկրում,— այսպիսին է  
այս պատերազմի խելագարություններով լեցուն պատմության  
ամենամռայլ գլուխներից մեկը»:

Իսկ մեկ ուրիշ անգլիացի՝ լորդ Բրայսը, նույն այդ նդե-  
նի ժամանակներում ելույթներ է ունենում ու հոգվածներ է  
հրապարակում ի պաշտպանություն նահատակվող ժողովրդ-  
դի, խոստովանելով, թե՛ «Անգլիան մեղավոր է հայերի առաջ  
Բեռլինի դաշնագրի և Կիպրոսի պայմանագրի համար, որի  
շնորհիվ Թուրքիան շատ տարիներ կողոպտում և սպանում է  
հայերին»:

Ո՛չ այսօրինակ հայասիրական ելույթներն ու հոգված-  
ները, որ լույս էին տեսնում աշխարհի տարբեր հորիզոննե-  
րում, ո՛չ էլ պետությունների սաստող գիմումները շկարո-  
ղացան կանխել աղետը, զսպել թուրք կառավարիչներին,  
որոնք հայտարարում էին, թե Թուրքիան «պարտական չէ ոչ  
որի հաշիվ տալու և ազատ է իր գիտցած միջոցները գոր-  
ծի զենելու՝ համաձայն պետության շահերի»:

Այս տարիներին գրվեց հայոց բազմաշարձար պատմու-  
թյան՝ սե էջերով լեցուն պատմության ամենասե էջը:

Դեռ ամեն ինչ կորած չէ,— գրել է Արշակ Զոպանյանը  
1915-ի աշնանը, «լույսի նշույլ մը պիտի ծագի ու ար-  
յունվա հայության նոր զարագույի մը պիտի բացվի: Առաջ  
այդ հավատքին, ես կարող եմ խելագարվել»:

Նույն թվի զարեանը Կոմիտասն արգեն խելագարվել էր։ Թումանյանը երգեց իր «զարկված ու զրկված», «ողբի ու որբի» հայրենիքը՝ «չույսի ու հույսի» հայրենիքի բաղձանքով։

Իսահակյանը, նույն 1916-ին, ժնեում մնալու դատապարտված, մրմնջում էր. իմ հայ ժողովուրդ

...Կանգնել ես մենակ  
Վեհ քարերից մեջ,  
Սեզ լեռներից տակ՝  
Եվ որդեկորույս,  
Եվ ուղեմուտք...

«Ուղեմուտք»,— ինչպե՞ս այս մակդիրը բնորոշ էր նաև իրեն՝ այս վշտալի տաղերը գրող բանաստեղծին։

ԻՍԱՀԱԿՅԱՆ— Հայ ժողովրդի խելագարեցուցիչ վիճակը ինձ մեռցրեց։ Ուղղակի գրիչ չէ կարելի բռնել... Ուղում եմ հայրենիք գալ՝ փող չունեմ. ում գրեցի՝ պատասխան չըստացա։

ՐԱՆԱՍԵՐ— Սա 1916-ին գրած նամակ է։ Նույն թվականին է վերաբերում նրա մյուս նամակը ես, որից պարզվում է, որ նա առել էր եղբոր աղայի զոհվելու բոթը։

ԻՍԱՀԱԿՅԱՆ— Ծ'հ, ինչ ժամանակներ են ներկայումս, ավելի վատ, քան եղել է այս թշվառ երկրագնդի վրա, որի անունը այսուհետ «արշունագունդ» պիտի կոչել, ոչինչ ավելի... Իսկապես զրոյթունս վատ է, շատ վատ, ամեն կողմից հոգեպես ընկճված՝ հանգեպ այն ահավոր, անհուն կոորուստների, որոնք մեր ժողովրդի մայրը լացացրին, ուրիշ ի՞նչ հոգեբանություն կարելի է ունենալ, դրա վրա ավելացրու սիրածս եղբորորդու անմոռանալի կորուստը, որ բոլորովին երիտասարդ ընկալ էր դրումի պատերի տակ։

ՐԱՆԱՍԵՐ— Քսաներքածյա բանաստեղծ էր թուրքական հակառուս սպանված Իսահակ Իսահակյանը, ուստական բանակի սպա։ Նրա գրքույկը («Հեթիաթ արևի տակ», 1912) ժամանակին այնքան հույս էր նեշնչել, որ հեղինակի մահախոսականի մեջ զրկել էր մամուլում. «Կարելի է ասել կորցրինք մի երչրորդ Դուրյան»։ Իսահակի կորստյան վիշտը

հորեղբայրն արտահայտեց նույն 1916-ին գրած բանաստեղծական շարքում, որի քառատողերից մեկն է՝

Հոգսս մեք զարկար  
Գու մի այրող վերք-  
Ես քեզ մոռանալ  
Չեմ կարող հրեք:

Իրոք որ, նա այդ վիշտը տարազվ մինչև կյանքի վերջը՝  
Վշտերի տակ կծած պոետին հազվագեպ են այցելել բանաստեղծական ներշնչումներ, բայց եղել են և այդպիսի պահեր: Այդպիսի մի հազվագյուտ պահ, 1916-ի աշնանը, ծնվել է քնարական այս մեծ արժեքը, անճոխ ու պարզալուր, ինչպես թելագրում էր պոետի գեղագիտական դավանանքը.

Գետակի վրա  
Թեքվել է ուրին.  
Ու նայում է լուռ  
Վաղող շրեթին:

...Երազ—աշխարհում  
Ամեն բան հավնո  
Գալիս է, գնում  
Ու ցնդում անհետ:

Եվ զլուրը կախ՝  
Նա լաց է լինում.  
Ջրերը ուրախ՝  
Գալիս են, գնում...

Շատ տարիներ անց պոետը Ստեփան Զորյանին պատմել է սրա հղացման պատմությունը:

ԻՍԱՀԱԿՅԱՆ—...Շվեյցարիայում էի. դուռը գնալիս տեսա գետի ափին կռացած մի տխուր ուռի, որի կախ ընկած ճղների տակով հոսում էին գետի ջրերը... Ամբողջ պատկերը թվաց մարդկային կյանքի պես մի բան... Ու մինչև հասա տուն՝ բանաստեղծությունը պատրաստ էր, և ես արտասովում էի...

ԲԱՆԱՍԻՐ— Նույն շրջանին է վերաբերում պոետի մեկ

ուրիշ քնարական գլուխգործոցի ստեղծումը: Դա հսկակապիսի  
«Կտակն» է, որի վերջին տողերը հոռետեսական տրամադր-  
ությամբ ընդգծվում են նույնիսկ Բաճակյանի պոեզիայում:

Լո՛ւր, ազա՛ւ, ինձ կթաղես տե՛հայտ մի տեղ, տե՛հայտ,  
Ար չիմանան, մարդիկ չգան՝ շիրմիս քարը գոցանան:

Այդքան մռայլ, անթափանցելի մռայլ է եղել պոետի հա-  
յացքը մարդու և մարդկության վրա 1917-ի հոկտեմբերի  
1-ին, որ այս բանաստեղծությունը գրելու օրն է: Անձնա-  
կան, աղջային, համամարդկային վշտերը պոետի հոգին պա-  
րուրել էին խորին հիասթափությամբ:

Հաջորդ տարին մի նոր անփարատելի վիշտ բերեց բա-  
նաստեղծին՝ մոր մահը: 1918-ին նա առել է այդ գույժը և  
թղթին հանձնել հոգու անհուն տրամությունը:

...Մեռել ես, լքեա... Մածկել է հաճես  
Անհուն խավարը գե՛մքդ թախմատուշ:  
Ու հոգ ես դառնում... Ավա՛ղ, աշուհհո  
Փեղ չեմ տեսնելու, մայրի՛կ ի՞մ քերուշ...

Անձնական մեծ վշտեր, որ, ինչպես գրել է բանաստեղծը  
նամակներից մեկում, սուղվել են առավել մեծ վշտի՝ հա-  
մամոզողության մեծ կրելու իր վշտերը և կարգալու, թե իր սրգ-  
վոր մոզովրդին համակրանքի ու կարեկցության ինչ խոսքեր  
են աւելում աշխարհի տարբեր հորիզոններում:

Թե ինչպես 1916-ի հունվարի 14-ին ռալիստացում կո-  
մունիստ Կարլ Լիբկնիստը՝ գերմանական պառլամենտի ան-  
դամներից միակը, որ դատապարտել է կառավարությունը,  
երա նրանին շարտել գործված ոճիրի ամբողջ ճշմարտու-  
թյունը, «Թուրքական կառավարությունը սարքեց հայկական  
զարհուրելի կոտորածները: Ամբողջ աշխարհն այդ զիտե և  
ամբողջ աշխարհն այդ ռեալգործության համար հանցավոր  
է համարում Գերմանիային: Ուրիշ կերպ բացատրել հայկա-  
կան կոտորածները անկարելի է, քանի որ Թուրքիան կառա-  
վարում են, իբրև միահեծան տերեր, գերմանական սպանե-  
րը: Միայն Գերմանիան այդ մասին տեղյակ չէ, որովհետև

կատարվարությունը ծածկում է, իսկ մամուլը կատարելապես ճնշված և ստրկացված է»:

Քե ինչպես Փարիզում, Սորբոնի համալսարանում, հայասիրական հանգես է կաշացել, ուր կրակոտ ճառեր են խոսել սենատի նախագահ Դեշանելը, նշանավոր գրող Անատոլ Ֆրանսը և ուրիշներ:

Քե ինչպես երախտավոր Արշակ Չոպանյանը Փարիզում, 1918-ին լույս է բնծայել հայ պոեզիայի ֆրանսերեն ժողովածուի առաջին հատորը և այդ առիթով ֆրանսիական հայտների գրողներն ու գիտնականները հիացմունքի խոսքեր են տպագրել նահատակ ժողովրդի հոգևոր հարստության մասին:

Քե ինչպես Իտալիայում լույս է տեսել Կոստան Զարյանի պոեմի քարգմանությունը իտալական հայտնի նկարիչների պատկերազարդմամբ, իբրև «սիրո, հավատի և հույսի մի նշան ցրխատեյա թշվառ ազգին, որ հեծում է դաժան շղթաների մեջ»:

Ամենամեծ բարոյական պաշտպանությունը, իհարկե, ուսական մտավորականությունը պետք է ցույց տաւր Պետրոգրադում, մայիսին լույս տեսավ «Հայ գրականության ժողովածուն» Մաքսիմ Գորկու խմբագրությամբ:

Շատ ավելի մեծ արձագանք գտավ Մոսկվայում լույս տեսած «Поэзия Армении» ծանրակշիռ հատորը: Վալերի Բրյուսովը, որ զիտավորել էր դրա ստեղծման գործը, խմբագրել էր դիրքը, գրել առաջաբանը՝ հայ բաղմադարյան պոեզիայի հմտալից բնութագրումն ու պնծացումը, եկել էր Կովկաս և Բաքվում, Թիֆլիսում ու Երևանում դասախոսություններ կարդացել հայ պոեզիայի մասին: Դրանք ունեցան անօրինակ հաջողություն: Թումանյանը ուս գրողին ասել է ներշնչված խոսքեր. «էս օրերին, երբ մեր ազգային ազնտի տակ ճնշված, զգում ենք մեզ ֆիզիկապես անզոր ու տկար, էս օրերին հեռու հյուսիսից մեզ մոտ է դալիս ուս հուշակավոր բանաստեղծը՝ Վալերի Բրյուսովը և խոսում է մեր բարոյական-հոգեկան ուժի ու մեծության մասին — «Հայոց բանաստեղծության մասին»:

...էս բարձր ու զեզեցիկ գործի համար Հայոց Գրողների Ընկերության անունից հայտնում եմ Ձեզ մեր լիասիրտ շնորհակալությունը...»: Գիրքը շարժել է Թումանյանի հիաց-

մունքը. «Եվ ի՞նչ խնամքով կազմած ու ճաշակով ապած գիրք է, ինչքան շքեղ իր պարզության մեջ: Դրա համար էլ ամեն մի ձեռքն առնող,— հայ լինի թե օտար,— համակվում է սիրով ու հարգանքով դեպի մեր շատ թշնամի ու քիչ քաբեկամ տեսած ցեղը»:

Իսահակյանի պոեզիան թերևս ամենից լավ էր ներկայացել այդ հասարակության մեջ չպիտի դարձանալ, քանի որ «Արուշա Մահարին» ապագրվել էր Բրյուսովի թարգմանությանը, բանաստեղծություններից մի քանիսը՝ Ալեքսանդր Բլոկի, որ իր նամակներից մեկում գրել էր. «Զգուշանալ թարգմանությունն ինչպես է օտացվել, բայց Իսահակյանն առաջնակարգ պոետ է. այդպիսի թարմ ու անմիջական տաղանդ հիմա դուցե և չկա բովանդակ նվիրպայում»:

Իսահակյանը շունեցավ թանկագին առիթ անձամբ հայտնելու իր նրախառնակությունը ուստ արվեստակիցներին: Մոսկվայաբնակ ընկերոջը՝ արձակագիր Կարեն Միքայելյանին, նա գրել է ժնկից:

ԻՍԱՀԱԿՅԱՆ— Ամսից ավելի է, որ ստացել եմ «Поэзия Армении»-ն, հույակապ գործ է և հայակապ շանք, նմանը չունեցած, արդեն նամակ գրել եմ Մոսկվայի կոմիտեին շնորհակալություններս հայտնելով... Խորին շնորհակալություններս հայտնելով պ. Բրյուսովին, ասա, որ նա հայ ժողովրդի անկեղծ ու մեծ բարեկամներից մեկն է:

ԲԱՆԱՍԵՐ— Շատ տարիներ անց, արդեն 1949-ին, Վարպեաը մի ներշնչված խոսք գրեց Բրյուսովի հիշատակին:

ԻՍԱՀԱԿՅԱՆ— Նա եկավ ցույց տալու Թուսաստանին և «քաղաքակիրթ» կոչված նվիրպային, թե բարբարոս թուրքերը ի՞նչ անողղելի, ի՞նչ սարսափելի ոճիք են գործում կոտորելով մի հին, դասական ժողովուրդ, որ կուլտուրական գեր է կատարել աշխարհում և ընդունակ է կատարելու:

ԲԱՆԱՍԵՐ— Ալեքսանդր Բլոկի մասին նա հոգված չի գրել, բայց իր գրույցներին մեկում ասել է այսպիսի խոսքեր:

ԻՍԱՀԱԿՅԱՆ— Պատահեց այնպես, որ Բլոկը ինձ ճանաչեց ավելի ուշ, քան ես իմացա նրա մասին: Վաղերի Բրյուսովի շնորհով, 1915 թվականին (այս ժամանակ ես վտարանդի էի), նա ծանոթացավ իմ բանաստեղծություններին, թարգմանեց մի քանիսը, և, ավելին, ինչպես ես հետագա-

յում իմացա, իմ մտանքն բարձր խոսքեր էր ասել, որոնք ուսման արդյունքներն էր արձանագիշտում ինձ համար ծառայել են և կարծեմ մինչև այժմ էլ ծառայում են որպես յուրօրինակ մի «դիպլոմ»...

ԲԱՆԱՍԵՐ— Ի դեպ, Ալ. Բլոկի թարգմանությունների շնորհիվ է, որ Բասնակյանը մուտք գործեց ուսանական արվեստի Շատ տարիներ անց Մարիետա Շահինյանը մտադրեց է. «Հայ ժողովուրդն Բասնակյանի բանաստեղծություններով երգել է իր սերը հայրենի երկրի նկատմամբ, իր ցավը, իր դժբախտությունը: Եվ նույնիսկ ուսը քննադատողն Բասնակյանին առաջին անգամ ծանոթացավ «Հայնային» արտահայտությամբ, երբ մեր դարի 10-ական թվականներին համերգասրահներում ալիք տվեց «Ռուսներ» լայնահուն և տրամալի մեղեդին:

Ամեն զիշեր իմ պարտեզում  
Լազյան առին, հեղ առին  
Վշտաստուր լաց է լինում,  
Լաց է լինում իմ ուրիշ  
Եվ սրբում է առաջատու  
Կույս արեղ նազելի  
Հուր ծամերով հեղ առնու  
Արցունքները բյուրեղի...

«Ռուսներ» թարգմանությունն արել էր Ալ. Բլոկը: Երաժշտությունը գրել էր Ս. Ռախմանինովը: Մարիետա Շահինյանն այն էլ է հիշել, թե մեծ երաժիշտն իրեն ինչ էր ասել այդ առիթով. «Ամենից գլուխն ինձ հաջողվեց Բասնակյանի «Ռուսներ» Զգրանում ում ծառայությունն էր այդ՝ թարգմանիչ Ալեքսանդր Բլոկի», թե հենց հայ պոետի, բայց «Ռուսներ» արտաստուր է մեղեդայնությամբ, մեղեդին դրված է արդեն իսկ բանաստեղծության մեջ, և ինձ մնում էր միայն երգել այդ մեղեդին... Այդպես կարողանում են գրել միայն ճշմարիտ ժողովրդական պոետները»:

Պոետներն ու հումանիստներն անում էին իրենց ազնիվ գործը, այն, ինչ կարող էին՝ պոեզիայի ու հումանիզմի ուրտներում: Բայց նրանց ձեռքին չէին պետությունների քաղաքականության լծակները, այլ բուրժուական կառավարիչների ու դիվանագետների, որոնց համար դատարկ հնչյուններ

են համաշխարհային սպանդի մեջ նետված ժողովուրդներին շահերը: Բայց, ինչպես ցույց տվեց մոտիկ ապագան, ժողովուրդների համերկությունն ուներ իր սահմանը...

Թավալվում էր պատմության անիվը դահավեժ թափով, ու թվում էր ուշինչ չէր կարող ժպիտ պարզեկ ժնեում ապաստանած մեր պոետին: Եվ հանկարծ՝ անդուսպ ուրախություն: Պատճառը 1917-ի փետրվարյան հեղափոխությունն էր, որ խորտակեց ռոմանովյան 300-ամյա կայսրությունը: Ցարական իշխանության տապալումը հրեմանքով լցրեց հույսերի կարոտ բանաստեղծի լքված հոգին: Եվ «Հիշատակարանում» հայտնեվեցին, վերջապես, ուրախալի տեղեր:

**ԻՍԱՀԱԿՅԱՆ**— Ռուսական այս հրաշափառ հեղափոխության սկզբից, մարտի 16-ից մինչև աշտո 16-ը, ես ներքնապես համոզված եմ, որ ամեն բան աջող պիտի գնա, կոտոր-հեղափոխություն, ռեակցիա չի գալու: Հակասական, վրդովեցուցիչ լուրերը վախեցնող չեն, հասկանալի են ներկա հուզված մոմենտում. օվկիանոսը հուզվել է, մի օրվա մեջ չի խաղաղվի:

Հայաստանն ազատվեց, այսպես կամ այնպես, այլևս կանկած չկա, վե՛րջ հայ մարտիրոսություն:

**ԲԱՆԱՍԵՆ**— Կամեցավ իր հրեմանքին հաղորդակից անել ընկերոջը:

**ԻՍԱՀԱԿՅԱՆ**— Այս մեծ, անսահման ուրախության համար փոքր է սիրտս, դիտե՛ս, սիրելիս, թե վշտից, հոգսերից, անարցունք լացից սիրտս որքան էր նեղվել, շորացել, և վերջապես մեծ Ռուսաստանի մեծ ազատության մեծ ուրախությունը... Համբուրում եմ քեզ, գրկում եմ բոլորին—բոլոր լավ մարդկանց և զոչում,— կեցցե՛ն Ռուսաստանը, կեցցե՛ն՝ ռուս մարդը...

**ԲԱՆԱՍԵՆ**— Ընդհանուր Ռուսականի «Հակալի ազատությունը» հոգվածում, որ ավարտվում է այսպես. «Այժմ Ռուսաստանի ամեն մի քաղաքացի միայն մի հոգս պիտի ունենա. ամուր բռնի, իր ուժերի ներածին չափ նեցուկ դառնա ռուսական նոր ոտքի կանգնած հսկային, որ նա հաստատուն կանգնի»:

Էս է պահանջում ինչպես ընդհանուրի, էնպես էլ ամեն մի անհատի շահն ու փրկությունը:

Բայց Թումանյանը «Հայրենիքի հետ» էր, պատմական հեղաշրջումը կատարած երկրում, զարգացող ղեպերի ակա-նատեան ու մասնակիցը, մինչդեռ Իսահակյանը մնացել էր հեռվում: Պատերազմական խառն իրադրության անստույգ տվյալներով էր միայն, որ նա կարող էր խմանալ, թե ինչպես էր՝

1917-ի հոկտեմբերի 25-ին կատարվեց Հոկտեմբերյան սո-ցիալիստական մեծ հեղափոխությունը, որ ճակատադրական դեր խաղաց համայն մարզկուսյան կյանքում:

Սոցիալական արդարության կարոտ, սոցիալիստական դադափարներին վաղուց ի վեր համակիր բանաստեղծը 1923-ին պետք է «Հիշատակարան» հանձներ իր համոզումը. «Պարզ է, որ եթե բոլշևիկները չգրավեին Հայաստանը, թուր-քերը պիտի կոտորեին ռուսահայությունն էլ, և այդ կլինե՞ր ամբողջ Նվրոպայի և Ամերիկայի սրտովը: Սրա համար արժե, որ ոչ մի բոլշևիկի քիթ չարյունի»:

Իսկ առայժմ նրան մնում էր սիրտը բռնած լուրեր առնել Անդրկովկասում ծավալվող ղեպերից, թե ինչպես էր՝

1918-ին կազմակերպվել Անդրկովկասյան սեյմը, որ կա-լացրել էր հեղափոխական Ռուսաստանից անջատվելու դավա-ճանական վճիռը, որի հետևանքներն այնքան կործանարար եղան հայ ժողովրդի համար:

Ինչպես էր նույն 1918-ի մայիսին տեղի ունեցել Սարգսրա-պատի հերոսական ճակատամարտը, որտեղ հայ ժողովրդի ձեռք բերած հաղթանակը փրկեց Արևելյան Հայաստանը թուր-քական հրոսակների ոչնչացնող ներխուժումից:

Ինչպես էր նույն թվի մայիսի 28-ին հիմնադրվել Հայաս-տանի հանրապետությունը:

Ինչպես էր 1920-ի օգոստոսին կնքվել Սերի հայանպաստ դաշնագիրը, որ մնաց թղթի վրա՝ հայերի համար բացելով սին պատրանքների ևս մի խարուսիկ աղբյուր, բայց դրա փոխարեն ավելի ևս մոլեգին ու անդիշում դարձնելով քեմալական Թուր-քիային:

Ինչպես էր, 1920-ի աշնանը, սկսվել Քյազիմ Կարաբե-քիլի հրոսակների արշավանքը մեն-մենակ մնացած, հեղա-փոխական Ռուսաստանի միջամտությույն ու օգնությույնը

Հանցավոր կերպով մերժած Հայաստանի Հանճապետության վրա:

Ինչպես էր, 1920-ի նոյեմբերի 29-ին Հայաստանում հաստատվել խորհրդային իշխանություն՝ փրկության ելքը հասցենելով խարված ժողովրդի խոշտանղված նավը:

Ինչպես էր հայերին փաղաքշարար «մեր փոքր զաշնակիցը» կոչող Ֆրանսիան, իր «Հայասիրություն» հայտնի պրեմիեր-մինիստր Արիստիդ Բրիանի 1921-ին կնքած դաշնագրով, վաճառքի հանել նույն այդ ժողովրդին Կիլիկիայում՝ նույնիսկ արտագաղթն արգելելով. նույն այն Բրիանի, որ 1916-ին հայտարարել էր. «Երբ որ օրինական հատուցման ժամը կհասնի, զաշնակիցները կիրագործեն Հայաստանի ազգային բաղձանքները և կապահովեն նրա գոյությունը, առաջադիմությունը և խաղաղությունը»:

Կոտորածների ևս մի առիթ դարձած քաղաքական երկերեսանիություն ևս մի նմուշ, որի մասին Ֆրանսիական պատմության Պալատիսը գրեց. «Ֆրանսիան իշավ փոքրոգություն թերևս վերջին աստիճանին»: ԶԷ՝ որ սա նույն Ֆրանսիան էր, որի մամուլից պատերազմի տարիներին անպակաս էին հայասիրական հողվածները (զրանցից մեկում, որ 1916-ին գրել էր Ժան Ֆինոն «Լա ռեվյու» թերթում, կարելի էր կարդալ. «Հայերը տխուր իրավունք ունեն «մարտիրոս ժողովուրդ» ախտոսը պահանջելու. մի իրավունք, որ ոչ մի ուրիշ ազգ չունի», «Ֆրանսիան իրեն է վերապահում հայերին ուրիշներից ավելի սիրելու մենաշնորհը»:

Իսահակյանն այս ամենի վրդովմած ընթերցողն էր, գահավեժ դարձացող զեպեհրի կարկամած ակնառեսը: Եվ այս ժամանակից ի վեր ու մինչև վերջ Իսահակյանի բոլոր մտածմունքների այրող առանցքը դարձավ ազգային ճակատագրի ողբերգությունը: Նրա հետագա ստեղծագործությունից, մեծաթիվ նամակներից, իր մասին գրած հուշերից դատելով՝ կարծես ոչինչ այլևս չի զբաղեցրել բանաստեղծի միացը:

ԻՄԱՀԱԿՅԱՆ— Ի՞նչ ահավոր դառ տվին Ֆրանսիացիք մեզի հանդիսավոր խոստումներից հետո, զիտակից և անդիտակ զահարերումներից հետո նորից քաշել հայությունը յաթաղանի տակ՝ զիվային, ճիվաղային բան է... Բրիանը, այդ

11  
լիբր ավազակը, հոսեցնել ավելց մեր զինվորներին արյունը՝  
այժմ մեր այրիներին ու որբերին հանձնելու համար հավիտե-  
նական գերության:

Ո՛ր մնացին խոստումները.— մեր մարտիրոսացումով  
սրբազործեցին իրենց ավազակային դատը, և այժմ թքում  
են մեզ վրա:

Ի՞նչ է մնում մեզ,— եթե ոչ դարերով առել այդ միջադ-  
գային պոռնիկին, և ուխտել վրեժխնդիր լինել, և վնասել.  
Փոքր Ասիայում գեռ մենք կանք, և գեռ գիր ունինք... Բայց  
մի՞թե հիմիկ ու հիմիկ մի հայ կարիճ չկա, որ այդ պոռնիկ  
Բրիտանի դարչելի դիակը փռն Թալեաթի կողքին:

Միլիոնի արյունը եվրոպացու խղճի վրա է ընկած, և նրա  
հացի մեջ հայ մանուկի արյունը կա... Այլևս ոչ մի հավատ  
չունիմ մեր հարցի մասին, և բոլորովին անմիտ, վնասակար  
եմ գտնում Փարիզի երկու պատվիրակությունների դործու-  
նեությունը, Ամերիկա կամ Պապին դիմումները. մամուլին,—  
այդ բողբերի ոճմակին,— դիմումներն ու կոկորդիլոսի ար-  
ցունքները, հայասերների ճառերը, և ազգերի լիզայի կեղծա-  
վորությունը, հայերիս համար կոզակը ավելի իրական է, քան  
Վիլսոնը, Ջեյմս Բրայսը, և բոլորը...

ԲԱՆԱՄԵՐ— Այս մեջբերումն արված է 1921-ին գրված մի  
նամակից, որ հասցեագրված էր Արշակ Զուպանյանին, Հայ-  
կական դատի երզնյալ դործիչներից մեկին: Նրան, որ ավելի,  
քան որևէ մեկը, գրչով ու գործով անձնական կապերով չա-  
նացել էր Նվրդայի ու հատկապես Ֆրանսիայի (ուր ապրում  
էր ու գործում) հասարակական կարծիքը թեքել զեպի Հայ-  
կական դատը: Նրան, որ լավ ծանոթ էր Ֆրանսիական դրական  
ու պետական գործիչներին ու հենց «այդ պոռնիկ Բրիտանի»,  
իբ «հայասիրությամբ» հայտնի պրեմիեր մինիստրին, որ չվա-  
րանեց անպաշտպան մնացած նահատակվող ժողովրդի գոյու-  
թյան իրավունքը և արյունը զոհաբերել Ֆրանսիական դրա-  
մական շահերին...

«Հե՛ղ Զուպանյան»,— կասին արևմտահայերը:

Մենք՝ հետևորդներս, պարտավոր ենք ըմբռնել Զուպանյանի  
և Իսահակյանի, ինչպես Հայկական դատի բոլոր անձնվեր  
դործիչների հիասթափության ու վշտի առեւի շափերը: Եվ  
հասկանալ այն, ինչ նրանք հասկացան թանկ, վերին աստի-

հանել թանկ գնով, այն, որ քաղաքականության մեջ, խզելն ու բարոյականության ըմբռնումները դատարկ բաներ են:

Պարտավոր ենք հասկանալ սրանից 50—60 տարի առաջ ապրած հայ գործիչներին ու գրողներին, նաև Ավետիք Իսահակյանին պաշարած արտակիզեր ապրումները, ալլապես շենք ըմբռնի, թե ինչպես են այսքան անզուսպ նզովքի ու հայհոյանքի խոսքեր պոկվել քնարական քնքուշ բանաստեղծի շուրթերից:

Պարտավոր ենք իմանալ, թե ինչպիսի՞ մեծ կենսափորձի արդյունք էին նրա այն խոսքերը, թե «հայերիս համար կազակը ավելի իրական է» (ասել է թե՛ ռուս գիեմպորը), քան արևմուտքի բոլոր գործիչներն իրենց բոլոր հայասիրական խոսքերով:

Եվ էլ ավելի հստակ՝ «Ըստ իս, Հայաստանը և հայ ժողովուրդը կարող է միայն ապրել Թուսաստանի հետ, կամ բնավ չի կարող ապրել: Մնացածը հիմարությունից վեր մի բան է»: Այս խոսքն անվաճ է նույն 1921-ին Վենետիկից Բիֆլիս՝ Հովհաննես Թումանյանին առաքված նամակից:

Սա նույնքան նշանավոր նամակ է, որքան Թումանյանից եկած պատասխանը:

1921-ի դարնանից Իսահակյանը ժնեից տեղափոխվում է Վենետիկ: Պատճառը նա բացատրել է ավելի քան պարզ՝ այսպեղ կարող էր օգտվել Ս. Ղազարի միաբանության գրադարանից, կարող էր ավելի փոքր ծախսով ապրել («էժան երկիր» է) և ամենից գլխավորը՝ կարող էր աղաչին հայերեն կրթություն տալ Մուրադ-Թաֆայեյանի դպրոցում:

Բանաստեղծի նյութական միջոցները մեղմ ասած համեստ են եղել արտասահմանում ապրելիս: Դեռ 1917-ին Չոպանյանը նրան կարեկցանք է հայտնում այդ առիթով, իր «Անահիտ» հանգեսի կողմից ուղարկածը շնչին բան է համարում նրա «անվարձատրելի աշխատակցության» համեմատ: Խոստանում է խոսել այդ ժամանակ Փարիզում զբոսնելու Հովհաննես Մատենյանի՝ Շեքսպիրի թարգմանչի և Իրանի պետության աշքի ընկնող գիվանդանտի հետ. «Կհուսամ, որ զիմումս ապարդյուն լմնամ: Եթե մտաբերենք նաև, որ Վենետիկում զբաղեցրած իր բնակարանը, Սուրբ Մարկոսի հրապարակից ոչ հեռու, այնքան փոքր էր, որ չէր կա-

բող գիշերելու անդ տալ իրենց այլեւող հոշն մի հյուրի՝ կարելի է պատկերացնել, թե ինչպէս է ապրել բանաստեղծն իտալական այդ գողտրիկ քաղաքում: Բայց բնավ էլ անապահով ապրուստը չէր իր տատապանքի ակունքը, այլ հայրենիքի ողբերգությունը և հայրենիքի կարոտը: Ոչ թե սովորական կարոտ, այլ կարոտ որ կոչում են նստալոգիա՝ հայրենաբաղձություն, հայրենիքի տանջալի կարոտ:

Դեռ 1919-ի ամռանը Դեմիրճյանը զրել էր Իսահակյանին. «Իսկ ինչ վերաբերում է զաւուղ հարմարության՝ դու գիտես. գիտեմ կարոտած կլինես՝ բայց իմացիր մենք այստեղ ապրում ենք հույսի և հողաբքի օրեր—ամենավատը գուցե ապրումներից. մահեր են շորս կողմ, ատելություն, սպառնալիք, խղճի խայթ, հոգնաճություն և թանկություն:

Այնքան բան անցավ գլխներովս և այնքան բան կա ասելու, որ ոչինչ չեմ կարող ասել... Եվ եթե զաս՝ քեզ կգտնես քարե քաղաքների մեջ... Երանի՜ քեզ, որ այստեղ չէիր»:

Հիմա՝ 1921-ի հուլիսի 1-ին Իսահակյանն է գրել Թումանյանին:

ԻՍԱՀԱԿՅԱՆ— Եթե հարմար ժամանակ է, կանչի՛ր, ես կգամ, կվերադառնամ, իսկ եթե զեռ կսիւմ, ատելություն, թշնամություն կա, ես չեմ վերադառնա:

ԲԱՆԱՍԻՐ— Թումանյանը 1921-ի հոկտեմբերին պատասխան նամակ է գրում, իր վերջին նամակը կրասնր ընկերոջը: Ոչինչ չթաքցնող, սրտաբաց ու սրտալի՝ ճշմարիտ թումանյանական խոսք.

«Ատացել եմ նամակդ: Ասում ես՝ եթե հարմար ժամանակ է՝ կանչի՛ր, ես կգամ:

Հարմար ժամանակը՝ ես չգիտեմ դու որ ժամանակն ես ասում, բայց ասում եմ.

— Արի՛:

— Արի՛, Այժմ շան:

Ահա համար հարմար ժամանակ չեղավ ու գուցե լինի էլ, բայց արի:

Կդաս, կտեսնես մեր աշխարհքը ավերված, մեր ժողովուրդը կոտորված, կենդանի մնացածն էլ կոտորված, ջարդված, մեր հարազատների ու ընկերների շրջանները նստա-

ցած: Կտեսնես, թե աշխարհքի էս ծով վշտից ինչ ահագին բաժին է բնկել առանձնապես ինձ ու քեզ, բայց արի:

Ես գիտեմ, որ էդտեղ էլ քեզ համար հարմար բան չկա, ո՛չ տեղ, ո՛չ ժամանակ, ո՛չ շրջան, ո՛չ միջոց:

Վերջապես՝ երևի կարոտել էս մեր հոգ ու քրին, քո հարազատներին ու բնկերներին: Էդ ամենի հետ միասին քեզ պետք է ասեմ, որ մեր այժմյան կառավարությունը շատ ավելի լավն է՝ քան կարող ես երեակայել: Մանավանդ գրականությունն ու զեղարվեստը երբեք էսքան ուշադրության առարկա չեն եղած մեր աշխարհքում:

Մինչև իմ նամակի քեզ հասնելը դու արդեն իմացած կլինես, որ մի շարք գրողների ու զեղարվեստագետների կենսաթոշակ են նշանակել, իսկ շուտով կհրատարակվի և կլիմանա, որ տալիս են ամեն արտոնություն, ամեն հարմարություն ու հնարավորություն: Նրանց թվում կկարգաս և քո անունը: Քեզ համար խոսել ենք բոլոր կոմիտարների հետ, առանձնապես լուսավորության կոմիտարի և նախագահի, Մյասնիկյանի, որը քեզանից նամակ ուներ: Եվ ինձ հանձնարարել են, որ քեզ կանչեմ, որ դու կունենաս ամեն հեշտություն, ինչ որ իրենք կարող են տալ:

Թումանյանը գրել է այնուհետև, որ Երևանում հիմնվել է Հայաստանի օգնության կոմիտե և ինքն է նախագահը: Պետք է ամենուրեք, բոլոր զաղթօջախներում հիմնել նման կոմիտեներ, գրանք-սշատ կօգնեն մեր պծաված շրջանների հաշտությանն ու համերաշխ գործակցությանը: Եվ կուսակցական կոիվները կամեզմանան:

Լավ կլինի, որ դու էլ նպաստես էս գործին էդտեղ:

Երկրին ավերված է: Երաշտն էլ մյուս կողմից է շատ վերնասել: Բայց մեծ ջանք են թափում փրկելու և շինելու, և ամեն կերպ պետք է օգնենք:

Եվ վերջում՝ մտերիմ գրական կյանքի, Վերնատան կարոտը. «...կարոտով սպասում ենք ամենքս: Թերևս այժմ կազմենք մեր Վերնատունը մեր երկրում ու վերջին օրներս միասին անց կացնենք: Բոլորն այժմ կարող են լինել ու իրենց գործով գրառվեն: Եվ էս բոլոր թշվառությունների ու զրժվարությունների մեջ էս ահագին բան է»:

«Ահագին-բան»՝ սեփական-գործով գրառվելու... հնարավոր

բությունը: Ի՞նչ համեստ, մարդկային սովորական պահանջ, բայց մեծ երանություն՝ ժամանակի հայ գրողների համար, որին այնպես էլ նրանք արժանի չեղան:

«Կարոտով սպասում ենք ամենքս»,— Թումանյանն այնպես էլ զնաց սպասելով... Այս նամակը գրելուց մեկուկես տարի անց նա շկար աչլես: Իսկ հասցեատերը Թիֆլիսում եղավ դրանից երեքուկես տարի անց՝ 1926-ի սեպտեմբերին: ԻՍԱՀԱԿՅԱՆ— Հաղար կյանքով ապրող այդ հոյակապ մարդու փոխարեն տեսա մի անշուք հողակույտ և մի մեծ լռություն...

ԲԱՆԱՍԵՐ— Տերյանի մահվան բոթը 1920-ին էր առել:

ԻՍԱՀԱԿՅԱՆ—...մարտ ամսի մի ցուրտ, միգամած առավոտ, 1920 թվին, ժնեում կարգացի Կ. Պոլսի մի թերթի մեջ զարհուրելի բոթը... Օրենքուրդում երիտասարդ Վահան Տերյանը...

Սիրտս փղծկաց, և օրերով խորին տխրության մեջ տվաշտում էի ես:

ԲԱՆԱՍԵՐ— Դաժանորեն նոսրանում էր բանաստեղծի մեծ մտերիմների շրջապատը:

1921-ի դարնանից մինչև 1926-ի աշունը Իսահակյանն ապրել է Վենետիկում, մասամբ և Փարիզում: Ժներ լքելուց և Վենետիկում հաստատվելուց առաջ նա մի քանի ամիս եղել է Փարիզում: Այս օրերից նրա հիշողության մեջ մնացել է մի հուզիչ դրվագ՝ կապված հաշատուր Աբովյանի արձանի՝ Անդրեաս Տեր-Մարությանի կերտած զուլփոքորժոցի հետ, որ ձուլվել ու անտեր է մնացել Փարիզում:

ԻՍԱՀԱԿՅԱՆ— Լսեցինք, որ ձուլարանի տերը հայտնել է ինչ-որ հայերի, թե արձանի ձուլման ծախսերի հատուցումը լրիվ չի ստացել հանգուցյալ Տեր-Մարությանից, և եթե հայերն ուզում են ստանալ արձանը, պետք է վճարեն մնացած պարտքը, հակառակ դեպքում նա իրավունք ունի արձանը վերաձուլելու այլ նպատակների համար:

ԲԱՆԱՍԵՐ— Հավաքվել է դրամը կովկասահայ մի բժշկի նախաձեռնությամբ և փրկվել է նվիրական արժեքը, որ հետագայում, տարիներ անց, զրվեց այժմյան Նկարիչների տան հրապարակում, իսկ հետո, շփոտես ինչու, տեղափոխվեց Հրադդանի-Նաիր-Այստեղ արգեն, 1955-ին, Ավետիք Իս-

հակայանը զննեց արձանը ու լուսանկարվեց նրա մոտ մեր՝ «Սովետական արվեստ» ամսագրի աշխատակիցներին, ներկայությամբ:

Հետո էլ այդ բաղմաշարշար արձանը, զարձյալ շգիտես ինչու, Հրազդանի ափից տեղափոխվեց իր տուն-Սանգարա-նի առջևի հրապարակը: Ով գիտե, դուքն օրերից մի օր նա վերադառնա իր առաջին տեղը՝ Նկարիչների տան հրապարակը, որը, իմ մտապատկերում, անձկությամբ սպասում է իր բակական տիրոջը:

1955-ին բանաստեղծն արձանն ուշի ուշով զննեց վերջին անգամ, իսկ առաջին անգամ զննել էր 1920-ին, Փարիզում:

ԻՍԱՀԱԿՅԱՆ— Գնացիներ ծուլարան արձանը տեսնելու, անմոռանալի պահ էր. հավետ անմոռանալի... Արո՞վյանի ուշին, սիրտը, վերքն ու վիշտը մեծ տաղանդով ու զգացմունքով մարմնացած: Ոգեշնչված գործ: Գլխարկներս հանեցինք և խորին սիրով ու նրախաղաղությամբ ոգեկոչեցինք տաղանդավոր բանդակագործ Ա. Տեր-Մարությանին, որի անունը այլևս մնալու է հայ ժողովրդի սրտում:

ԲԱՆԱՍԵՐ— 1921-ի զարնանից, ինչպես ասացինք, Իսահակյանը զառնում է Վենետիկի բնակիչը: Երկար ժամանակով, ամբիջ քան հինգ տարի: Առաջին հայացքով, միամիտ, մակերեսային հայացքով՝ ի՞նչ կարող էր լինել ամբիջ լավ. տարել աշխարհիս շքեղագույն քաղաքներից մեկում, ունենալով նյութական ապահովություն, թեկուզև համեստ ապահովություն, ունենալով բնակարան Վենետիկի ջրանցքներից մեկի ափին, թեկուզև համեստ բնակարան: Բայց այդպես՝ առաջին, և մակերեսային հայացքով: Գուցեն իրոք այդ հայացքով էլ զատենինք բանաստեղծի կյանքի այս հինգ տարվա մասին, եթե չլինեին նրա մեծաթիվ նամակները, որոնք այդ կյանքի ողբերգական խորքը, ներքին ծալքերը բացում են արտասովոր անկեղծությամբ: Նամակներ, որ մարդկային անկեղծության վերին չափանիշների փաստաթղթեր են, հայրենիքի կարոտի մտածելի սահմաններին հասնելու վկայություններ: Նամակագրի մտքով իսկ չի անցել, որ զրանք օրերից մի օր պիտի հրապարակվեն և զառնան, ինչպես զառնում են այսօր, հայրենատիրության դասեր ու խրատներ՝ ի

տես դալիք սերունդներին Միանգամայն տարբեր մարդկանց, տարբեր առիթներով դրված նամակներ՝ և միշտ հույներ:

**ԻՍԱՀԱԿՅԱՆ**— Մենք էլ ապրում ենք, եթե ապրել կենանակն ողջ լինել և ձանձրանալ... Ա՛խ, երբ ոչխարի հայրենիք գառնանք, դոնե մի քանի օր անեն ենք ու մեռնենք: (1922, 22 մայիսի):

...լրացավ 11 տարին այն օրից, երբ հեռացա հայրենիքից, ուր թողի տուն ու երկիր, բնականորեն ու շրջան՝ լիքը, կյանքոտ, ուրախ, շեն... Ամեն տարեկիցին ես մի 10—15 օր շատ մոռալ հոգեկան շրջան եմ ապրում: (1922, 22 հուլիսի):

Ես մտրակում եմ ինձ, որ չկորչեմ, ջրի երեսը մնամ, մանավանդ չմեռնեմ, մինչև շտեմանեմ հայրենիքի ապագայով վիճակը: Ահավոր ուժ է հայրենիքի սեբը, ազգի սերը: (1922, 22 օգոստոսի):

...ամեն բան աշխիցս ընկած է. ոչ գրում եմ, ոչ կարգում: Վենետիկն էլ դարձել է ալբիս դրոշմ, շանձրանում եմ անսահման... Այլմայինք մի քանի օր ապրեինք, մեռնելիք մեր մանկությունն ինչպե՞ս արած անգեղություն... (1923, 23 մայիսի):

...պիտի անպատճառ իրական միջավայրով ներշնչվիմ— Հայաստանում. տեսնիմ ցորենի արտերը, մեր ոչխարները, աշրդները, գեղացիները, մեր մեծասքանչ լեզուն լսեմ, փոշոտ ուղիներով օտքով քայլեմ գյուղե գյուղ... Ինձ թվում է, հավատում եմ, թե Հայաստան գնալով կուժեղանամ, կլրցվիմ, կկրկնապատկվիմ:

...կարոտը խեղդում է ինձ, ոչ մի երկիր չի քաշում ինձ, ո՛չ Փարիզը, ո՛չ Բեռլինը, ո՛չ Գահիրեն, հասկանո՞ւմ ես այս: Ոչ մի երաժշտություն, ո՛չ բալետ, միայն մեր թաղը, շվին, գուռնան, մեր աղջիկների պարերը... (1926, 25 հունվարի):

**ԲԱՆԱՍԵՐ**— Նոստալգիա, հիվանդագին չափերի հասնող հայրենաբաղձություն, ու նաև՝ անապագայով վիճակ:

**ԻՍԱՀԱԿՅԱՆ**— Գրական վաստակ չկա, փող պարտք տվող չկա. և առհասարակ ոչ մի լույս, ոչ մի հույս չկա: Կարծեմ որ բարեկամս էլ մոտ ապագայում գաղտնիքներով է իր նպատակը. կմնամ ջրից հանած՝ դուրսը ձգած ձուկ: (1925, 25 մարտի):

**ԲԱՆԱՍԵՐ**— Ընկերական մտերիմ շրջապատի, գրական

միջառնայրի մարդ, որ այդ շքեղ քաղաքում իրեն զգում է ամայության մեջ:

ԻՍՍԼԱԿՅԱՆ—Վենետիկում շատ մենակ եմ, ընկեր չունեմ: Վարդապետները իրենց պատվելիական մտայնությամբ բնկեր չեն կարող լինել: (1924, 7 հունիսի):

Այս քաղաքը հետաքրքրական է՝ մի-երկու ամիս ապրե-լու համար, իսկ երկար մնացողի համար մարմարյա գերեզ-ման է, շքեղ գերեզման... Սրերով մարդու հետ չեմ խոսում, օրերով մոռալ եմ, լուռ, անքուն, չգայն... Աչքիս բան չի երե-վում: Զղվել եմ կարգալուց էլ, գրելուց էլ, ամեն բանից...

Ինձ ծոզովուրդ է պետք, ընկերներ, կենդանի շունչ և զույ, զուռնա-դափուլ... ձի նստել, կանաչ արտերի ավերով անց-նել, աղբյուրների գլուխը հացի նստել, հայրենի փոշու, վա-ղեմի ճանապարհներով գնալ, իջնել վանքերի պատերի տակ ու հանգչել, լսել աշուղի երգերը, պառավների զրույցները, տեսնել հովիվներին, հնձօրներին... (1925, 17 նոյեմբերի):

ԲԱՆԱՍՍԵՐ—Ինչպես առիթ ունեցա գրելու՝ մենք հաճախ, մեզ իրավացի կարծելով, կշտամբում ենք Խաչակյանին թիչ է գրել, շատ է ապրել ու քիչ է գրել: Կշտամբում ենք առանց ծանրութենի անելու, թե ինչ տարիներ են եղել ապրած տարիները, ինչ ծանր շրջաններ են եղել իր կյանքում, երբ անհնար է եղել գրիչ բռնել: Եվ իր ստեղծագործական հղա-ցումների տեղը բռնել են հոգեկան ճգնաժամի տառապանք-ները՝ «ողնորոթյուն չկա, ո՞ւմ համար եմ գրում», «օտարու-թյունը խեղդում է ինձ, ցամաքեցնում»:

Կշտամբանքով մտածելուց առաջ մենք պարտավոր ենք ըմբռնել մեր մեծ նախորդների ապրած կյանքի դրաման՝ պայմանավորված ոչ միայն համազգային ողբերգությամբ, այլև շատ ուրիշ, կենսապրական մեծ ու փոքր հանգամանք-ներով, այն իրողությամբ, որ մարդիկ ապրել են ոչ այնպես, ինչպես կուգենային, այլ այնպես, ինչպես վիճակվել է: Իսկ վիճակվել է ժամանակով, ճակատագրով պարտադրված կյանք, որ ստիպել է Թումանյանին հառաչելու.

Կյանքըս արի հրեպարակ, ոտքի կոխան ամենքի.

նոսրան, խոպան ու անպրաօղ, անցավ առանց արցունքի:

Ինչքան ծագիկ պիտի բուսներ, որ շքուածով էս հողին...  
Ի՞նչ պատասխան պիտի ես տամ հող ու ծագիկ տրվողին...

Նույնը չէ՞ր արդոյր Իսահակյանի հառաչանքը. որ հնչել է նրա սակավաթիվ քառյակներէից մեկում.

Ուրիշներէ քերն ընկած՝ գնացի,  
Հրամաններ կատարելով գնացի,  
Շատ ջանացի, որ արտիս հետ ընթանամ,  
Աշխարհի հետ թափալդոյր գնացի...

Նույն կյանքը՝ պարտադրված ստիպողական հանգամանքներով, «ուրիշներէ հրամաններով», սեփական «արտիս հետ ընթանալու» ոգրերգական անհնարինություններ, պարտադաներ, որ ամենից քիչ էին նպաստում ստեղծագործության, այն դործին, որ ամենից ավելի է պայմանավորված հոգեվիճակով, արամագրություններ:

Երկի ոչինչ այնքան խոսք ու գրույցի տոթի չի տվել Իսահակյանի կենդանության օրոք, որքան «Ուստա Կարո» վեպի պատմությունը՝ ե՞րբ պիտի ավարտվի, ինչո՞ւ չի ավարտվում, ե՞րբ է լույս աշխարհ բերելու Պատճառն այն էր նաև, որ վեպի հրապարակված հատվածներն արդեն իսկ վառ պատկերացում էին տալիս վերին աստիճանի ինքնատիպ մեծակտավ երկի մասին, մեծացնում հա մեծացնում ակնկալությունը: Իսկ վեպն այնպես էլ վերջնական կերպարանքի չնկավ: Դրա պատճառն այն չէր, ամենևին էլ այն չէր, որ հեղինակը ծուլացել է գրել, թեև այն էլ կա, որ առհասարակ նա ավելի շատ սիրել է կարգալ, քան գրել և խոստովանել է անկեղծորեն. «Օրերով կարգում եմ և շարաթներով գրել չեմ բռնում. այնքան լավ գրքեր կան, որ մարդ երբեմն մտածում է էլ բնավ չգրել, բայց կարելի չէ. գրողները հիվանդ մարդիկ են», և ապա. «...ևս այնքան էլ եռանդուն աշխատողներից չեմ, գիշեր ու ցերեկ իրար խառնող»: Եվ, այսուամենայնիվ, ոչ մի գործ այնքան ջանք չի խլել գրողից, այնքան տառապանք չի պատճառել նրան, որքան «Ուստա Կարոն»:

Իսահակյանի ստեղծագործական կյանքի մեծ առեղծվածը՝ Դեռ ե՞րբ, 1910-ին հայրենի Ղազարապատ գյուղից գրել է իր մտերմուհի Վիկտորյա Աբովյանին՝

**ԻՍՍԸԱԿՅԱՆ**— Սիրելիս, շա՛տ հոգնած եմ, ամբողջ օրը պարապում եմ. օրական 14 ժամ սեղանինս առաջն եմ, դրում եմ, խակի շեմ կարգում. սկսել եմ մի մեծ վեպ, որ հավատացնում եմ, հանճարեղ բան է. մինչև այժմ այդպես բան չեմ գրել, և ոչ մի մարդ չէ գրել. շատե՛ս պարծենկոտ Ավետիք.— ոչ—ճիշտն եմ ասում. «Աբուլ-Մահարին» նրա մի գլուխը շարժե... մինչև մայիսի վերջը կլինի բոլորովին պատրաստ...  
**ԲԱՆԱՍԵՐ**— Ապա երկու տարի անց՝ նույն հասցեով, այս անգամ Պոլսից:

**ԻՍՍԸԱԿՅԱՆ**— «Ուստա Կարոն» վերջացած է, բայց մի 2—3 ամսով աշխատանք է պետք, որ լեզուն ուղղեմ, հղկեմ, կռկեմ, երբ որ ձեռքս մի քիչ փող անցնի, որ մի քանի ամիս ապահով լինեմ, «Ուստա Կարոն» լույս աշխարհ կհանի:

**ԲԱՆԱՍԵՐ**— Հիմա 1922-ն է. անավարտ վեպի հեղինակն ապրում է Վենետիկում, ազատ ժամանակ՝ ինչքա՛ն կամենաւ էլի...

**ԻՍՍԸԱԿՅԱՆ**— Վեպս թեև ավարտած է, բայց մշակության շատ պետք կա:

Վեպս ունի մոտավորապես մեկ միլիոն տառ: Եթե գիրք անենք, մեծագիր էջով կրճաի մոտ 750—800 էջ, ավելի փոքր գիրքով՝ 1000 էջ, տառերն էլ կարծեմ ոչ մեծ:

**ԲԱՆԱՍԵՐ**— Մի տարի է անցնում, թվում է գործն ավելի մոտ պիտի լինի ավարտման, բայց...

**ԻՍՍԸԱԿՅԱՆ**—... Ես շա՛տ դժգոհ եմ ինձնից, և դրա համար էլ «Ուստա Կարոն» չի վերջանում:

**ԲԱՆԱՍԵՐ**— Մեկ ոգևորվում է իրենից հեռու գոհունակությամբ:

**ԻՍՍԸԱԿՅԱՆ**— Լավ վեպ է գուրս գալիս, շա՛տ ինքնատիպ, շա՛տ նոր:

Իմ տեսիլի մեջ նշանավոր վեպ է լինելու:

**ԲԱՆԱՍԵՐ**— Մեկ փորձում է բնութագրել վեպի ձևը:

**ԻՍՍԸԱԿՅԱՆ**— Ձեռ՝ վեպ է, վեպ չէ. օրագիր է, օրագիր չէ. հուշեր են, հուշեր չեն: Սակայն մի գործ է, որ պատմում է մեր կյանքը 1912 թվից սկսած մինչև մեր օրերը, մինչև այն օրը, երբ գիրքս կորոշեն լույս ընծայել:

**ԲԱՆԱՍԵՐ**— Մեկ էլ հուսահատվում անհունորեն:

**ԻՍՍԷՀԱԿՅԱՆ**— Այս վեպը ուղղակի պատիմ գարծավ գրականության էր, վերջացրել. նորից փոխում եմ...

**ԲԵՆԱՍՍԵՐ**— Հետո՞ նորից ոգևորված աշխատանք, որ կանոնում է հեղինակի քրոշոր ժամերը և ուշագործությունը: Եվ նորից դժգոհություն:

**ԻՍՍԷՀԱԿՅԱՆ**— Դժգոհ եմ նրա ոճից. մշակված չէ, ձանձրալի է... Նա չեղավ իրականացումը իմ մտածումների, իմ տեսիլի:

**ԲԵՆԱՍՍԵՐ**— Իսկ հաջորդ տարին՝ 1925-ին, վերստին ոգևորելված աշխատանք:

**ԻՍՍԷՀԱԿՅԱՆ**—...այդ սարսափելի «Ուստա Կարոն» բրոնում է մոտ 1700—2000 էջ, սակայն այդ 2000 էջը գրել եմ 5—6000 էջերի մեջ, ու այդ քառասյց ու ծովից կազմում եմ գլուխները, շնա խմանում, թե ինչ տաժանելի աշխատանք է, բայց ես ոգևորված եմ, որ անկարելի, մեծ, հզոր գործի եմ ձեռնարկել, մարդ պետք է հզոր գործեր կատարե, անպարտելի գծվարություններ հաղթե, պողվից (սխրագործություն) կատարե իր կյանքում...

Վեպիս մեջ հյուսված են գյուղ ու քաղաք, զաշնակցություն, ուսա հեղափոխություն, քրքահայ ժողովրդի շարժն ու փչացումը, տեղահանություն, բուշերիզմ և այլն, և այլն: Պատմական վեպ չէ, այլ հոգեբանական, փիլիսոփայական, և շատ տարրեր կան մեջը. էպոս, բոման, լիրիկա, հումոր... Դա օվկիանոս է, վեպ չէ:

Չարենցը հիացավ, զարմացավ. և դասեց հավասար Դոն-Քիշոթի, Վալենտի միտի (Պատերազմ և խաղաղություն), Հոմերոսի հետ: Միայն թե ապրիմ մի երեք տարի և հաց ունենամ:

**ԲԵՆԱՍՍԵՐ**— Այս տողերը գրելուց հետո Բուհակյանը, բարեխառարար, ապրեց ոչ թե երեք, այլ երեսուներկու տարի և, բարեբախտարար, հացի կարոտություն էլ չքաշեց, բայց, դժբախտարար, վեպն այնպես էլ ավարտված կերպարանք չստացավ:

Ի՞նչն է պատճառը, ամելի ճիշտ՝ պատճառները, որովհետեւ, իմ պատկերացմամբ, զրանք առնվազն երկուսն են:

Մեկը, հեղափոխականը, այն էր, որ «Ուստա Կարոյի» նման մեծ պատումի պլոմետային հանգույցները հավաքե-

յու, ի մի բերելու գործը ենթադրում էր վիպասանական փորձ, որ շուներ Բասհակյանը, սյուժետային-վիպական մը-տածողություն, որ նրա տաղանդի բնորոշ հատկանիշը չէր։ Այստեղից էլ այն զժվարությունը, որ ծառայել է առաջին ու վերջին անգամ վիպական երկ, այն էլ ինչպիսի՝ մեծակտավ երկ, ստեղծող հեղինակի համար։

Մյուս պատճառը, գաղափարականը, այն էր, որ վեպի վրա աշխատելու շատ տարիներին ընթացքում Բասհակյանը կանգ չառավ գրքի մեջ ընդգրկված կյանքի միևնույն մեկ-նարանություն վրա։ Վեպը, ինչպես երեսց իր նամակներից, ընդգրկում է ներկա դարի առաջին տասնամյակները հայ ժողովրդի կյանքում, նրա ազգային ճակատագիրը՝ իր ողբերգական տարուբերումներով, անկումներով ու վերելքներով, դրանց մեջ տարբեր կուսակցությունների ու շարժումների խաղաղամ գերով։ Իսկ դրանք այնքան էին բարդ ու հակասական, Բասհակյանի միտքն էլ՝ այնքան կենդանի, մի կետի վրա կանգ չառնող, որ նա զժվարանում էր ամբանալ մեկ-նարանության մի որևէ դիրքում։ Առավել էս, որ ժամանակ չէր անցել՝ երևույթները պատմականորեն բյուրեղացնելու համար, իսկ մոտիկ անցյալի զեպքերի մաստապնդման և մեկնաբանության մեջ, հենց «Ուստա Կարոյի» վրա աշխատելիս, Բասհակյանը հանդես էր բերում բնավ էլ ոչ միասնական վերաբերմունք։ Մոտիկ անցյալի, աչքի առաջ կատարված պատմական անցքերի ըմբռնման վրա տենդագին աշխատող նրա միտքը ծնում էր տարբեր, երբեմն հակադիր, պարզապես իրարամերձ մեկնություններ։ Դա պարզ երևում է նույն այն նամակներից, որոնց մեջ նա գրում է նաև «Ուստա Կարոյի» մտահղացման մասին։ Ազգային ճակատագրի ողբերգական հանգույցները տառապանքով մտաբերող նրա միտքը մեկ արդարացնում է ազգային շարժումները, մեկ՝ բացասում, մեկ կարեկից է ազգային գործիչների նկատմամբ, մեկ՝ անողոք, մեկ մի կողմն է բռնում, մեկ՝ մյուս։ Մի ոտքով հնի, մյուսով նորի մեջ գտնվող, մտքի մի ծայրով մոտիկ անցյալի մոխիրները փոքրորդ, մյուսով նորի հորիզոնները շոշափող, իր համար թանկագին շատ բան պարունակող հնից հրամարվել չկարողացող և նորի հետ հաշտվել չկարողացող մեծ անհատականության հակասական մտորումները, որ

այնքան անկեղծորեն արտացոլում են գտել իր նամակներում: Զեք ջյուրեղացի նրա վերաբերմունքը մտախի անցյալի ու ներկայի հանդեպ, և դա չէր կարող նպաստել վեպի ջյուրեղացմանը իր կյանքի վեներտիկյան շրջանում: «Ուստա Կարոյի» համար առավել ևս աննպաստ եղան հետագա տարիները, որ եկան քանդելու գրողի երբեմնի պատկերացումները և այնպես խառնելու վեպի կոնցեպցիայի խաղաթղթերը, որ նրա ավարտումը դարձավ այլևս անհնարին:

Ըստ երևույթին «Ուստա Կարոն» կա՛մ պետք է ավարտվեր Վենետիկում, կա՛մ բնավ չպիտի ավարտվեր:

Եղավ երկրորդը:

Եվ, այսուամենայնիվ, այն, ինչ մնացել է «անավարտ գլուխգործոցից», նույնիսկ այն, ինչ տպագրվել է արդեն ու ծանոթ է ընթերցողին, տալիս են իրավունք այդ գործն իսահակյանի ստեղծագործության սակավաթիվ մեծ շնչոտերից մեկը համարելու: Քնարական բանաստեղծությունից դուրս՝ «Աբու-Լալա Մահարին», «Ուստա Կարոն», «Հիշատակարանը» և հուշագրությունները:

Դրանց արվեստի ազգային ոճի որոնումների ճանապարհին Իսահակյանի մեծ ձեռքբերումներից մեկն է «Ուստա Կարոն»: Վեպի ծանոթ հատվածները՝ «Ուստա Կարոն և գլուխգործոցի վաճառականները», «Ուստա Կարոն Բաղրանի ուխտին», «Գլուխգործոցի կապիտան Ղազարը», «Կապիտան Ղազարի ամուսնական կյանքը» ի հայտ են բերում մի գրողի, որ իր ժողովրդի, Շիրակի դաշտավայրի ժողովրդի բնավորությունը գիտե կատարելապես և նույնպիսի կատարելությամբ գիտե վերստեղծել այդ բնավորությունը: Բայց դա սովորական, թեկուզև կատարյալ, իմացություն չէ և ոչ էլ սովորական, թեկուզև կատարյալ, վարպետություն: Դա ժողովրդական կյանքի, կենցաղի, բնավորության, հոգու և հոգեբանության այնպիսի իմացություն է, որ կարող էր ունենալ միայն ժողովրդի մարդը, ոչ թե ժողովրդի ծոցից ելած և հմուտ գրող դառած գրողը, այլ հենց ժողովրդի մարդը, իր գլուխգործոցի մեկը: Եվ վարպետությունն էլ ոչ թե կրթությամբ ձեռք բերած վարպետությունն է, այլ ժողովրդական արվեստագետի վարպետությունը, ասենք, խաչքարեր հրաշագործող արհեստավորի վարպետությունը, այն հրաշագործ քարաաշների, որոնցով

ալեքան հռչակված էր Գլխավորին: Ահա ինչու ազգային իմացության և ազգային բյուրեղացած վարպետության արգլուներ Քուստա Կարոն աչքն սովորական մի վեպ է հայկական գրադարանի ուրիշ վեպերի նման, այլ ժողովրդական ասքվեպ, նման այն վեպերին, որոնց թիվն այնքան էլ շատ չէ համաշխարհային գրականության մեջ՝ «Տիւ Ռւլենշպիդեկ», «Գոն Կիխոտ», «Կոլա Բրյունոն»...

«Քուստ Կարոն» արձակի մեջ արտահայտությունն է այն գեղագիտական դավանանքի, որին հավատարմադրված էր գրողն իր պոեզիայում: Դա ազգային ոճն ազգային գեղարվեստական ձևերի մեջ հայտնաբերող արվեստագետի դավանանք էր, որ շատ հստակ ձևակերպվել է 1926-ին գրած իր հրաշալի նամակներից մեկում:

ԻՍԱՀԱՅԱՆ— Տուրքանշուր ազգ պիտի ունենա իր ուրույն, ինքնահատուկ ոճը. միայն ոճ ունեցող ազգերն են ապրում, և շնն ջնջվում ո՛չ ջարդերով, ո՛չ հրով ու սրով. ոճը ազգի նկարագիրն է: Արարատի սավերի տակ ապրող հայ ժողովուրդը իր երգով ու իր ճարտարագիտությամբ պերճախոս կերպով ցույց է տալիս աշխարհին, որ ինքը գեմք ունի, իր ձեռք ունի, իր սեփական-անհատական ըմբռնումն ու առարկայացումը աշխարհին, նրա իրերի և նրա խորհուրդների:

Ի՞նչ կա ավելի բարձր, քան մի ազգի մշակույթը, նրա հոգու գրանորումը:

Ես աչքս բացել եմ աշխարհի մի աշխարհում, որ դուռ հայացի է, Շիրակը, ուր ամեն անկյունը հայկական էնիք ունի: Անին... և շուրջը հոժ, կենդանի հայություն, երգ, լեզու, պար, իմաստություն. մի երկիր, ուր ծամադրավայրն է եղած հայկական բուրդ հատվածների, խոյնցու կողքին երգելացին, մշեցու կողքին կարնեցին, վանեցին, նույնիսկ արարկիբցին: Ինչու պիտի խուսափեի ես քնաշխարհիկ ներշնչանքներից... Ես վաղ հասակից (18 տարեկան) նվիրյալ եմ և ել ուսանելու, և մի օր լեզավ, որ ոգևորվի Շատլ Բողերի՝ Երգչի լույսով, որ իրոք ժարություն ծաղիկներն էին: Ինձ համակել են այն բանաստեղծները, որ ազգային, ֆուկյորի տարրեր են ունեցել— Հ. Հայնե, Գյոթե, Ռոբերտ Բյոքս:

Երբեք էդդար Պո, երբեք Մայամե—ատում եմ նրանց: Գրում եք, թե ազգայն է բառամբերդ:

Նս դիտակցաբար եմ վարվել այս խնդրում. իմ կարծիքով քննարականի (լիբրկայի) լեզուն պիտի լինի շատ պարզ, անսեթևեթ, աղքատ, նախնական (լիբրկան արդեն գրականության սկիզբն է), միայն սրտի անպաճույճ լեզուն իմ նախատրյալը եղել է ժողովրդի երզը մեր և ուրիշ ազգերի. և իմ տեսությունը—ամենակատարյալ լիբրկան ժողովրդի երզն է. նրանից հետո եկածը—արհեստ է՝ արվեստ, տեխնիկա, ձեռնածություն: Ամենահաջող դեպքերում—ոխտերիկա, ճարտասանություն:

**ԲԱՆԱՍԵՐ**—Այս էր գեղագիտական դավանանքը (թեև, փակազգծում ասենք, Բսահակյանը գլուխգործոցներ է ստեղծել նաև խորապես անհաստական պոեզիայում, ինչպես նույն 1926-ին գրած «Թավեննայում» բանաստեղծությունը): «Ուստա կարուն» ևս այդ դավանանքի արդյունքն էր:

Կյանքի վենետիկյան շրջանում Բսահակյանը տրեում էր վեպի վրա, գրում սակավաթիվ բանաստեղծություններ և մեծաթիվ նամակներ, ապրում ժամանակի ընթացքով, ժամանակի բերած լուրերով ու հանդիպումներով: Ամենից ավելի՝ տխուր լուրերով: Վշտերից հոգնած սիրտն ավելի է մորմոքվում նորանոր կորուստներից: Գրում է, թե ինչ ծանր է ապրում Հովհաննես Քումանյանի կորուստը:

**ԻՍԱՀԱԿՅԱՆ**—...մի լուսավոր աստղ էր, հայության հանճարին դարերով պատիվ բերող. և սիրելի էր շատ, և նրա թողած տեղը միշտ կմնա բաց, միշտ պիտի մորմոքի մեր սրտերը... շատ բնացել եմ. առաջ Հովհաննեսի մահը ինձ բոլորովին պիտի խորտակեր...

Հովհաննեսի կորուստը քանի զնում ավելի խորն է ազդում վրաս, դա վշտի ամենեն զիշ տեսակն է:

**ԲԱՆԱՍԵՐ**—Վենետիկում է, 1924-ի հունվարի 23-ին հռչակավոր շուքակահար Յան Կուբելիկի համերգը լսելիս, առնում լենինի մահվան բոթը:

**ԻՍԱՀԱԿՅԱՆ**—...անվերջանալի ծափերը դրդացնում էին հոյակապ դահլիճը: Մի պահ անց, երբ Յան Կուբելիկը պիտի սկսեր հաջորդ նվագը, մի մարդ, ներս մտնելով բնից, դանդաղ հառաջացավ, կանգնեց լուռ մի վայրկյան և ապա, բառերը հատ-հատ արտաբերելով, ասաց.

«Հեռագիրը հայտնում է Մոսկվայից. լենինը մեռել է»:

Միայն այսքանը...

Մի շշուկ, մի սարսուռ անցավ բոլոր ներկաների մեջ. ապա իջավ մի ծանր, հանդիսավոր լուռություն...

Գլուխները հակվեցին կրծքների վրա—ամեն ոք խորհում էր, ամեն ոք խոսում էր իր սրտի հետ:

Այսքան ներշնչող է, խորազգու մեծագույն մարդու մահը: Այս բոլոր՝ ժամանակ, որ կուրելիկը կանգնած էր լուռ, մտամոհիկ և զլխահակ, վերցրեց ազնվոր, զրեց կախարչական ջութակի լարերի վրա,— բոլորի ուշադրությունը դարձավ դեպի նա,— քաշեց ազնվոր. բոլորս, բոլորս դարձացած, շահագնաց դարձացած լսեցինք որոշակի—լարերը հնչեցին մեծ գույժը՝ «Լենին է մորտո» (Լենինը մեռավ):

Տպավորությունն աննկարագրելի էր. ամբողջ Թատրոնը քարացել էր...

ՐԱՆԱՍԵՐ— Իսահակյանին վիճակված էր Վենետիկում լսել նաև Ալեքսանդր Մյասնիկյանի ողբերգական մահվան գույժը: Հայ նշանավոր կոմունիստներից թերևս ոչ մեկի հետ Իսահակյանը չունեւ այնպիսի հոգեկան մտերմություն, ինչպես Մյասնիկյանի, որ զրահանագետ էր նաև, և որի զրահան հրապուրանքներից էր Իսահակյանի ստեղծագործությունը: Մյասնիկյանն էր բանաստեղծին քանիցս հրավիրել հայրենիք՝ Թումանյանի միջոցով՝ համակով, Մարտիրոս Սարյանի և Չարենցի միջոցով, որ եկել էին Վենետիկ, Խորհրդային Հայաստանի հանրապետության նախագահի մեծագույն ծառայություններից մեկն էր հայ մտավորական մեծերին հայրենիք բերելը, անտարակուսելի է նրա դերը Թումանյանին, Սպենդիարյանին, Սարյանին և ուրիշների, Հայաստան հրավիրելու մեջ: Լսում է բանաստեղծը տրտմալի լուրը և աշպակն է դրում զոհված կոմունիստի զազափարական հակառակորդներից մեկին:

ԻՍԱՀԱԿՅԱՆ—Մյասնիկյանի մահը ինձ շատ ցավ պատճառեց. շատ պետքական էր մեր դժբախտ ժողովրդին. ես շատ ցավեցի իբրև հին ընկերի. լավ մարդ էր, չզայրանաս: Ինչդեռ վրան դեշ չիոսես: Նա ձեռքի տակով շատ բարիքներ է հասցրել հայրենի:

ՐԱՆԱՍԵՐ—Զգիտի կարծել, թե Իսահակյանի վենետիկյան օրերը համատարած վշտի ու տրտմության օրեր են եղել:

Նրան ուրախացրել են վերածնվող հայրենիքից եկող լուրերը, հանդիպումներն այնտեղից եկած հայտնի մարդկանց ու նրանց արվեստի հետ: Այդ լավ օրերից մի քանիսը, առիթի բերումով, մտաբերել է հետագայում:

ԻՍԱՀԱԿՅԱՆ—Վենետիկյան ռակեվառ աշնան մի երազական երեկո, նստել էի Սան Մարկոյի մարմարակերտ պիացիայի մի սրճարանում՝ հայացքս հառած ռակեզոմիդո ծովին ու դոժերի հեքիաթական պալատին՝ լսում էի բանդա Մունիշիպալեին (քաղաքային օրկեստրին): Որ նվագում էր պիացիայի վրա:

...Հանկարծ լսում եմ հարազատ, սրտազին ձայներ, հայրենիքից եկած: Սիրտս զարկում է ուժգին. ի՞նչ է սա, պատրա՞նք է, երա՞զ է, որտեղի՞ց է...

Իսկույն կանչում եմ սպասավորին, խնդրում եմ զնա իմանա, թե ի՞նչ պիես են նվագում: Գալիս հայտնում է՝ Սպենդիարով—էսթրեներ...

Այնուհետև շատ անգամ լսում էի նրան, մանավանդ Միլանում, ուր ամեն օր նվագում էին նրա գործերից:

ԲԱՆԱՍԵՐ—Նույն շրջանում էլի առիթ է ունեցել հայրենիքի կարոտն առնել հայրենաշունչ արվեստի միջոցով: Այս անգամ նկարչության, Մարտիրոս Սարյանի կտավների և հենց իրեն ծանոթանալու միջոցով: Վենետիկում ամեն տարի նկարչական միջազգային ցուցահանդես է բացվում, որ կոչվում է «Բիենալե»: Այս ցուցահանդեսի խորհրդային արվեստի բաժնում է պոետը տեսել Սարյանի կտավները:

ԻՍԱՀԱԿՅԱՆ—...անհամբեր, մի նկարից մյուսն էի շտապում, նայում հափշտակված, ինքնամոռաց, երջանկացած.— իմ աչքերի առջև կարոտած Հայաստանն է, բանաստեղծորեն իրականացած:

ԲԱՆԱՍԵՐ—Վենետիկում էլ պոետը ծանոթացել է նկարչի հետ: Հետագա տարիներին, արդեն Երևանում, նրանց միջև մտերմություն է հաստատվել, որ տեսել է մինչև վերջ, մինչև իրենց երկար ու ձիգ կյանքի վերջը: Իսկ առայժմ երևանաբնակ նկարիչը հեռավոր Վենետիկից ստանում է մտերիմ նամակներ, որոնց մեջ կարող էր կարդալ այսպիսի մտքեր:

ԻՍԱՀԱԿՅԱՆ—...շատ ուրախ եմ, որ Յրանսիան ճանաչեց սովետները. Ռուսիան կուժեղանա և թշնամիների աչքը կհա-

նե... ռուսական մի կարմիր ղինվորի ներկայությունը հայոց երկրի սահմանների վրա արժե 1000 Վիլսոն ու Ազգերի լիգա, 1000 Մակդոնալդ ու Հերիո. սա բացարձակ հշմարտություն է:

Ամեն բան լավ է գնում Հայաստանում (Յրեանից ևկած թերթերը կարդում եմ). միայն մի բան է դեշ—ուղղագրությունը, աշխատեցեք փոխել...

ԲԱՆԱՍԵՐ— Խոսքը վերաբերում է ուղղագրական այն «բարեփոխությանը», որ կատարվեց լուսավորության կոմիսար Պողոս Մակինցյանի ղրգմամբ, բանասեր Մանուկ Աբեղյանի առաջարկումներով և որի նորամուծությունները մեծ մասով վերացվեցին 1940-ին: Դարերով արբազորված ավազակական ուղղագրության բռնի, ղուր տեղն արված փոփոխությունը, մյուս անցանկալի հետևանքներից բացի, ղժվարացնում էր (և այսօր էլ ղժվարացնում է) հայրենիքում լույս տեսած ղրքերի ընթերցումը սփյուռքում, և ընդհակառակը: Իսահակյանը, ավելի մեծ եռանդով՝ Թումանյանը, և ուրիշ մտավորականներ, ղեմ էին ղրան:

1925-ը նշանավոր տարեթիվ է Իսահակյանի կյանքի պատմության, Յդիշե Զարենցի կյանքի պատմության, ուրեմն և՛ հայ ղրականության պատմության մեշ:

1925-ի մարտին, ղրեթե ամբողջ ամիսը, Իսահակյանն ու Զարենցը միասին են եղել Վենետիկում: Դա առաջին ծանոթությունն էր և մտերմության հաստատում միաժամանակ: Այդպես եղավ, որովհետե միմյանց հանդիպեցին անկեղծ, բաց բնավորություններ: Մեկն իր ներողամիտ, մյուսը՝ մոլեղին անկեղծությամբ, մեկն իր իմաստուն հայեցողական վերաբերմունքով, մյուսը՝ անղիշում համոզումներով: Ավագը՝ ավագին վայել և իր բնավորությանը հատուկ ներողամտությամբ, կրտսերը՝ երիտասարդին և իր բնավորությանը հատուկ անհանգուրժող վստահությանմբ: Մեկը պատմականորեն շարդարացված անցյալի, հնի կողմից, մյուսը՝ ապագայի, նորի, որի ձեռքին էր պատմության անիվը: Հակադիր ղիրքորոշումներ, հակադիր գեղադիտական սկզբունքներ, հակադիր բնավորություններ՝ կրակ և հող: Այս ամենի հետևանքով՝ մեկը հարձակվող կողմ, մյուսը՝ պաշտպանվող: Եվ, ընայած այս ամենին, բացառիկ մտերմություն, որովհետե երկուսն էլ անտարակուսելիորեն տաղանդավոր էին, անտարակուսե-

լիորեն հայրենասեր, երկուսն էլ ազգային ու համամարդկային նահատազրով ապրելու խելք, խմացություն, խիղճ ունեցող մարդիկ:

Ժամանակի հայ գրականության ամենաերևելի մարդկանց հանդիպումը շանցավ անհետ: Իսահակյանը նույն այդ ժամանակ գրեց իր նամակներից մեկում:

ԻՍԱՀԱԿՅԱՆ—...շատ դեշ, շար խոսքեր էի լսել, բայց ես նրան լավ տղա գտա. ընկերական սիրտ ունի, դարդիման է... մեծամիտ է, երես տված է և անհանդուրժող է. սակայն խեղճը շատ ջղայն է. հիվանդ տղա է ուղղակի. անշուշտ տարիներին մեծ այս ամենը կանցնի... տաղանդավոր է, բայց ֆուտուրիստական գրվածքները չկարողացա սիրել. երևի հին մարդ եմ և չեմ հասկանում:

ԲԱՆԱՍԵՐ— Չարենցը մեկ ամսից ավելի ապրել է Վենետիկում: Սրտագին մտերմություն է հաստատվել առաջին անգամ հանդիպող հակադիր աշխարհայացքների տեր հիսնամյա և քսանութամյա բանաստեղծների միջև: Հայ գրականության պատմության բախտավոր էջերից մեկը, որ այնքան քիչ են այդ պատմության մեջ:

Ամեն օր շրջել են այդ կախարդական, անկրկնելիորեն հրապուրիչ քաղաքում, քաղաք-թանգարանում, որ բնավ սխալ չի լինի նաև քաղաք-լաբիրինթոս կոչել. տողերին զրոգը, որ բախտ է ունեցել մի քանի օր ապրել այդ զարմանահրաշ քաղաքում, մոլորվել է նրա նեղլիկ փողոցներում ամեն քալափոխի և ոտքը ոտքի առաջ շէր կարող դնել առանց ուղեկցի. չեմ հասկանում, թե Չարենցն ի՞նչ պիտի աներ Վենետիկում առանց Իսահակյանի:

Քաղաքի հնարնակ Ավետիք Իսահակյանը, որին վենետիկցիները հարգանքով «Վենետիկի հայ պրոֆեսոր» են կոչել և որը հինգ մատի պես գիտեր այդ փոքր, բայց և դարերի ընթացքում քաղմածավալ դարձած քաղաքը, Չարենցի ուղեկիցն է եղել իր տասնհինգամյա որդու՝ Վիգենի հետ:

Այս Վիգենն էլ,— զարմանքի արժան ևս մի փաստ,— որ ամբողջ 64 տարի ոչ մի տող չէր գրել վենետիկյան այդ օրերի մասին, մեկ էլ՝ 1989-ին, օր ժերություն, հրապարակեց «Չարենցի հետ Վենետիկում» հուշագրությունը՝ ի հայտ բերելով և՛ շարադրելու ձիրք, և՛ այնպիսի հիշողություն, սսես երեկվա

ղեպքերի մասին է պատմում: Հայտնի դարձավ, որ դա հոր մասին գրած հուշերի մի մասն է միայն: Անսպասելի բարեբախտութիւն:

Ես ուզում եմ մի քանի թանկագին գրվագ մեջերել Վիգեն Բահակյանի հրապարակումից: Բանաստեղծները պատանի Վիգենի հետ միասին, այցելում են Սուրբ Ղազար: Խորին հուզմունքով մտնում են հայր Ղևոնդ Այիշանի, ապա և լորդ Բայրոնի խցերը: Վիգեն Բահակյանը մտաբերում է. «Չարենցը, տեսնելով այս բազմախորհուրդ վայրերը, դիմեց հորս. «Ավետիք, մենք էլ չդառնա՞նք սուրբ հայրեր, այստեղ կունենանք տուն, տեղ, սնունդ, հարուստ գրադարան և մի լավ տպարան մեր տրամադրութեան տակ: էլ ի՞նչ կարող ենք երազել: Խաղաղ կապրենք աշխարհից հեռու և մեր բանաստեղծութիւնները կհորինենք»: Հայրս պատասխանեց՝ «Լավ միտք է, ես մտածել եմ այդ ուղղութեամբ, և կարող է պատահել, որ սուրբ հայրերը ինձ ընդունեն իրենց միութեան մեջ, բայց քեզ՝ երբեք, դու վատ համբավ ունես, որպես անաստված»: Այս երկխոսութեանից հետո, որը շատ զվարճացրեց ներկաներին, հայրերը մեզ հրավիրեցին մասնակցելու իրենց կիրակնօրյա ճաշին»:

Մի գրվագ էլ: Բահակյանը որդու հետ այցելում է մրսածհիվանդացած Չարենցին: «Եվ հենց հյուրանոցի դիմացի ամառային սրճարանում, — մտաբերում է Բահակյանի որդին, — երկու հայ բանաստեղծներ վայելիցին մի-մի գավաթ բուրումնավետ թեյ՝ ֆրանսիական կոնյակի հաճելի հարևանութեամբ: Փիշ անց Չարենցի տրամադրութեւնը բացվեց: «Ավետիք, ի՞նչ լավ օր է այսօր, ի՞նչ հանգիստ եմ և ազատ, ախր, դու գիտե՞ս, սիրելի Ավո, որ ես երկար-երկար տարիներ ինձ մի օր գտնե այսպես հանգիստ ու անվրդով չեմ զգացել»:

Ինչքա՛ն, ինչքա՛ն արծանի է կարեկցանքի Չարենցն իր այս անմեղ խոստովանութեամբ:

Մի վերջին՝ երրորդ գրվագն էլ, որ կարդացի սարսուռով: Վենետիկում շրջող բանաստեղծներին հանդիպում են գնչուհիներ. «Նրանցից մեկը, ավելի համարձակը, մոտեցավ հորս և Չարենցին, առաջարկեց բախտ գուշակելու Վայրկյանի արագութեամբ վերցրեց հորս ձեռքը, պահանջեց, որ նա ամիս մեջ զնի մի հինգ լիրանոց արծաթե գրամ և սկսեց գուշակումը.

«Դուք սինյոր, կոմենդատորն<sup>1</sup>, պիտի ունենաք մի երկայն, անապարհորդություն՝ ղեպի հետև և ցուրտ-երկիր, ափսոսելով ձեզ լավ կրնդունեն, կլինեք ամենուր սիրված և հարգված»։ Երբ վերջրեց Չարենցի ձեռքը, որ նրա բախտն էլ գուշակի, գնչուհին հանկարծ վախեցած կանգ առավ, լեզուն կարծես պապանձվեց ու փախավ առանց հինգ լիբանոցը վերցնելու, որ Չարենցը ապշած ղեռ պահում էր իր բաց ափի մեջ։ Այս միջադեպը հորս և Չարենցին ավելի մտառող դարձրեց։

Արի և հավատ մի ընծայիր գուշակներին ու գուշակություններին։

Վենետիկյան օրերից շատ տարիներ անց, 1957-ին, իր մահվան տարին, Ավետիք Իսահակյանն այդ օրերը մտաբերել է վերստին և Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի...» բանաստեղծության մասին գրել է այսպես։

ԻՍԱՀԱԿՅԱՆ— Ինձ համար, առանց չափազանցության, բոլորովին օրյեկտիվ կերպով կասեմ, որ հայ առերոմ, հայ բառերով այդպիսի բանաստեղծություն չի գրված՝ հայրենասիրության տեսակետից։ Դա եզակի, անեախընթաց բան է։ Նույնիսկ կարելի է ասել, որ եվրոպական համաշխարհային գրականության հայրենասիրական մանրի բանաստեղծություններ, այդպիսի թափով, այդպիսի ընդարձակ խորքով գրված բան՝ գոնե ես չեմ հիշում։

ԲԱՆԱՍԵՐ— Այս զնահատությունից առաջ, որից բարձրը թերևս ոչ մի հայ գրող չի տվել մեկ ուրիշի գրվածքին, Իսահակյանն իրենց առաջին հանդիպումն է հիշել։

ԻՍԱՀԱԿՅԱՆ— Մենաց մի ամբողջ ամիս Վենետիկում, և մենք շատ ու շատ խորին կերպով բարեկամացանք, մաերմացանք։ Ամբողջ օրը միասին էինք։ Առավոտը կանուխ գալիս էր հյուրանոցից, մնում էր մինչև ուշ գիշեր մեր տանը։ Թափառում էինք հրաշալի Վենետիկում՝ ջրանցքներով, գոյղոյներով, գնում էինք ծովափ, հետո գնում էինք Միսթարյանների վանքը՝ Սուրբ Ղազար։

Խոսում էինք անվերջ ամեն հարցերի մասին՝ գիտության, գրականության, փիլիսոփայության, հեղափոխության, բոլոր

1- Հարգարժան պարոն (խաղերեն)։

այն մեծ խնդիրների, որ կան, և փոքր խնդիրներին նաև, որ հուզում են մարդկանց:

**ՐԱՆԱՍԻՐ**— Չարենցի տպավորությունը նույն օրերից մարմնացում գտավ զնդարվեստական ստեղծագործություններ, որ կոչվում է «էլեգիա, գրված Վենետիկում»: Յրկարաշունչ մի գրվածք, ուր կան Իսահակյանի բնավորությանը և այդ օրերի մտորումներին հար ու հարազատ պատկերումներ: Բե ինչպես Վենետիկում շրջում էր պոետը՝

Նրազային իր տարտամ քալով,  
Զլացած այն փարթամ փալով,  
Դեզնդություններ այն հեշտաթային,  
Նա օրորում էր երգով մի հին  
Իր սիրտը, սիրտը զեռ գալլալուզ,  
Այնպես արեց քերուշ բույրով  
Տոգում էր ծովը այնպե՛ս հեշտին,  
Իսկ նա հիվանդ էր հին մի վշտից,  
Հին ժողովրդի՝ իր սիրտը այրող...

Որքան էլ տարօրինակ է, բայց կարելի է հասկանալ, թե 27-ամյա Չարենցը, հեղափոխության և նոր օրերի խանդավառ երգիչը, ինչու է 50-ը զեռ չբույրած Իսահակյանին այնքան ծերացած և անուժ ներկայացնում. «Եվ թափառում էր նա, որը ու ծեր, քաղաքներում այդ բազմաժխտը...», «Անցածը հուշ էր շնաշխարհիկ նրա սրտին ծեր, գալիքը— սուտ...»: Այն էլ կարելի է հասկանալ, թե հին ավերակների վրա բարձրացող նոր կյանքի ժխտը ու շփոթող երգող, խնայարարված ամբողջների մեծագործությունը շեփոթող Չարենցին ինչու պիտի իրոնիկ, երբեմն ներողամիտ, երբեմն կծու հեղձական վերաբերմունք ունենար Իսահակյանի հովվերգական անուրջների հանդեպ.

Նա երանում էր Արփաշալց  
Եվ հին Գյումրին իր հեռավոր—  
Եվ այն, ինչ հին էր, հուշ էր, ա՛յ էր—  
Նրան թվում էր առավոտ:

Եվ հարազատ էր նրա հոգուն  
Միայն այդ հինը— Ծ՞, նա կուգե՛ր  
Հեռու տնակն իր վերադառնալ:

Գտնել առվակը կրկին այն հիւ,  
նոր իր երգերը կարկաշտին  
նրազային ու տխրաբարբառու

Կարելի է հասկանալ սկարմիր գալիքի բրոնզե թևերով թռու-  
չող» Չարենցին, երբ նա հեղնում է Իսահակյանի հոռետե-  
սությունը, անցյալի հուշերին փարած նրա ներաշխարհը՝  
Բայց հազիվ թե կարելի է հասկանալ, թե նա ինչու է Իսա-  
հակյանին ներկայացնում իբրև նոր կյանքի երգվյալ հակա-  
ռակորդ. «Մեր աշխատանքը գյուցազնական նրան թվում էր  
սին մի երազ...»: Եվ արդեն երիցս անարդար էր Չարենցը  
վննետիկյան էլեգիայի վերջին տողերում.

Իզուր ստին այդ, մթին գերի՝  
Դու տնիժում ես ուժը մեր նոր.—  
Դու աչք ուժի՞ց ես փախել ելեռ՝  
Եվ ո՞չ թե, ո՞չ թե արտաներից,  
Եվ դաս էթե դու երկիրը մեր  
Եվ նույնը, նույնը, նույնը մնա...—  
Մեր նոր արեւը չի գուրզարեւ  
Բա աչք երգերը մահամնա:

Քեզ կրնգունե այն աշխարհը հիւ,  
Որ զեռ ծամում է մամուռ ու ցեւ  
Բայց այդ արեւ ձմեռային  
Դժվար թե սիրտդ տաքացնե:  
Եվ կմնաս դու տխուր ու ծեփ,  
Աչք նույն ձմեւը քո ցուրտ հողու...  
Եվ հուսահատ ու որբ կլինես  
Ինչպե՞ս հեռու այս վննետիկում...

Շատ մամանակ պետք չեղավ պատմությանն այս ամե-  
նը հերքելու և Իսահակյանի ու իր պոեզիայի կենսունակու-  
թյունը նոր աշխարհում հաստատելու համար: Դեռ վննետի-  
կում նա կարդացել է Չարենցի էլեգիան ու մեծին վայել մե-  
ծահոգությամբ դժգոհել իր նամակներից մեկում. «Ամբողջ  
հին մտայնությունը իմ վրա է կուտակել: Բայց և այնպես  
տաղանդավոր տեղեր շատ կան»: Վննետիկյան էլեգիայի  
պարագոքսը տանջել է Չարենցի ամենամոտ ընկերոջը՝ Գուր-  
գեն Մահարուն, որ շատ տարիներ անց, երբ էլեգիայի հե-

զենտիկն էլ շկար, էլեգիայի հերոսն էլ՝ Չարենցին նվիրած իր  
գնառժաման հուշերում արտահայտել է իրեն պաշարած տա-  
րակուսանքը.

«Սրբ վերագարձար դու արտասահմանից, քո ամենատի-  
բելի խոսակցության նշույթը Բաահակյանն էր:

Մեծ ոգեկոթությանը դու պատմում էիր ձեր հանգիպում-  
ներին, հիացմունքով հիշում էիր նրա ասույթները, պատմում  
էիր հատվածներ «Ուստա Կարոյից» և պնդում էիր, որ՝

— Պայծառ մարդ է Ավան, արտառուշ, իմաստուն:

Ով հանկարծ գրեցիր քո «էլեգիան»:

Ես մինչև հիմա էլ չգիտեմ, թե ինչու՞ գրեցիր...

Դու հեռառան մարդ էիր և քաջ գիտեիր, որ ժողովրդի բա-  
նաստեղծը եթե վերագառնա իր ժողովրդի մաս, տխուր չի  
լինի, «ոչ էլ ձմեռ կլինի նրա ցուրտ հոգում...»:

Ինչու՞ գրեցիր քո «էլեգիան»...

Ե՛լավ Բաահակյանը, և ժողովուրդը նրան ընդունեց այն-  
պես, ինչպես հայրն է ընդունում իր մեծ որդուն: Նույն այդ  
ժողովուրդը սիրում է երկուսիդ էլ մեծ սիրով:

Էլ ինչու՞ գրեցիր դու քո «էլեգիան»:

Դուրսեն Մահարու գրածին ոչինչ պետք չէ ավելացնել:  
Մեզք կլինի ավելացնել: Բայց Բաահակյան—Չարենց հարա-  
բերության պատկերը չի կարելի ավարտված համարել առանց  
մտարերևու հայ իրականության և գրականության մոռյլ  
էջերից մեկը:

1937-ի սեպտեմբերի 27-ին, բանտում, Չարենցը գրում  
և ինչ-որ հրաշքով դուրս է ուղարկում Բաահակյանին նվիրած  
այս նամակ-բանաստեղծությունը.

«Միեկի Ավետիք,

Ներքեում երգում էին քո երգը,— սիրտս լցվեց— և ես գրե-  
ցի հետեյալ ստիիւր. ընդունիր իրրե ձոն և ողջույն:

ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Որքան գեղեցիկ—այնքան խոնարհ,  
Այնքան անհոգ և այնքան չեղձ  
Ու խոնարհում եմ քո առջև  
Ն՛վ սեր, ե՞ր սիրտ, ե՞ր քնար:

Արդեն ցեորք է անհնար  
Ունենալ երգ այդքան նախ՛վ,  
Որ հմայե երեխային,  
Եվ ծնունուտ արտում մեա:

Սիրող կարող է վեհանաչ,  
Որ անաչով նրա արտին,  
Երգ ես տվել ժողովրդին,  
Որ իր երգով անմահանա:

Ա՛խ, կուզեի ես ունենալ  
Գոնե մի երգ այդքան ջերմին,  
Որ զրեի խաղիս որմին—  
Եվ ես հավետ այնտեղ մեա:

Եվ սերունդներ այսպեա կային  
Եվ կարգային խաղիս որմին  
Սրտիս միակ երգը ջերմին,—  
Եվ երգը այդ— ես քեզ տայի:

Նույնպիսի ծնրադիր հիացմունք արվեստակցի ստեղծագործութեամբ, ինչպեա Իսահակյանի հիացմունքն է Չարենցի նշանավոր բանաստեղծութեամբ:

Պատմութունը ոչինչ չէր կարող հորինել ավելի վեհ, ոգրերգականորեն վեհ, քան Չարենցի ինքնահերքումն էր տարիներ առաջ արած անարդարութեան:

Իսահակյանը շատ բան կտար, ամեն ինչ կտար, որ ընեներ ո՛չ այդ ողբերգութունը, ո՛չ էլ այդ խոստովանութուն-բանաստեղծութունը՝ ամենից սրտալի խոսքը, որ երբևէ ասվել է կամ կարող է ասվել իր պոեզիայի մասին:

Բայց մենք, ակամա, շատ առաջ ընկանք: Դեռ 1926-ն է, հայրենիք վերադառնալու վճիռն ընդունած բանաստեղծի սիրտը տրոփում է մոտալուտ երջանկության հուզմունքներից: Գրում է ընկերոջը՝ Մոսկվայում ապրող Կարեն Միքայելյանին:

ԻՍԽԱՀԱԿՅԱՆ—Կարոտեի եմ շա՛տ հայ ժողովրդին, ընկերներիս և մեր ցորենի արտերին: Բայց չգիտեմ, պիտի կարողանա՞մ այնտեղ ապրել— ես կոմունիստ չեմ,— բայց համակրում եմ նրանց՝ հայ մեծամասնականների վարքագիծը:

և համապատասխան համարներ հանձնարվելու մասին, մեր ժողովրդի բընական խնայողականությանը, նրա առողջ բնազդին:

**ԲԱՆԱՍԵՐ**—Կարծես անհրաժեշտ է մի ձևով անհատներին և քաղաքներին «բնածին պահպանող», սրբի հողին պաշարած մոռուր և պարուրել կաթողին հրճվանքով: Ու նա գրում է Նյու Յորք՝ «Հայաստանի կոշնակ» հանգեսի խմբագիր Հովհ. Ավագյանին:

**ԻՄԱՀԱԿՅԱՆ**—Եթե աստված հաջողե, սեպտեմբերի առաջին օրերը կլինեն Երևանում. ինչպիսի՞ ապրումներ, հուզումներ պիտի ունենան ...զգում եմ ինձ երիտասարդ և թեև եմ բուռնի բնույթով, սակայն հայրենի թանկ, անգին հողը, լսել հայաց լեզուն, գյուղացու գերանգի զնոցը, հոտերի մայունք... Թոնիրի հացը ուտել և Այրարատի գինին խմել: Ի՞նչ կա օրանից բարձր ու նվիրական բաներ—ոչի՛նչ, ոչի՛նչ:

Ենդհանրապես ստացել եմ 5 զուարթ կիսնգրեմ դադարեցնեք «Կոշնակ» առաքումը Վենետիկի հասցեին: Այլևս առանձին Վենետիկ, Հայաստանից կզրեմ հասցես:

**ԲԱՆԱՍԵՐ**—Բայց տունդարձի հրճվանքին շատ թույն է խառնվում և պղտորում Բասահյան հայրենադարձի մաքուր հողին: Գաշնակցական գործիչները, գաշնակցական մամուլը մեծ ազդեցություն ունենում նրա շուրջը, վարքագիծը համարում դավաճանական, սպառնում, վարկարկում, թունավորում...

Այո՛, շատ ուրբ-մուրբ ճամփաներ էր անցել Բասահյանը մինչև 1926-ը: Գեո անցյալ դարի վերջին բանասերվել էր հրեշտակյան կուսակցությանը պատկանելու մեղադրանքով: Այնուհետև կապվել էր գաշնակցության հետ:

**ԻՄԱՀԱԿՅԱՆ**—...ևս, վերջ ի վերջո, երկրորդական, երրորդական գործիչ եմ եղել... կազ իշով մասնակցել եմ պատմությանը:

**ԲԱՆԱՍԵՐ**—Այդպես է զրել 1923-ի նամակներից մեկում: Աղնիվ ու շիտակ նկարագրի տեր մարդ՝ նա չէր թաքցնում ո՛չ իր մտածումները, ո՛չ անցած ճանապարհը: Նույնիսկ 1937-ին, այո՛, հազար ինը հարյուր երեսուներեքին, Երևանում ունեցած ելույթում ասել է համարձակ:

**ԻՄԱՀԱԿՅԱՆ**— Եղել եմ տղատղական, նիցշեական, Գերմանիայում, ուսանող մամանակս՝ սոցիալ-դեմոկրատ: Հու-

սահմանով՝ դարձել էմ անիշխանական, պետիմիտու Տարվել էմ Բուդդայում։ Ողևորվել էմ հայկական մարտական ազգայնությանը, դաշնակցական ոչ երկրորդական գործիչ՝ աշխատել էմ անձնվիրաբար, բանտեր էմ նստել, աքսորվել, փախել հայրենիքից։

**ԲԱՆԱՍԵՐ**— Նկատենք բանաստեղծի համարձակությունը. մասնավոր նամակում՝ երկրորդական, երրորդական գործիչ, 1937-ի նրևանում՝ ո՛չ երկրորդական։ Ո՛րն է ճիշտը։ Այն, որ Իսահակյանն, իբրեւ, ողևելվել է դաշնակցության, իբրեւ հայ ազատագրական շարժման, դաշնափարախոսության, եղել է կուսակցության անդամ, բայց նրա գործունեության մեջ հանգուցային դիրք չի գրավել, թեև, լինելով բանաստեղծ, դրել է հայդուկային շարժմանը նվիրված մեծաթիվ հուզատառերգեր։ Կյանքի նույն այս վեներաբիլյան հինգ տարում Իսահակյանի գրած նամակները լիքն են իրարամերձ մտածումներով ու դատողություններով. ե՛ր ի նպաստ, ե՛ր ընդդեմ հայրենիքում ստեղծված նոր կարգերի, ե՛ր ամբողջական, ե՛ր հոռետեսական հայացքներով իր ժողովրդի ապագայի նկատմամբ։ Բայց բոլոր այդ հասարակական մտածումների մեջ եղել է մի անխտոր համոզման՝ հայ ժողովրդի բախառու ուս ժողովրդի հետ է։ Մտաբերենք վերատին. «Ըստ իս, Հայաստանը և հայ ժողովուրդը կարող է միայն ապրել մուսսոստանի հետ, կամ բնավ չի կարող ապրել», «մեզ չեաք է զորեղ մուսխա», «ուս գինվորի ներկայությունը սահմանի վրա. այդ է մեզ փրկողը»։

Պարզ ու պայծառ։

Այո՛, Իսահակյանն անցել է բարդ ու դժվարին ճանապարհ։ Եվ մեզ՝ հետնորդներին համար ամենից թանկը և ուսանելին հենց այն է, թե ինչ ուրախների ու քարավանների միջով է նա հասել մեծ ճշմարտությանը։ Գտնված համոզման այնքան ավելի թանկ է, որքան ավելի մեծ զոհողությունների, տառապանքների զնով է ձեռք բերվում։

Այն մեծ ճշմարտությունը, որին Իսահակյանը փարեց բուրանվեր ու անվերադարձ, գժվար կենսափորձով ձեռք բերված ճշմարտություն էր՝ ու գրանով էլ առավել թանկ ե՛ր իր, ե՛ր հետնորդներին համար։

Ահա ինչու՞ նա այնքան վրդովվում էր իր տունդարձին խեղ աշքով նույնզ զաշնակցական գործիչների դեմ:

ԻՍԱՀԱԿՅԱՆ— Ծա գնում եմ տուն, հայրենիք. ո՞ւմ ինչ, ուրիշին ի՞նչ... Ուզտն իր հաշիվն ունի, ուզտապանը՝ իր:

ԲԱՆԱՍԵՐ— Եվ այսպես, 1926-ի հոկտեմբերի սկզբին նա արդեն տանն էր: Եկել էր մենակ, նավով՝ Վենետիկ—Պոլիս—Բաթում—Թիֆլիս: Տասնհինգ տարվա բացակայությունից հետո՝ վերադառնալով Թիֆլիսում: Վաղեմի ընկերներից քչերն էին մնացել Թիֆլիսում. շատերը չկային այլևս, մյուսները տեղափոխվել էին Երևան: Կայարանում նրան դիմավորել են գերատան Իսահակ Ալիխանյանը, կոմպոզիտոր Ռոմանոս Մելիքյանը և ուրիշներ:

ԻՍԱՀԱԿՅԱՆ— Կարոտով զրկեցինք իրար, անսահման ուրախ էի, որ վերադառնալով իմ շատ սիրելի ընկերներիս տեսա: Կարծես թե տարիներ չէին անցել, կարծես թե երեկ էինք բաժանվել միմյանցից և շարունակում էինք տարիներ առաջ ընդհատված խոսակցությունը:

ԲԱՆԱՍԵՐ— Վրաստանի մայրաքաղաքում բանաստեղծն ապրել է Բուսանյանների տանը:

ԻՍԱՀԱԿՅԱՆ— Նրանց մոտ իմ տանն էի զգում: Քնում էի Օհանեսի սենյակում:

ԲԱՆԱՍԵՐ— Այսպես է զրել արտասահմանում մնացած կնոջն ու որդուն՝ Սոֆյա և Վիգեն Իսահակյաններին: Թիֆլիսում շրջել է բանաստեղծը վաղածանոթ վայրերում, որոնց հետ այնքան թանկագին հուշեր էին կապված, այցի է դնացել մեռած ընկերների շիրիմներին:

Այսպես, արտում ու հրճվալի խառն ապրումներով լեցուն, Դիլիջանով ու Մեանով, պոետը հասնում է Խորհրդային Հաստատանի մայրաքաղաք:

ԻՍԱՀԱԿՅԱՆ— Երևանը շատ է փոխված, եռուղեռ, կենդանի, բազմամարդ: Անվերջ քանդում են ու շինում, մեծ աշխատանք են թափում: Զարմանալի ժողովուրդ է հայը. ապրելու ընդունակ. լալիս է, բայց նորից շինում ու ստեղծում, քարից հաց հանում:

Ավելորդ է խոսել իմ մասին: Ամեն տեղ զրկաբաց ընդունելություն:

— Ի՞նչ երևում է Ռուսաստանը շահաներ 1921 թվին, շնչված էր հալածվածներ:

Կառավարության գլուխ կանգնածները ընտիր, խելոք երիտասարդներ են (մոտ 40 տարեկան մարդիկ), աշխատող, եռուն, եռանդով, զարգացած: Գործի, աշխատանքի երկիր է Հայաստանը:

Երանի՜ երիտասարդ լինելի և ընկնելի գործի, սև, շարքաշ գործի ծովում:

ԲԱՆԱՍԵՐ— Ոչինչ, ոչինչ չէր կարող մթաղնել հայրենիք եկած պոռնիկ համակած ոգևորությունը: Ո՛չ բարեկամ ու մտերիմ մարդկանց անդառնալի կորուստները, ո՛չ մոխիրնեւրից բարձրացող երկրի տնտեսական դավարությունները, ո՛չ էլ այն երկրաշարժը, որ հիմնահատակ արեց հայրենի քաղաքը և հենց սեփական տուն ու ջրաղացը՝ «հողին հավասար» Լենինականի վերականգնման համար...

ԻՄԱՀԱԿՅԱՆ—...Խորհրդային Միությունը որոշել է տալ 16 միլիոն ռուբլի: Թող սա ամբողջ աշխարհը լսե և ըմբռնե, թե հայ ժողովուրդը ինչ մեծ և իրական բարեկամ ունի իր կռիւկին կանգնած. «Սարի պես մեջքիդ կանգնած յար ունեւ»:

Ես հայրենիքում շատ հարգված եմ ամեն կողմից. երկրի իշխանավորները ինձ սիրում են ու հարգում. ես չեմ կարող այդ կապերը խզել: Բացի այդ, այսօր սիրտս կապվում է երկրի և խորհրդային կարգերի հետ, և տեսնում եմ, որ այստեղ, Հայաստանում միայն կարող եմ ինձ բախտավոր զգալ և նպատակահարմար:

ԲԱՆԱՍԵՐ— Ինչքա՞ն կասկածանքներ փարատվեցին իր նոր հայրենիքում ապրող պոռնիկ աղքատ, ինչքա՞ն կասկածանքներ ու տարակուսանքներ, որ նստվածք էին տվել արտասահմանյան կյանքի տարիներին: Հիմա այլևս ոչ մի կասկած, որ...

ԻՄԱՀԱԿՅԱՆ—...Հայերիս գլխին թափված զարհուրանքներից հետո ներկա գրությունը մի օրհնություն է, որին պիտի քացի շտալ և պիտի պաշտպանել:

ԲԱՆԱՍԵՐ— Այսպես է գրում պոռնիկ արտասահման հղած նամակներում, համոզված, որ առանց այդ նոր հայրենիքի...

ԻՄԱՀԱԿՅԱՆ—...մենք՝ հայերս, կլինենք մի թափառական և արհամարհված ազգ:

**ԲԱՆԱՍԵՐ** — Ով-ով, տասնհինգ տարվա տարագիրը, ամեն ինչ նկատող, զգացող, աչքող և իմաստավորող պոետը լավ գիտեր անհայրենիք Թափառականի ողբերգությունը։ Եվ անհամար աղետներից հոգնած, օտար հորիզոններում պաշտած նրա սիրտը ջերմանում է հայրենի բնաշխարհի, հարազատ ժողովրդի շնչով։ Եվ հենց 1926-ին, իր ժողովրդի վերածնության, այդ պատմական իրողության անմիջական տպավորությամբ, նա գրեց մի հոդված, ավելի ճիշտ՝ ձոն, սղոյված այնպիսի հրճվանքով, որ աննախագեղ է «Երգեր ու վերքեր» հեղինակի կյանքում։

**ԻՍԱՀԱԿՅԱՆ** — Մեր հին հայրենիքում, մահից հարության առած մեր նոր Հայաստանում տակավին ես նորեկ քաղաքացի եմ։

...Ես ականջ էի միայն դարձել՝ հլու և ուշագիր, և լսում էի ամենքին, որոնք սիրում էին ինձ հետ խոսել։

...Ես աչք էի դարձել ու նայում էի շուրջս։ Բոլոր նեղ-միտ նկատառումներից վեր, մաքուր բարձունքից նայում եմ շուրջս՝ մոտիկն ու հեռուն։

Տեսնում եմ՝ ավերի ու մոխիրների միջից, խաղաղությամբ զրահավորված, կանգնում է աշխատավորական, Սովետական Հայաստանը՝ համամարդկային դադափարներով, համաշխարհային բովանդակությամբ և ազգային ոճով ու դեմքով։

...Անկաշկանդ հնչում է մեր մայրենի լեզուն դպրոցներում ու դատարաններում, զործարաններում ու զորանոցներում, սկումբներում ու շուկաներում։

Տեսնում եմ սևաշյա մանուկներին՝ զրքերն անուխների տակ, բզզում են զնայի փեթակ։ Պատանիներն շտապում են զնայի համալսարան վեճով ու քրքիշով։

...Տեսնում եմ առղանցը կարմիր բանակի։ Հայկական աշուձին հրեղեն երգերով։ Թեղում են փողոցները սմբակների տակ։

Թեղում է սիրտը նրանց հետ։

Եվ ուղում ես զնալ նրանց բոլորի հետ, այդ սևաշյա մանուկների հետ, բանվորների և գյուղացիների հետ, և գինվորների հետ։

Գնալ նրանց հետ, ուր որ գնում են նրանք, սրտով և հոգով, բոլորանվեր գնալ նրանց հետ:

Եվ երանի ես տալիս նրանց, ովքեր զոքծում են, որովհետև նրանք են կուտ կամքերը, և կամքերն են, որ ստեղծում են մեծագույն ժողովուրդներ:

Երանի՛ նրանց, որ սալն են ծեծում հզոր բազկով:

Երանի՛ նրանց, որ ահոս են քաշում և ցորեն թաղում:

Երանի՛ նրանց, որ քար են կտրում և տուն շինում, երանի՛ նրանց, որ ծառ են տնկում և առու փորում:

Եվ երանի նրանց, որոնք սովորում են և սովորեցնում:

Որովհետև նրանք են շինում մեր նյութական ու հոգեկան հացը:

Որովհետև նրանք են կերտում բոլորի համար արդար հայրենիքը:

Որովհետև նրանք են դարբնում մեր վաղն ու իրականը:

Որովհետև նրանք են սրում մեր զենքերը՝ բնության ուժերը ծառայեցնելու, և զետին տապալելու գիշատիչ անասունին, որ ռոնում է մեր մեջ:

...Ակոսների պես երկարածիզ փոփում է առնական հորովելը և ըմպում ես ճեղքված հողի տաք շունջը:

Եվ ուզում ես գրկել, բնդգրկել բազուկներիդ բոլոր տարողությամբ այդ նվիրական շեկ հողը ու սև հողը և նրան գաղափարացնող և իմաստավորող աշխատավորներին:

Սեղմել հոգուդ, համբուրել այդ՝ շղթաները կտրած, ազատ հողը, որ քոնն է դարձել այսօր և այսուհետև: Անբուծելի ցավ ես զգում, որ հնուս ես եղել նրանից, որ կոթած են անցել օտարությանդ երկար տարիները:

Եվ մի տենչ է վառում հոգիդ հիմա՝ գնել գլուխդ այդ հողին, ովքերդ զոցել ու երազել...

ԲԱՆԱՍԵՐ—Այսպիսի խանդավառ խոսքեր երբևէ չէին լսվել մշտի ու տրամության երգչի շուրթերից: Խոսքեր, որ գրվել են ճիշտ տասնյոթ տարի առաջ հրապարակած ողբը հերքելու համար. «Ողբում եմ դառն վիճակդ տխուր, ով հայ ժողովուրդ, տանջանքիս աղբյուր: Եվ ո՞վ կուտա ինձ արցունք ծովերով լալու երկիրդ արյուն ու թափուր...»: Այս հերքումը պատմության հերքումն էր՝ արտափայլված նույն բանաստեղծի հոգու և ստեղծագործության մեջ: Այն բանաստեղ-

ծական հոգու, որի վիշտը նույնքան խորն էր հռչակող հայ-  
րենիքը տեսնելիս, որքան հորդառատ էր հրճվանքը, երբ ակա-  
նատես էր նրա վերածննդին, երբ իր հայրենարարձ, հայրենա-  
տուշոր հոգին օգտագլում էր երանությանը:

Մեծ հոգիներն են կարողանում վշտանալ ու հրճվել՝ մին-  
չև ընթանելության վերին սահմանը: Այդպիսի մեծ հոգի էր  
Ավետիք Իսահակյանը: Բայց նաև մտերիմ և մտերմության  
կարոտ մարդամուտ հոգի: Նրա այդ կարոտներն էլ հագեցում  
գտան: Վերադառնալով հին մտերիմներին ու նաև նո-  
րերը գտել, ապրել ընկերական տարուկ կյանքով, որի կարիքն  
այնքան զգում էր օտարության մեջ: Եղել է իր արվեստի  
առաջին ուսուցչի հետ՝ Հովհաննես Հովհաննիսյանի:

ԻՍԱՀԱԿԻԱՆ—Տարիները թեթև չէին անցել նրա գլխի վրա-  
յից, բավական ծերացել էր և առաջվա նման զվարթ չէր: Գե-  
տությունը հարգում, մեծարում էր նրան. նշանակել էր  
կենսաթուշակ և այդի էր արամադրել նրան՝ օգտագործելու  
համար: Շատ հաճախ լինում էի նրա տանը և այդում: ...1928  
թվի տարեմուտը զիմավորեցինք նրա տանը. բավական հու-  
րեր կային: Անմոռանալի, արտադին ծամեր անցրինք. բոլորս  
հավաքված մեր պոեզիայի ալեհեր նահապետի շուրջը՝ եր-  
զում էինք. պարում, հրճվում մինչև լույս:

ԲԱՆԱՍԵՐ—Նույն 1928-ի ամռանը պոետը եղել է Կիսլու-  
վոդսկում: Նա ոչինչ չի գրել այդ մասին, բայց իր փոխարեն  
զրել է ռուս գրականության նշանավոր զնախնիք մեկը՝ Կոր-  
նեյ Չուկովսկին. «1928 թվականին իմ կյանքում մի խոշոր  
իրադարձություն տեղի ունեցավ. ես ծանոթացա հայ մեծ բա-  
նաստեղծ Ավետիք Իսահակյանի հետ:

Այն ժամանակ ես հանգստանում էր Կիսլովոդսկի «Ցե-  
կուրու» առողջարանում: Փիչ կորացած, առանց բանաստեղ-  
ծական կերպարանքի որևէ հավակնության, առես ընկճված  
ինչ-որ անկրկնելի թախիժից, ես բացահայտորեն ձգտում էր  
ոչ մի բանով չտարբերվել հանգստացողների հոծ բազմությու-  
նից: Նրա մեջ կար ինչ-որ պարզ ժողովրդայնություն՝ այդ  
բառի վեհ իմաստով, որն ինձ կենդանի կերպով հիշեցնում  
էր տիպիկ հայ գյուղացուն, բայց և միաժամանակ նրբացած,  
ներշնչված:

... «Ցեկուրու» առողջարանում գրական երեկոներ կազ-

մակերպելու սովորութիւնն կար: Այդպիսի մի հրեկոյի, բռնոր հանգստացողների ներկայութեամբ, որոնց մեջ էր նաև Ավետիք Իսահակյանը, արտասանեցի նրա մի բանաստեղծութիւնը, որն անգիր գիտեի.

Արեւոս զաշտերում ծղրիցն է ծղրում,  
Հալոյունն է ընկել մահման խոր քնով,  
Հալոյունը հոգսւմ երազ է տեսնում.—  
Հայրենի աշխարհն ազատ, ապահով...

Ավետիք Իսահակյանը նստել էր երրորդ, թե չորրորդ շարքում և լսելով, որ ես կարդում եմ իր բանաստեղծութիւնը, ձեռքերով զեմքը ծածկեց և, որպէս պատասխան ներկաների ծաղաւարութեան, կամաց-կամաց բարձրացավ տեղից ու ամոթխած գլխով արեց:

Երևանում պոետը շատ է շփոխել Ռոմանոս Մելիքյանի հետ, որին ծանոթ էր 1904-ից, նոր նախիջևանում (Գոնի Ռոստովում) եղած ժամանակ, այն քաղաքում, ուր ապրում էր երաժիշտը: Խոսք ու զրույցի, կատակի ու անեկզոտի մարդ է եղել երաժիշտը, ինչպէս և հենց ինքը՝ Իսահակյանը: Ահա մի զեպք, որ բնորոշում է երկուսին էլ: Մի նոր անեկզոտ է լըսում երաժիշտը և շի համբերում, գիշերվա կեսին զալիս է ընկերոջը պատմելու:

ԻՍԱՀԱԿՅԱՆ—Հագնվում եմ մի կերպ. նայում եմ ժամացույցին, ժամը 2-ից անց է: Ռոմանոսը հիֆհե պատմում է անեկզոտը, ծիծաղում ենք, անվերջ ծիծաղում:

— Ապրես, լավ արիւր եկար,— ասում եմ ես: Ծառագայթում է Ռոմանոսի զեմքը:

Թե՛ ինքն զնում, թե՛ ընթրիք ենք սարքում: Զրույց ենք անում, խոսում, կատակում: Ռոմանոսը գիշերեց մոտս. պատկեցինք կողք կողքի: Քնել էինք զրեթի մինչև կեսօր:

ԲԱՆԱՍԻՐ—Հին բարեկամների մեջ պոետը գտավ և Բորոս Թորամանյանին, որի գործին միշտ նայել է պատկառանքով ու երկյուղածութեամբ:

ԻՍԱՀԱԿՅԱՆ—Ժամանակն իր դաժան գործը տեսել էր՝ ձեռացել էր նա, սպիտակել, շատ պարարտացել էր, և սիրտը հոգնել էր, բայց տրամադրութիւնը բարձր էր. նույն լավատես, տոկոս, համով, պարզասիրտ մարդն էր:

Արդեն ձեռնամուխ էր եղել իր հոյակապ գործին՝ «նյութեր հայ ճարտարապետութեան», որի համար տառապել, նահատակվել էր նա ողջ կյանքում... Մարտափ էր պատում ինձ, երբ նայում էի թղթերի, նկարների, գծադրումների այդ հրաշալի գեղին, բայց նա եռանդով ու սիրով, համբերությամբ օրեցօր կարգի և ձևի էր գնում այդ քառու, միևնույն ժամանակ և միջոց էր գտնում նոր պեզոմների մատակցելու, նոր նյութեր կուտակելու:

ԲԱՆԱՍԵՐ—Հին ընկերների հետ լինելու ուրախութեան ավելանում է նոր, և նույնքան նվիրական, ընկերներ գտնելու հրճվանքը: Այն ժամանակվա փոքր Երևանը հարուստ էր մեծ տաղանդի և հզոր ու ազնիվ սրտի տեր մարդկանցով: Իսահակյանը եկավ ավելացնելու նրանց թիվը, մի նոր գեղեցկությու՜ն ապալու բարձրացող նրանին և ներգաշնակությու՜ն կազմելու մյուս մեծերի հետ:

Վերին աստիճանի մարդամաս ու անմիջական՝ Իսահակյանին շատ ժամանակ պետք չէր երկու նշանավոր Ալեքսանդրի՝ Սպենդիարյանի և Թամանյանի հետ մտերմանալու համար: Եվ կիրթ, զարգացած հոգու տեր արվեստագետների համար ո՞վ կարող էր լինել ավելի գրավիչ, քան նույնպիսի կիրթ ու զարգացած հոգու տեր պոետը, որ աշխարհը տվել էր ոտքի տակ, գիտելիքներ ամբարել բոլոր արվեստների մասին, իսկ հայրենի երկիրն ու պատմությունը գիտեր իրենցից շատ ավելի: Նախանձելիորեն երջանիկ հանդիպումներ ու շփումներ, որոնց տպավորությունը, բարեբախտաբար, պոետը չի մոռացել թղթին հանձնել:

ԻՍԱՀԱԿԻՅԱՆ—Մեծ երաժշտապետի հետ անձամբ ծանոթացա, երբ նոր էի վերադարձել արտասահմանից: Այդ մեծատաղանդ մարդուց առաջին հանդիպումից այն տպավորությունն ստացա, որ նա այս աշխարհի մարդ չէ: Նրա ոտնեքը հազիվ էին զիպչում այս երկրին, նրա հոգին՝ իր մտորումներով և երազանքներով բարձր ոլորտների, բարձր սֆերաների բնակիչ էր: Իր մեջ ամփոփված այդ փխրուն մարդը լուռ էր ձայներ, որոնք մեզ մատչելի չէին:

ԲԱՆԱՍԵՐ—Եստ է գրվել Սպենդիարյանի մասին, բայց ոչ ոք մի քանի տողում այնպես չի խտացրել նրա բնավորության էությունը, ինչպես Իսահակյանը: Մարդկային խտանվածքի

ամենից էական հատկանիշների բացահայտում,— սա է հուշագիր Թահահյանի սկզբունքը։ Վերին աստիճանի ստուգապատում, վերին աստիճանի ուշադիր փաստերի հանդեպ՝ Թահահյանն, այնուամենայնիվ, զբաղեցավ չէ, ճշգրիտ նկարագրությամբ չէ, որ բացահայտում է կերպարի էությունը, այլ իր ստացած սուբյեկտիվ տպավորությամբ։ Փնարական բանաստեղծի պարտադիր հատկանիշ, որ անբաժան եղավ նրա արձակից, նաև հուշագրություններից, որ իր արձակի լավագույն էջերից են։ Շատ էական է, որ պոետի ստացած և վերաբարձարած սուբյեկտիվ տպավորությունը, ում մասին էլ որ լինի, միանգամայն համապատասխանում է պատկերված կերպարի օբյեկտիվ նկարագրին։ Սա մի առանձին արժեք է տալիս Թահահյանի հուշերին՝ զրանց տալով պատմական վավերագրերի արժեք։ Մենք տեսնում ենք պոետի կյանքով անցած մեծ մարդկանց՝ իրենց ներշնչանքի բարձր պահերին։

ԻՄԱՀԱԿՑԱՆ—...գնացինք Թամանյանի տունը։ Թամանյանը ցույց էր տալիս իր ճարտարապետական էսքիզները, հաստակազոծերը, նկարները, մակետները, Սպենդիարովը նվագում էր իր գործերից, նաև՝ Ռոմանոսը։

Ինչքան որ արխիտեկտուրան և մուզիկան միմյանց հարակից և բարեկամ արվեստներ էին, նույնքան էլ այս երկու մեծատաղանդ ստեղծագործողները՝ ճարտարապետ և երաժշտապետ՝ միմյանց բարեկամ էին։ Միմյանց խորապես հասկանում էին և համագզդում։

Նրբ Թամանյանը որդեգրված ցույց էր տալիս իր կառուցած և կառուցվելիք շենքերի նկարները, Սպենդիարովը այնքան էր խանդավառվում, ինչքան Թամանյանը, երբ մեծ կոմպոզիտորը նվագում էր իր սիմֆոնիաները և Ռոմանոսը իր և Կոմիտասի ժողովրդական երգերը։ ...Եվ մենք այդ երկու ապրեցիկներ մի երջանիկ, ինքնամոռաց պահ—բարձր արվեստի մի վայելք։

ԲԱՆԱՍԵՐ—Հուշերը տարբեր կերպ են զրվում։ Նաև այնպես, որ այնքան անդուրեկան էր պոետի աշխին. «...հուշեր զրելը մի սայթաքում ուզի է, որ սկսվում է համեստությամբ և վերջանում ինքնագովությունով»։ Բավականաչափ հարուստ է հայ մեծուսրային գրականությունը՝ հուշագրությունը։

**Քեզեան ոչ մի հուշագրող** այնքան ակներևորեն չի երևում իր գրած հուշերում, որքան Բաահակյանը, այնքան, որ գրանք թողնում են օրագրի, սեփական կյանքի էջերի տպավորություն: Եվ հակառակ դրան՝ սեփական անձի ու գործի ոչ մի ընդգծում: Դա ոչ թե իր ասած «սայլաքուն ուղուց» խուսափելու գիտամենավոր ձգտումն էր, այլ սեփական բնավորության, իրեն համեմատ բնավորության ակամա գրանդորումն իր գրածի մեջ:

Եթե իրօր, քնարերգությունից հետո Բաահակյանի ստեղծագործության մյուս ուժեղ շեշտերը «Արու-Հալա Մահար» պոեմն է, «Ուստա Կարո» անավարտ վեպը և հուշագրատումը, ապա պետք է այս վերջինի մի կարևոր հատկանիշն էլ ընդգծել:

Դա Բաահակյանի հուշերի գաղափարային հագեցումն է և ներքին կուռ միասնությունը մի պարտադիր գծով՝ հայրենասիրությամբ: Երևույթն այնքան ակներև է, որ կարծես արդյունք է ծրագրված նպատակագրման: Բայց ոչ մի ծրագիր չէր կարող այդպիսի երկաթն հետևողականության հանգեցնել, մի որևէ տեղ խոտորում կլիներ: Դա նույնպես իր բնավորության, իր աշխարհայացքի ակամա անգրագարձումն էր՝ ինչ էլ որ գրելու լիներ: Բաահակյանը մարդուն կարող էր գնահատել միայն մի զանգակատնից, որ իր սեփականն էր՝ հայրենասիրության զանգակատունը: Իհարկե, ուրիշ տեսանկյուններ էլ կային, բայց դրանք ստորագաս էին զլխավորին: Հայտնի դարձվածքն Բաահակյանի վերաբերմամբ կարող է այսպես վերափոխվել՝ ասա ի՞նչ ես գու հայրենասիրության տեսակետից, ասեմ ով ես դու: Այդպիսին էր պոեմն իր ծնունդով, ստեղծագործությամբ: Դա էր, ինչպես ասվում է, իր իդե-ֆիքսը, ինչպես Չարենցը կասեր՝ «ուղեղային մորմորը», «սրտի հիվանդությունը», առանց որևէ հիվանդագին արտահայտության, առանց որևէ ազգային սահմանափակության: Ահա ինչու ինչքան տարբեր ժամանակներում, ինչքան տարբեր մարդկանց մասին էլ գրել է պոետը՝ Ալիշան, թե հրիմյան Հայրիկ, Աղայան, թե Տերյան, Թումանյան, թե Փամանյան և ուրիշ նվիրական անուններ, մշտապես դա էր նրա գրածների անկյունաքարը, որ հենց սեփական խառնվածքի ու ստեղծագործության անկյունաքարն էր:

Եվ նրա հուշերը ոչ միայն անցած-գնացած մեծերի հար ու հարազատ զիմանկարներն են, անկեղծ ու ճշմարտացի, այլև մի-մի հայրենասիրության դասեր՝ ողելունը ու համակողմը:

Ասենք նաև, որ ընկերների ու արվեստակիցների մասին գրած այդ հուշերը նաև իր կյանքի վաղերագրերն են: Հուշագրի զարմանալի հիշողությունն աչքի առաջ ունենալով՝ ամենատույզ վաղերագրերը, վերին տատիճանի հուզական խառնվածքն աչքի առաջ ունենալով՝ ամենից ներշնչված վաղերագրերը: Կարելի է ասել՝ Բաաճակյանն իր կյանքը պատմել է ուրիշների կյանքը պատմելու մեջ:

Չլինեին այդ հուշերը՝ շատ բան դադարից կմնար Բաաճակյանի կյանքում, նաև այն, որ Երևանում ապրած այս երեք-չորս տարում (ստույգը՝ 3 տարի 7 ամիս), մինչև Փարիզ մեկնելը, ի՞նչ տաք ու հոգեպարար միջավայր է ունեցել պոետը: Ընկերական տաքուկ և իմաստալից շրջանում, որի համար հոգի էր տալիս Հովհաննես Հովհաննիսյանի, Թորամանյանի, Սպենդիարյանի, Բաժանյանի, Ռամեսոս Մելիք-Ջանի, Մարտիրոս Սարյանի, Ստեփան Զորյանի և ուրիշների միջավայրը, որից դարասկզբի վերնատան համե էր ասել:

Բաաճակյանը շատ է գրել, թե իր վրա ի՞նչ տպավորություն են թողել Երևանն ու նրա մարդիկ 1926—1930 թվականներին: Մի այնպիսի առաջնակարգ գրող և ստուգապատում հուշագիր, ինչպես Ստեփան Զորյանը, իր հերթին պատմել է, թե ոչոտան ինչ տպավորություն է թողել Երևանի ու նրա մարդկանց վրա: Պատմել է ու ավելի այդ շրջանի Բաաճակյանի համեմատական զիմանկարն այնքան ստույգ, որ պոետի կյանքի ու գործի մասին գրողը պարտավոր է, գոնե մասամբ, մեջ բերել. «Ինչպե՞ս էր փոխվել 16—17 տարեկան մեջ... Առաջվա բարակ, նիհար բանաստեղծը հիմա գիրացել էր, կլորացել և, շնայած 50-ը նոր էր անցել, ուներ կռաշնչել էին արգեն: Զկար այլևս առաջվա սև, նոսր-երազուն մորուջը, չկար խոշոր աչքերի երազող հայացքը. հիմա ծնոտի վրա մի փոքրիկ, մատնաշափ մորուք էր, իսկ աչքերը կոնցիստանտնուլի շրջապատված: Այդ աչքերը... զբաղեցրել էին առաջվա պես ուշիմ էին ու թափանցիկ, բայց լուսնին իրենց նախկին երազկոտ քնքռությունը: Նրանք հիմա խոհուն էին

և խելացի, երբեմն իմաստութիւն ճառագայթող... Իսկ իր՝  
բանաստեղծի շարժումները ծանր էին ու դանդաղ... Տես-  
նողը կարող էր կարծել, թե արվեստից հեռու մարդ է, շատ  
սովորական մարդ, եթե չիմանար դա Իսահակյանն է, մա-  
նավանդ եթե չիտեսեր հետը... Իսկ եթե խոսեր՝ իսկույն կըզ-  
գար զրական մարդը, բանաստեղծը—այնքան նա անմիջա-  
կան էր իր պոեզիայի նման, այնքան զգայուն ու սրտախոս,  
եթե կարելի է այսպես ասել։

Փոխվել էր մարմնով, բայց հոգով մնացել էր նույնը։ Հա-  
րստացել էր կենսափորձով և դարձել ավելի խորունկ ու շր-  
ջահայաց։

Չորյանը մտարեքել է երևանցիների սրտալի ընդունելու-  
թյունը և պոետի արտասովելու շափ հուզական վերաբերմուն-  
քը. «...Ամեն տեղ, քաղաքներում թե գյուղերում, նրան ըն-  
դունում էին շերմորեն, եղբայրական սիրով. հրավերքները  
հետևում էին մեկը մյուսին... Նա ինքն էլ, հին ու նոր ծա-  
նոթների շրջանում, գոհունակութունից արտասովում էր հա-  
ճախ, որ գտնվում է հայրենիքում, հարազատների շրջա-  
նում... շատ ավելի լավ գիտեր երկիրը և մարդկանց, քան  
երևանում ապրող զրոյները, որովհետև նա, մինչև արտա-  
սահման զնալը, շրջել էր Հայաստանի համարյա բոլոր ան-  
կյունները, գրեթե բոլոր գյուղերը և ամեն տեղ ուներ ծա-  
նոթներ, բարեկամներ, երկրպագուներ... Լինելով շատ զգա-  
յուն մարդ՝ հին ծանոթ վայրերը տեսնելիս կամ պարզապես  
հին ծանոթների հանդիպելիս՝ արտասովում էր հաճախ, հի-  
շելով հին դեպքեր ու դրույցներ»։

Հրճվանքով ու հուզումներով լեցուն երեք-չորս տարին  
անցավ մի օրվա պես։ Լիքը, հարուստ տարիներ՝ նոր կյան-  
քի հետ, հին ու նոր ընկերների հետ ունեցած մտերմությամբ։  
Իր կյանքի թերևս ամենալավ շրջանը մանկութունից ու պա-  
ռանկությունից հետո։

Նկավ վերստին արտասահման մեկնելու ժամանակը՝  
1930-ի գարունը։ Դարձյալ տարագրություն և դարձյալ՝ ակա-  
մա Պետք է Փարիզ մեկներ՝ ընտանիքը, ձեռագրերը բերե-  
լու Թախիժով հրամեշտ է ավել ընկերներին։

ԻՍԱԿԻՅԱՆ—...վերստին արտասահման մեկնելիս «մը-  
նաք բարեկ» գնացի ճարտարապետին, Վաղարշապատ Դիշե-

րեցի մօտը: Միասին գնացինք Ջվարթնոց: Ուզեցի լեռնա վերջին անգամ տեսնել այս անկրկնելի գեղեցկությունը:

Երկար դեղերեցիք Ջվարթնոցի շուրջը:

Թորոս ճարտարապետը բացատրում էր հին ու հնազան պեղումների արդյունքների մասին: Խոսում էր, խոսում և շէր հագնում, որովհետեւ նյութը Ջվարթնոցն էր:

Ավա՛ղ, այս վերջին անգամն էր, որ տեսա նրան, եղա նրա հետ:

ԲԱՆԱՍԵՐ—Երբ հրաժեշտի է գնացել Ալեքսանդր Բամանյանին, մեծ ճարտարապետը տքնելիս է եղել ժողովրդական տան, ինչպես այն ժամանակ կարճ ասում էին՝ ժողտան (հնազապում՝ օպերայի և բալետի թատրոնի) նախադժի վրա:

ԻՍԱՀԱԿՅԱՆ—...Գլուխը բարձրացրեց ժողտան անթիվ թղթերի վրայից և ասաց.

— Ա՛խ, ինչքա՛ն բախտավոր պիտի լինեմ, որ վերադարձիդ տեսնեա շենքս վերջացած: Պիտի շտապեմ, ժամանակը իմ բարեկամս չէ:

Ես հասկացա նրան և սրտիս մեջ հառաչեցի:

ԲԱՆԱՍԵՐ—Հրաժեշտները եղել են այնքան սրտառու, ասեա մարդիկ իմացել են, որ վերջին անգամն են հանգիպում: Հովհ. Հովհաննիսյանին և Ալ. Սպենդիարյանին բանաստեղծը վերջին ճանապարհն էր դրել մինչև արտասահման մեկնելը՝ նրանց թաղման թափոթի մեջ: Երբ դարձյալ վերադարձավ արտասահմանից, Թորամանյանը և Թամանյանը չկային այլևս: Չկար նաև Ռոմանոս Մելիքյանը, որ բանաստեղծ ընկերոջը ճանապարհ գնելիս, կայարանում, ասել է նրան. «Շատ շնա մեա. սպասում ենք քեզ»:

Բանաստեղծը շատ մեաց արտասահմանում, համեմային դեպս ավելի շատ, քան ենթադրում էր: Արտասահման մեկնելուց առաջ, 1929-ին, գրել էր կնոջը:

ԻՍԱՀԱԿՅԱՆ—Իմ արտասահմանում մնալը կլինի ժամանակավոր, մի տարվա շափ, և նորից կդառնամ Հայաստան ու կհաստատովեմ: Հայրենիքից դուրս չկա կյանք և բախտավորություն:

ԲԱՆԱՍԵՐ—Բայց մարդիկ մտադրվում են, բախտը՝ տնօրինում: Փարիզում Իսահակյանը խրվում է անհամար գործերի մեջ: Հասարակական գործերի: Նա դառնում է Հովհ. Թուման-

յանի հիմնադրած «Հայաստանի օգնության կոմիտեի» (ՀՕԿ) փոխ-նախագահը Փարիզում: Իսկ զա նշանակում էր ղեկավարել ու մասնակցել անհամար հավաքույթների, կազմակերպել զաղութահայության հասարակական միտքը հօգուտ հորհրդաշին Հայաստանի, զուխ բերել միջոցների հանգանակություն՝ մոխիրների միջից բարձրացող հայրենիք ուղարկելու համար: Վերստին Իսահակյանը գտնեում է հասարակական գործիչ, որ պայքարում էր հայրենիքում ստեղծված նոր կարգերի դեմ ելած ուժերի, հայրենիքից վտարանդված թշնամիների դեմ: Ինքն էր, իբրև հայրենիքից նոր վերադարձած ու նրա վերելքով համակված հեղինակություն, որ պետք է փարատեր զաղութահայության կասկածանքներն ու տարակուսանքները, շահեր նրա համակրանքը հօգուտ նոր հայրենիքի, հօգուտ ալն ամենի, ինչով ինքը ոգևորվել էր հայրենիքում: Եվ նա գրում է նրևան, հին ընկերոջը՝ Գարեգին Առնյանին, թե պետք է պաշտպանել Հայաստանը...

ԻՍԱՀԱԿՅԱՆ—...Թշնամական հարեակումների դեմ: Այստեղ շատ գործ կա անելու, մեծ պայքար կա մղելու:

ԲԱՆԱՍԵՐ—Փարիզը՝ աշխարհիս շքեղագույն քաղաքը, իր հրաշալիքներով, արվեստով ու զեղեցկությամբ, իր մեծափարթամ կյանքով, ոչ թե փարատում է փարիզաբնակ բանաստեղծի տրամոթյունը, ինչպես կարելի էր սպասել, այլ ավելի է խորացնում: Գիտեր Ֆրանսերեն, գիտեր խորապես հասկանալ ու զնահատել Ֆրանսիական մեծ արվեստի հին ու նոր արժեքները: Մեծաշուք Փարիզը շատ բան ուներ ամեն մի անհատի ներաշխարհը հագեցնելու համար: Բայց ո՛չ Իսահակյանի վրդովված ներաշխարհը, որ, կարծես, տեղ չուներ տիրիչ հուզումների համար:

ԻՍԱՀԱԿՅԱՆ—...Ինձ համար մի բան է ցանկալի—միայն մի բան,— իննել աշխարհի մի հեռավոր անկյունում, շտեմնել հայության տառապանքը, շլսել հայության ձայնը, բայց մինչև այնտեղ էլ պիտի երկարին նրանք, որովհետև իմ մեջն է՛ն նրանք: Ո՛ր պիտի փախչեմ ես ինձանից:

ԲԱՆԱՍԵՐ—Դժգոհում է իր մշտական դժգոհությամբ, որ չի կարողանում աշխատել իր գործերի վրա: Ժամանակ չի գտնում, հնարավորություն ու տրամադրություն չի գտնում:

ԻՍԱՀԱԿՅԱՆ—Կարծես մարդ բան չի անում, բայց բանից

էլ չի պրծնում: Մեծ քաղաքը կլանում է: Այնքան հետաքրքիր բան կա, և զուխդ կուրցնում ես:

...Շատ եմ ուզում գրել, բայց միշտ խանգարվում եմ: Էնքան շմեռներ, կիսատ գրություններս ավարտելի, վերագառնայի Երեւան, և այնտեղ գոցելի աշքերս: Ծերությունը արդեն փաթթում է մեզ...

ԲԱՆԱՍԵՐ—Սա մեր բանաստեղծին բնորոշ տրամադրությունն է՝ մշտական երկյուղ իրեն շատ մոտալուտ թվացող, դառնը չոքած թվացող ծերությունից, անէացումից, մահից... Եվ սիրտը քաշում է զեպի հայրենի երկիր: «Փարիզը լավ է, բայց հայրենիքը ամեն տեղից լավ է: Լավագույնն է»,— գրում է Երեւան՝ Գարեգին Լեոնյանին, իսկ Կարեն Միքայելյանին գրած նամակում բացատրում է իր վիճակը և ուշանալու պատճառները:

ԻՍԱՀԱԿՅԱՆ—Սիրելիս, ես էլ ուզում եմ Երեւանում լինել, ընկերներինս մոտ, ժողովրդի հետ, բայց զանազան գործեր պահում են ինձ այստեղ, դուրս է գալիս, որ անհրաժեշտ մարդ եմ այստեղ, իսկ այնինչ իմ մուրազս է մի անգորր անկյուն ունենամ և պարսպեմ, զրպեան թերի գործերս ավարտեմ: Վախենում եմ մեռնեմ և գործերս անկատար մնան:

...Որոշել եմ այս տարի մի գյուղ քաշվեմ, վերջացնեմ գործերս և ապա վերադառնամ Հայաստան: Այսօր 204-ն և հարակից գործերը (թերթ, ժողովներ, զանազան հանձնառումներ) կլանում են բոլոր օրերս և եռանդս:

ԲԱՆԱՍԵՐ—Իր այնքան մեծաթիվ նամակներում քիչ է պատահել, որ Խահակյանը խոսք բացի իր ստեղծագործության մասին, առավել ևս քիչ՝ իր երկերի տպագրության ու գրեթե երբեք՝ զրանց արժանիքների մասին: Մի անգամ միայն, երբ, 1934-ին, Մոսկվայում մտադրվել են «Поэзия Армении» գիրքը վերստին հրատարակել, ցանկություն է հայտնել, թե «շատ կուղենայի նորերիցս զետեղել այս ոտանավորս... խորագիրն է «Ռավեննայում»:

Ինչո՞ւ տասնյակ նոր (1916-ից ի վեր գրված) ոտանավորների մեջ նա մտադրել է հենց այդ մեկի վրա: Այս համեստ խնդրանքի մեջ, իրեն հատուկ համեստությամբ, արտահայտվել է պոետի հստակ ու խորունկ ինքնաճանաչումը: Նա գիտեր, թե ինչ է անաչարդում ընթերցողների մեծ, հայ-

կականից դուրս մեծ առաջարկներ: 1926-ին գրած այդ փառք բանաստեղծությունը, հերավի, պոետական արվեստի մի գլուխգործոց է՝ մտքի խտացման արտասովոր ուժով, ժամանակի ու տարածության վիթխարի շափանիշները մի հայացքով ընդգրկելու զորությամբ, տինդերական կեցության բացառիկորեն խորունկ ու բացառիկորեն բեթն իմաստավորմամբ:

Ուտանավորը հզացվել է 1926-ի հունիսին Ռավեննայում: Անշուր ու աննշան այդ Ռավեննան, որին 1909-ին այցելած Ալեքսանդր Բլոկը «խուլ զավառ» է կոչել, Արևմտահռոմեական վիթխարի կայսրության շքեղ մայրաքաղաքն էր եղել, որ ամենազոր ժամանակի մաշող հարվածների տակ այլևս արդեն թանգարանային արժեք էր դարձել: Երբեմնի շուրս ու շքեղությունը կորցրած, բայց անցած-դնացած փառքի հուշարձանները պահած Ռավեննան պոետի երևակայության մեջ կայծակել է տինդերական հավերժության և մարդկային գոյի անցողիկության հակադրության մեծազեղ փառլատակումով և խտացել հաշված տողերի մեջ.

Արարատի ձեռ կատարին  
Դար է եկել, վայրկյանի պես,  
Ու անցել:

Անհոն թվով կայծակների  
Մտքն է բեկվել ազամեղին,  
Ու անցել:

Մահախուճապ սիրունների  
Աչքն է դիպել լույս գաղաթին,  
Ու անցել:

Հերթը հիմա քանն է մի պահ.  
Դու էլ նայիր ակզ ճակատին,  
Ու անցիր:

Հավիտենական ընություն և մարդկանց անհավիտենական, անցողիկ գոյություն,— այս հակասության մեջ է կյանքի սղբերդական բովանդակությունը. ի՞նչ բան է մարդկայնությունը ըմբռնված դարը, հարյուր տարին՝ Արարատի հա-

վերժության համեմատ. մի վայրկյան, մի ակնթարթ ընդամենը: Եվ այս ողբերգական բովանդակությունը պոետն արտահայտել է խաղաղ ու անքնն, ինչպես հին հույները՝ ժպտերես ողբերգություն:

Բանաստեղծական երեակայություն մեծ թուլքի գործ է «Թավեննան»: Դա եզակի բանաստեղծություն է, և ոչ միայն Իսահակյանի պոեզիայում: Այնպես որ, պոետը լավ գիտեր ինչո՞ւ է մատը դնում «Թավեննայի» վրա:

Նկատենք, որ ոտանավորի մեջ ոչ մի ակնարկ չկա Թավեննայի մասին: Թավեննան միայն մղում է տվել պոետի երեակայությանը: Եվ, ինչպես միշտ, օտար աշխարհում տեսածն ու ապրածը նրա մտապատկերում զուգորդվել է հայրենի աշխարհի հետ: Իտալական հինավուրց Թավեննան և՛ հայոց Արարատ լեռը... Ճիշտ այն արամբարանությամբ, ինչպես Ֆրանսիական միջնադարի հաղվազյուտ մի կոթող դիտելիս հայրենի միջնադարի կոթողն է տեսել. «Համբարակված նալում եմ տաճարին, նալում եմ,— և տեսնում եմ մեր Երերույքը, Շիրակի դաշտում, մենավոր, ամայի, դարերի և թշնամիների առաջ կքած, բայց վեհ, շքնաղ, երազային»:

Նույնը չէ՞ արդյոք, տարօրինակորեն նույնը, որ արտասահմանյան երկրներում այդքան շատ ապրած գրողն այդքան քիչ է գրել ապրած երկրների,— և՛ անցյալի, և՛ ներկա մեծահարուստ կուլտուրայի երկրների,— մասին: Նույնը չէ՞ արդյոք, որ արտասահմանից այնքան շատ նամակներ գրած մարդը,— հարյուրավոր նամակներ,— այդքան քիչ առշներ է գրել ապրած երկրների մասին: Ուրիշ էր մեր պոետի կյանքի պարտադիր օրինաչափությունը. ապրել հայրենիքից դուրս՝ հայրենիքի մտահոգությամբ: Ապրել Փարիզում, և հարցնել անհանգիստ.

ԻՍԱՀԱԿՅԱՆ—Լավ չեմ պատկերացնում, թե ի՞նչ է կատարվում Երևանում, առաջ դնում է Թամանյանի թատրոնի շենքը, Աղստաֆա երկաթուղին, կաուշուլի ֆաբրիկան: Սրտի անհուն ցավով կարդում եմ Սեանը գատարկելու խղական, խենթ ծրագիրը, արժե՞ մի քանի տասնյակ հազար հեկտար հողի համար Հայաստանի ջրամբարը ցամաքեցնել, կամ ավելորդ էլեկտրական ուժ ստանալու համար... Շատ մոտիկ եմ և տխուր այս հարցերի առաջ...

ԲԱՆԱՍԵՐ—Ո՛ւ, աշտպես չէր կարող երկար շարունակվել Գուցե մեկ ուրիշը կարողանար, բայց այս խառնվածքի մարդն ու արվեստագետը չէր կարող հեռվից հեռու ապրել հայրենիքով, օտարը նայելով և հայրենին տեսնելով, օտար հորիզոններում հայրենականն ապրելով։ Պետք էր հայրենիք վերադառնալ անվերադարձ։

Եվ 1936-ի հոկտեմբերին, վերջապես, Իսահակյանը, կնոջ հետ, հայրենիք բերող նավի վրա էր (որդին՝ Վիդենը, մեկ տարի առաջ արդեն Երևանում էր)։ Նավի վրա էլ արել է զրառումներ, որ վկայում են տունդարձի ճանապարհը բռնած պոետի հուզմունքները։

ԻՄԱԶԱԿՅԱՆ— Եվրոպան հեռանում է, մոտենում է հայրենիքը։ Օտար ավերը հեռանում են, մոտենում են հարազատ ավերը, մայրենի ավերը...

Մի արկածախնդիր հայ մարդ (պարսկահա՞յ, թե կամարլեցի) ասաց.

— Հայ եմ. հայի ոտքը որ ցավի, իմ հոգին կցավի։ Զգվել եմ բուրբ երկրներից... դառնում եմ Հայաստան, եթե բախտ ունենամ ներս մտնելու. երթամ Հայաստան, թեկուզ ամենահեռին գլուզը։ Աշխարհը զոխիք է, Հայաստանը՝ զբրախտ։ Եթե նույնիսկ աշխարհը զրախտ լինի և Հայաստանը զոխիք, նորեն գերազասելի է հայ զոխիքը...

Ի՛նչ հոռետեսություն, ի՛նչ արգյունք թափառումների։ Նա, բուրբ երիտասարդների նման, որ երևակայություն ունեն և ձգտումներ տեսնելու, զարգանալու, մարդ դառնալու, թափառել, հիմա դառն փորձեր առած և հիասթափված, զաղազած, վերադառնում է իր ծննդավայրը...

Հին խոսքեր կան, որ նվիրականացած են.

— Հայրենիքի ծուխն էլ քաղցր է.

— «Կենա վաթան չաղչի զըր» (ազրբեջաներեն — էլի հայրենիքը լավ է).

— «Ամենալավ տունը» — Հովհաննես Թումանյանի թարգմանությունը անգլիական զրականությունից...

Ես էլ նույնն եմ զգում։ Ես էլ զգված եմ օտարներից... օտարությունից...

ԲԱՆԱՍԵՐ— Նավն անցել է Միջերկրական ծովով, Աթենքով (որ պոետը մնացել է միառժամանակ), մտել Բոսֆոր, դադար

տակ Ոսկեղջյուրում, որի ամերիկյան փողած էր ռեֆրենսը՝ քաղաքը, — դժնի հուշեր ու խոհեր են, որ եկել են ու անցել Ստամբուլին նայող պոեթի մտքով, — մտել Սև ծով և Ղրիմի ամերիկյան հասել Բաթում։ Այստեղից՝ Քիֆլիս, ուր վրաց ու հայ գրողները սրտագին ընդունելություն են ցույց տվել պոետին։ Եվ, վերջապես, Երևան։

Դա 1936-ի ղեկավարների 5-ն էր։

Իհարկե, համաժողովրդական ընդունելություն։ Տողերիս գրողը, նորահաս պատանի, ներկա է գտնվել այդ ընդունելությանը և նկարագրել Իսահակյանի մասին հրապարակած հուշերում. «1936 թվականի Ուշ աշուն, գրեթե ամենամուտ Թաղաթի ղլխավոր հրապարակը, որ ամենեկին նման չէր այսօրվա հրապարակին» մի կողմից կառուցվող կառավարական տունը, մյուս կողմից անշուշտ աներ, մեղադր պարապ տարածություն։ Մեծ բազմություն։ Ժողովուրդը ղլխավորում է իր բանաստեղծին, որ նոր է վերադարձել հայրենիք։ Հեռվում երևում է մարդկանցով շրջապատված բանաստեղծը՝ փայտե տախտակամածի վրա։

Ահագին բազմության մեջ քները, շատ քները կարող էին կասել, թե ուրախության, վշտերի, հիասթափության ինչ ահռելի բեռ է կրում փայտաշեն ամբիոնից ցնծագին ողջույններիս պատասխանող բանաստեղծը, այն էլ 1936-ի խոր աշնանը...

Մենք՝ մոտակա Արուսյան դպրոցի տառ-տասներկու տարեկան աշակերտներս, իհարկե, այդ քներից չէինք։ Յնծության մյուս երեսը չէինք տեսնում։

Շատ էինք երեխա, շատ էինք միամիտ ու անգետ հասկանալու համար, որ Իսահակյանի առաջին և երկրորդ ժամանումները Հայաստան՝ լափազանց տարբեր էին միմյանցից։

Առաջին ժամանումը՝ 1926 թվական. հեղափոխության ոռոմանտիկական խանդավառությունը զեռ չէր սառել, դեռ իր անկեղծ ընթացքի մեջ էր։ Մարդիկ, ճիշտ է, լավ չէին ապրում, բայց ապրում էին հավատով ու վստահությամբ ապագայի նկատմամբ և միմյանց նկատմամբ նույնպես։ 1925-ի նամակներից մեկում, ի պատասխան այն ղգուշացումների, թե մի ղնա երրհրդային Հայաստան, բուշեիկները քեզ կարող են օգտագործել, ի սպաս ղնել իրենց, Իսահակյանը գրել էր, թե

նման բան չի եղել չի կարող, ինքը Հայաստանի բոլշևիկներին հայտնել է, «թե զայիս եմ հայ ժողովրդի և ոչ թե ձեզ մոտ, ես ինձ հատուկ տեսակով եմ սիրում հայ ժողովուրդը»։ Դեռ զրանից մի տարի առաջ էլ իր նամակներից մեկում գրել էր առավել վստահությամբ. «Խհարկե, ես չեմ կարող բարոյապես ինձ թաղել ու խայտառակել, ես հանգուցյալ Հովհ. Թումանյանի խմորից չունիմ, բավական թարս էլ մարդ եմ...»։

Իսահակյանն այստեղ այն է ակնարկել, որ Թումանյանն իրոք համադրածակցել էր նոր իրավակարգի հետ՝ եղել էր նախագահը Հայաստան (Հայ արվեստի տուն), Հայ գրչի մշակների ընկերության, ապա և Հայաստանի օգնության կոմիտեի, համակրական խոսքեր է ասել նոր կարգերի մասին, բայց ինքը, «թարս մարդ», չի կորցնի իր ողու անկախությունը, չի դավաճանի սեփական անհատականությունը։

Դժբախտաբար, ողբերգականորեն՝ դժբախտաբար, այդպես չեղավ, անհնար էր, որ այդպես լինի, ըթողեցին, որ այդպես լինի։ Ի՞նչ համեմատություն Թումանյանի քաղաքացիական վարքագծի հետ։ Այն, ինչ արել և ասել էր Թումանյանը՝ բխում էր իր էությունից, պարտքի ու պարտականության սեփական ըմբռնումից, առանց մազաշափի դավաճանելու իր անհատականությանը։ Բայց Իսահակյանը ստիպված եղավ, պարտադրված եղավ ասելու և գրելու բաներ, որ տրամադժորեն հակառակ էին իր սրտին, հոգուն, բովանդակ էությունը։ Սա վերարբերում է ոչ թե 1920-ական թվականներին, այլ ամիսի ուշ ժամանակների, հատկապես 1940-ական թվականներին։ 1926-ին նրանք ժամանած Իսահակյանն իր ինքնությունը հակառակ գնալու պատճառ ու պարտադրություն չունեի, քանի որ բարոյականության ավանդական արժեքները և շահանքները դեռևս չէին կորցրել իրենց զորությունը։

Բռնակալն ու բռնակալությունը դեռ ցույց չէին տվել իրենց ահեղ գեմքը, դեռ ի կատար չէր անվել այն համաժողովրդական աղետը, որ կոչվում էր «համատարած կոլեկտիվացում», միլիոնավոր գյուղացիներ դեռ սովի ու աքսորի չէին դատապարտվել, զանգվածաբար մարդկանց չէին կալանում ու ոչնչացնում (ժամանակի բռնապաշարով՝ «հոգմադրիվ արվում» առանց դատ ու դատաստանի, քաղաքական բանտարկությունն ու մատնությունը դեռևս կյանքի նորմա չէին դար-

ձեւ, բռնակալի փառաբանումը չէր դարձել անխառնաշփոխ պարտադրություն, երկրի զեղարվեստական կյանքը զենա չէր դարձել բռնակալի կամքի հլու-հնազանդ ստրուկը...

Իսահակյանի երկրորդ ժամանմանը, առաջինից ընդամենը տասը տարի անց, 1936-ին՝ այս բուրն արդեն կատարված և կատարվող խռովություն էր, օրեցօր ավելի ահագնացող թափով, ավելի սաստիկ ու անկասելի:

Փարիզից Նրևան ժամանող բանաստեղծն այս ամենի մասին չգիտե՞ր, ինչ է: Իհարկե, գիտեր, ինչպե՞ս կարող էր չիմանալ. Աղասի Խանջյանի սպանությունը, որ ցնցեց հայությանը, նույն թվի հուլիսի 9-ին էր տեղի ունեցել...

Ինչո՞ւ, ուրեմն, բանաստեղծը թողեց շքեղ ու ապահով (համենայն դեպս՝ բանտից ու ոչնչացումից կատարելապես ապահով) Փարիզը ու եկավ ահով ու մահով պարտրված իր հայրենիքը՝ այդ զեպքում, երբ գիտեր, թե այնտեղ ինչպես են վարվում իր նման «մեղավոր» անցյալ ունեցած մարդկանց հետ:

Այստեղ է, որ պետք է խոսել մեր մեղմարարո բանաստեղծի ոչ միայն հայրենասիրության, այլև քաղաքացիական քաջության մասին՝ ինչպե՞ս իր ժողովուրդը, այնպես էլ ինքը, ինչ հակառակորդ որ կվիճակվի իր ժողովրդի զավակներին, թո՞ղ նույնն էլ վիճակվի իրեն:

Ի պատիվ Իսահակյանի, ուրիշ տրամաբանության չի ենթարկվում նրա վարքագիծը:

Եկավ բանաստեղծը հայրենիք և մինչև մրուրը քամեց բուրն այն դառնությունները, որ վիճակվեց իր ժողովրդին ու նրա զավակներին: Ծիշտ է, նա շատ մոտ էր խորխորատի եզրին, — կարծում էինք, ինքն էլ կարծում էր, թե ուր որ է իրեն էլ կտանեն, — բայց շտարան, հանգամանքների բարեբախտ բերումով նա խորխորատը չընկավ (պատճառն, ըստ երևույթին, իր ունեցած մեծ հեղինակությունն էր, երբեմն նմուշի համար պահում էին այդպիսի մարդկանց), բայց այն, ինչ ապրեց բանաստեղծը և ինչի ականատեսը եղավ շարադետ 1937-ին ու հետագա տարիներին, հենց այն է, ինչ կոչվում է «մինչև մրուրը քամել»:

Նրա զարհուրած հայացքի առաջ տրագորեն նոսրացան իր կրտսեր ընկերների, մտավորականների, գրողների շարքերը՝

երևակայությունից դուրս անողոք, հաներազմի, ապօրինի։  
Ուժով, բայց Բաահակյանը չափազանց հեռու էր բռնապետին  
համառ ընծայելու միամտությունից։ Նրա խորունկ միտքը  
թափանցում էր երևույթի խորքը, իսկ փխրուն սիրտը՝ լցվում  
կակիծներով։

Կարելի է պատկերացնել Բաահակյանի զանազան ապրում-  
ները, երբ հրաշքով իր ձեռքն էր անցել բանտից Սիդի Զա-  
րենցի ուղարկած երկտողն ու բանաստեղծությունը՝ իրրև  
սիրտ ու խոնարհումի խոստովանություն, իրրև հերքումը «Վե-  
նետիկյան էլեգիայի» (դա մեջ էր երված այս գրքի այն հատ-  
վածում, որ վերաբերում է Բաահակյանի կյանքի վեներետիկյան  
շրջանին)։

Բայց ես ոչ թե պատկերացնել, այլ վկայել կարող եմ, թե  
Վարպետն ինչքա՞ն ծանր էր ապրում իր անազատ վիճակը։

«Գրական վերթի» աշխատակիցը լինելու հանգամանքով  
1949 թ. հետադա մի քանի տարին ես հաճախ էի լինում Վար-  
պետի տանը։ Սա ի պաշտոնն կատարում էի հանձնարարու-  
թյուններ, և զրա մեջ ոչինչ չէր նկատվում կասկածելի։ «Առա-  
ջին անգամ, հասկանալի է, Բաահակյանի տուն մտա վարան-  
մունքով, նույնիսկ երկյուղով, — գրել եմ ես իմ հուշերում, —  
բայց առաջին իսկ այցելությունս նա ընդունեց այնքան պարզ  
ու թեթև, որ երկյուղն ու շփոթմունքը փարատվեցին միանգա-  
մայն։ Ընդունում էր և խոսում սիրով, ժպտաղետ, բայց առանց  
ընդգծված սիրալիրության։ Շատ շանցած՝ մեղտեղից վերանում  
էին ոչ միայն ամեն պաշտոնական երանգ, այլև, ո՞վ զար-  
մանք, մեր հասակի, իմացության, մակարդակի աճելի տար-  
բերությունը։ Ընդունել բառն էլ տեղին չի լինի գործածել,  
այդպես գրում եմ ավելի ստույգ բառ չգտնելով։ Կանչում էր,  
նստեցնում, խոսում, խոսեցնում, ավելի շատ խոսում, քան  
խոսեցնում. տպավորությունս այն էր, որ ինքը կամենում է  
բարձրաձայն մտածել և զրա համար ուներ ուշադիր լսողի  
կարիք։ Սվ ամեն ինչով, ամեն ինչում այնքան անկեղծ, պարզ,  
բնական, ինչպես իր էությունն էր՝ կյանքի ամենամեծ ար-  
տահայտություններից մինչև ամենափոքրը»։

Սա այս մեջբերումն անում եմ ոչ թե Վարպետի մարդկա-  
յին նկարագրի ևս մի կողմին ծանոթացնելու, այլ հետևյալ

ղեկաբեր պատմելու համար, որ շատ էական է նրա ապրած ներքին խռովքը հասկանալու համար:

1949 կամ 50 թվականն էր: Ինչ-որ հողված վերցնելու համար գնացի Վարպետի տուն: Ինչպես լինում էր սովորաբար, «հողված վերցնելը» երկար տևեց: Զրույցի ժամանակ մեկ էլ հարցրեց՝ երիտասարդներն ի՞նչ են մտածում իմ մասին: Ես շփաթցրի՝ լավ չեն մտածում, զժգո՛հ են, որ հետո է պահում իրենցից, չի հանդիպում իրենց:

Մտալվեց, լուռ մնաց բավական և ասաց ծանր շեշտով չե՛ն հասկանում, որ իրենց մասին եմ մտածում, ինձ ալյևս ոչինչ չեն կարող անել, իրենց կվնասեմ, այգթանը չե՛ն հասկանում, ինչո՞ւ չեն հասկանում...

Սա էր իրողությունը:

Այդպես էր ապրում բանաստեղծը, մի անտես ձեռքով սահմանադատված:

Ամենքը գիտին այն վշտալի պատմությունը, որ կապված էր Լեոնային Ղարաբաղի հետ: Վարպետն իր կնոջ՝ Սոփյա Իսահակյանի հետ միասին, իր մտերիմ, գյուղատնտես Զաքար Սուրավյանի մեքենայով 9 օր (1948-ի հուլիսի 15-ից 24-ը) շրջել էր Ղարաբաղում: Այս Սուրավյանը նույնպես զարաբաղյի էր և հենց նույն 1948-ին Ամերիկայից ներգաղթել էր Հայաստան:

Իսահակյանը Ղարաբաղում եղել էր մեկ էլ 1910-ին, կնոջ հետ, ամուսնությունից անմիջապես հետո: Նորապսակները եղել էին Շուշիում, ուր ապրում էին Սոփյա Քուլարյանի (բանաստեղծի կնոջ օրիորդական ազգանունը) հինգ հորեղբայրները և հորաքույրը՝ իրենց ժառանգներով. նրանց մեծ մասը դարձել էր Շուշվա 1920 թվի մարտի 22—23-ի կոտորածի զոհը:

Իսահակյանի զարաբաղյան շրջագայությունը ծանր, շա՛տ ծանր հետևանքներ ունեցավ: Հալածանքներ են սկսվել նրա հյուրընկալ մտավորականների դեմ: Ետտեղը բանտարկվել են, վտարվել աշխատանքից, մարդից առհասարակ: Խեղճ Զաքար Սուրավյանն արսորվել է Սիրիո:

Բանաստեղծ Բոգդան Զանյանը (Ադրբեջանի զրոգների միության Լեոնային Ղարաբաղի մարզային բաժանմունքի այն ժամանակվա պատասխանատու քարտուղարը), որ եղել էր

Իսահակյանի զարարադյան շրջագայության ուղեկիցը և այդ պատճառով ենթարկվել հալածանքների, շատ տարիներ անց՝ միայն 1988-ին հնարավորություն ունեցավ հրապարակել իր վկայությունները:

Ավետիք Իսահակյանը նկատել է, որ իրենց հետևում են և ասել է զայրացած.

— Կարծես թե մեզ հետևում են, բայց ինչու, գո՞ղ ենք, թե ավազակ:

Իսկ նրա նրան հայտնի են դարձել իր շրջագայության հետևանքները, դառնացել է խորապես.

— Ոտքս կոտրվե՞ր Ղարաբաղ շրջալի...

Բանաստեղծը թղթին է հանձնել զարարադյան շրջագայությունից ստացած մոսկու տպավորությունները: Ահա դրանցից մի քանիսը:

ԻՍԱՀԱԿՅԱՆ— Ընդհանրացումներից մեկն էլ այն է, որ վաշ թե մի կնոջ, հայ զարարադցի կնոջ հարցնես, թե ո՞նց ես, սկսում է լաց լինել և ասել իր կորուստների մասին: Ղարաբաղում տուն չկա, որ պատերազմի զոհ տված չլինի: Գոնե մի մարդ: Մայրեր կան երեք-չորս տղա են կորցրել: Ուղղակի քամել են հայ ժողովրդին, քամել են...

— Ղարաբաղը բացարձակ կտրված է Հայաստանից՝ ո՞չ թերթ, ո՞չ գիրք: Դասագիրք չունեն՝ հայերեն, Բաքու չեն տպում հայ դասագրքեր, նույնիսկ մայրենի լեզվի:

— Լեռնային Ղարաբաղի ավտոնոմիան բացարձակ սուտ բան է...

ԲԱՆԱՍԽԵՐ— Վարպետը հատկապես 1940 թվականների վերջերին իր առանձնապես մեջ ապրում էր մի տեսակ առանձնացված կյանքով, անուրախ մտորումների մեջ:

Սա էր իրականությունը:

Մեծ մարդու մեծ տառապանքը, որ կոչվում է ողբերգություն: Դեռ 1925-ին նա գրել էր իր նամակներից մեկում. «Եմ հոգում մի ողբերգություն կա, որ լեզու չունի»: Ա՜յ ողբերգությունը:

Եվ Վարպետն ինչքան էլ փառքի ու պատիվների արժանացավ, ինչքան էլ երկար ու ապահով ապրեց, սիրվեց ու մեծարվեց՝ երջանիկ չզգաց իրեն: Տրամադրության ամենալավ

պահանջներն անգամ մի անփառաստելի տխրություն իր մշտաբ-  
թուն ուղեկիցն էր, մինչև վերջ, մինչև իր կյանքի վախճանը։

Ինչպե՞ս կարող էր երջանիկ զգալ, երբ ստիպված ու պար-  
տադրված էր, թեև սակավագեղ, ներքողել այն բռնակալին,  
որից ավելի ասելի ոչ ոք գոյություն չունեիր իր աշխույժ։ Նա  
այդ վիշտն ապրում էր հոգեկան անպատմելի տառապանքով,  
այն աստիճան, որ երբեմն ասում էր նույնիսկ, թե իզուր  
եկավ հայրենիք, շատ թանկ դին վճարեց զրա համար՝ հոգու  
անկախությունը, բանաստեղծի ներքին ազատությունը, ան-  
հատականության կորուստը։ Դա իր մտերիմները գիտեին,  
որոնց նա շէր քաշվում իր մտքերը հայտնի դարձնել, բայց  
ժողովուրդը գիտե՞ր ինչ է կատարվում իր ներաշխարհում,  
գիտե՞ր իր ապրումները, մտքերը, իր իսկական վերաբերմու-  
թյունը։ Որտեղի՞ց իմանար։

Դա էր տանջում, ծվատում նրա հոգին։

1949-ի գեկտեմբերին, Ստալինի ծննդյան 70-ամյակի  
օրերին, երբ թերթերը ողորդված էին «մարդկային երջանկու-  
թյան ճարտարապետ ու դարբին» (Ն. Զարյան) մեծ առաջ-  
նորդին նվիրված հոդվածներով, բանաստեղծություններով,  
շափածո և արձակ ձևերով, լույս տեսավ նաև «Հայ ժողովրդի  
նամակը Իոսիֆ Վիսարիոնովիչ Ստալինին» ներբողականը՝  
Ավետիք Իսահակյանի ստորագրությամբ, ավելի ճիշտ՝ ոչ թե  
ստորագրությամբ, այլ այսպիսի գրությամբ. «Հայ ժողովրդի  
նամակը շափածոյի վերածնց Ստալինյան մրցանակի լաու-  
րեատ, բանաստեղծ Ավետիք Իսահակյանը»։ Հույժ գերազրա-  
կան ածականներով, ամենքին զգվեցրած ստանդարտ փառա-  
բանություններով լեցուն անգույն շափածո, որ շէր կարող  
պատիվ բերել Վարպետի ոչ միայն տաղանդին, այլև մարդկա-  
յին նկարագրին և որ միանգամայն հակառակ էր իր էությանը։

Նույն թվականի ամռանը, մի գիշերվա մեջ, երկրի տար-  
բեր ծայրերից և Հայաստանից նույնպես, բնահան էին արվել  
հարյուր հազարավոր, ինքնին հասկանալի է՝ միանգամայն  
անմեղ մարդիկ և արքայրվել բնտանիքներով հանգեցնել։ Աքսոր-  
յալների մեջ մեծ թիվ էին կազմում հայերը, որանց մեջ էլ  
խանդավառությամբ հայրենիք ներգաղթած հայերը։ Աքսորվել  
հեռավոր Ալթայի երկրամասը։ Նրանք դառն կշտամբանքով

նամակ էին գրել Իսահակյանին՝ բռնակալն այսպես վարվեց մեզ հետ, իսկ դո՛ւ...

Արամ Ինճիրկյանը, ազնվաբարոս և ազնվամիտ մի մարդ, գրականագետ և իսահակյանագետ, Վարպետի կրտսեր ընկերն ու սիրելին, մտել է Իսահակյանի տունը և տեսել է նրան այդ նամակը ձեռքին արտասվելիս. «Ձե՛ն հասկանում, որ ես չեմ գրել, գրել են տվել...»:

Ինճիրկյանն է պատմել ինձ:

Իսկ տողերիս գրողը կարող է մտաբերել, թե Վարպետն ինչպիսի հեղնանքով էր պատմում իր ղեպուտատական գործունեության հետևյալ գրվագի մասին. Հայկական ՍՍՀ Դերագույն Սովետի նստաշրջանի բացումը հանձնարարվել է նրան՝ իբրև ավագագույն ղեպուտատի: Ասել է Վարպետը բացման խոսքը, ինչպես կարգն է, ապա և ինչ որ հարցեր գրել քվեարկության՝ իրար հետևից հայտարարելով առանց զուխը բարձրացնելու. «Ո՞վ է կողմ», «Դե՞մ չկա», «Ձեռնպահ՝ չկա», «Անցնում է միաձայն»: Դիտողություն են արել ավագագույն ղեպուտատին, թե ինչո՞ւ գոնե ձևի համար զուխը չի բարձրացնում՝ տեսնելու համաձայն, գեմն ու ձեռնպահ... Վարպետը պատասխանել է. «Ի՞նչ կարիք կա»: Իհարկե, ամենքն էլ հասկացել են, որ գրանով Վարպետն իր հեղնական վերաբերմունքն է ցույց տվել պառլամենտի հույժ գեմոկրատական կարգի հանդեպ:

Կարծում եմ, համոզված եմ գրեթե, որ այն ժամանակվա լուսանկարներից մեկը, ուր երևում է Վարպետը բացման խոսք ասելիս, իսկ նրա թիկունքում հասակով մեկ բարձրանում է բոլոր ժամանակների մեծագույն բռնակալի վիթխարի արձանը՝ ցուցամատը վեր տնկած, հենց պատմածս գրվագի վերաբրտագրությունն է:

Կամ հիշում եմ, շատերը կհիշեն, Հայաստանի գրողների միության 1954 թվականի համագումարի այն նիստը, ուր Նախագահում էր Իսահակյանը: Այստեղ ելույթ ունեցավ Նաիրի Զարյանը և կշտամբեց զեկուցողին, թե ինչու նա գրական նվաճում է համարել Իսահակյանի վերը հիշածս գրվածքը, երբ դա ոչինչ չի ավելացնում նրա գափնիներին:

Կարծես թե Իսահակյանը շատ երջանիկ էր ներբողականի համար, հիմի էլ այդ կշտամբանքը:

Այդ պահին նիստը նախագահող Ավետիք Իսահակյանը, անտանելի շողից թե ձանձրույթից, ննջում էր գլուխն ափերի մեջ առած, ասես չէր էլ լսում հռետորին: Բայց չէ՛, ի՞նչ ննջել: Հանկարծ վեր կացավ տեղից (այդ պահին հռետորը լռեց), թափ տվեց իրեն, բաշը թափ տվող ծերացած առյուծի պես, և ասաց իրենից անսպասելի բարկությամբ, ափերն իրար շփելով, ինչպես հաշիվ են մաքրում՝ քամո՛ւն տանք մեր ներքուզականները՝ տեսնենք ումից ի՞նչ կմնա տակը...

Մտաւժորապես այսպես:

Դահլիճը հանդաց, թնդաց ծափահարություններից:

Անպարկեշտ կշառմբանքի ամենից անվրեպ պատասխանը բռնակալին ձոնված ներքողներով հռչակված նախրի Զարյանին:

Բայց մենք շատ առաջ բնական, սա վերաբերում է 1954-ին: Վերադառնանք, ուրեմն, 1936-ին, որ Իսահակյանի կյանքի մեծ շրջագարծը եղավ, երբ նա հայտարարեց ի լուր ժողովրդի:

ԻՍԱՀԱԿՅԱՆ— Ըմբոսառցել եմ կապիտալիզմի դեմ, հասարակության դեմ, ամեն ինչի դեմ: Եվ վերջ ի վերջո, երկար խորհելուց, կշռելուց, դատելուց հետո, վերստին եկել կանգնել եմ սոցիալիզմի վրա, և տարիներ են անցել, որ կանգնել եմ այդ փրկության լաստի վրա: Եվ ահա՝ ազատ կամքով, համոզմունքով, այրելով բոլոր նավերը, անվերադարձ, վերստին եկել եմ այն աշխարհը, ուր մեծ, հոյակապ զործ է կատարվում՝ ազգային և համամարդկային իմաստով:

ԲԱՆԱՍՆԲ— Շատ ավելի բարդ էր ստեղծագործական շեղջողարծի խնդիրը: Ինչո՞ւ: Որովհետեւ, եթե առաջինը պայմանավորված է մարդու բացառապես կամքով ու գիտակցությամբ, ապա երկրորդը պայմանավորված է նաեւ ստեղծագործական-հոգեբանությամբ, ուր բնավ էլ ամեն ինչ չէ, որ կախված է կամքից ու գիտակցությունից: Եվ դա ամենից լավ հասկանում և հիանալի բացատրում էր հենց ինքը՝ տուն վերադարձած պոետը:

ԻՍԱՀԱԿՅԱՆ— Մրադրել եմ շրջել Հայաստանում, Միսթյան մյուս մասերում, գիտելու, տեսնելու նոր կյանքի երեւոյթները և զեղարվեստորեն վերաբառադրելու, եթե, իհարկե, հաջողվի ինձ:

Շատ զժվար դորձ է գինամիկայի մեջ բռնված մի արագավազ կյանք բռնել և արվեստով ներկայացնել: Ստեղծագործության մեջ, գիտակցությունից առաջ, անհրաժեշտագույնն է ենթադրականությունը, որ ժամանակի կարոտ խնդիր է և մահավանդ՝ հասակի:

Տեսնենք, փորձը ինչ ցույց կտա:

ԲԱՆԱՍԾԻ— Փորձը ցույց տվեց, որ քանաստեղծը հարկավոր էր նոր կյանքին ու նոր հասարակությանը՝ իր արվեստի բեկուղն ավանդական ոճով, հինավուրց դասական ըմբռնումներով: Իր գրչակիցների առաջ նա հանդես եկավ և ստաց միանգամայն անկեղծորեն:

ԻՍԱՀԱԿՅԱՆ— Դժբախտաբար, ես տակավին այնքան երիտասարդ չեմ, որ շատերիդ հետ կիսեմ պայքարի զժվարությունները, բայց, բարեբախտաբար, այնքան էլ ձեր չեմ, որ վերմակը գլխիս քաշեմ և միայն օր մթնեցնեմ:

...Պետք է միայն սիրել, խորանալ, գիտել, տեսնել, զգալ, հուզվել և նյութը արվեստի վերածել:

Դալով ինձ, ես տակավին մոռանալու շատ բան ունեմ, որպեսզի կարողանամ նախ բան սովորել: Սիլ հետո՝ ես շատ բռնավորված ուղտ եմ, մինչև հին բռնեքս լիափեմ, նոր բեռ չեմ կարող վերցնել: Փսան-քսանհինգ հատ մանր ու խոշոր բաներ ունեմ ավարտելու և գրելու, որոնք օր ու գիշեր ճնշում են ինձ:

ԲԱՆԱՍԾԻ— Հին հզացումներով, անավարտ երկերով ծանրաբեռ գրողի «շմարած պարտքերից» մեկն էր «Սասմա Մհերը», մեր հանճարեղ էպոսի չորրորդ հյուղի մշակումը: Շատ աարիներ՝ 1919-ից մինչև 1937-ը, և դրանից առաջ ու հետո էլ, կամա թե ակամա ընդհատումներով, բանաստեղծը զբաղվել է այդ գործով: Զուր չէ, որ մշակումը կրում է այն ընթացքում կատարված սոցիալական տեղաշարժերի ուժեղ կնիքը: Հենց այն պարագան, որ Փոքր Մհերն իր անհնարին մաքսամամր կրում է սոցիալական հերոսի ակներև հատկանիշներ՝ դրա վկայությունն է:

«Սասունցի Դավիթ» էպոսը մեկն էր այն երևույթներից, որ գրողեցնում էր պոետի միտքը կյանքի այս շրջանում՝ մինչև Հայրենական մեծ պատերազմի սկիզբը: Այդ մտորումների խտացումն էր «Փորձ մեր զիցարանություն մասին»

Հողվածը. բոլոր ազգերի էպոսների խմացությամբ, ալլադդի էպիկական ասքերի հետ կապված ինքնատիպ համեմատություններով, խորունկ զննումներով հարուստ այն խմաստալից հողվածներից մեկը, որ երբեք զբվել է «Սասունցի Դավթի» մասին: Հողվածը լույս է տեսել 1939-ին, որ հայ կուլտուրայի մեջ մտավ երկու նշանավոր իրողություններ՝ «Սասունցի Դավթի» 1000-ամյակի փառահեղ տոնակատարությամբ և հայ արվեստի ու գրականության մոսկովյան առաջին տասնօրյակով: Ներշնչվեց Իսահակյանը 1000-ամյակի համաժողովրդական տոնակատարությամբ և մեծ հորեղանին նվիրեց «Մեր պատմիչները և մեր զուսանները» սքանչելի բանաստեղծությունը:

Ուկրաինական բանաստեղծ Լեոնիդ Պերվոմայսկին այսպես է մտաբերել հայկական էպոսի 1000-ամյակը: «Տոնի հերոսներն էին երեքը. նրանց անունները անընդհատ լսվում էին, և ամեն անգամ այս հաճախակի կրկնության մեջ հընչում էին զարմանքի և հուզմունքի, հիացման ու երախտագիտության նոր նրբերանգներ:

Սասունցի Դավթի, Մասիս, Իսահակյան... Չգիտեմ որի մասին էր շատ խոսվում: Զարմանալի չէր, որ Սասունցի հրակայի անունը բոլորի շրթներին էր. նրա համար էինք հավաքվել երկրի բոլոր ծայրերից՝ Մոլդավիայից ու Կարելիայից մինչև Ցեկուտիա և Չուկոտկա:

Մասիսը միշտ մեր աչքերի առջևն էր. իսկ Իսահակյանը... ոչ մի ճիգ չգործադրելով երեւալու, նա իր զոյությունը իսկ իշխում էր տոնահանդեսի վրա:

...Եվ երբ տոնի երկրորդ օրը թերթում լույս տեսավ Իսահակյանի «Մեր պատմիչներն ու մեր զուսանները» բանաստեղծությունը, արդեն անառարկելի իրողություն էր, որ խրախճանքի ու տոնախմբության խստագույն իմաստը բնորոշել էր Իսահակյանը իր հանդիսատեղներով:

Հաջորդ տարին արդեն Վարպետի հորեղանն էր: Վաթսունհինգամյա բանաստեղծն այդ ժամանակ բացարձակ հեղինակություն էր ժողովրդի աչքում: Եվ բանաստեղծական արվեստի, և՛ բարոյական-հայրենասիրական բացարձակ հեղինակություն: «Վարպետ» բառն այլևս մակդիր չէր նրա անվան դիմաց, այլ իր հատուկ անունը: Այնպես որ, երբ ժո-

ղոժրդի մեշ տալում էր, թե Վարպետն ասաց, Վարպետը եկա՞մ ալլես կարիք չկար Բաճակյանի անունը տալու: Եվ «Վարպետ» էլ որ ասում էին՝ կարծես հասկանում էին իր ոչ միայն գրական-պոետական վարպետությունը, այլ նաև մարդկային վարմունքի, մարդկանց հասկանալու վարպետությունը: «Պոետ կարող ես և չլինել, բայց քաղաքացի՝ պարտավոր ես» հին դարձվածքը գոյություն չունեի նրա համար, քանի որ նա պոետ էր ու քաղաքացի միաժամանակ, մարդ և արվեստագետ՝ կյանքի բոլոր պահերին ու բոլոր հանգամանքներում: Կարծես ինքը չէր համարժեցում արվեստի արքան, կարծես ինքը չէր ամենքի ակնածանքի առարկան, ինքը չէր Երևան քաղաքի առաջին անունն ու առաջին զեղեցկությունը, այլ նույն քաղաքի Ղուկասյան փողոցի 11-րդ տան մի սովորական բնակիչ էր ընդամենը (պոետն այդ տանն ապրեց տարբեր տարի՝ մինչև 1947-ը, երբ տեղափոխվեց իր համար կառուցված առանձնատունը, որտեղ ապրեց կյանքի վերջին տասը տարին):

Չափազանց շատ են վկայությունները, առակի կարգն անցած պատմությունները, թե որքան էր ճանաչված բանաստեղծն իր ժողովրդի մեջ: Ամենաճանաչվածը: Բառիս նաև ուղղակի իմաստով. ոչ ոք կարիք չունեի հարցնելու՝ ո՞վ է ձևոնափայտը թե՛մ զցած, կեցած աչքերով շուրջբոլորը ղենոզ, անբային անշտապ ընթացքով փողոցն անցնող այդ մարդը: Ամենքը գիտեին, և բարևում էին ամենքը՝ ծանոթ-անծանոթ: Ինքն էլ սովորել էր դրան՝ բարև էր առնում և բարև առնիս ամենքին:

Եթե, ասենք, դրոսեում էր Մաղկաձորի անտառներում, ինչպես մտաբերել է բանաստեղծ Հրաչյա Հովհաննիսյանը, աշտեղ ու այնտեղ քեֆի նստած մարդիկ պիտի կանչեին ա՛նձրասերով. «Ընկեր Ավետիք Բաճակյան չա՛ն...»: Քեֆի սեղաններին երգել են իր երգերը. «Պատահում էին անուշ ձայներ, որոնց ունկնդրում էր Վարպետը՝ լուռ, ուշադիր, հուշված: Նա գրեթե բոլորի մոտ էլ կանգնում էր, չէր կոտրում ոչ մեկի խաթրը և եթե չէր խմում, ապա մի երկու հարց-սրտատխան էր տալիս, բարեմաղթում»:

Արտաքնապես այնքան հանգստախոհ, հանցաբար դանդաղ ու խաղաղ, ինչպես, երևի, եղել են հին արևելյան իմաս-

տունները՝ Վարպետն ապրում էր ներքին լեցուն ու լարված կյանքով: «Սիրում էր նա մեր ժողովրդի թե՛ հոգևոր, թե՛ նյութական կուլտուրան՝ թե՛ հինը, թե՛ նորը... — պատմել է Ստեփանն Զորյանը: — Թամանյանի և մեր մյուս ճարտարապետների հոյակապ կառուցումները հիացնում, ոգևորում էին նրան խանդավառության աստիճան: Իսկ հին մի գեղեցիկ հուշարձանի քանդվելու կամ փլվելու վտանգը վշտացնում էր նրան հուսահատության չափ: Ի՞նչ մեծ ջանք ու եռանդ գործադրեց նա, մինչև որ փրկեց 13-րդ դարի մի մատուռ, ճարտարապետական մի հիանալի կոթող, որն ուղում էին քանդել Սրեանում՝ Գյուրջահյան նոր շենք կառուցելու համար: Այդ մատուռը այժմ գտնվում է ակադեմիայի հին շենքի բակում... Հապա ինչքա՞ն էր տանջվում նա Սևանի համար, նրա ջրերը խեցցենելու համար, վախենալով, որ մեր երկիրը հանկարծ կզրկվի իր այդ մեծագույն բարեբարից...

Ու այս ամենի համար, մանավանդ իր ժողովրդային հարազատ ստեղծագործությունների և թե՛ ընկերական ու մարդկային լավագույն հատկությունների համար նա իրավամբ վաշկույում էր լալն ժողովրդականություն»:

Թե ինչպիսի լալն ժողովրդականություն՝ երևաց Վարպետի ծննդյան 65-ամյակին նվիրված հոբելյանական հանդեսներից՝ Սրեանում, լենինականում, Թբիլիսիում: Ի պատասխան համաժողովրդական սիրտ, Վարպետն այսպես խոսեց երևանյան հանդեսի վերջում:

ԻՍԱՀԱՆՅԱՆ— Այս բոլոր ուղերձները, օվացիաները, ծափերը, մի խոսքով՝ ձեր բոլորիդ այսքան խանդավառ, սրբապալին ողջույններն իրենց մեծագույն մասով ինձ չեն պատկանում:

Որովհետև եթե դրանք միայն իմ անձի և զործի համար են՝ գտնում եմ չափազանց և հիպերբոլիկ: Դրանց արդար առերևույթ հայ ժողովրդի բազմադարյան գրականությունն է, հայ գրականությունը համամարդկային գրականության ամենահատարբրական և խորունկ էջերիցն է, և որպես այդպիսին արժանի է շատ և շատ մեծարանքի:

Հայ ժողովրդի ստեղծագործություն, հայոց լեզու, հայոց գրականություն...

Ես գլուխս խոնարհում եմ այս վսեմական սրբությունների առաջ:

**ԲԱՆԱՄԵՐ**—Երևանյան հանդեսին հաջորդեց լեռնական քաղաքում կայացած հանգեսը: Այստեղ էլ, սովորականի նրման, խոսեց մեր հորելյարը, և նրա խոսքը հեշեց իբրև հայրենասիրության հիմն:

**ԻՍԱՀԱԿՅԱՆ**—Սիրելագույն Շիրակն ինձ համար տիեզերքի կենտրոնն է եղել, որովհետև այստեղ է, որ սկսել է բարախել իմ սիրտը: Այստեղ եմ զգացել աշխարհը: Այս կենտրոնումն է սկիզբ առել իմ աշխարհաճանաչումը: Այստեղ եմ լսել ու սովորել մեր հայկապ մայրենի լեզուն...

Հայկական անցյալ փառավոր կուլտուրայի այս վայրում՝ Խվերական Շիրակումն եմ հյուսել իմ շքեղ երազները՝ նրա դմբուխտե Մանթաշում, Ալադյաղի ազամանդե կատարի վրա, բյուրեղ աղբյուրների զրնգոցի մեջ, Արփաշայի ափերում, բուսածններում, քաղաքներում և Անիի ներշնչող պարիսպների և առյուծաքար բուրգերի տակ:

...Այսպիսով, իմ սիրելի քարեկամներս, ես շափազանց երախտապարտ եմ իմ հովերձ սիրելի Շիրակին, որովհետև նա ինձ կազմավորել, ոգևորել և դարձրել է հայ հինավուրց ժողովրդի անմահ ու վեհ գրականության անուններից մեկը, կրտսերագույնը: Այստեղ եմ ճաշակել հայ գրականությունը, որից ստացել եմ ես սրբազան պատգամներ, դարերի մեջ կրթած, կոփված և երկյուղածությամբ ծառայել եմ նրանց:

Անուհետև, ինչքան հասակ եմ առել, այնքան բնագործակվել եմ Շիրակի սահմանները և վերջը գրկել եմ ամբողջ Հայաստանը:

Ով Հայաստանը ես միշտ և հանապազ կրել եմ իմ հոգում, ուր որ եղել եմ, Հայաստանը տարել եմ ինձ հետ: Նայել եմ Մոնրլանին, բայց չեսել եմ Մասիսը, կանգնել եմ Աթենքի Պարթենոնի առաջ, բայց զգացել եմ Երեբունյքը և Հռիփսիմի տաճարը: Լսել եմ Նեապոլի ժողովրդական երգերը, բայց հուզվել եմ մեր ժողովրդի երգով:

**ԲԱՆԱՄԵՐ**—Բավական բնագործակ խոսք է սա, և տողերիս զրոգը հաղիվ է բնդհատում ամբողջ խոսքի մեջբերումը՝ այնքան ներշնչող, այնքան զեղեցիկ է այդ խոսքը: Բայց կա մեկ ուրիշ խոսք էլ՝ ասված Թրիփսիում կայացած հորելյանական

հանգեսին՝ ժողովուրդների բարեկամության, հայ և վրաց ժողովուրդների պատմական բարեկամության ղեզեցիկ գրվատանքը: Այն գրողը, որի ինտերնացիոնալիզմն արյան մեջ էր, որի նույն այս տարիներին գրած հոդվածները Պուշկինի, Ռուսթավելու, Շևչենկոյի, Գոթկու մասին նույն դավանանքի ինքնաբերական արտահայտություններն էին, մի առանձին հուզմունք է ապրում՝ իր հորելյանի մեջ տեսնելով մեծ գաղափարի կենդանի մարմնացումը:

**ԻՍԱՀԱԿՅԱՆ**— Զեմ կարող թաքցնել այն հպարտ զգացմունքը, որ ունեւմ այսօր այն բարձր պատվի համար, որ արժանացնում է ինձ Սովետական Վրաստանի Գրողների միությունը եղբայրական Վրաստանի այս շքեղ մայրաքաղաքում, ուր անցրել եմ երիտասարդության խանդավառ տարիներս և որը այնքան մոտ է, թանկագին է և միշտ կենդանի իմ սրտում:

...Ի՞նչ անկշռելի բերկրանք էի վայելում ես, երբ անցյալ ամառը չքնաղ Վրաստանում շրջագայելիս հանդիպում էի վրացի ուսանող և ուսանողուհիների, որոնք ճանաչում էին ինձ և հատվածներ էին արտասանում իմ «Աբու-Լալա Մահարի»-ից և «Սասմա Մհեր» պոեմայից, որ այնպես հմտությամբ և սիրով թարգմանել է մեր հարգելի ընկեր Միքել Պատարաձեն:

Ես էլ ունեւմ բավական թվով հայացումներ վրաց հոյակապ գրականությունից և ղեզեցիկ ֆուկլորից, և ունեւմ նույնպես ինքնուրույն գրվածքներ վրաց հին և նոր հերոսամարտի գրվազներից:

...Հայտնի է, որ գոյություն է ունեցել երկու ժողովուրդների միջև մի սրբազործված սովորություն. աղջերի պատմության մեջ մի հուզիչ, եղակի սիմվոլ: Որպեսզի ավելի ամրապնդեն եղբայրությունը,— շատ տեղեքում, ուր խառն էին ապրել վրացի և հայ,— վրացի մայրերը կաթ են տվել հայ երեխաներին և փոխադարձը:

**ԲԱՆԱՍԵՐ**— Շատ հոդվածներ գրվեցին բանաստեղծի հորելյանի առիթով, մեծաբանքի շատ խոսքեր ասվեցին: Դրանցից մեկն էլ իր գրչեղբայր Դերենիկ Դեմիրճյանի խոսքն էր, որի մեջ առանձին շեշտ ունեւ համաժողովրդական վերաբերմունքն իր բանաստեղծի հանդեպ. «Ո՛չ որ աշխարհում

այնպէս առատ ու անկեղծորեն շի վարձատրում մարդու, որ-  
քան մաղախորդը:

Այսօր ահա այդ ժողովուրդը Ձեզ է վերընծայում այն  
բոլոր ստեղծագործական ուրախությունները, որ Դուք ընծա-  
յնէ եք նրան:

Այս խոսքն ասվել է 1940-ի վերջին: Քիչ, հազիվ մի ամիս  
անց, 1941-ի հունվարի 19-ին, Վարպետը մի «ստեղծագոր-  
ծական ուրախություն» էլ պարզեց իր ժողովրդին: Դա «Բին-  
դյուն» էր՝ ես մի թանկագին քար հայ երգի ու պոեզիայի  
զանձարանում:

Սա մի զարմանալի ոտանավոր է այն պատանեկան ներ-  
շնչումով, որ ապրել է վաթսուհինգամյա պոետը: Վաղուց,  
շատ վաղուց, տասնութամյա Իսահակյանը գրել էր իր առա-  
ջին «Բինդյունը»:

Շունչընկալով հովն է փչում  
Ձով Բինդյունի լանջերից...

*Փառասունութ տարի անց վաթսուհինգամյա պոետը գրեց  
իր երկրորդ «Բինդյունը».*

Երբ բաց եղան զարնան կանաչ զոները,  
Քեար գառան աղբյուրները Բինդյունի.  
Շարվե-շարան անցան զուգված ուղտերը,  
Ճարս էլ զնաց յայլաները Բինդյունի:

Անգին յարիս լույս երեոին կարոտ եմ,  
Նազուկ մէջքին, ծով-ծամերին կարոտ եմ.  
Քաղցր լեզվին, անուշ հոտին կարոտ եմ.  
Սև աչերով էն եզնիկին Բինդյունի:

Պա՛ղ-պա՛ղ չ չրեր, պապակ չուրթըս չի բացվի.  
Սուփ-ծուփ ծաղկունք, լացող տըս չի բացվի.  
Դեռ շտեպած յարիս,— սիրտըս չի բացվի,  
Ինձ ի՛նչ, ալա՛ղ, բլբուլները Բինդյունի:

Մուրթվել եմ, համփաներին ծանոթ չեմ,  
Բյուր լէերին, գետ ու քարին ծանոթ չեմ.  
Ես պանդուխտ եմ, էս անդերին ծանոթ չեմ,  
Փուլրիկ, առա, ս՛րն է համփան Բինդյունի:

Սա երկրորդ պատանեկության անսպասելի, երջանիկ վերադարձն էր՝ զգացմունքների լուսեղեն մաքրությանը, պայծառ աշխարհազդեցումով, որոնումի, կարոտի, սպասումի թրթիռով։ Եվ ի՞նչ զերոզ թեթևություն, զգացման և արտահայտման ձևի թովիչ ներզաշնակություն։ Կարծես զրոյի ձևոք շի դիպել այս տողերին, այլ միանգամից երգվել է մի շքնշով։

Ստեֆան Յվայզը դարձանում էր Գյոթեի «Մարիենբադյան էլեգիայով»՝ ձերունազարդ բանաստեղծի պատանեկան ներշնչանքով։ Մենք էլ, մեզ համար, կարող ենք դարձանալ մեր ձերունազարդ պոետի պատանեկան ներշնչանքով։ Նաև այն իրողությանը, թե հնօրյա հանգով, կարծես անցյալ դարավերջին զրված և հիմա միայն հրապարակված բանաստեղծությունն ինչպես թարմ հնչեց նոր ժամանակներում։ Ու նաև այն իրողությանը, թե ինչպես 1941-ին էլ, ինչպես հնում, տեղնուտեղը հայտնվեց մի անանուն երգահան և հորինեց մի կախարդական մեղեդի, որ այդ բանաստեղծությանը տեղ տվեց ժողովրդի սրտում։ Եվ այստեղ ևս, պոետի հին երգերի նման, կարծես խոսքն ու մեղեդին միևնույն մարզը, աստվածային ներշնչանքի նույն բախտավոր պահին էր հորինել։

Քնարական արվեստի ևս մի մեծ արժեք։ Ժողովրդական ոճով գրված վերջին գլուխգործոցը թեևս։

Իսահակյանի քնարական տարեգրությունը, հաջորդ բանաստեղծությունը, որ գրվել է «Բինգյուից» հետո, «Բազմակույն» էր։

Հիպերբյան Գերմանիան, — զարձայ՛լ Գերմանիան, — 1941-ի հունիսի 22-ին հարձակվեց Խորհրդային Միության վրա։ Այդ ժամանակ պոետը հանգստանում էր Կովկասյան Հանքային ջրերում՝ էսենտուկիում։ Մասն եղավ պոետի վրդովված հոգին քնդդեմ վաղածանոթ թշնամու, և հունիսի 26-ին նա գրեց իր «Բազմակույնը», որ ունի այսպիսի մարտական շունչ։

Էյհե՛յ, լսեցեք, ձայն տվեք իրար,  
Ամե՛նք եք ոտքի, մարդ քնած չկա՞.  
Ե՞րբ հագեք-կապեք զենքեր ու զրահ,  
Գոտեղեղվեցե՛ք ատելությամբ վատ,  
Գոտեղեղվեցե՛ք անձնազոհ կամքով։

Գոտեպնդվեցե՛ք ահեղ վրեժով,  
 Շառաշե՛ք ուժգին, կաշնիներ հզոր,  
 Եւզ վրեշաշե՛ք, եմույցներ խիզախ,  
 Մրրիկի նման զարկեցե՛ք շնփոր,  
 Գեպի ուզմի գաշտ, զեպ հերոսացում,  
 Գեպի ուզմի գաշտ սուրբ գրոշի տակ,  
 Գեպի բարձունքը մահի ու փառքի,  
 Վանեցե՛ք հնուս թշնամուն վայրազ,  
 Մեր խրճիթներից, մեր հնձաններից,  
 Մեր արտ ու կալից վանեցե՛ք հնուս,  
 Հավերժ պիտ մնա Հայրենիքը մեր,  
 Հզոր ու ազատ և հավերժ կանգուն  
 Մեր իզեպնների սուրբ արեւի տակ:

Գեպի ուզմի գաշտ, զեպ հերոսացում,  
 Գեպի բարձունքը մեծ լազիմանակի:

Հայրենական պատերազմն ուրիշ դարձրեց Իսահակյանի գրիչը, նույնն է առել, թե բնավորությունը: «Բինդուլի» հեղինակը, նորին ղգացմունքների, սիրո ուսուցիչը դարձավ ատելության ուսուցիչ: Եվ լիակատար իրավունքով, Ուլ-ով, երկու պատերազմ տեսած ու երրորդը տեսնող պոետը, Գերմանիան ճանաչող Իսահակյանը գիտեր ո՛ւմ և ինչո՛ւ է աւտում: «Գոտեպնդվեցե՛ք ատելությամբ վառ» իր խկ կոչն ամենից քիչ իրեն էր վերաբերում, քանի որ առաջին աշխարհամարտն սկսած և հայ ժողովրդի ողբերգական ճակատագրի մեջ ռմբադորձ դեր կատարած իմպերիալիստական Գերմանիային նա ատելով աւտում էր վաղուց: Եվ իր հայրենակիցներին «ատելությամբ գոտեպնդելու» դերն էր, որ նա վերապահում էր իրեն ամենից ավելի: Մեծ հայրենականի բոլոր տարիներին Վարպետն ապրեց ու գործեց այդ դերի քաղաքացիական բարձր գիտակցությամբ:

Հայտնի միտք է՝ մի որևէ ղգացումով ուրիշներին համակելու համար պետք է ինքդ համակված լինես դրանով: Հին ռոտիի նկատմամբ Իսահակյանը լցված էր ատելությամբ հնից ի վեր: Նա պաշտոնական Գերմանիան ճանաչում էր ոչ թե զրքերով, այլ անձնական կենսափորձով: Դեռ ե՛րբ, 1936-ին նա գրել էր «Հիշատակարանում»:

ԻՍԱՀԱԿՅԱՆ— Գերմանացու հայացքները նացիների մասին, հիտլերականների մասին, խարեությամբ տեղ դարձան

Գերմանիային, խաբերությամբ էլ պիտի ապրեն, գլուխ պահեն. բռնությամբ տեղ դարձան, բռնությամբ էլ պիտի շարունակեն ապրել, գործել: Հենց որ դադարի բռնությունը, կվերջանա հիտլերիզմը. ամեն դիմագրություն անխնա ոչնչացնում են սաղմի մեջ. ո՛չ սեռ են խնայում, ո՛չ հասակ, ո՛չ դիրք, ո՛չ արժեքներ. միջոցներ են՝ ամբողջավարություն, քծնություն, քսություն, լրտեսություն, մատնություն, կոդուպատ, ծեծ, սպանություն, սարսափ, տեսություն:

Հիտլերի աստվածացում, բռնության աստվածացում. ամեն միջոց գործադրելի է՝ նպատակին հասնելու համար:

Ապշած է գերման ժողովուրդը, շշմած. վախեցած, փոքրողիացած, փոքրողի դարձած, դիմադրական ուժը մեռած, բայց իր հոգու մեջ թշնամի է ուժիմին: Թեև բոլոր պետությունները երկրագնդի ընդունում են, ճանաչում են Հիտլերին, բայց բուն գերմանական ժողովուրդը չի ընդունել, չի ճանաչում Հիտլերին:

Հենց որ հրաշքով ընկնի ուժիմը՝ ժողովուրդը կացիններով պիտի ջախջախե վերջին հիտլերականի զանգը:

Սա սպասում եմ այդ օրվան: Դրա համար եմ ապրում:

ԲԱՆԱԿԱՅԻՆ— Եվ հիմա իր այդ վաղեմի համոզմունքով է գրում:

ԻՄԱՀԱԿՅԱՆ— Մենք ճանաչում էինք ու սիրում կլասիկ Գերմանիան՝ «Բանաստեղծների ու փիլիսոփաների հայրենիքը», ռոմանտիկական կապույտ ծաղիկի երկիրը, իդեալիստ երազող այն Գերմանիան, ուր, երբ էռնեստ Թեոմանը, 19-րդ դարի առաջին կեսերին, այցելեց, ծունկի եկավ ու համբուրեց նրա հոգը: Դյոթեի Գերմանիան: Սակայն այդ Գերմանիան ճգնվեց պրուսական յունկերի կրունկի տակ, Ֆրիդրիխ Մեծի երազած ֆեդդֆեդերիկյան կրթությունը ալլամսերեց երիտասարդությունը, միլիտարիզմը դարձավ կրոն, պատերազմը՝ պաշտամունք: Պոտսդամի ագրեսիվ-ռեակցիոներ ոգին՝ հումանիստ Վայմարի փոխարեն: Խելագարության հասած շովինիզմը՝ ալլամերժ և ատելավառ դեպի ոչ-գերմանացին, արհամարհանքով լցված աշխատավոր մասսաների հանդեպ: Բռնության և բռնի ուժի ներքողում, աստվածացում: Հեղեմոնիա աշխարհի վրա՝ «Գերմանիան բոլորից բարձր», բոլորին հրամայող:

**ԲԱՆԱՍԵՐ**— Բանաստեղծն այս Գերմանիայի ծնունդն է համարում մեծ ռճրագործին և բառեր չի գտնում երա էութունը բնութագրելու՝ ասելով թյուն բորբոքելու համար:

**ԻՍԱՀԱԿՅԱՆ**— Հիտլերը պատուողիկ մի տիպ, ֆրեուզյան, պատանեկան օրերից չբավարարված մեղալումանիայով և շարտիշամբ լցված կոմպլեքսային-հիստերիկ ճիվաղ, քերուս, բարոյական բուրբ նորմաներից և զսպանակներից զերծ, բացարձակ անմեղալ, հարբած՝ շիկացած շովինիզմով, ռեվանշով, ժողովուրդների արյունով հափրացած, գիտկներին հռոտող անհագորդ բորենին՝ փրկիչ, մեսիաս:

Գալլի ակործանով, զավագրարար, ստոր ավազակի պես Հիտլերը հարձակվեց մեր հուսիսի գաշտերի վրա, սոցիալիզմի երկրի վրա, բայց նրա բլից-կրիգի կայծակը փշրվեց մեր պատենելի ժաշոներին դիպնելով: Այստեղ է, որ վերջնականապես պիտի ջախջախվի նրա ռեյրների բույն հակառը և ժանիքը:

**ԲԱՆԱՍԵՐ**— Այս խոսքը զրվել է, երբ երկու ամիս էլ չէր անցել պատերազմի սկզբից, երբ գերմանական զավթիչները իրենց զեռ անպարտելի էին կարծում, զեռես ներխուժման ընթացքի մեջ էին: 1942-ին, պատերազմի ամենամանր տարին, գերմանական կուլտուրան խորապես իմացող ու հարգող բանաստեղծը հարցնում է տարակուսանքով.

**ԻՍԱՀԱԿՅԱՆ**— Ուրեմն իզո՞ւր անցան գերմանական ժողովրդի համար Հերդերի, Եիլլերի մարդասիրական պատգամները, իզո՞ւր անցավ Կանտի բարոյական իմպերատիվը: Ուրեմն այլևս Գերմանիայի դիտի վերս չն՞ շողշողում հավերժական աստղերը և բարոյական օրենքը չի՞ ապրում երբս սրտում:

**ԲԱՆԱՍԵՐ**— Հարցնում է և, այդ կուլտուրան հիտլերյան մոլագարներից անշատելով, տալիս իր պատգամը:

**ԻՍԱՀԱԿՅԱՆ**— Մարդու պատիվը փրկելու համար, հազարամյակների կուլտուրան ֆաշիստական «նոր կարգի» վերածվելուց փրկելու համար մի քարոզ կա միայն՝ ջախջախել ամբողջի, ճիվաղ Հիտլերի և նրա ռեժակի գլուխը:

**ԲԱՆԱՍԵՐ**— Ոչ ոք աշխարհում չէր կարող Իսահակյանից ավելի լավ բացատրել, թե ինչո՞ւ Գյոթիեզը, այսպես կոչված «Կանաչ գրքի» մեջ (այն գրքի, ուր հրահանգներ են տրվել,

թե ո՛ր ժողովրդի հանդեպ ինչպե՛ս պետք է կողմնորոշվեն գերմանական զավթիչները), ցուցում է տվել՝ նկատի առնել հայերի առանձնապես անբարյացակամ վերաբերմունքը գերմանացիների նկատմամբ: Հայկական կոստորածները, 1915-ի Մեծ եղեռնը ոչ մի պահ չմոռացող, մոտիկ անցյալի պատմությունն անձնական կենսափորձով իմացող, Գերմանիան լավ ճանաչող բանաստեղծն է, որ կարող էր տալ զրա սպառիչ բացատրությունը:

ԻՍԱՀԱԿՅԱՆ—...Երբ Հայաստանի գլուղներն ու քաղաքները թաթախվեցին հայկական արյան մեջ՝ աշխարհում Վիլհելմ Զ-րդ կաշվերը ցինիկաբար հայտարարեց, որ հայերից պիտի թողնել միմիայն մի մարդ, իբրև էթնոգրաֆիկ մուշեյի օբյեկտ, և ուխտի գնաց նույն սուլթանի մոտ՝ խրախուսելով հայկական ջարդերը: Իսկ առաջին իմպերիալիստական պատերազմին նույն կաշվերը իր բորենիներով՝ Իմհոֆ, Սանդերս, Ֆոն դեր-Գոլց գեներալներով և զեսպան Վանկենհայմով թև տվեց Իթիհատի պանթուրքական բանդազոշանքին և... շնչեցին ողջ արևմտահայությունը, մի հինավուրց ժողովուրդ իր կուլտուրայով, արվեստով, ֆուկլորով, սրբեցին մի ողջ ժողովուրդ իր բազմադարյան հայրենիքից, շնչեցին նրա և՛ անցյալը, և՛ ներկան, և՛ ապագան...

Մոնոկլ զրած գերման վայրագ սպանների հոգոցի տակ՝ ծովը թափեցին մեծերին և մանուկներին, մայրերին...

Կուլտուրական բարբարոսները և մոնղոլ բարբարոսները միացան՝ ստեղծելու համար մի նոր շինդիզմանյան հրեշապետություն Համբուրգից մինչև Զինական պարիսպները: Հայ ժողովուրդը գերմանացիների ձեռքից ստացավ մի անբուժելի վերք...

Հայ ժողովրդի սրտի մեջ շիկացած երկաթով անշնչելիորեն զրված են այս ամենը:

Ահա այս պիտի գիտենա հայ զինվորը, երբ հանդիպի գերման զորքին: Եվ պիտի գիտենա նաև, որ հայ ժողովուրդը իրավունք ունի մահի պես ատելու իր թշնամուն և սիրելու իր բարեկամին՝ ռուս մեծ ժողովրդին:

ԲԱՆԱՍՆԲ— Այսպես էր կողմնորոշում բանաստեղծն իր ժողովրդին՝ պատմության դասերով ու սեփական կենսափորձով: Այսպես էր սովորեցնում ատելության գիտությունը:

1942-ի հունվար և փետրվար ամիսներին Իսահակյանը գտնվել է Մոսկվայում: Իր սովորության համեմատ, այստեղ ևս արել է գրառումներ: Գրանցից մեկն այնքան խորն է և ինքնատիպ, որ կարևոր եմ համարում առանձնացնել:

**ԻՍԱՀԱԿՅԱՆ**— Երևակայությունը իրականությունից ուժեղ է, բարձր է. իրականությունը սահմանափակ է. երևակայությունը գեղեցկացնում է իրը, վեհացնում է իրը, մեծացնում է գեղեցիկը, ավելի գեղեցիկ պատկերացնում: Օրինակ, Փարիզը երևակայության մեջ ավելի գեղեցիկ է:

**ԲԱՆԱՍԵՐ**— Հիմա մտքի շարունակությանը, մտքի շրջադարձին ուշադրություն դարձրեք:

**ԻՍԱՀԱԿՅԱՆ**— Բայց հատկապես սարսափելի բաները՝ ջարդ, կոտորած, պատերազմ, թուրքերի վայրագությունները ավելի սարսափելի են, քան որ մարդը կարող է երևակայել. ուղղակի նրանք անցնում են երևակայության սահմանները: Իրականությունը չի հասնում երևակայությանը, այնպես, ինչպես երևակայությունը չի հասնում սարսափելի իրականությունը:

**ԲԱՆԱՍԵՐ**— Եվ այստեղից՝ տխուր եզրակացություն:

**ԻՍԱՀԱԿՅԱՆ**— Ուրեմն՝ աշխարհն ինքնին վատ է, զարհուրելի է. սարսափելի իրականությունը հակասական է մեր տենչերին, ցանկություններին, մեր հոգին չի ստեղծագործում այստեղ: Նա՛ մեր հոգին, ընդունակ է իրայն լավ բաներ, գեղեցիկ բաներ ստեղծելու, որովհետև դրանք բավարարում են մեզ՝ համապատասխան մեր տենչերին, ցանկություններին:

**ԲԱՆԱՍԵՐ**— Երևի սխալված չենք լինի, եթե ասենք, որ այս դատողությունը որքան հոռետեսական է իրականության հանդեպ, նույնքան լավատեսական է մարդ արարածի, նրա ներաշխարհի, հոգու նկատմամբ:

Իսահակյանի մոտկության հիշատակարանը մեզ գրավում է ուրիշ վկայություններով ու դատողություններով ևս:

**ԻՍԱՀԱԿՅԱՆ**— Կոիվների ծամանակ մի սպա հայտենի է իր դասակին, ասելով՝ «Велика Россия, а отступать некуда — позади Москва», և գինվորները քաշարար կռվել են, չեն նահանջել: Պատմական խոսք. «Մեծ է Ռուսաստանը, բայց նահանջելու տեղ չկա՝ հետևել Մոսկվան է»:

Վախը, երկշտութիւնը, սնահավատութիւնը ռուս զինվորի որակին շին պատկանում:

— Գերմանական մի մեռած սպայի մոտ գտնում են մի քարտեզ, ուր նշանակված են հետեւյալները. Ուկրաինայի, Բելոռուսիայի, Ռուսաստանի վրա մինչև Ուրալ գրված է եղել՝ Գերմանիա: Ղրիմի, Կովկասի վրա՝ Գերմանիա, Թուրքիայի և Իրանի վրա՝ Գերմանիա:

Մուրազները փորը մնաց:

— Գերմանիայի դրութիւնը վատ է և վատ էլ պիտի լինի այսուհետև. դրաից՝ Ռուսաստանը, ներսից՝ Ֆաշիստները:

— Յաշիգմը ժողովրդասպան կուսակցութիւն է:

— Ստրկութիւնը փշաջնում է ժողովրդին, ստորացնում, անբարոյականացնում, մարդուն դարձնում է վախկոտ, անպատիվ, անազնիվ, քսու, կեղծավոր, դավաճան, նենգ:

Քարոզել իղեալներ—ազնվութիւն, արիութիւն, կամքի ուժ, բնավորութիւն, հպարտութիւն, վեհանձնութիւն, ստեղծագործական խրախուս, խթան. մի խոսքով՝ հայ ժողովրդի առջև ցույց տալ վեհ նպատակներ, վսեմ ապագա, ստեղծագործ կյանք:

ԲԱՆԱՍԻՆ— Պատերազմի ահեղ օրերին քանաստեղծն իր մաքառող ժողովրդի հետ էր, իր ժողովրդի մեջ, նրա հոգսերի ու վշտերի հետ: Զափաղանց շատ են վկայութիւնները, որոնցից մեկը թղթին է հանձնել Ստ. Զորյանը. «Պատերազմի օրերին, երբ մարդիկ, ամբողջ ընտանիքներ կարիք էին զգում ջերմ, սփոփիչ խոսքի, մի օր մի հասարակ կին, ռազմի դաշտում երեք որդի ունեցող մայր, գրել էր ռուսնավորի պես մի բան և բերել մեր տունը, որ ես հանձնեմ Իսահակյանին:

Իսկ ի՞նչ էր այդ կնոջ գրածը... Կարծում եք օգնութիւն էր խնդրում: Ո՛չ... Վշտահար մայրը դիմում էր պոետին, թե երգիր, սիրելի բանաստեղծ. միայն դու կարող ես սփոփել անբախտ մայրերին, միայն քո խոսքը կարող է բուժել մեր ցաված, մեր վշտակոծ ու վիրավոր սիրտը...

Այսպես դիմում են միայն հարազատին...

Նվ Իսահակյանը հարազատ էր ամենքին:

Այս պատմութիւնը հաղիվ թե պետք է որևէ բան ավելացնել: Գուցե այն, որ Վարպետի ու նրա խոսքի կարիքն

զգում էին ոչ միայն մաքմանոց գինվորները և վշտահար մայրերը:

Երբ 1943-ի աշնանը բացվեց Հայաստանի Գիտությունների ակադեմիան՝ Խաչատուրյանն էր, ակադեմիայի առաջին խակական անդամներից մեկը: Որ պիտի ասեր իր ժանրակի՞ռ խոսքը:

ԻՍԱՀԱԿՅԱՆ—...Հայաստանի ակադեմիայի բացումը մի նոր ջախջախիչ հաղթանակ է խաղարակույտ հիպոթեզի վրա, միաժամանակ սիմվոլիկ և ներշնչող փաստ էր մեր Միության անասանությունն և թե մեր ողջ լուսավոր պետականություն:

...Ակադեմիայի կուլտուր-պատմական մեծ գործերից առաջնակարգն է՝ բարձրացնել հայ ժողովրդի ինքնաճանաչությունը, խորացնել հայրենասիրությունը, դիտակցական սեր զարգացնել նրա մեջ դեպի իր հայրենիքը, լեզուն, կուլտուրան և հավատ գնդի իր պայծառ ապագան: Ակադեմիան պիտի հանդիսանա մեր ժողովրդի պարծանքն ու հպարտությունը: Նա պիտի լինի մեր կուլտուրայի գագաթը:

ԲԱՆԱՍԻՐ— Երբ 1943-ին նկարահանվում էր «Դավիթ-բեկ» պատմա-հայրենասիրական կինոնկարը՝ Խաչատուրյանը եղավ նրա երգերի խոսքի հեղինակը:

Երբ 1944-ի դարնանը, Նշանավոր շքսպիրադեաների մասնակցությամբ, Երևանում հրավիրվեց Ենթապիրյան համամիութենական փառատոն՝ Խաչատուրյանն էր, որ իր խոսքով պիտի զնահատեր երևույթը:

Երբ, նույն 1944-ին լույս տեսավ Գերենիկ Գեմիրճյանի «Վարդանանք» վեպը, հայ պատմավիպասանության այդ Նշանավոր արժեքը՝ Խաչատուրյանը պիտի լիներ նրա առաջին գնահատողներից մեկը:

ԻՍԱՀԱԿՅԱՆ— Հեղինակը ապրել է իր երազը, իր ստեղծագործությունը. գրել է ոգով և ավյուռով, գրել է կրքով, երիտասարդական խանդավառությամբ, մեծ հայրենասիրությամբ, վարակող տրամադրությամբ:

Վեպը վառվում է ռազմական կրակով, յուրաքանչյուր էջից, կարծես, վրնջում են նժույգները: Կորովի երիտասարդները պատրաստ են կռվել և զոհվել հայրենիքի համար:

...Կրթիչ, դաստիարակիչ վեպ է, բարձրացնող, ոգի կազմուրդ: Մեր ներկա մեծ էպոխային՝ Հայրենական— օպտե-

բազմի օրերին բացարձակ համընկնող. ողորդ խոսք՝ իր ժամանակին ասված: Նա պիտի խանգավառի մեր մարտիկներին օրինակ առնելու մեր հերոսական նախնիներից՝ վարդաններից, անձնազոհարար կռվելու հայրենիքի ազատության համար, կուլտուրայի պաշտպանության համար նոր Հազկերտի՝ Հիսուսի դեմ, որ եկել էր ընկճելու մեր հայրենիքը, ոչընչացնելու մեր կուլտուրան, ոտքի տակ տալու մեր պատիվն ու ազատությունը:

ԲԱՆԱՍԵՐ— Այս հոգվածի հետ կապված է մի շատ հուզիչ դեպք, որ իր հուշերում պահել է Բ. Զարյանը: Հոգվածը լույս տեսնելու օրը հին ընկերները հանդիպում են միմյանց. «...Դեմիրճյանը եկավ: Եվ տարօրինակ բան. ասում, խոսում է և ոչ մի խոսք հոգվածի մասին: Ըստ և Իսահակյանը իրար հենք նայում ու չենք հասկանում: Ըստ այլևս չհամբերեցի և դարձա Դեմիրճյանին.

— Չե՞ք կարդացել:

— Ի՞նչը:

— Վարպետի հոգվածը:

— Ինչի՞ մասին:

— «Վարդանանքի»:

Դեմիրճյանը նայեց Իսահակյանին. շրթունքներին ժպտա կար և ժպտաի մեջ՝ ուրախ դարձանք:

Ըստ թերթը տվի նրան: Առանձնացավ, նստեց լուսամտա տի մոտ և սկսեց կարդալ: Երբ վերադարձավ, աչքերը վառվում էին երիտասարդական կրակով: Շրթունքները շարժվեցին, որ մի բան ասեն, բայց չկարողացան: Իսահակյանը ոտքի կանգնեց: Երկու ընկեր՝ հին ու վաղեմի բարեկամներ, փարվեցին ու երկար այդպես ողջագուրված մնացին»:

ԲԱՆԱՍԵՐ—Հայրենական պատերազմի տարիներին ավելի, քան երբևէ պատմական անցյալի հերոսական էջերը դարձան արդիական ուսանելի արժեքներ: Պատմական մեծ անցյալ ունեցող ժողովրդի գրողները պատմության խորքերից բերում էին ոչ թե մոխիր, այլ կրակ, որ անթեղված էր մոխիրների մեջ: Ժամանակի հրամայականով այդպես ստեղծվեցին Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք», Նաիրի Զարյանի «Արա Գեղեցիկը», Ստեփան Զարյանի «Պապ Թազավորը»: Այդ նույն նպատակն ունեն իսահակյանի ու՛ն-

կոշումներն իր հողվածներում, որ հեշտում էին խորապես ար-  
դիակալան: Ահա ինչու Ալեքսանդր Ֆազեկը կարող էր գրել.  
«Բնահապկանք թանկ է նրանով, որ միացնում է Հայաստանի  
բանաստեղծական հին կուլտուրան մեր օրերի հետ: Անցյա-  
լում փառաբանված իր նորակերտ քնարերգությանը հայ  
պոեզիայի ավագագույն վարպետը պատերազմի օրերին գր-  
ածներեց իրեն որպես կրթող մարտիկ-հրապարակախոս»:

Ալեհեր բանաստեղծը մահու և կենաց կովի էր կոշում իր  
զավակներին՝ ամբողջ ժողովրդի հետ և նրա պես ապրելով  
օր առաջ պատերազմի ավարտը տեսնելու տենչանքով:  
1943-ի աշնանը, երբ ջարդված էր սիւերիմ թշնամու ողնա-  
շարը, վճռված էր պատերազմի ելքը՝ հաղթանակի օրը պատ-  
կերանում էր ավելի մոտալուտ, ավելի անձկայի: Խորհրդա-  
յին Հայաստանի 23-րդ տարեկիցին Վարպետի գրած խոսքն  
ավարտվում է մոտակա խաղաղության տեսիլով:

ԻՍԱՀԱԿՅԱՆ—Հայ ժողովուրդը զիտե, որ մոտ է հաղթա-  
նակը... Բոլոր հողով ցանկանք, որ 24-րդ տարեդարձը տո-  
նենք խաղաղության օրերում:

ԲԱՆԱՍԻՐ— Հաղթանակի օրը եկավ ավելի ուշ՝ 1945-ի  
մայիսի 9-ին:

Որքան էլ նոր սերունդը կարգա գրքերում, տեսնի կինո-  
նկարներում՝ չի կարողանա ապրել այն հուզմունքն ու բերկ-  
րանքը, որ պատել էին ուսումնական իրողության մասնակից-  
ներին ու ականատեսներին: Նրանց, ում համար պատերազմն  
անձնական կյանք էր ու սեփական կենսագրություն, ում զա-  
վակներն ու հայրերը կուվում ու մեռնում էին ռազմադաշտե-  
րում:

ԻՍԱՀԱԿՅԱՆ— Վերջապես եկավ խաղաղությունը՝ եկավ  
հաղթանակով. բռնությունը, շարությունը հաղթահարելով  
եկավ խաղաղությունը:

Այսօր ալլես լուցին մահաբեր թնդանոթները, դադարե-  
ցին զործելուց բոլոր մահառիթ զործիքները:

Պատերազմը վերջացավ. ալլես ալնպես առատորեն, վայ-  
րադորեն չի հեծվում մարդկային կյանքը, ժողովուրդների  
ձաղկիկը՝ նրիտասարդությունը:

Մի ծանր քար ընկավ բոլոր մարդկանց սրտերի վրայից...

Կարմիր բանակի հաղթարշավը պսակվեց ֆաշիստների՝  
ոճրաբույնը՝ Բեռլինը ծնկի բերելով:

Այսօր Բեռլինի վրա փառքով ծփում է Միության զորքը:

ԲԱՆԱՍՏԻՐ— Հաղթանակը նվաճվեց անպատմելի զոհերի  
գնով: Զինվորի համադրեալ հազած մեծաթիվ հրիտասարգ-  
ներ տուն շղարձան, և զոհված հերոսների հանդեպ, նրանց  
ծնողների հանդեպ խորին կարեկցանքով է շնչում այն բա-  
նաստեղծությունը, որ Վարպետը նվիրեց հաղթանակի օր-  
վան. ամենուրեք ծափ ու ծիծաղ, խնդույան աղմուկ ու  
շարժում, մի մարդ սեղան է բացել իր տան առաջ՝

Եվ անցորդներին կանչում է. խեղդում,—  
Ողբալերեն՝, որդուս կենացը խմե՛ք.  
Հեռու է որդիս, հաղթեց թշնամուն,  
Ձեր սրգիների կենացն էլ խմենք:

Խմում են խինդով, ցնծում երջանիկ,  
Եվ զարկում նորից զավաթներն իրար:  
Նրանց մեջ մի հայր ասում է մեղմիկ,—  
Է՛ս էլ իմ որդուս հանգստյան համար:

Գլխարկներն իսկույն հանում են նրանք, ...  
Խոր անխառնքով լուծում են մի պահ,  
Խմում են անձայն զոհվածի համար  
Եվ հեզում գինին սուրբ հացի վրա:

Այստեղ էլ Խառհակյանը համատարիմ էր իրեն, իր  
մարդկային ու բանաստեղծական կարեկից բնավորությա-  
նը՝ շմռանալ կորուստ ունեցողին, նրա կողմը լինել, ամե-  
նամեծ ուրախության մեջ էլ արժանին տալ վշտավորին: Ու-  
րիշի վշտով ապրելու, ուրիշի ողբերգությունն իրեն սեփա-  
կանն ընդունելու այս հատկությունը՝ արվեստագետի, հու-  
մանիստի հատկությունը երբեք չէր և Վարպետին իր կյան-  
քի և ոչ մի պարագայում: Ականատեսները պատմում են, որ  
երբ 1946-ի մայիսի 26-ի ջրհեղեղը շատ տներ ավերեց Նրա-  
նում ու շատերին զրկեց օթևանից՝ Վարպետը տրտմությամբ  
շրջում էր ավերածուքի վայրերում, և նրա «աչքերը առանց  
արցունքի արտասվում էին»:

Ժողովուրդը ճանաչում էր իր բանաստեղծի կարեկից սիր-

առ նրա և՛ սահզմագործությամբ, և՛ անձնական բնավորությամբ: Զանազան և մատուցում էր արժանին: Իսահակյանն այն պոետն էր, որ կարող էր Հայնեի նման ասել՝ աշխարհը արկատող սղերեղական ճեղքն անցնում է իր սրտի միջով: Կարող էր ասել և ասել է:

ԻՍԱՀԱԿՅԱՆ—Ամեն բան անցնում է իմ սրտի միջով՝ աշխարհը, բոլոր իրերը, հարցերը, դեպքերը, ևս անտարբեր չեմ կարող կանգնել աշխարհի առաջ, անարձագանք, անանդադարձ:

...Նա տիեզերական վիշտը զգացել եմ, հասկացել հայտնության մեծ վշտի միջոցով:

...Իմ հոգին կրեց այն բոլոր վերքերը, ջարդերը, մահերը, որ կրեց հայ ժողովուրդը:

...Ժողովուրդի վշտերը, հոգսերը արյանա հեռ ապրում են: Ներկա են օրսիս մեջ: Տխուր պատկերները՝ աչքերիս մեջ:

...Մերով լավեցեք—այս լինի ձեր միակ շափը ամեն բան չափելիս:

ԲԱՆԱՍԵՐ—Սրանք զեղեցիկ մտքեր չէին Վարպետի համար, այլ զործ ու սահզմագործություն, վարքագիծ ու կենսագրություն: Հենց դրանով էլ նա զարձավ սահզմագործական ու բարոյական հեղինակություն միաժամանակ: Ազգային ու միջազգային, դրական ու համապետական հեղինակություն, որի խոսքին ականջ էին դնում ամենուրեք, քանի որ նրա խոսքը, հենց միայն ներկայությունը, կշիռ էին տալիս ամեն երևույթի:

Երբ 1946-ին նշվում էր Միսաք Մանուշյանի զնդակահարության երկրորդ տարելիցը, Վարպետն ասաց հերոսի փառաբանության խոսքը:

ԻՍԱՀԱԿՅԱՆ—...նա մեռավ զեղեցիկ մահով, այն մահով, որ գյուցազնական Հեյլադան երազում էր և ներբողում. կալտանիա,— ինչպես կոչում էին նրանք,— մեռնել փառքի դաշտում, ծաղիկ հասակում, մեռնել ի սեր հայրենիքի, ի սեր գաղափարի... Վա՛յ այն ժողովուրդին, որ չի կարող ծնել և կրթել հերոսացման ընդունակ զավակներ:

...Հայ ժողովուրդը հպարտ է Մանուշյանով, որի շիրիմի առաջ դուրս խոնարհեցին երախտագեռ ֆրանսիացիները և նրա պանծալի անունով փոշոց կոչեցին Փարիզում, մի պա-

տիվ, որ առաջին անգամ տրվում է մի հայի և, շեշտենք, որ նա հայության անունը շատ բարձրացրեց Ֆրանսիայի աշքում:

ԲԱՆԱՍԵՐ— Երբ, նույն թվականին, կայացավ Հայաստանի գրողների երկրորդ համագումարը, Վարպետը պիտի ասեր բացման խոսքը: Այս համագումարում նա ընտրվեց և մինչև իր մահը եղավ Գրողների միության մշտական նախագահը:

Երբ խոսք է բացվել Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» վեպի տպագրության մասին, Վարպետը պետք է լիներ հանձնարարողը և զրքի փայլուն բնութագրողը:

ԻՍԱՀԱԿՅԱՆ— Այս վեպի մասին ևս առաջին անգամ լսեցի 1933—34 թվին, Փարիզում: Պատահաբար կարդացի մի թերթում 1933 թվին գերմաներեն լեզվով լույս տեսած աշքի ընկնող գեղարվեստական գրքերի մասին. հոգվածը ստորագրել էր Նշանավոր գրող Ստ. Յվայզը: Ստ. Յվայզը Նշում էր 2—3 գրքերի անուններ, որոնք ամեն գրվատանքի արժանի էին. մեկը Ֆր. Վերֆելի վեպն էր. «Հայկական հերոսապատումը»:

Նս ձեռք բերի վեպը, կարդացի և հիացա: Օտար ականավոր հեղինակի կողմից գրված այս վեպը մեր արդար գառին նվիրված անգնահատելի գանձ է, եզակի, նմանը չունեցող: Մենք խորին երախտագիտությամբ պետք է մեր սրտերում ունենանք հեղինակի սիրելի անունը: Վեպը գրված է զգացմունքով, մեծ սիրով ու սրտով: Եվ գեպի հայերն ու մեր գառը խորին համակրանքով:

Այս վեպը թարգմանված է բազմաթիվ լեզուներով: Կուլտուրական ժողովուրդ չի մնացել, որի լեզվով փոխադրված լինի հայ ժողովրդի գառը նվիրագործող այս երկը: Միայն սամարդի, նյութապաշտ գիպլումատիան է, որ ամեն միջոցներով ուզում էր արգելակել նրա տարածումը Եվրոպայում և Ամերիկայում և ջնջել նրա ներգործությունը...

Չմոռանամ ասել, որ Հիտլերը արգելեց այս վեպի վաճառումը Գերմանիայում:

Սակայն վեպը իր հաղթանակը տարավ, թարգմանվեց 24 լեզուներով: Երկու անգամ չեխերեն լեզվով...

Շատ և շատ բաղձալի է, և մանավանդ շատ այժմեական և անհրաժեշտ, որ մեր պետհրատը առանց հապաղելու ձեռ-

նարկի այս շքնաղ վեպի թարգմանությունը արեւելահայ բարբառով և լույս ընծայեի:

**ԲԱՆԱՍԻՆՐ**— Իսահակյանի հանձնարարականն էլ նշանակութուն չունեցաւ. վեպն այդ ժամանակ լույս չտեսաւ (հրատարակվեց շատ տարիներ հետո): 1947-ին արդեն սկսվել էր Սփյուռքի հայության վերագործը հայրենիքու Եվ Վարպետը շնորհալի պատգամել սփյուռքահայ գրողներին:

**ԻՍԱՀԱԿՅԱՆ**— Հիմա արտասահմանի մեր գրական ընկերների վրա սրբազան պարտք կա դրված՝ աշակցել ներդառվի հաջողությունը: Նրանք պիտի տանեն զաղութահայերին այն խնդակից պատգամը, որ Սփյուռքի բոլոր հայերը Սովետական Հայաստանի վաղվա քաղաքացիներն են: Մեր գրչակիցները պիտի երգեն և արծարծեն սեր դեպի Սովետական Հայաստանը, բոլոր հայերի հայրենիքը: Պիտի վառ պահեն ազգային ինքնագիտակցությունը և ազգային պատկանելութունը:

**ԲԱՆԱՍԻՆՐ**— Ժողովուրդը և կառավարությունը մեծապես դնահատում էին Վարպետին: Դրա մի արտահայտությունն էլ այն առանձնատունն էր, որ կառուցվեց ու նվիրվեց իրեն: Կյանքի վերջին տասնամյակը՝ 1947-ից ի վեր, Վարպետն ապրեց այդ առանձնատանը, որը հիմա իր տուն-թանգարանն է:

Բազմամարդ է եղել այդ տունը տիրոջ կենդանության օրոք: Տան դուռը բաց էր ամենքի առաջ, ինչպես իր սիրտը: Հազիվ թե լինի մի գրող, ավագ թե կրտսեր, որ եղած չլինի նրա տանը, և հազիվ թե լինի մեկը, որ կրած չլինի նրա մարդկային ու գրական հմայքի աղղղեցությունը:

Ուխտատեղի էր դարձել Վարպետի տունը, ուր զնում էին ծանոթ-անծանոթ հազար ու մի նրա հետ առնչվող և ավելի շատ՝ բնավ չառնչվող գործերով ու խնդիրքներով, միջնորդելու և միջամտելու պահանջներով: Այստեղ է, որ «խալիսի նորբար» արտահայտությունն ստացել է միանգամայն ուղղակի իմաստ: Երբեմն էլ դժգոհել է Վարպետը:

**ԻՍԱՀԱԿՅԱՆ**— Բանտարկված ունեն՝ զալիս են մոտս, զպրոցից հեռացրել են՝ ինձ են գիմում, մնացել է անգործ՝ խնդրում է միջամտելու: Բնակարան չեն տալիս՝ ես պետք է զնամ խնդրեմ...

ԲԱՆԱՍՆԵՐ — Այս դժգոհությունը մտաբերող Ռ. Ջարյանն ավելացրել է իր հուշերում. «Ասացի, թե ինքն այնպիսի ժողովրդականություն է վայելում, որ բոլորն էլ իրավունք ունեն գիմնելու իրեն»:

Ժպտաց: Ինքն էլ գիտեր, որ այդպես է, բայց երբ ուրիշն է ասում՝ այլ է»:

Հայ ժողովրդի կենդանի մեծություններից առաջինն էր, որ նրա անունից խոսք պիտի ասեր խաղաղության կողմնակիցների համամիութենական կոնֆերանսի ամբիոնից՝ 1949-ին, Մոսկվայում: Այն հեղինակությունը, որի զուխը երևում էր աշխարհի տարբեր հորիզոններից: Եզրայաական հանրապետությունների և արտասահմանյան երկրների գրողներն ու արվեստագետներն ի դեմս Իսահակյանի տեսնում էին արդիականության խոշորագույն մի պոետի, որի ստեղծագործությունը նույնքան հրապուրիչ էր իրենց աչքում, որքան անհատականությունը՝ ծով իմացությանը և անկեղծ խառնվածքով: Երբեք չուղենալով որևէ մեկին զարմացնել՝ նա զարմացնում էր ամենքին համաշխարհային կուլտուրայի, բոլոր ժողովուրդների ասքերի ու բարբերի ստույգ իմացությանը: Ահա ինչու նրա հետ խոսելու բան ունեին և՛ Նիկոլայ Տիխոնովն ու Իլյա էրենբուրգը, և՛ Կոստանտին Գամսախուրդիան ու Սիմոն Զիբովանին, և՛ Վացիս Ռեյմերիսն ու Անտանաս Վենցլովան, և՛ Մաքսիմ Ռիլսկին ու Լեոնիդ Պերլումայսկին, և՛ Կրիշնան Չանդրն ու Ժորժի Ամագուն, և՛ Վերա Զվյագինցևան ու Պարլո Ներուզան՝ աշխարհիս տարբեր ծագերից երևան եկած և Վարպետի տանը հյուրընկալված բոլոր գրողները: Զիլիացի Պարլո Ներուզան՝ խաղաղալեզու երկրների մեծագույն պոետներից մեկը, կարող էր չզարմանալ, թե 82-ամյա Վարպետն ինչպես լավ գիտե ացտեկների ու ինկերի հնադարյան արվեստն ու ֆուլկլորը և ինչպիսի գուգահեռներ կարող է տանել շիլիական «Արաուկանա» էպոսի և «Սաուունցի Դավթի» միջև:

Այդպես էլ՝ մեծանուն բանաստեղծին այցի եկած ուրիշ գրողներ ու արվեստագետներ, նրանցից շատերը հիանալի քննաթանգներ էն Վարպետի կերպարն ու պոեզիան.

«Իսահակյանի լիրիկայի ուժն այն է, որ նա իր անձնականը կարողանում է վերածել հանրայինի, և պարզ զգացու-

մի մեջ տեսնում է անսովորը, և այդ անսովորը դառնում է այնքա՜ն սովորական, որ թվում է, թե այդ երգերը, այդ փոքրիկ ոտանավորները, միշտ էլ եղել են, որ նրանք ապրում էին ժողովրդի մեջ մինչև պոետի ծնունդը, և որ նա լսել է զրանք և զրի է առել միայն»։ (Ն. Տիխոնով)։

«Մեր մեծ Վարպետը ոչ միայն բանաստեղծ էր, այլև բացառիկ զարգացած մարդ, Կովկասի ժողովուրդների մեջ ավագագույն եղբայր»։

Վերջին երկու դարերի գրականության պատմությունը համատարած է, որ մեծ գրողներն արձագանք են դառնում ոչ միայն իրենց մեծ վարպետությանը, այլև լավ մարդու համբավով, իրենց պաշտոն ու անբիծ կենսադրությունը, որը հանդիսանում է առաջնակարգ նշանակության բարոյական գործոն»։ (Կ. Պամսախուրդիա)։

«Խառնակյանը պատկանում է այն բանաստեղծների դասին, որոնք հազվագեյ են ծնվում։ Նրանով հպարտանալու իրավունք ունի ամեն մի, նույնիսկ ամենահարուստ գրականություն»։

Նրա պոեզիան մի քանի տասնամյակների ընթացքում օգնել է ինձ ապրել։

Ես համոզված եմ, որ նա կապրի դարեր ու դարեր»։ (Ի. էրենբուրգ)։

«Խառնակյանը շատ ոտանավորներ է նվիրել մորը, որի դիմանկարը կախված էր իր առանձնատեսչակում։ Գեղջկուհու դիմանկարը մի սենյակում, որտեղ զրված սեղանը ծածկված էր եվրոպական բոլոր լեզուներով լույս տեսած գրքերով։ Խառնակյանը համաշխարհային գրականությունը գիտե՞ր հոյակապ»։

Հիշում եմ, հարցրի իրեն, թե ինչ կարծիքի է պոետներից մեկի մասին։ Մատենբրո շարժելով, ասեա բառերն ընտրելով, Վարպետն ասաց. «Ազմուկը շատ է»։

Նա չէր սիրում ազմուկ, հայկական հինավուրց որմնակարի դեմքով այդ իմաստուն ու հանդարտ մարդը, որ ուներ ասեա հայկական հազարամյա ճամփաներից հոգնած ծանր քայլվածք»։ (Վ. Զվյագինցևա)։

«Ես խորապես սիրում եմ Ավետիք Խառնակյանի ստեղծագործությունը և նրան համարում եմ մեր ժամանակի մե-

ծագույն բանաստեղծներից մեկը», — այս խոսքն էլ Գեորգի Սվիրիդովն է գրել, ուստի ժամանակակից հայտնի կոմպոզիտորը, Ռախմանինովից, — մե՛ծ Ռախմանինովից, — հետո երկրորդ ուսուցիչը կոմպոզիտորը, որ երաժշտություն է գրել Վարպետի պոեզիայի հիման վրա՝ «Հայրերի երկիրը» մի ամբողջ վոկալ շարք։

Կյանքի ութերորդ տասնամյակը Վարպետն ապրեց ողորդված փառքով ու պատվով, որ այնքան շքեղ էին դարձնում նրա մայրամուտը։ Քիչ է պատահում, որ բնությունն այնքան արդար լինի իր ընտրյալի հանդեպ։ Աշխարհն, ասես, շռայլորեն պոետին էր վերադարձնում այն ջերմությունը, որ նա նույնպիսի շռայլությամբ տվել էր աշխարհին։ Եվ, ասես անհաղորդ իր փառքին ու մեծությանը՝ ինչպես և վայել է ճշմարիտ մեծությանը, Վարպետը շարունակում էր լույս ու ջերմություն սփռել շուրջ բոլորը՝ ավելի ու ավելի հաճախադեպ դարձող գրույցներով, ավելի ու ավելի սակավադեպ գրվածքներով։ Գրանցից մեկն այն բանաստեղծությունն է, որ 80-ամյա պապիկը նվիրել է տասնամյա թոռնիկին՝ Ալիկին.

Եյանքիդ ուզին լինի պայծառ, ...  
Ամեն քաղց՝ ազնիվ, արդար  
Լինես խոհուն, լինես գիտուն,  
Եվ ունենաս սիրտ զգայուն  
Լինես բարի և անբասիր.  
Ընկերներիդ արտով սիրես,  
Երբ քեզ տեսնեն՝ ուրախանան  
Միշտ օգնելու լինես պատրաստ  
Տանջվող մարդուն և րեկերին:  
Անգաժաճես, անհուն սիրով  
Հայրենիքիդ լինես պաշտպան.  
Եթե նրա սիրտ համար  
Մի սխալի գործ կատարես —  
Ձեռնադրաս, լինես խռտրոհ,  
Եվ իր պարտքը ճիշտ կատարած  
Մարդու նման՝ խեղճ անգործ.  
Ապրես ուրախ ու բախտավոր  
Եվ մեն-մենակ, տարին մի օր  
Այցի ելնես մամուռ շիրմիս,  
Կանգնես խոփ, խորհես մի պահ,  
Իմ կաթագին սիրած աղա:

Պոստի կյանքի վերջին տասնամյակի առաջին ոտանա-  
վորն է սա՝ զրգամ նույնպիսի իմաստուն միամտությամբ,  
դուրբական պարզությամբ, ինչպես շատ տասնամյակներ  
առաջ զրամ ոտանավորները: Մի ծերունի, բոլոր պայերին  
տրված իրավունքով, խրատներ է կարդում թոռնիկին մատ-  
չելի պարզալուր լեզվով: Բայց Մեծ ծերունու խրատները վե-  
րաբերում են ոչ միայն իր, այլև բոլոր ժամանակների բո-  
լոր թոռնիկներին, եթե միայն սրանք խելք բանեցնեն տկան-  
ջի օդ անելու այդ ոսկի խրատները:

Իր վիթխարի կենսագործի բարձրությունից, այդ կենսա-  
գործի բարոյական իրավունքով Վարդանն իր վերջին ա-  
վանդները թողեց ժողովրդին այն սրանչելի խոսքում, որ  
ասաց իր ծննդյան 80-ամյակի հոբելյանական հանդեսում:

Մեծ հորելյարը մի վերջին անգամ հիշեցնում է իր ժո-  
ղովրդի պատմության բազմադժվար ուղին, որ նաև իր կյան-  
քի ուղին էր, խոսքում է իր ժողովրդի երազանքներից, որ նաև  
իր երազանքն էր:

ԻՍԱԿԱԿՅԱՆ—...ամեն մի ժողովուրդ ունի իր ռեալ ներ-  
կան, ռեալ հայրենիք և բացի դրանից նաև ունի իր երազանք-  
ների, տենչանքների շողշողուն հայրենիքը. նա ուղում է տես-  
նել ավելի հարուստ, ավելի լրիվ հայրենիք, ավելի երջանիկ, իր  
բաղձանքները կենսագործած հայրենիք, իր երազած ապա-  
ջան: Առանց այդ երազի ժողովուրդները, հատկապես քանա-  
կով փոքր ժողովուրդները, չեն կարող ապրել:

ԲԱՆԱՄԵՐ—Վաղուց, շատ վաղուց, հեռու հեռավոր 1924-ին  
նա ապրել էր աշտպիսի խոստովանություն. «...բոտ Սողոմոն  
իմաստունի, Աստված մարդկանց տանջելու համար այդ զրադ-  
ժուները ավելի—խորհելը, ուրեմն՝ շալակենք ամբողջ տիեզեր-  
քը՝ տիտանների նման, խորհենք՝ մինչև մի օր տարրալուծ-  
վենք տիեզերքի տարրերի մեջ և հանգստանանք»:

Մինչև իր կյանքի շրեղ մայրամուտը, մինչև «տիեզերքի  
տարրերի մեջ տարրալուծվելը», Ավետիք Իսահակյանի տան-  
ջալի խորհրդի մեջ ամենատանջալին կապված էր հայրենիքի  
ողբերգական ճակատագրի հետ: Ժամանակին ևս զրա մասին  
զրել էմ իմ հուշերում և, կարեոք համարելով, ուղում էմ  
մեջբերել այդ հատվածը. «Զկար ոչինչ, որ նրա միտքը զրա-  
զեցներ ավելի, քան աղգային ճակատագրի խնդիրը: Ամեն

խոսք ու զրույց, ինչից էլ սկսվեք, էլի գալիս ու հանգում էր զրան՝ մեր բազմադարյան պատմությանը բոլոր փուլերով, Վարդանանց պատերազմից մինչև Մեծի զաշնագիրն ու զրանից հետո...

Ախ անգամ խոսք բացվեց մեր և վրացիների պատմական ճակատագրի նմանության մասին.

— Չէ՛, մերը շատ է ողբերգական:

Ինչպե՛ս էր առում զերմանական կայզեր Վիլհելմին.

— Զարգերից հետո ձի նստած ընում էր Ստամբուլի փողոցներով ու աղաղակում՝ «Յա մահմեդական աշխարհի պաշտպանն եմ...»:

Ասաց ձեռքը վեր բարձրացնելով:

— Չունենային կայզերի պաշտպանությունը, Թուրքերն այդքան հանդուգն չէին լինի:

Ինչպե՛ս էր նդովում հյրուպական քաղաքագիտությունը.

— Էգոի՛ստ եմ, շահամո՛լ, հսամո՛լ և անխի՛ղճ, անխի՛ղճ...

Ահրը Արուվյանի օրինենտացիան է:

Ազգային շարժումների խորտակումը, որ կատարվել էր իր խել աչքի առաջ. հանգիստ չէր տալիս նրան թուե թե արթմնի: Դա այն էր, ինչ Չարենցը կոչում էր ուղեղային մորմոք: Կարձեա ամբողջովին զրա հետ էր՝ անձնականը դարձած ազգային վշաի հետ: Մեկ կորսված հայրենիքի մորմոքն էր շարշարում միտքը, մեկ փրկությունն էր համարում հրաշքի պես բան: Ազգային ճակատագրի ողբերգությունը կապարի ծանրությունը նստած էր նրա մեջ. դրանից չէր ազատվում և, կարձեա, չէր էլ ուզում ազատվել. ինչո՞ւ այնպե՛ս հզամ, ինչո՞ւ, ինչո՞ւ, ինչո՞ւ...

Անցած ողբերգությունից խոսելիս զեմքին խոսանում էր տասնամյակների օր ու գիշերների ցավագին մտահոգությունը: Ինչպիսի՛ նրկյուղածությամբ էր խոսում ազգային ազատագրության ճշմարիտ հերոսների մասին: Ու մի օր էլ ինձ և Անահիտ Սահինյանի համար դողողչուն ներշնչանքով կարգաց իր մի բանաստեղծությունը՝ «Սալնո ձորերում», որ շատ էր սիրում:

Սալնո ձորերում, կրովի ձորերում  
Հայգուկն է ընկեր խոր վերքը սրբաին,—

Վերքը վարդի պէս բացվում էրա՛մբբուն,  
Ու ձեռքն է զզքեր կոտորած Հրացանին:

Արեւոս գաշտերում ծըղերիցն է ծըղում,  
Հայդուկն է ընկեր մահվան խոր բընով:  
Հայդուկը հողում երազ է տեսնում,—  
Հայրենի աշխարհն ազա՛տ, ապա՛հով...

Տեսնում է... արտում հովն է շքնկշընկում,  
Փառան գերանդին զընգում է անուշ:  
Ու փոքրիկն էր քաշում սիրուն աղջկուկն՝  
Հայդուկի վրա երգելով անս՛ուշ...

Մայրն ձորերով ամպերն էն անցնում,  
Հայդուկի վրա արծիվն է գալիս:  
Ա՛խ, ան աշերք արծիվն է հանում,  
Հայդուկի վրա ամպերն էն լալիս...

Նով հայրենասիրությունն իր էությունը դարձրած 80-ամյա բանասանգծի վերջին խոսքը, որ նա հզեց իր ժողովրդին, պետք է լիներ հայրենասիրական խոսք:

ԻՄԱՀԱԿՅԱՆ—Միբնի բարեկամներ, ձերությունը բյուրեղացում է նրա մեջ ամբողջ աշխարհը, մարդը և բոլոր իրերը գտված են, բյուրեղացած, անաշտ կերպով զնահատված, առուզված, հասած ճշմարտությանը, էությունը...

Նով դա իրավունք է տալիս, արտոնում է ձերունուն ասել իր բազմանքները:

Նա կցանկանայի, որ հայ ժողովուրդը լիներ ինքնավար տա՛հ, բարձր պահեր ազգային արժանապատվությունը:

Կցանկանայի, որ նա մայրենի լեզվի պաշտամունքն ունենա՛ր: Ավելի գիտակից կառույթ հայրենի հողին:

Կցանկանայի, որ նա խնամքով պահեր իր հինավուրց կուլտուրայի կոթողները, և գրանցով հպարտանար:

Կցանկանայի, որ մեր արվեստը և գրականությունը ազգային կուրթիսի և ձեռքի միջով արտահայտեին համամարդկային զգացմունքներ ու մտքեր, կերտեին արժեքավոր գործեր և կերպարներ:

...Հայրենասիրության դրոշի տակ՝ անդուլ և անձնազոհ պայքար սոցիալական արդարության, ժողովուրդների եղ-

քայրութեան համար, հումանիզմի և համաշխարհային խաղաղութեան համար՝ բովանդակ մարդկութեանը փրկելու կործանումից ու վայրենացումից:

ԲԱՆԱՍԵՐ— Երախտադիտութեան ու փառաբանութեան շատ խոսքեր լսեց Վարպետն իր վերջին հորեկանի օրերին: Բայց ամենից խորունկ, իմաստալից խոսքը, որ հնչեց այդ ժամանակ՝ Դերենիկ Դեմիրճյանի ղեկուցումն էր դիտութեաններին ակադեմիայում՝ 1955 թ. հոկտեմբերի 27-ին կայացած հորեկանական դիտական սեմինարում: Այն սուր, ամենատես, խորաթափանց միտքը, որին պատկանում էր Հովհ. Թումանյանի ասեղծագործութեան ամենախորունկ մեկնությունը, դարձավ նաև Բաաշահյանի ժողովրդայնութեան լավագույն մեկնարանը: Դեմիրճյանի վերջին հրապարակային մեծ ելույթն էր զաւ Հաջորդ տարվա վերջին գրողը շկար ալլեա:

Բնությունը դրեց դարասկզբից եկող երկարամյա բարեկամութեան վերջակետը: Կարծես որբացավ Վարպետի հոգին, կարծես մահվան ուրվականը մերձեցավ նրան՝ հուշելով մահվանը, անէացմանը վերաբերող խոսքեր, որոնք մշտապես, ղեռ անցնալ դարի վերջերից շարշարել էին նրա միտքը, բայց՝ հայեցողաբար...

Վաղուց, շատ վաղուց՝ 1890-ի զարնանը էջմիածնի Գեփորդյան ճամբարանի սանը հանդգնել էր իր տուջին ոտանափորներից մեկը ներկայացնել ուսուցչին: Եվ Հովհաննէս Հովհաննիսյանն այսպես էր ասել պատանի Ավետիքին. «Սեր և մահ, բանաստեղծութեան մշտական նյութը... Իհարկե այս գրածդ երեսկայնութուն է: Վաղահաս: Գրիր քո զգացած բաների մասին...»:

Մահվան, անէացման խոհեր առանհրէզամշտ պատանու համար՝ իրոք որ վաղահաս: Բայց հիմա, իր պաշտառ աշգարացից շատ տարիներ անց, մահվան և անէացման մասին խորհող ութնամյա ընտանեկանը գրում էր «իր զգացած բաների մասին»: Խորապես զգացած բաների: «Դեպի անհունը» գնացող, մեծ հավերժին միացող, նյութի, կյանքի կապաւններից ձերբազատվող իր հոգու մասին.

Տիեզերքի սահմաններից դուրս գալի,  
Ժամանակից, օրենքներից բնութեան  
Անշաւակի, հեռանայի, փախչելի:

Ուժի-եյութի, հյանքի-մահի հարցերից  
Ազատվելի, ազատություն շնչելի...

Ահա և 65 տարեկան «Հիշատակարանի» վերջին գրառումը.  
1956, գեկտեմբերի 27:

ԻՍՍՀԱԿՅԱՆ— Մոռանալ և խարվել: Ուզում եմ մոռանալ  
անցյալս, բոլոր վատ, ախուր զեպքերը, աղետները: Չհիշեմ,  
այնպես լինի, որ զգամ՝ որ բնավ չի եղել: Խարվել... Խարե-  
ցե՛ք ինձ, բժիշկնե՛ր, խարեցեք զեղազորածներ, խարեցեք՝  
մինչև վերջին բուսն, մինչև վերջին շունչս խարեցեք ինձ.—  
չիմանամ, որ հիվանդ եմ, որ ծանր հիվանդ եմ, որ շունիմ  
մռայլ հեռանկար, այլ պայծառ, ուրախ, արևոտ...

ԲԱՆԱՍԵՐ— Ի վան Բունինը Լև Տոլստոյի մասին գրած հու-  
շերում վկայել է. թե «...մահվան զգացողությունը, մահվան  
մարմնական ու հոգեկան բովանդակ ընթացքը նրա մեջ սրված  
էր առանձնապես,— դա է օրենքը. հյանքի զգացման աստի-  
ճանն ուղիղ համեմատական է մահվան զգացման աստիճա-  
նին,— և այդ օրենքը երբեք չէր լքում նրան: Մեծ անհատ-  
ներին է սրված այդ շնորհքը, որ առանձին զին ու արժեք է  
տալիս նրանց և՛ վշտերին, և՛ հրճվածքներին, ու իրենց հյան-  
քը, իրենց զգացողությունները գարձնում այնքան իմաստա-  
վոյ:

Իսահակյանն այդ մեծ անհատներից էր:

Այդքան իմաստավոյց եղան նրա վերջին ներշնչումները  
նույնպես:

Ա՛խ, ինչքա՛ն, ինչքա՛ն կուզեի լինել

Ջինվոր հասարակ.

Հայության բոլոր ոսոխների գեմ կո՛վեի անգույ

Անիի հոգը պարիսպների տակ:

Եվ հուր վերժող

Քարկեի զարե՛ր, զարկեի զարե՛ր,

Եվ բյուր վերքերով

Ընկեի վտեմ պարիսպների տակ.

Սիրտս խաղաղվեք, հանգչեի հավերժ

Անիի անմահ պարիսպների տակ...

Ի՛նչ շքեղ մայրամուտս, մահվան մեջ էլ ի՛նչ փառահեղ.  
հայրենասիրական տեսիլ: Եվ մահվան վսեմորեն զեղեցիկ  
պատկերացում: Մահ, որ հաստատում է հայրենիքը, մահ, որ

սրբազործում է կյանքն ու հայրենին: Եվ ի՞նչ մի զազանի ու իմաստուն խորհրդով եղավ այնպես, որ մեծ գնացողն իր վերջին խոսքն ասաց եկողներին ու զա էլ եղավ իր 82 տարիներով սրբազործված հայրենասիրության խոսքը:

**ԻՍԱՀԱԿՅԱՆ** — Իմ սիրելի երեխաներ, ամեն անգամ, երբ խոսք է բացվում հայրենիքի մասին, իմ սիրտը լցվում է համայնապարփակ սիրով, ու հոգիս պատում է մի անսահման շերտ զգացում: Ո՛չ Վենետիկի սուրբ Մարկոսի մարմարակերտ հրապարակը, ո՛չ Բեռլինի գոթական շենքերը, ո՛չ էլ Փարիզի հրաշալիքները չեն կարող փոխարինել այն վսեմ ու նվիրական զգացումին, ինչ ես ապրեցի, երբ, աշխարհն աշխարհ երկար զնգներումներից հետո, ոտք դրի իմ սուրբ հողի վրա...

Հայրենիքը ինձ համար ամեն բանից թանկ է ու վսեմ:

**ԲԱՆԱՍԵՐ** — Ոչ ոք, երեխ, այս խոսքն ասելու համար շուներ սեփական կենսափորձով ձեռք բերված այն իրավունքը, որ ունեք Վարպետը: Ու երեխ ոչ ոքի ամբողջ կյանքին՝ վաղ մանկությունից մինչև խոր ծերություն, ամբողջ բնավորությանն այն խոսքը չէր ներդաշնակի այնպես, ինչպես Վարպետի կյանքին ու բնավորությանը:

Ի՞նչ նախանձելի հավատարմություն սեփական նկարագրին, սեփական մարդկային էությունը: Միշտ, իր երկար ու ձիգ կյանքի բոլոր տարիներին, բոլոր օրերի ընթացքում: Բացառիկ հավատարմություն, որ Վարպետի սիրած Գյոթեն համարում էր մեծ անհատների բացառիկ հատկանիշը՝ ներքանք «համարձակություն ունեն լինելու այնպիսին, ինչպիսին իրենց ստեղծել է բնությունը»:

Ավետիք Իսահակյանը այդ մեծ անհատներից էր, որին վերապահված էր կյանքի ուսուցիչ, արվեստի վարպետ, հայրենասիրության ոգի լինելու պատիվը:

Երբ, 1957-ի հոկտեմբերի 17-ին, վախճանվեց Մեծ հայր և հոկտեմբերի 22-ին մայր հողին հանձնվեց նրա դին՝ սգվոր ժողովուրդն իր մեծ զավակին վերջին ճանապարհը դրեց այդ մտքի վսեմ ու խորունկ ըմբռնումով:

Դեպիան-գեղարվեստական երեսնամյակության  
Լեվոն Հովհաննեսի ՀԱՆՎԵՐԴՅԱՆ

ՎԱՐՊԵՏԸ

Խոհադրություն

Դպր. միջին և բարձր տարիքի համար

Литературно-художественное издание  
ЛЕВОН ОГАНЕСОВИЧ АХВЕРДЯН  
ВАРПЕТ

Жизнь и творчество Аветика Исаакяна  
Для среднего и старшего школьного возраста  
Художник А. Багдасарян  
(На армянском языке)  
Издательство «Аревик»  
Ереван, 1990

Խմբագիր՝ Ն. Հ. Մանուկյան

Եկարիչ՝ Ա. Բաղդասարյան

Գծ. Խմբագիր՝ Գ. Ք. Խանտկյան

Տեխ. Խմբագիր՝ Ա. Վ. Հովհաննիսյան

Վերամուգրող արտադրիչ՝ Ա. Ս. Համվան

ИБ 435

Հանձնված է շտրվածքի 4.01.90: Ստորագրված է տպագրության 26.04.90:  
Ձախը՝ 84×108<sup>1</sup>/<sub>32</sub>: Թուղթ՝ տպագր. № 1, Տառատեսակ՝ Գրքի սով.  
Տպագրություն՝ բարձր, 10,92 պալմ, տպ. մամ., 9,23 հրատ. մամ. 4-0,5  
մամ. Ենթգիր: Տպարանակ 20.000: Փառվեր՝ 77: Գինը 1 ռ. 30 կոպ.

«Արևիկ» հրատարակչություն, Երևան—9, Տեղյան 91:

Издательство «Аревик», Ереван-9, ул. Теряна, 91.  
ՀեՍՀ հրատարակչություններ, պոլիգրաֆիայի և գրքի տեսության գործերի  
պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան—10, Ալավերդյան 63:

Типография № 1 Госкомитета по делам издательства, полиграфии  
и книжной торговли. Ереван-10, ул. Алавердяна, 65.



Արվեստի վաստակավոր գործիչ, Հայաստանի ԳԱ Արվեստի ինստիտուտի տնօրեն Լեոն Հախվերդյանը սկսել է տպագրվել 1946-ից: Այդ ժամանակից ի վեր նա հայ գրականության, թատրոնի և լեզվի մասին հրապարակել է մեծաթիվ հոդվածներ, շուրջ երեք տասնյակ մեծ ու փոքր գրքեր: Դրանց մեջ՝ «Թումանյանի աշխարհը» (1966), որի համար հեղինակն ստացել է բանասիրության դոկտորի գիտական աստիճան, «Հայ թատրոնի պատմությունը» (1980), որ նրան արժանացրել է Հայկական ԽՍՀ պետական մրցանակի դափնեկրի կոչման, «Պարույրը» (1987), որն ստացել է Միք. Նալբանդյանի անվան մրցանակ:

Պատանիների համար նա գրել է երեք գիրք՝ «Թումանյանի կյանքը» (1969), «Զրույցներ լեզվի մասին» (1982 և 1986), երրորդն այս գիրքն է, որ հանձնվում է ընթերցողին: